ԱՐՏԱՇԵՍ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՄԵԾՈՓԱՎԱՆՔԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ

(ԺԲ -ԺԵ դդ.)

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 1997

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ
ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ.
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆ

Արտաշես Մաթևոսյան

ՄԵԾՈՓԱՎԱՆՔԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ

(ԺԲ-ԺԵ դդ.)

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
1997

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ն.Ս.Օ.Տ.Տ.

ԳԱՐԵԳՆԻ Ա

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ 1700 ԱՄՅԱԿԻՆ

ՄԵՍՐՈՊԱԳԻՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ 1600 ԱՄՅԱԿԻՆ

Սոյն հատորը կը հրատարակուի
Յովանաւորութեամբ
ԱՄՆ-ի Արեւելեան շրջանի եւ Գանատայի
Կիլիկեան Թեմի Առաջնորդ
Բարձրաշնորհ Տ. Մեսրոպ Արքեպս. Աշճեանի
եւ մեկենասութեամբ
Տէր եւ տիկին Քարլ եւ Էմմա Սողոյեաններու

Խմբագիր Ա. Հ. ՂԱԶԱՐՈՍՅԱՆ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ Ա. Ս.
ՄԵԾՈՓԱՎԱՆՔԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ (ԺԲ–ԺԵ դդ.)
Ս. Էջմիածին, 1997, 208 էջ:

Սույն աշխատությամբ սկսվում է հայագիտական ուսումնասիրությունների մի բնագավառ, որի նյութը հայ գրչության կենտրոնների պատմությունն է:

Այդ կենտրոններում է ստեղծվել հայ գրավոր մշակույթը, ձեռագիրը, կատարելագործվել հայ գիրն ու գրչության արվեստը, զարդագրությունը, մանրանկարչությունը, կազմարվեստը, դրանց կիրառման նյութն ու գործիքը, հմտությունն ու վարպետությունը:

Քաջբերունիքի Մեծոփավանքը սույն բնագավառի նշանավոր կենտրոններից է, որը վերաճեց գրչության դպրոցի, որի պատմությանը, նրանից մեզ հասած ձեռագրական ժառանգությանն ու գնահատությանն է նվիրված այս ուսումնասիրությունը:

Կազմերի վրա՝ «Վրացոց գիրն է» և «Աղուանից գիրն է». լուսանկարները վերցված են Մեծոփավանքում 1339 թ. Թովմա Մեծոփեցու գրած ձեռագրի ճնացույն այբուբենների շարքից (Մատենադարան ձեռ. 7117): Աղուանից այբուբենը գիտությանը հայտնի միակ օրինակն է, որ պահպանվել է:

ԹՈՎՄԱ ՄԵԾՈՓԵՑԻ ՐԱԲՈՒՆԱՊԵՏԸ
Նկ. Մինաս Ծաղկողի, 1435 թ.

Հայ ձեռագրագիտության
երախտավոր ուսուցիչներիս՝
Լևոն Խաչիկյանի և
Ասատուր Մնացականյանի
պայծառ հիշատակին

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

«Մեծոփավանքի գրչության կենտրոնը (ԺԲ–ԺԵ դդ.)» աշխատությունն գրվել է քառորդ դար առաջ, Մաշտոցի անվան Մատենադարանի Ձեռագրերի պահպանության և ձեռագրագիտության բաժնում: Սրան հետևեցին այլ կենտրոնների ուսումնասիրություններ, որոնցից երեքը՝ Մշո Առաքելոց վանքի (Հ. Մանուչարյան), Անի քաղաքի (Կ. Մաթևոսյան) և Գեղամա երկրի (Ա. Ղազարոսյան) գրչության կենտրոնները, նույնպես, առանձնությունների նյութ դարձան: Հայագիտության մեջ, որպես նոր բնագավառ սկզբնավորվող հայ գրչության կենտրոնների ուսումնասիրության նպատակի, խնդիրների և նշանակության մասին, ինչպես նաև սույն աշխատության վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ հաղորդելու մտադրությամբ, նպատակահարմար գտանք «Առաջաբանի փոխարեն» խորագրի տակ ներկայացնել մեր առենախոսության առթիվ ստացված կարծիքներ:

Ս. Պետերբուրգի Հանրային գրադարանի ձեռագրերի բաժնի գլխավոր գրադարանավար, բանասիրական գիտությունների դոկտոր Եվգենիա Գրանստրեմը, մասնավորապես նշում է, որ «...դիսերտացիայի մեջ գրիչների աշխատանքի կազմակերպման մասին բերվող տեղեկությունները, անտարակույս, մեծ կարևորություն ունեն ոչ միայն միջնադարյան Հայաստանում, այլև ուրիշ ժողովուրդների մոտ ձեռագրերի ու գրչության պատմության լուսաբանման համար: Այդպիսին են օրինակ, առանձին գրիչների գործունեությանը, գրչության դպրոցներին, ընդօրինակվող բնագրերի ընտրությանը վերաբերող տվյալները: Դրանցից շատերը անմիջականորեն վերցված են ձեռագրերից, և քննվող աշխատության հեղինակն առաջին

անգամ է դրանք գիտական շրջանառության մեջ դրել: Աշխատասիրողը բացահայտել է միջնադարյան Հայաստանի նշանավոր հեղինակներից Մխիթար Սասնեցու, Հովհաննես Մեծոփեցու, Գրիգոր Տաթևացու, Գրիգոր Խլաթեցու, Հակոբ Ղրիմեցու և այլոց գործունեության որոշ կողմեր: Չափազանց հետաքրքրական են նաև նրա հավաքած տեղեկությունները ձեռագրերի պատվիրատուների մասին:

Սա մի լուրջ աշխատություն է՝ կառուցված իսկայական նյութի հիմքի և գրաված ընդարձակ պատմական խորքի վրա:

Ա. Մաթևոսյանի աշխատանքը պետք է հրատարակել ամբողջությամբ, ռուսերեն լեզվով, նկատի ունենալով նրանում պարունակվող նյութերի և արծարծվող հարցերի կարևորությունը ոչ միայն Հայաստանում, այլև ուրիշ երկրներում միջնադարյան գրչության ուսումնասիրման համար: Մենք կարծում ենք, որ այդ աշխատության միայն հայերեն հրատարակությունը կխոչընդոտի տարբեր երկրների գիտնականների լայն շրջանակների ծանոթությանը գրքի ու մատենագրության պատմության և հայ մշակույթի պատմության բնագավառում հայագետների նվաճումներին»:

Երկրորդը՝ Մատենադարանի Ձեռագրերի պահպանության և ձեռագրագիտության բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր Ասատուր Մնացականյանի կարծիքն է՝ որը ներկայացնում ենք մասնակի կրճատումներով:

«Մոտիկից ծանոթ լինելով մենագրության սկզբնավորմանը, ձևավորմանը, աշխարհ գալուն, նրա խոր ու լայն հիմքերի էությանն ու պատմությանը, ինչպես նաև այդ մենագրության հեղինակի գիտական կարողություններին ու թափած ջանքերին, կկամենայինք ասել մի երկու խոսք և մեկի, և մյուսի մասին:

Ա. Ս. Մաթևոսյանի «Մեծոփա վանքի գրչության կենտրոնը ԺԲ—ԺԵ դդ.» մենագրությունը գնահատելու ժամանակ ճիշտ կլիներ գնահատել, թե այդ գործը որպես առանձին միավոր և թե նրա վիթխարածավալ հիմքը՝ ըստ աշխարհագրական լայնքի և ժամանակագրական խորքի, որի վրա պիտի բարձրանան մի քանի տասնյակ, եթե ոչ ավելի նման մենագրություններ: Այդպես ենք ասում, որովհետև իրականում այդ հիմքն էլ է

դիսերտանտի ջանքերով գցված և առանց այդ հիմքի չի կարող պատկերվել նրա վրա կառուցված մենագրության շենքը: Մեզ համար կարևորն ու գնահատելին ոչ միայն այդքան այդ մենագրությունն է առանձին վերցրած, որն այդ վիճակով լիովին բավարար է գիտական հայցված աստիճանի համար, այլ այն՝ իր հիմքի և նրա վրա ծրագրվող մյուս բոլոր գրվելիք մենագրությունների ամբողջության հետ միասին: Այդպես ենք ասում, որովհետև, իրականում այդ վերջինների հիմքերն էլ արդեն դրված են և նրանց վերաբերող հիմնական նյութերն էլ հավաքված են:

Եթե թույլ տանք պատկերավոր մտածելու մի փորձ, ապա ատենախոսությունը կարող ենք նմանեցնել մեղրահացի մի լեցուն բջիջի, որն արդեն կնքված է՝ ՎԱԿ-ի բոլոր պահանջների համաձայն և կարող է բավարար լինել թեկնածուական աստիճանի համար, ապա այս դեպքում պատրաստված այդ բջիջի հիմքում կտեսնենք ոչ թե լոկ այդ բջիջի հիմքը, այլ ողջ մեղրահացը՝ և մյուս բջիջների մարմնազատումներն ու տեղ-տեղ էլ պատերի մասնակի բարձրացումները՝ ննկտարային որոշ կուտակումներով: Ահա այս ամբողջության մասին է խոսքը: Իսկ հայագիտության համար կարևորը և դիսերտացիոն հրախայրիքն է, և անպայման նրա հետ կապված մյուս աշխատանքների ու ծրագրերի ամբողջությունը:

Ո՞րն է այդ հիմքը: Դիսերտանտը կոչված է ոչ թե լոկ այս կամ այն գրչակենտրոնի պատմությունն ստեղծելու, այլ հայ գրչության բոլոր կենտրոնների: Ուստի նա առաջին օրվանից կամովին և մտածվածորեն հանձն է առել մտնելու ոչ թե մի, այլ բոլոր կենտրոնների ծանրությունն իր ուսերին վերցնելու պարտականության տակ: Ըստ այդմ էլ, նա հավաքել է նյութեր բոլոր կենտրոնների համար, նախագծել է շարադրանքի ծրագիր՝ բոլոր կենտրոնների համար և տարիներ շարունակ ձեռք է բերել գիտելիքներ ու փորձ՝ վերստին բոլոր կենտրոնների համար: Տվեք նրան անհրաժեշտ պայմաններ և նա առավելն մեկ կամ երկու տարին մեկ հատոր, այսինքն մեկ կենտրոն կդնի սեղանի վրա: Այդ պատճառով էր, որ շուրջ մի տասնամյակ, դիսերտանտը, չնախանձելով շուտ պաշտպանող ընկերներին, չգայթակղվելով շուտ ամբիոն բարձրանալու և

նյութապես օր առաջ բավարարվելու կենցաղային մղումից, համբերատար ու համառ աշխատանքով կատարեց անհրաժեշտ բոլոր կուտակումները:

Եթե մենք պարտավոր ենք ճիշտ գնահատելու մեր ժողովրդի ստեղծած արժեքները, ապա պարտավոր ենք ճիշտ գնահատելու նաև այդ արժեքները վեր հանողների արդար վաստակը: Այո, մեծ է նրկա աշխատանքն՝ իր ավարտուն և ծրագրային մասերի առկա ամբողջությամբ:

Ճիշտ արտահայտվելու դեպքում մենք այսօր պիտի արձանագրենք, որ նրա ջանքերով ծնվում է հայագիտական մի **ուրույն բնագավառ՝** **Հայկական ձեռագրերի ստեղծման կենտրոնների պատմության բնագավառը**: Եվ քննվող մենագրությունն այդ բնագավառի երախայրիքն է, ուստի և բազմակողմանիորեն մեծ ու նշանակալից է նրա գոյությունը: Ավելի ճիշտ արտահայտվելու դեպքում, մենք պիտի արձանագրենք նաև, որ ոչ միայն նշված բնագավառն է ծնվում, այլև ծնվել է նրա մասնագետը: Աշխարհում շատ մասնագետներ կան հայկական ձեռագրերի հետ կապված հարցերի ուսումնասիրության գծով, առանձին բնագավառներում նրանց թիվը պատկառելի քանակի է հասնում. նորաստեղծ բնագավառում, սակայն, այսօր ունենք մի լիարժեք, հմուտ ու անփոխարինելի մասնագետ: Դա էլ մեր այսօրվա դիսերտանտն է:

Ճիշտ է, ուրիշներն էլ կարող են գրիչ շարժել այս կամ այն գրչակենտրոնի մասին ինչ-որ բան ասելու նպատակով, բայց նման փորձերը գիտական լրջություն չեն կարող ունենալ, որովհետև նրանցից ոչ ոք չունի (և ինքը չի ստեղծել) այն վիթխարի քարտարանը, որը բովանդակում է 35.000-ից ավելի ձեռագրային միավոր, բոլոր անհրաժեշտ տեղեկություններով: Նրանցից ու մեզանից ոչ ոք չի ստեղծել հայ գրչության կենտրոնների համահայաստանյան և համաշխարհային այն բովանդակալից ու ծավալուն քարտեզները, որոնք զարդարում են Մատենադարանի ցուցասրահի պատերը: Ոչ ոք այնպես կենտրոնացված ու ծրագրային օժանդակ գիտելիքներ չի ամբարել՝ այդ հարցի հետազոտության համար, ինչպես արել է Ա. Ս. Մաթևոսյանը: Եվ ոչ ոքի համար այնքան հասկանալի ու

մատչելի չէ հայ ժողովրդի 1500-ամյա գրչակենտրոնների պատմությունը՝ համապատասխան բոլոր բնագավառների խաչաձևող իմացություններով և նրանց՝ մի հիմնական նպատակի ծառայեցնելու կարողությամբ:

Մենք այս բոլորը նշում ենք, որպեսզի նկատել տանք, ոչ միայն ծնվող բնագավառի մեծությունն ու կարևորությունը, այլև այդ բնագավառի համար արդեն հասունացած իսկական մասնագետի առկայությունը մեր շարքերում:

Ուշադիր ընթերցողը քննության ներկայացրած մենագրության մեջ կարող է տեսնել մեր թվարկած բոլոր հարցերի, ծրագրերի, կուտակումների, խաչաձևող ու խորը իմացությունների խճանկարային հյուսվածքը, համոզվելով, որ ծնվում է նաև նորորակ շարադրանք՝ պայմանավորված տվյալ բնագավառի առանձնահատկություններով: Այդ մասին մանրամասնությունների մեջ մտնելը անհարկի համարելով կփորձենք հիշել միայն մի քանի օրինակ: Ա. Ս. Մաթևոսյանի մենագրության մեջ յուրովի, իրենց դեռևս չբացահայտված կողմերով են ներկայանում հանրահայտ գրիչներ Գրիգոր Ծերենցը, Գրիգոր Տաթևացին, Թովմա Մեծոփեցին, Հովհաննես Մանգասարենցը և ուրիշները, որոնցից յուրաքանչյուրի համար դիսերտանտի հավաքած նյութերն ու ձեռք բերած գիտելիքները մի-մի դիսերտացիոն մենագրության ուժ ունեն: Հայ հնագրության մասին դիսերտանտի հավաքած փաստերն ու նրանց մեկնաբանությունները մեքենագիր վիճակում ավելի մեծ հատոր կազմեցին, քան այս մենագրությունն է, որից սակայն այստեղ նա օգտագործել է որոշ մասը միայն: Առանձին հատոր կարող են կազմել դիսերտանտի կատարած փաստական ճշգրտումները, բանասիրական մեկնաբանությունները, ձեռագրագիտական նորույթները, որոնցից նույնպես սույն մենագրության մեջ որոշ քանակ է միայն ներգրավված: Ուշադիր ընթերցողը կնկատի, որ հատուկ եղանակով է այստեղ խոսված պատմական ժամանակաշրջանի մասին. նրան տեղ է տրված ոչ թե առանձին էջերում, մեխանիկական էջահաշվով, այլ ըստ պատշաճի, ըստ անհրաժեշտության, որպեսզի տեղն ու տեղը միասին խոսեն և ժամանակագրական-քաղաքական հարցերը, և տվյալ գրչակենտրոնի տվյալ բարունապետի, տվյալ գրչի ու հաճախ էլ

տվյալ ձեռագրի հետ կապված համապատասխան տվյալները: Այս առանձնահատկության շնորհիվ մենագրությունը դարձել է հայ ժողովրդի մի հատվածի շուրջ 300-ամյա պատմության յուրօրինակ շարադրանքը: Կարդում ես ու կրկին խորհում, թե ինչը պիտի դառնա հայ ժողովրդի թագավորազուրկ դարերի պատմության ողնաշարային հարցերից մեկը և առհասարակ ողնաշարը: Ջարփաշ քնիկների, գրիչների, հայ մեծատունների, վարդապետների, հայրենանվեր դպիրների ու աշակերտների կյանքն ու գոյապայքարը, թե այս կամ այն բռնակալի և այլ ավազակաբարո բախտախնդիրների հաղորդումների նկարագրությունը...

Մենագրությունը լրացուցիչ մտքեր է տալիս համոզվելու, որ օտարի լծի տակ ևս, հակառակ բոլոր աներբենպաստ պայմանների, մշակութային կյանքը շարունակել է ուղիներ գտնել և զարգանալու, և առաջ գնալու համար և ոչ թե ապրել է ավեր ու անկում: Այս է ճիշտը, այս է հիմնավորը:

Հեղինակը զարմացնում է հատկապես ձեռագրագիտական իմացություններով ու ընդունակություններով, մատենագիտական խորը ու բազմակողմանի գիտելիքներով և որ ամենից գլխավորն է փաստերի հարստությամբ: Փաստերը նրա մոտ ընտրովի են, առատ, խոսուն: Փաստահավաքման գործն այնքան սպառիչ է կատարված, որ դժվար է նրանց վրա նորերն ավելացնելը:

Դաշտից եկած բարձուն սայլը նաև դաշտերի բուրմունքն է իր հետ բերում: Ա. Ս. Մաթևոսյանի՝ Մատենադարանից բերած բեռից՝ Մատենադարանի հոտ է գալիս: Այսօր նա կանգնած է մեր առջև որպես գիտության մի ազնիվ ու աշխատասեր հասուն ու կազմակերպված մշակ, որի կատարած աշխատանքներն իրենց ամբողջությամբ շատ ավելի ծանրակշիռ են»:

Ա. Շ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

1970 թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայերեն գրերն ստեղծելուց հետո Մեսրոպ Մաշտոցը Վռամշապուհ թագավորի և Սահակ Պարթև կաթողիկոսի օժանդակությամբ Վաղարշապատ մայրաքաղաքում բաց է անում առաջին նորաստեղծ հայագիր դպրոցը: Այնուհետև դպրոցներ են բացվում Հայաստանի տարբեր կողմերում: Այդ դպրոցներում գրչության արվեստը դառնում է դասավանդվող հիմնական առարկաներից մեկը և ողջ միջնադարում այլևս չի լքում հայ աշակերտին: «... Կարգեցան յայնմհետէ դպրոցք հայերէն ուսմանն,—գրում է Ղազար Փարպեցին,— բազմացան դասք գրչաց...»[1]*: Գրչության արվեստը, որպես հայեցի ուսում, ավանդվում է մեծ խնամքով և դառնում որոշ դպրոցների հիմնական մասնագիտությունն: Եթե Վաղարշապատի վարդապետարանը պատրաստում էր ուսուցիչներ, հմուտ դպիրներ, թարգմանիչներ և եկեղեցական գործիչներ, ապա Սյունյաց դպրոցի մենաշնորհն էր «զվարդապետութիւն բանին և զթարգմանութիւն գրոց»՝ կարգված «... ի սրբոյն Սահակայ եւ երանեալ վարդապետէն Մեսրոպայ»*[2]*, իսկ Արշարունյաց դպրոցինը՝ գրչության արվեստը, որտեղ վեցերորդ դարում «գրչութեան արուեստ ունէին և զսուրբ գիրսն յաւրինէին... երեսուն և վեց վարդապետք»*[3]*:*

Արշարունյաց գրչության դպրոցի հարատևման վկայություն պետք է համարել ոչ միայն ԺԱ դարում գրչության և մանրանկարչության արվեստների ծաղկումը[4]*, այլև մեր հնագույն ձեռագրերից մի քանիսի մոտիկությունն ու առնչությունը այդ վայրին: Լազարյան Ավետարանը 887 թ. գրվել է Սահակ Վանանդեցու ձեռքով: 1001 թ.՝ Ավետարան է օրինակվում Արշարունիքին հարևան Կեչրորում*[5]*, իսկ 1042 թ. Սարգիս*

---

[1] Ղ. Փարպեցի, *Պատմութիւն հայոց*, Երևան, 1982, էջ 38:

[2] Ստ. Օրբելեան, *Պատմութիւն տանն Սիսական*, Թիֆլիս, 1910, էջ 27:

[3] Գարեգին կաթողիկոս, *Յիշատակարանք ձեռագրաց*, Ա, Անթիլիաս, 1951, էջ 7: *Այսուհետև՝ Յիշատակարանք, Ա:*

[4] Ա. Մաթևոսյան, *Գրիչ Հովհաննես Սանդղկավանեցի, (Մողնու Ավետարանի գաղնիքը), «Բանբեր Մատենադարանի»*, № 9, էջ 379—400:

[5] Ա. Մաթևոսյան, *Մի ձեռագիր Ավետարանի հիշատակարանի նոր վերծանություն, «Էջմիածին»*, 1966, ԺԱ—ԺԲ, էջ 209:

Բասենցին Ավետարան է գրում Բասենի Որդրու քաղաքում: Հնագույն գրչության կենտրոնների մասին վկայություն կա նաև Զաքարիա Սարկավագի «Պատմության» մեջ[6]:

Այս և բոլոր կարգի դպրոցները, վանքերը, գյուղերն ու քաղաքները, որտեղ գրչատուն կար և ձեռագիր էին ընդօրինակում, ծաղկում, մենք անվանում ենք գրչության կենտրոններ: Սրանք ոչ միայն ձեռագիրը բազմացնելու վայրեր էին, այլ նաև մատենագրության, գիտության, արվեստի, մի խոսքով հոգևոր մշակույթի ստեղծման ու պահպանման վայրեր, որոնք հիմնվում էին ամեն տեղ, «ուր հայ վանք մը կամ դպրոց մը կար»[7]:

Գրչության կենտրոնների աշխուժացումը ընթանում էր երկրի տնտեսական և քաղաքական հարաբերությունների զարգացմանը համաքայլ: Հինգերորդ և վեցերորդ դարերից հետո, Գրչության կենտրոնները ավելանում են Բագրատունյաց թագավորության ժամանակ, վանքերի և եկեղեցիների շինարարությանը զուգահեռ: Այդպես էր վիճակը նաև այդ և հետագա ժամանակների հայկական մյուս թագավորություններում և իշխանություններում: Գրչության կենտրոնները բազմանում են հատկապես Կիլիկյան Հայկական Թագավորության սահմաններում, ուր բուռն ծաղկում է ապրում գրչության և մանրանկարչության արվեստը:

Հայաստանում գրչության կենտրոնները գործում են, նույնիսկ ավելանում են մոնղոլական, լենկթեմուրյան ու հետագա մռայլ ու դաժան ժամանակաշրջաններում: Բանն այն է, որ գիրն ու դպրությունը միշտ եղել են հայ ժողովրդի փրկության վստահելի զենքերը: Վանքերի ու անապատների, գյուղերի ու քաղաքների գրչության կենտրոններում է նաև ստեղծվել հայ ձեռագրական մշակույթը «ի դառն և ի նեղ ժամանակիս, կենօք տառապանօք և բազում պանդխտութեամբ»:

Գրչության կենտրոններում ստեղծված հսկայական քանակությամբ ձեռագրերի չնչին մասն է հասել մեզ: Հայ ժողովրդի հոգևոր այդ հարստությունը իր մեջ ամբարում է հայ, մասամբ նաև Հին Արևելքի և Անտիկ աշխարհի ժողովուրդների մտածողությունն ու պատմությունը և որպես այդպիսին, վաղուց հայ և օտար գիտնականների ուսումնասիրության առարկան է

---

6 Զաքարիա Սարկաւագի Պատմութիւն, Վաղարշապատ, 1870, հ. Գ, էջ 5–6: Այնտեղ մի հիշատակարանից իմանում ենք, որ 573 թ. Աշոտ քահանան ընդօրինակել է տվել «Գիրք Թագաւորութեանց և Մնացորդաց» ձեռագիրը, որի գրիչն է Գևորգ Մանկիկը:

7 Ե. Դուրեան, Պատմութիւն հայ մատենագրութեան, Երուսաղէմ, էջ 65, 67:

դարձել: Որոշ չափով ուսումնասիրվել են նաև ձեռագրերի ստեղծման հանգամանքները, կապված առավելապես հնագրության և մանրանկարչության հետ: Սակայն ձեռագրերի ստեղծման վայրերի, գրչության կենտրոնների պատմությունը հատուկ ուսումնասիրության նյութ չի եղել: Մինչև վերջերս հրապարակի վրա չկար գրչության որևէ կենտրոնի վերաբերյալ շատ թե քիչ ամփոփ մի ուսումնասիրություն: Մինչդեռ գրչության կենտրոնները որոշակի նպատակով կազմակերպված միավորներ էին, գրչապետով ու գրոց աշակերտներով, բարունապետով ու դպիրներով, աշխատողների միմյանց նկատմամբ մշակված հարաբերություններով, աշխատանքի բաժանումով, գրչության արվեստի կայուն օրենքներով, ավանդական կարգ ու կանոնով և այլն:

Գրչության արվեստը գրչության կենտրոնի բովանդակությունն է կազմում, գործունեության ծրագիրը, որի արդյունքը, վերջին հաշվով, ձեռագիրն է: Հետևաբար գրչության կենտրոնի պատմությունը ձեռագրի ստեղծման և նրա ստեղծողների պատմությունն է, գրչության արվեստի կիրառության, զարգացման պատմությունը՝ տվյալ կենտրոնում: Ի՞նչ ձեռագրեր և ինչպե՞ս են գրվել, ծաղկվել, սրբագրվել այդ կենտրոնում, ինչպիսի՞ գաղափար օրինակից են արտագրվել, գրչագրական, մանրանկարչական, կազմարարական ինչպիսի՞ աշխատանքներ են կատարվել, ովքե՞ր էին բարունապետները, գրչապետները, գրիչները, ծաղկողները և օժանդակ անձնակազմը: Որևէ գրչության կենտրոնի պատմություն շարադրելիս պետք է այս հարցերի պատասխանը տալ:

Գրչության կենտրոնների ուսումնասիրության բնագավառը բոլորովին չուսումնասիրված մի բնագավառ չէ: Որովհետև գրչության կենտրոնները միայն ձեռագրեր ընդօրինակելու վայրեր չէին, այլ նաև մշակութային կենտրոններ էին, և քանի որ նրանք վանքերին ու անապատներին, դպրոցներին ու համալսարաններին կից էին կամ գտնվում էին գյուղերում ու քաղաքներում, ուստի հայ ժողովրդի ընդհանուր և մշակույթի պատմության հարցերը ուսումնասիրելիս, շոշափվել են նաև մեր նյութին վերաբերող խնդիրներ: Այդպիսի գործեր են օրինակ Մ. Չամչյանի «Հայոց Պատմութիւն» եռահատորը, Մ. Օրմանյանի «Ազգապատում»-ը, Ղ. Ալիշանի «Այրարատ», «Սիսական», «Սիսուան» համագրությունները, Գ. Հովսեփյանի հայ գրչությանը, մանրանկարչությանը և իշխանական տների պատմությանը նվիրված աշխատությունները, Հ. Ոսկյանի՝ հայոց վանքերին, Վ. Հացունու, Ա. Ալպոյաճյանի, Ն. Ակինյանի, Ս. Մովսիսյանի հայ դպրոցին և դաստիարա-

կության նվիրված ուսումնասիրությունները և այլն և այլն: Սակայն սրանք գրչության կենտրոններին նվիրված ուսումնասիրություններ չեն:

Ձեռնամուխ լինելով Հայ գրչության կենտրոնների ընդհանուր ուսումնասիրությանը, մենք այն սկսել ենք առանձին կենտրոններից: Յուրաքանչյուր կենտրոնի մասին գրելուց առաջ, պետք էր պարզել նրանից մեզ հասած ձեռագրական ժառանգությունը, իսկ այս, իր հերթին կապվում է հայ ձեռագրական ողջ ժառանգության ստեղծման վայրերի պարզաբանման հետ:

Շուրջ հազար վեց հարյուր տարվա պատմություն ունեցող հայ գրչության կենտրոնները և նրանց մեջ գրված ձեռագրերը ենթարկվել են այն բոլոր ավերածություններին ու բարբարոսական հարվածներին, ինչին՝ իրենց ստեղծող ժողովուրդը և երկիրը: Այդ պատճառով հայ գրչության առանձին կամ ընդհանուր կենտրոնների պատմություն շարադրողը կանգնում է երեք մեծ դժվարությունների առաջ. դրանք են՝ ա) ձեռագրական հսկայական կորուստները, բ) մեզ հասած ձեռագրերի՝ աշխարհով մեկ սփռվածությունը և գ) դրանց մեծ մասի հիշատակարանների բացակայությունը, որից էլ՝ գրչության հանգամանքների վերաբերյալ տեղեկությունների բացակայությունը: Քանի որ առաջին և երրորդ պակասությունները լրացնելը անհնարին է, մնում էր տարիների տևական, նախապատրաստական աշխատանք, որպեսզի կարելի լիներ ի մի հավաքել հայերեն մեզ հասած և հայտնի ձեռագրերի վերաբերյալ տեղեկությունները: Այդ աշխատանքի արդյունքը եղավ մեր կողմից ստեղծված հայերեն ձեռագրերի համահավաք քարտարանը:

Մենք քարտագրեցինք Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերը, մեզ մատչելի տպագիր և անտիպ ձեռագրացուցակները, ձեռագրերի վերաբերյալ հայագիտական գրականության և մամուլի, արխիվային վավերագրերի մեջ սփռված տեղեկությունները, յուրաքանչյուր քարտի վրա գրանցելով ձեռագրի գրության թվականը, տեղը, անունը, գրիչը, հավաքածուն, ուր պահվում է, կամ աղբյուրը, որտեղից քաղել ենք տվյալները: Շուրջ երեսունհինգ հազար[8] քարտից ավելի քան կեսի վրա նշված են գրչության վայրերը: Դրանք դասավորեցինք այբբենական կարգով և կազմեցինք գրչության

8 Հայ գրչության կենտրոններից մեզ հասած ձեռագրերի ճիշտ քանակը դժվար է որոշել: Նրանցից շատերը մի կազմի մեջ են ամփոփված, բայց զանազան ժամանակներում և վայրերում գրված տարբեր ձեռագրեր են:

կենտրոնների քարտարան, իսկ սրա հիման վրա՝ Մեծ Հայքի նահանգների, Կիլիկիայի, Հայաստանի հարևան երկրների և հայ գաղթավայրերի գրչության կենտրոնների օժանդակ քարտարան: Գրչության կենտրոններով հայտնի ձեռագրերի նյութից ելնելով, կազմեցինք պատմական Հայաստանի և աշխարհի «Հայ գրչության կենտրոններ»-ի երկու քարտեզ (ցուցադրվում են Մաշտոցի անվան Մատենադարանում): Գրչության կենտրոններով անհայտ ձեռագրերի քարտերը տեղավորեցինք ժամանակագրական կարգով՝ առանձին քարտարանում: Այժմ մեր քարտարանում հաշվվում է շուրջ 1500 վայր, որտեղից մեզ ձեռագիր է հասել: Դրանք ստեղծվել են Մաշտոցյան գրերից հետո, 1500 տարում[9]:

Քարտարանները և քարտեզները պատրաստելուց հետո մենք հավաքեցինք նաև նոր ձեռք բերված ձեռագրերում և նոր հրատարակված ցուցակներում ու մատենագրության մեջ եղած հիշատակարանները և հիշատակագրությունները, որոնք դուրս էին մնացել հիշատակարանների տպագրված ժողովածուներից և այնուհետև ձեռնամուխ եղանք առանձին գրիչների ժառանգության և գրչության կենտրոնների ուսումնասիրությանը:

Սույն աշխատանքը նվիրված է Հայաստանի մշակութային նշանավոր կենտրոններից մեկի՝ Մեծոփա վանքի գրչության կենտրոնին, որտեղ հետագայում ստեղծվեց գրչության բարձր տիպի դպրոց և դարձավ մեծորդատեղծ գրչության դպրոցների ավանդների շարունակողն ու գրչության արվեստի կանոնների լավագույն պահպանողը:

Գրչության կենտրոնի պատմության շարադրումը տվյալ վայրում ընդօրինակված ձեռագրերից մեզ հասած կամ հայտնի մատյանների սոսկական հաշվառումը չէ (չնայած այստեղ ևս բավականին շատ և լուրջ անելիքներ կան ձեռագրագիտական, պատմաբանասիրական ճշգրտումներ, դիտողություններ անելու առումով), այլ տվյալ կենտրոնում ստեղծված արժեքները ստեղծողների, գրչության արվեստի կիրառության ու մակարդակի, ընդհանուր մշակութային վաստակի գնահատումը: Մշակութային մյուս կենտրոնների նման վանքի գրչության կենտրոնի գործունեությունը, հետևաբար նաև վաստակը, տարբեր ծավալ է ունեցել իր գոյության տարբեր ժամանակահատվածներում, որն իր արտացոլումն է գտել ոչ միայն մեր ուսումնասիրության, այլև կառուցվածքի մեջ: Մեծոփա վանքը

9 Մեզ չի հաջողվել քարտագրել Հայաստանից դուրս գտնվող այն ձեռագրերը, որոնց մասին տեղեկություն չի հրապարակված, կամ հրապարակվածը մեզ մատչելի չի եղել:

սկզբնավորման շրջանից մինչև ԺԵ դարի սկիզբը (դրան ավելացրած նաև այդ դարի երկրորդ կեսը և հետագա հարյուրամյակները) զգալիորեն ավելի քիչ նյութ է տալիս, քան ԺԵ դարի միայն առաջին կեսը: Ուստի մեր ուսումնասիրության առաջին գլուխը նվիրել ենք Մեծոփա գրչության կենտրոնի ԺԲ–ԺԴ դդ. պատմությանը, իսկ երկրորդ գլուխը՝ ԺԵ դարի պատմությանը: Նյութի առատության պատճառով այս գլուխը բաժանել ենք երկու մասի: Երրորդ գլուխը վերաբերում է առաջին և երկրորդ գլուխներն ընդգրկող ժամանակաշրջանի գրչության արվեստին:

***

Ա. Ուսումնասիրության աղբյուրները: Գրչության կենտրոնի ուսումնասիրության հիմնական աղբյուրը տվյալ վայրում ստեղծված ձեռագիրն է, որից ոչ միայն իմանում ենք այդ կենտրոնի գոյության մասին, հիշատակարանից տեղեկություններ քաղում նրա պատմության, գրիչների, ուսուցիչների և այլոց վերաբերյալ, այլև տեսնում ենք տեղում ստեղծված մատյանը, գրչությունը, մանրանկարչությունը, կազմարարությունը և այլն, մի խոսքով՝ գրչության արվեստի կիրառման աստիճանը, նրա առնչությունը մյուս գրիչների կամ գրչության կենտրոնների հետ: Այս տեսակետից, Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրական հավաքածուն մեր ուսումնասիրության հիմնական աղբյուրն է: Այստեղ ձեռագրերը մեզ են ներկայանում «անձամբ», բերելով ոչ միայն իրենց ստեղծման, այլև հետագա կյանքի տառապանքների ու թափառումների պատմությունը[10]:

Ձեռագրերից հետո մասամբ նույն դերը կատարում են ձեռագրացուցակները: Սրանք աշխարհով մեկ սփռված ձեռագրերը մոտեցնում են իրար և (որ հաճախ է պատահել մեզ մոտ) դառնում նկարագրված հավաքածուների անփոխարինելի ներկայացուցիչը: Ձեռագրի վերնագրի նշումով պարզ ցուցակների հանդիպում ենք դեռևս միջնադարում, ինչպես օրն գրասերի

[10] Ռոտավորապես այդպես են նաև գրքից ստացված ձեռագրերի մանրաժապավենները, որոնց մեջ, սակայն, չեն զգացվում գրանյութը և գույնը:

«Ցուցակ գրոց»-ը (1418 թ.)[11], Սաղմոսավանքի[12] և Ամրդոլու վանքի[13] մատենադարանների ձեռագրաց ցուցակները և այլն: 1735 թ. Փրասիացի աբբա Վիլֆրուան կազմում է 128 հայերեն ձեռագրերի համեմատաբար շատ տվյալներ պարունակող ցուցակը[14]: Նույն դարում կազմվում են Վենետիկի[15], իսկ հաջորդ դարերում՝ Էջմիածնի և Երուսաղեմի խոշոր հավաքածուների ձեռագրացուցակները[16]: Տասնիններորդ դարի երկրորդ կեսին հայագիտության նկատմամբ աճող մեծ հետաքրքրությունը ձեռագրերը ավելի հանգամանորեն ներկայացնելու պահանջ է առաջադրում: Միմյանց հետևից լույս աշխարհ են գալիս եվրոպական մեծ քաղաքներում գտնվող հայերեն ձեռագրերի հավաքածուների ցուցակները[17]: 1895 թ. Հ. Տաշյանը հրատարակում է Վիեննայի Մխիթարյան մատենադարանի ձեռագրերի օրինակելի ցուցակը, ուր ամեն մի ձեռագրի մանրամասն նկարագրության մեջ կատարում է մատենագիտական և բանասիրական քննություններ: 1915 թ. եղեռնից առաջ Արևմտյան Հայաստանի և Թուրքիայի քաղաքներում եղած ձեռագրերի ցուցակները դարձան ոչնչացված այդ ձեռագրերի միակ վկայականները[18]: Ձեռագրացուցակներ կազմելու գործին մասնակցում էին նաև օտարազգի հայագետները:

[11] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 208:

[12] Խաչիկ ծ. վարդապետ, Նորագիւտ մագաղաթեայ նօտրագիր ցուցակ Սաղմոսավանից մատենադարանի, «Շողակաթ», Հայագիտական ժողովածու, Վաղարշապատ, 1913, էջ 167:

[13] Վարդան վարդապետի Բաղիշեցւոյ ցուցակ գրոց Ամրդօլու վանուց, «Արարատ», Վաղարշապատ, 1903, էջ 178–189:

[14] Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակներ, Մ. Տէր-Մովսիսեանի ֆոնդ, թղթ. 14, էջ 9–19:

[15] Բ. Սարգիսեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, Ա, Վենետիկ, 1914, էջ ԺԲ: Այսուհետև՝ Ցուցակ Վենետիկի:

[16] Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, Հ. Ա, Երևան, 1965, էջ 203:

[17] Հիշյալ ձեռագրաց ցուցակների, ինչպես նաև ուղեգրական, տեղագրական, ազգագրական աշխատությունների ցուցակը տե՛ս Օգտագործված գրականության ցանկում:

[18] Տե՛ս Հ. Աճառյան, Հայկական մատենագիտություն, Հ. Ա, Երևան, 1959, «Ձեռագրացուցակներ», էջ LXXVII–XCII: Հմմտ. Մատենագիտություն հայկական մատենագիտության, Երևան, 1963, էջ 265–270:

Հայերեն ձեռագրացուցակների շարքում եզակի տեղ ունի Մ. Տեր-Մովսիսյանի համահավաք ցուցակը, որի մեջ հեղինակը կեսդարյա տքնաջան աշխատանքով ամփոփել էր հազարավոր ձեռագրեր[19]:

Ձեռագրերի հիշատակարանները հսկայական պատմական նյութ են պարունակում և հաճախ օգտագործվել են պատմագրական աշխատությունների մեջ դեռևս միջնադարում, իսկ հետագայում հավաքվել են և հրատարակվել որպես առանձին ժողովածուներ: 19-րդ դարի երկրորդ կեսերին Ղ. Փիրղալեմյանը ավելի քան հազար հիշատակարանից կազմում է «Նշխարք պատմության հայոց» երկհատորյակը[20], որի միայն մի մասն է հրատարակվում «Նոտարք Հայոց»[21] վերտառությամբ: Շատ հիշատակարաններ է պարունակում Ղ. Ալիշանի «Հայապատում»[22]: Հիշատակարանների ավելի հիմնավոր հավաքմամբ և հրատարակմամբ զբաղվել են Գ. Հովսեփյանը և Լ. Խաչիկյանը: Առաջինը կարողացավ հրատարակել իր հավաքածուի միայն առաջին հատորը, որ ընդգրկում էր Ե դարից—1250 թ.[23]: Աշխատասիրողը յուրաքանչյուր հիշատակարանից հետո կատարում է ձեռագրագիտական, հատկապես հնագրության և մանրանկարչության վերաբերյալ արժեքավոր դիտողություններ:

Հրատարակության տեսակետից նրան կանխեց Լ. Խաչիկյանը, 1950 թ. տպագրելով ԺԴ դարի հիշատակարանները[24], ապա 1967 թ. վերջին գրքով ավարտեց ԺԵ դարի հիշատակարանների եռհատորյակը[25]: Այստեղ ևս Լ. Խաչիկյանը պատմաբանասիրական և ձեռագրագիտական արժեքավոր դիտողություններ է կատարում ինչպես առաջաբաններում, այնպես էլ տողատակերում և բազմաբնույթ ցանկերում: Հիշատակարանների այս ժողովածուներում հսկայական նյութ է հավաքված գրչության կենտրոնների և գրչության արվեստի վերաբերյալ:

Հիշատակարանների ժողովածուներից բացի (որոնք այսօր էլ կազմվում են) կան բազմաթիվ ազգագրական, տեղագրական, ուղեգրական աշխատանքներ, որոնց հեղինակները նկարագրել կամ գրի են առել հանդիպած ձեռագիրը կամ հիշատակարանը: Այս կարգի գործերից են Ս. Ջալալյանի[26], Գ. Սրվանձտյանցի, Հ. Ճանիկյանի, Մ. Բարխուդարյանցի, Ս. Հայկունու, Մ. Սմբատյանի, Ե. Լալայանի և այլոց աշխատությունները: Սրանք կարևոր աղբյուրներ են և հաճախ միակ վկայությունները որոշ ձեռագրերի վերաբերյալ: Մեզ համար կարևոր են նաև մանրանկարչական ալբոմները, որոնք օժտված են ձեռագրերի նկարագրությամբ, հիշատակարաններով և ձեռագրական նմուշների լուսանկարներով:

Վերոհիշյալ աղբյուրներից բացի, որոնք հիմնականում սկզբնաղբյուրներ են, գրչության կենտրոնների և գրչության արվեստի ուսումնասիրության համար օժանդակ աղբյուրներ են հայ ժողովրդի քաղաքական պատմության, մշակույթի պատմության, գրի, գրչության արվեստի, դպրոցի, դպրության, դաստիարակության և այլ նման հարցերի նվիրված ուսումնասիրությունները: Այս գործերից այն ամենին, որ առնչվում է մեր ուսումնասիրությանը, կանդրադառնանք շարադրանքի մեջ:

Գրչության բոլոր կենտրոնների համար ընդհանուր այս աղբյուրների մեջ են մտնում և՛ առանձին կենտրոնների և՛ նրանց մշակների մասին ստեղծված գործերը: Այս տեսակետից Մեծոփա վանքի գրչության կենտրոնի ուսումնասիրության համար առաջնակարգ նշանակություն ունեն **տեղի վարդապետների վարքերը** և պատմական, ուսումնական և **այլ բնույթի երկերը**: Շուրջ 60 տարվա ժամանակաշրջան է ընդգրկում

---

19 «Իմ նպատակն է եղել—գրում է հեղինակը—ի մի հավաքել ըստ կարելույն լրիվ տեղեկություն հայերեն անկորուստ մնացած բոլոր ձեռագրերի մասին, ինչ որ ինձ է հայտնի եղել, ինչ որ ուրիշներն են ցուցակագրել և ինչ որ հայերեն գրականության մեջ հիշատակված են» (Անտիպ ձեռագրացուցակներ, Մ. Տեր-Մովսիսյանի ֆոնդ, թղթ. 14, էջ 18):

20 Մատենադարան, ձեռ. 6332, 4515, հեղինակը այս հիշատակարաններից է կազմել Մատենադարանի 6273 ձեռագիրը, նրա գրչին է պատկանում նաև 9027 ձեռագիրը:

21 Նոտարք հայոց, հաւաքեալ և ի լոյս ածեալ ձեռամբ Ղեւոնդ վարդապետի Փիրղալեմեանց Տոսպեցւոյ, Կ. Պոլիս: Այսուհետև՝ «Նոտարք հայոց»:

22 Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901:

23 Գարեգին Կաթողիկոս, Յիշատակարանք, Անթիլիաս, 1951: Այսուհետև՝ Յիշատակարանք:

24 ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1950: Այսուհետև՝ Հիշատակարաններ, ԺԴ:

25 ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկյան, մասն Ա, Երևան, 1955: Այսուհետև՝ Հիշատակարաններ, ԺԵ, Ա: ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, մասն Բ, Երևան, 1958: Այսուհետև՝ Հիշատակարաններ, ԺԵ, Բ: ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, մասն Գ, Երևան, 1967: Այսուհետև՝ Հիշատակարաններ, ԺԵ, Գ:

26 Աշխատությունների ցանկը տե՛ս վերջում:

Թովմա Մեծոփեցու «Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց»[27] գիրքը, որի մեջ Հայաստանի և մասամբ նրա հարևանների պատմությանը զուգընթաց բազմաթիվ առատ և հետաքրքրական տեղեկություններ են տրվում Մեծոփա վանքի ու նրա վարդապետների, ինչպես նաև Տաթևի, Այրականչյաց, Խառաբաստա դպրոցների և նրանց րաբունապետների մասին: Առանձին հետաքրքրություն է ներկայացնում Թ. Մեծոփեցու կազմած նամակների ժողովածուն, «Թուղթ նամակի վարդապետաց եկեղեցւոյ, զոր ի կեանս իմ գտի ես պիտականս վարդապետ Թովմա, աստ հաւաքեցի վասն գրոց աշակերտի...»[28] վերնագրով: Ուսուցման համար հավաքած այս նամակների նշանակությունը ավելի մեծ է, որովհետև այստեղ զետեղված Գր. Խլաթեցու, Գր. Տաթևացու, Հակոբ կաթողիկոսի և շատ ուրիշների նամակներում իրենց արտացոլումն են գտել ժամանակի անցուդարձը և հեղինակների վերաբերմունքը դրանց նկատմամբ: Այս գործը միաժամանակ Թովմա Մեծոփեցու մանկավարժական աշխատանքը բնորոշող վավերագիր է, միջնադարյան դպրոցին բնորոշ երևույթ, որտեղ աշակերտներին սովորեցնում էին նաև բարեձևություն, թագավորին, կաթողիկոսին, իշխանին, եպիսկոպոսին, պարոնին, վարդապետին, տանուտերերին, քահանային գրավոր և բանավոր դիմելու քաղաքավարական ձևերը:

Բավական պատմական նյութ են պարունակում Մեծոփա վանքի վարդապետների վարքերը: Առաջինը Աստվածատուր վարդապետ Մեծոփեցու վարքն է[29], որից, հավանաբար, օգտվել է Կիրակոս Գանձակեցին՝ իր Պատմության մեջ՝ Աղբերկա որդի Աստվածատուրի մասին գրելիս: Այս վարքը կարևոր աղբյուր է Մեծոփա վանքի ԺԲ դարի վերջի և ԺԳ դարի սկզբի պատմության համար: Հաջորդ վարքերը նվիրված են Մխիթար Սասնեցուն և Թովմա Մեծոփեցուն, որոնք գրել են իրենց աշակերտները: Մխիթար Սասնեցու վարքի հեղինակ Մկրտիչը իր եղբայր և Սասնեցու դասընկեր Ստեփանոս վարդապետի պահանջով է գրել «Պատմութիւն հաւատոյ և համառօտ

27 «Պատմութիւն Լանկ Թամուրայ և յաջորդաց իւրոց, արարեալ Թովմա վարդապետի Մեծոփեցւոյ», Փարիզ, 1860: Այսուհետև՝ Պատմութիւն:

28 Վենետիկ, Մխիթարյան Մատենադարան, ձեռ. 1091, էջ 389–475:

29 Մատենադարան, ձեռ. 4517, էջ 370ա–371բ: Յայսմաւուրք, «Մեհեկի և փետրուարի ԺԱ: Յայսմ աւուր յիշատակ է աստուածաբան վարդապետին եկեղեցւոյ Աստուածատրոյ Մեծոփայ վանից սուրբ ուխտին Բաջբերունեաց»: Տե՛ս նաև ձեռ. 1669, էջ 35բ–42ա:

Մխիթար վարդապետի»[30] երկը: Դրանից իմանում ենք, որ Սասնեցին ոչ միայն մատենագիր ու ուսուցիչ էր, այլև գրիչ և ծաղկող: Այս վերջին հանգամանքը ուրիշ տեղից իմանալ չէինք կարող, որովհետև նրանից մեզ նկարազարդ ձեռագիր չի հասել: Սասնեցու վերաբերյալ մի ներբող է գրել նրա մեկ ուրիշ աշակերտը՝ Դանիելը[31]:

Հովհաննես Մեծոփեցու վարքը շարադրված է Թովմա Մեծոփեցու «Պատմութեան» մեջ, իսկ Թովմա Մեծոփեցու վարքը գրել է նրա աշակերտ Կիրակոս բանասերը «Պատմութիւն մեծի րաբունապետին Թումայի» խորագրով: Հինգ ձեռագրերի համեմատությամբ այս վարքը Թովմա Մեծոփեցու հիշատակարաններով և կենսագրության շարադրանքով հրատարակել է Գ. Հովսեփյանը, որը առ այսօր նրա մասին գրված լավագույն գործն է: Հեղինակը նոր նյութերի հիման վրա ոչ միայն լուսաբանում է Թովմա Մեծոփեցու կենսագրության հետ կապված հարցերը, այլև մանկավարժական, եկեղեցական-հասարակական գործունեությանը վերաբերող մի շարք հարցեր:

Հ. Ոսկյանի «Վասպուրականի–Վանի վանքերը» ծավալուն աշխատության մեջ Մեծոփա վանքը ներկայացված է երկու տասնյակ էջերով[32]: Առատորեն օգտագործելով ձեռագրերի հիշատակարաններ և մատենագրական նյութ՝ հեղինակը առաջին անգամ շարադրել է վանքի ամբողջական պատմությունը: Մեծոփա վանքին անդրադարձել է նաև Ե. Քասունին, որը սակայն ծաղկաքաղ երեք էջերի մեջ թույլ է տվել փաստերի շատ աղավաղումներ[33]: Ա. Մովսիսյանը Հայ դպրոցին նվիրված ուսումնասիրության մեջ տվել է Մեծոփա դպրոցի պատմության ամփոփ շարադրանքը[34]: Մեր աշխատության մեջ օգտագործել ենք Լ. Խաչիկյանի «Թովմա Մեծոփեցու գրական վաստակը»[35]

30 Գ. Յովսէփեան, Մխիթար Սասնեցի, Վաղարշապատ, 1899:

31 Անդ, էջ 5:

32 Հ. Ոսկեան, Վասպուրականի–Վանի վանքերը, Բ մաս, Վիեննա, 1942, էջ 420–442:

33 Ե. Քասունի, Պատմութիւն հին հայ դաստիարակութեան, Պէյրութ, 1959, էջ 262–265: Օգտվել է Մ. Օրմանյանի «Ազգապատումից» (էջ 2000) և Վ. Հացունու «Դաստիարակութիւնը հին հայոց քով» (էջ 205–206) աշխատություններից:

34 Ա. Խ. Մովսիսյան, Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության (10–15-րդ դարեր), Երևան, 1958, էջ 200–211:

35 Լ. Խաչիկյան, Թովմա Մեծոփեցու վաստակը: Զեկուցում, կարդացված Մատենադարանի գիտական նստաշրջանում, 1967 թ.:

հոդվածը, ինչպես նաև Հակոբ Ղրիմեցու վերաբերյալ նրա արժեքավոր դիտողությունները ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների Գ մասում[36], Հ. Քյուրտյանի «Գրիչ Յովհաննէս Մանկասարենց» հոդվածը[37], Ն. Տովականի (նույն ինքը Ն. Պողարյան) Մեծոփա վանքի մասին հոդվածը[38], Շերենցի «Սրբավայրերը»[39] աշխատությունը և այլ գործեր:

Գրչության արվեստի հարցերը քննելիս օգտագործել ենք այդ բնագավառի վերաբերյալ մասնագիտական գրականությունը, որտեղ առանձնակի կարևորություն ունի Հ. Տաշյանի «Ակնարկ մը հայ հնագրության վրա»[40] ուսումնասիրությունը, ինչպես նաև հայ գրին և հնագրությանը նվիրված Ի. Հարությունյանի[41], Հ. Աճառյանի[42], Ն. Ակինյանի[43], Կ. Ղաֆադարյանի[44], Գ. Լևոնյանի[45] և հատկապես Գ. Հովսեփյանի[46] աշխատությունները:

Գարեգին Հովսեփյանը ոչ միայն այդ գիտությանը նվիրած, այլև իր մյուս աշխատություններում առիթը բաց չի թողել ծանրանալու գրչագրական այս կամ այն երևույթի վրա: 1912 թ. նա գրում է. «Հայոց գրի գլխաւոր տեսակները» հոդվածը: Հաջորդ տարում լույս է տեսնում նրա «Գրչութեան արուեստը հին Հայոց մէջ» ծավալուն ուսումնասիրության երրորդ մասը՝ «Քարտէզ հայ հնագրութեան»[47] վերտառությամբ, որտեղ

36 Լ. Խաչիկյան, Հիշատակարաններ, ԺԵ, Գ, էջ 342–345:

37 «Բազմավէպ», Վենետիկ, 1968:

38 «Սիոն», Երուսաղէմ, 1932:

39 Գ. Շերենց, Սրբավայրեր, Թիֆլիս, 1902:

40 Հ. Տաշեան, Ակնարկ մը հայ հնագրութեան վրա, Վիեննա, 1898:

41 Ի. Յարութիւնեան, Հայոց գիրը, Թիֆլիս, 1892:

42 Հ. Աճառեան, Հայոց գրերը, Վիեննա, 1928:

43 Ն. Ակինեան, Հայերէն այբուբենի գիւտը, «Հանդէս ամսօրեայ», 1938, էջ 289–318:

44 Կ. Ղաֆադարյան, Հայկական գրերի սկզբնական տեսակները, Երևան, 1938:

45 Գ. Լևոնյան, Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան, 1946:

46 «Տարազ», Թիֆլիս, 1912, թիվ 10, էջ 168–172:

47 Գարեգին Յովսէփեան, Գրչութեան արուեստը հին Հայոց մէջ, մաս Գ, Քարտէզ հայ հնագրութեան, Վաղարշապատ, 1913: Մինչ այդ տպագրվել էր «Շողակաթ» հայագիտական ժողովածուում, նույն թվականին՝ նույն տեղում:

ձեռագրերից ու վիմական արձանագրություններից քաղված 90 տախտակների նմանահանությունների միջոցով ցույց է տալիս հայ գրի զարգացման պատկերը: Աշխատության մյուս մասերն անտիպ են, միայն «Հասկ» հայագիտական ամսագրի 1967 թ. վերջին համարում լույս տեսավ «Գրի և գրչութեան արուեստը»[48] հոդվածը: Բավականին շատ նյութ կա նրա «Նիւթեր և ուսումնասիրութիւններ հայ արուեստի և մշակոյթի պատմութեան» խորագիրը կրող պրակներում և մյուս հոդվածներում:

Կարո Ղաֆադարյանն իր արժեքավոր աշխատության մեջ ի մի է բերում հնագրության վերաբերյալ իրենից առաջ եղած կարծիքները և տարբեր տառերի տեսակները որոշելու վերաբերյալ առաջարկում է, մեր կարծիքով, ճշգրիտ տեսակետը, ըստ որի տառատեսակները պետք է որոշել նրանց գծագրական առանձնահատկությունները հաշվի առնելով և ոչ մեծությունը[49]:

Պատմաբան Ա. Աբրահամյանը 1959 թ. հրատարակում է «Հայ գրի և գրչության պատմություն»[50] ծավալուն աշխատությունը, որ իր նախորդ (1940, 1949 թթ.) նույն կարգի աշխատություններից[51] ավելի հարուստ է ու կատարյալ: Արժեքավոր է հատկապես աշխատության վերջին մասը, որը հեղինակի ձեռագրագիտական երկարամյա պրպտումների արդյունքն է: Դրանք վերաբերում են թվանշանների գործածության, գաղափարագրության, ծածկագրության, թվականների հաշվումների և ձեռագրագիտական այլևայլ հարցերի: Օգտակար են Լ. Խաչերյանի ջանքերով հրապարակված Աբիստակես դպրի, Գևորգ Սկևռացու, Գրիգոր Տաթևացու և այլոց՝ գրչության արվեստի վերաբերյալ աշխատությունների բնագրերը[52]: Գրչության արվեստի հարցերին հոդվածներ է նվիրել նաև Ս. Քոլանջյանը:

Գրչության գործիքներին, արհեստին և կազմարարությանն են նվիրված Բ. Առաքելյանի Հայաստանի քաղաքների և

48 «Հասկ», թիւ 12, Բեյրութ, 1967, էջ 531–541: Հրատարակիչը խոստանում էր պարբերաբար հատվածներ լույս ընծայել հիշյալ գործից:

49 Կ. Ղաֆադարյան, Նշված աշխ., էջ 12:

50 Ա. Գ. Աբրահամյան, Հայ գրի և գրչության պատմություն, Երևան, 1959:

51 Նույնի, Համառոտ ուրվագիծ հայկական պալեոգրաֆիայի, Երևան, 1940: Նույնի, Հայկական պալեոգրաֆիա, Երևան, 1949:

52 Լ. Գ. Խաչերյան, Գրչության արվեստի լեզվա-քերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում, Երևան, 1962:

արհեստների մասին գրած աշխատության որոշ էջեր[53]: Կազմարարությունը ուսումնասիրության նյութ է դարձել նաև Գ. Հովսեփյանի համար[54]: Հայ մանրանկարչության ուսումնասիրության և այն ներկայացնելու գործում, Գ. Հովսեփյանից բացի, մեծ երախտիք ունեն Ս. Տեր-Ներսեսյանը, Լ. Դուռնովոն, Տ. Իզմայլովան, Լ. Ազարյանը[55]: Ուսումնասիրված են նաև Գլաձորի (Ա. Ավետիսյան), Արճեշի (Հ. Հակոբյան) և Ղրիմի (Է. Կորխմազյան) մանրանկարչական կենտրոնները: Այս բոլորը այս կամ այն չափով օգնում են գրչության կենտրոնների և գրչության արվեստի ուսումնասիրության ընդհանուր գործին:

***

Բ. Պատմա-աշխարհագրական ակնարկ: Քաջբերունի կամ Արճեշ գավառը, ուր գտնվում է Մեծոփա վանքը, արևելքից սահմանակից է Վասպուրականի Տոսբերունի (Առբերանի կամ Բերկրի), հյուսիսից՝ Այրարատի Կոգովիտ և Ծաղկոտն, արևմուտքից՝ Տուրուբերանի Ապահունիք և Բզնունի գավառներին: Նրա հյուսիսում բարձրանում են Ծաղկոտն լեռները, իսկ հարավային ափերը ողողում են Վանա լճի ջրերը: Գավառն զբաղեցնում է այն տարածքը, որը հայ պատմիչների մոտ և հայկական հին Աշխարհացույցում կոչվում է Աղիովիտ: Գավառի Քաջբերունի անվանը առաջին անգամ հանդիպում ենք տասներեքերորդ դարում Վարդան Արևելցու մոտ. «Աղիովիտ և Քաջբերունի Արճէշ է, ուր կան սուրբ ուխտքն Մեծոփ, և Արծուաբեր, և Ուռընկարու Սուրբ Նշանն ամենազօր»[56]: Ուրեմն Աղիովիտը, Քաջբերունին և Արճեշը միևնույն գավառի տարբեր անուններն են, գործածված տարբեր ժամանակներում: Հետևաբար Ս. Երեմյանի այն ենթադրությունը, թե արդեն 5-րդ դ. Գառնի գավառը Առբերանի գավառի հետ միասին կազմում

53 Բ. Առաքելյան, *Քաղաքները և արհեստները Հայաստանում, 9–13-րդ դդ.*, հ. Ա, Երևան, 1958, էջ 303–326:

54 Գ. Յովսէփեան, *Մի էջ հայ արուեստի և մշակոյթի պատմութիւնից*, Հալէպ, 1930:

55 Լ. Ազարյան, *Կիլիկյան մանրանկարչությունը 12–13-րդ դդ.*, Երևան, 1964:

56 Վարդան վարդապետ, *Աշխարհացոյց, քննական հրատարակութիւն Հ. Պէրպէրեանի*, Փարիզ, 1960, էջ 18, 37:

էր մի գավառ՝ Քաջբերունիքի կամ Քաջբերունեաց երկիր անունով[57], կարոտ է վերանայման:

Գավառի անունը Մովսես Խորենացին, Փավստոս Բուզանդը և հաջորդները գրում են «Աղիովտի», «Աղիովտայ», «Աղուոյովիտ», «Աղոյհովտի» ձևերով: Հ. Հյուբշմանի կարծիքով, սրանցից հնագույնը «Աղւոյ հովիտ»-ն է[58]: Հիրավի այստեղ «Աղի» անունով և լեռ կա, և գետ, և գյուղ: Նույնիսկ Վանա լիճը երբեմն կոչվել է «Աղի»[59]: Այստեղ է գտնվել ուրարտական «Ալի» կրոնական կենտրոնը: Այստեղից էլ երկրամասի հայկական Աղիովիտ անունը[60]: Հայկական հին «Աշխարհացույցում» Աղիովիտ գավառը մտնում է Տուրուբերանի նահանգի մեջ, իսկ մի մասը՝ Վասպուրականի: Այս մասը Առբերանի գավառի հետ Ս. Երեմյանը համարում է Արշակունյաց տան սեպուհների բնակավայրը, որից էլ «սեպու[ր]հական» կամ «վասպուրական» անունները[61]: Թ. Հակոբյանի կարծիքով, Առբերանի գավառին սահմանակից լինելու պատճառով միայն Աղիովիտը դասված է Վասպուրականի կազմում, որ Աղիովիտը ոչ լրիվ, ոչ էլ մասամբ Վասպուրականի մեջ չի մտել մինչև տասներորդ դարի սկիզբը, երբ Արծրունիներն իրենց իշխանության մեջ առան՝ ի շարս այլ գավառների, նաև Տուրուբերանի Աղիովիտը[62]: Ս. Երեմյանն էլ է ենթադրում, որ «սկզբում գոյություն ուներ մեկ Աղիովիտ գավառ, սակայն հետագայում, երբ բարձրանում է վաճառաշահ Զարիշատ քաղաքը, վերջինս ի պատիվ Արտաշես Ա-ի հոր՝ Զարեհի, ստանում է «արքունի քաղաքի» իրավունք և նրա հետ միասին հողային տարածություն՝ Աղիովիտ գավառի արևմտյան մասը, իբրև Զարիշատ Աղիովտի քաղաքի քաղաքային «տերիտորիա»:

57 Ս. Տ. Երեմյան, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, Երևան, 1963, էջ 46: Այսուհետև՝ «Աշխարհացոյց»: Ղ. Ինճիճյանը գրում է, որ Աղիովիտը «վերջէն Արճիշոյ կամ Քաջբերունի գաւառ անուանուեցաւ» («Հնախօսութիւն Հայաստանեայց», Վենետիկ, 1822, էջ 126):

58 Հ. Հիւբշման, *Հին հայոց տեղւոյ անունները*, Վիեննա, 1907, էջ 195–196: Հմմտ. Ս. Էփրիկեան, *Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան*, Ա, Վենետիկ, 1900, էջ 101:

59 Ս. Երեմյան, *«Աշխարհացոյց»*, էջ 33:

60 *Անդ*, էջ 52:

61 *Անդ*, էջ 33:

62 Թ. Խ. Հակոբյան, *Հայաստանի պատմական աշխարհագրություն (ուրվագծեր)*, Երևան, 1968, էջ 187:

Տուրուբերանի Աղիովիտը, ըստ Ս. Երեմյանի, զբաղեցնում էր 1575 ք. կմ մակերես, իսկ սեպուհների բաժինը՝ 600 ք. կմ[63]:

Ղ. Ինճիճյանը, Հ. Ոսկյանը, Թ. Հակոբյանը գտնում են, որ Աղիովիտը ամբողջությամբ կամ մասամբ պատկանել է Գնունյաց նախարարական տոհմին. «Վասն երկրին Գնունեաց թէպէտ յայտնի ինչ ոչ գտանեմք ի գիրս, այլ ի բանից Վարդանայ յայտ է լինել Աղիովիտ գաւառ Տուրուբերանոյ, մանաւանդ զի շարունակող Թումայի Արծրունւոյ զԱրճէշ քաղաք Աղիովիտ գաւառի կոչէ քաղաք Գնունեաց»[64]: Հենվելով այս վերջին վկայության, ինչպես նաև Գնելի՝ մոր կողմից Գնունի պապից Շահապիվան լեռը ժառանգելու մասին տեղեկության վրա, Հ. Ոսկյանը Գնունյաց նախարարությանը նվիրած աշխատության մեջ գրում է. «Աղիովիտ, Արճիշակովիտ և Առբերանի (Բերկրի) գավառները կրնանք Գնունիներու ժառանգությունը համարել, եթե ոչ իրենց ամբողջական տարածությամբ, գոնե կարևոր մասովը»[65]: Այստեղ միայն հիշենք, որ Արճիշակովիտը, ինչպես ճշգրտել են վերջին ուսումնասիրությունները, ոչ թե Արճեշի, այլ Արճիշակ լճի շրջակայքի տարածքն է և գտնվում է ոչ թե Արճեշի մոտ, այլ Վան-Տոսպից արևելք: Թ. Հակոբյանի կարծիքով էլ գավառի մյուս մասը, «Ամենայն հավանականությամբ, պատկանում էր Գնունի նախարարական տանը»[66]: Այսպիսով Աղիովիտը Գնունիներին պատկանելու վերաբերյալ իրենց եզրակացությամբ հիշյալ գիտնականները հենվում են Վարդան Արևելցու, Թովմա Արծրունու շարունակողի և Մովսես Խորենացու վկայությունների վրա, որոնք, սակայն, բոլորովին էլ այդ ցույց չեն տալիս: Եթե Ղ. Ինճիճյանը նկատի ունի Վարդան Արևելցու «Աշխարհացույցը», ապա այնտեղ ասված է. «Գնունիք Ամուկ է», «Առբերան և Տարբերունի Բերկրի է», իսկ «Աղիովիտ և Բաջբերունի Արճեշ է»[67]: Լիմ կղզու դիմաց էր գտնվում Ամյուկ ամրոցը[68]: Սրա անունով էր կոչվում շրջակա

63 Ս. Տ. Երեմյան, «Աշխարհացոյց», էջ 33:

64 Ղ. Ինճիճեան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Վենետիկ, 1835, էջ 125:

65 Հ. Ոսկեան, Գնունեաց և Ռշտունեաց նախարարութիւնները, Վիեննա, 1952, էջ 6:

66 Թ. Հակոբյան, Նշված աշխ., էջ 171:

67 Վարդան Արևելցի, Աշխարհացոյց, էջ 19, 18, 17:

68 Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 175:

տերիտորիան՝ նույն Առբերանի գավառը, որը պատկանում էր Գնունիների նախարարական տանը: Աղիովիտի մասին այստեղ խոսք չկա: ԺԲ դարում Ամյուկ բերդը իր շրջակայքով մինչև Աղթամար, պատկանում էր Արծրունյաց թագավորների շառավիղներից Աբդլմսեհին, ապա՝ նրա որդի Ստեփանոս Ալուզին: Վերջինս հիշյալ դարում նորոգել և լրացնել է տալիս Թովմա Արծրունու Պատմության ձեռագիրը[69]: Ստեփանոսի նախնիների Պատմության շարունակողը հիշում է տասնմեկերորդ դարի վերջին դեպքերը՝ կապված սելջուկ Սրահանգի հետ, որը ավերում է «նոյնպէս և զԱրճէշ քաղաք Գնունեաց գաւառին»[70]: Արճեշը, որպես Արծրունյաց թագավորության ժառանգություն, պատկանում էր Ամյուկի իշխան Ստեփանոս Ալուզին: Նրա պատվերով Պատմությունը շարունակողը Արճեշը, որպես Ամյուկի իշխանության մեջ մտնող քաղաք, կարող էր համարել Գնունյաց գավառի քաղաք: Այնպես որ, հենվելով միայն սույն վկայության վրա, չի կարելի Աղիովիտը մասամբ կամ ամբողջովին համարել Գնունիների սեփականություն, իսկ Արճեշը՝ Գնունիների քաղաք:

Վերջին փաստարկը Խորենացու վկայությունն է, ըստ որի Գնել Արշակունին Շահապիվան լեռը ժառանգություն էր ստացել մորական պապ Գնունուց[71]: Շահապիվան լեռը կարող էր սահմանակից լինել և Աղիովիտին, և Առբերանին: Բայց քանի որ այն պատկանել է Առբերանի գավառի տեր Գնունիներին, որոնք միայն իրենց տարածքը կարող էին նվիրել իրենց թոռանը, ուստի այն Աղիովիտի սահմաններից դուրս է գտնվել: Որ Ծաղկոտն լեռները ու դրանց շարքում՝ Շահապիվան լեռը տարածվում էին Աղիովիտից հյուսիս-արևելք, վկայում է Բարսեղ Արճիշեցին: Լեռը «Ծաղկեոյ, որ Ալատաղ կոչի՝ հանդէպ Ուռնկարու Սուրբ Նշանին»[72] է, իսկ վերջինս Աղիովիտ գավառի արևելյան ծայրում էր գտնվում, Առբերանի սահմաններում, Շահապիվան լեռան մոտ: Ինչպես տեսնում ենք, այն երեք փաստերը, որոնց վրա հենվում են Աղիովիտը Գնունիներին հանձնողները, հիմնավոր չեն: Իսկ թե ովքեր են բնակվել Աղիովիտում, կամ որ նախարարական տանն է

69 Անդ, էջ 516:

70 Անդ, էջ 501:

71 Լեռը «որ Շահապիվանն անուանի, որ ի մայրենի հաւոյ իւրոյ Գնելոյ Գնունւոյ հասեալ էր ցնա», Մ. Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 284:

72 «Մանր ժամանակագրություններ» 13–18-րդ դդ., հտ. Ա, Երևան, 1951, «Տարեգրութիւն Տէր Բարսեղի», էջ 126:

պատկանել գավառը, ցույց է տալիս գավառի Քաջբերունի անվանումը: Բզնունի, Խորխոռունի, Ապահունի, Գնունի նախարարական տների հարևանությամբ էր ապրում Քաջբերունի նախարարական տունը: 451 թ. Ավարայրի ճակատամարտում նահատակված զորավարների թվում Քաջբերունի Ներսեհից հետո հիշվում է Գնունյաց Մանուկ Վահանը: Աղիովիտ և Առբերանի տերերն էին նրանք[73]: Սահակ Պարթևի կազմած Վռամական գահնամակում Քաջբերունի տոհմը զբաղեցնում է հիսունյոթերորդ տեղը[74]: Ավարայրում երկրորդ գնդի նիզակակիցն էր Ներսեհ Քաջբերունին[75]: Ագաթոնի տեսիլքի մեջ Կոստանդիանոս թագավորին այցելության մեկնած հայ նախարարական տների ներկայացուցիչների շարքում հիշվում են նաև «ազգն զաւրաւոր Քաջբերունեաց»[76]: Թովմա Արծրունու վկայությամբ, 849 թ. Արաբ Աբուսեթի դեմ մղած կռվում Տարոնի և Արծրունի իշխանների զորքերին դաշնակցում էին Վասպուրականի և Տուրուբերանի բազմաթիվ նախարարներ, որոնց հետ և՝ Գրիգոր Քաջբերունին[77]: 9-րդ դարի երկրորդ կեսից հայտնի է «Գրիգոր վարդապետ Քաջբերունո» նշանավոր գրիչը[78]: Ուրեմն այդ ժամանակ արդեն Քաջբերունիք էր կոչվում Աղիովիտը և այն գալիս էր տեղական նախարարական տոհմանունից:

Քաջբերունիների անունով են կոչվում թերևս գավառի «Քաջաց կայանք» լեռները[79]: Թե երբ են Քաջբերունիները հեռացել պատմության ասպարեզից, անհայտ է:

Մոնղոլական տիրապետության շրջանում և հետո Քաջբերունիքի կամ Արճեշի գավառը առանձին միավոր էր, որն ուներ իր տեսուչը՝ աշխարհիկ և կրոնական իշխանության որոշ

[73] Եղիշե, Պատմութիւն վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957, էջ 119:

[74] Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1901, էջ 430, Ներդիր պատառիկ, արտագրված է «Քաջբերանին» ձևով (անդ, էջ 431):

[75] Եղիշե, Պատմութիւն վասն Վարդանայ, էջ 116:

[76] Բեռլինի Արքայական մատենադարան, MS. or. 805 (Հայերեն ձեռագրերի ժողովածու), էջ 257ա: Տե՛ս Մատենադարան, Հայերեն ձեռագրերի մանրաժապավեններ», 35:

[77] Թովմա Արծրունի, Պատմութիւն, էջ 186:

[78] Մատենադարան, ձեռ. 3711, էջ 10բ:

[79] Հիշատակարաններ ԺԴ, էջ 40: Այս «կայանքները» չպետք է շփոթել ոչ Արշակունիների արքունի ձմեռոցների հետ, որոնք «կայանք զօրացն» էին և հիմնականում տեղավորված էին բերդերում ու բերդավաններում, ոչ էլ արաբական զորակայանի հետ Քաջբերունիքում, որ Արճեշ քաղաքն էր:

իրավունքներով: Քաջբերունիքն աղբյուրներում հիշվում էր Վասպուրականից առանձին, որպես ինքնուրույն մարզ: Այսպես. «յերկիրն Վասպուրականի և Քաջբերունոյ»[80]: Բարսեղ Ապխնկեցին (Բարսեղ Արճիշեցի ժամանակագիրը) գրում է, որ թշնամին մտավ «նախ ի գաւառն Վասպուրական՝ ի Վան և յՈստան... եւ ապա անդի ելեալ եկին ի գաւառս Քաջբերունոյ»[81]: Վասպուրականը նույնացվում էր հաճախ Վան-Տոսպ գավառի հետ. Վարագի առաջնորդը կոչվում էր վերադիտող Վասպուրական երկրի[82], իսկ երբեմն էլ Վասպուրական է կոչվում Վան քաղաքը[83]: Այդ ժամանակ պատմական աղբյուրներում և հիշատակարաններում հաճախ Վասպուրականին փոխարինում է «Ծովու բոլոր» անունը, որի մեջ մտնում էին ոչ միայն Վասպուրականի, այլև Տուրուբերանի լճափնյա գավառները: Ստեփանոսը և Հովհաննեսը «են նազելի փիլիսոփայք և վարդապետք Ծովու բոլորին»[84]—գրում է Հակոբ Ռշտունցի վարդապետը 1386 թ.՝ նկատի ունենալով Մոկաց Սարի վանքի դպրոցի ուսուցիչներին: Իսկ Թովմա Մեծոփեցին գրում է, որ 1395 թվականից խաղաղություն եղավ, «մեռասան ամ Ծովու բոլորս»[85]:

Այսպիսով, Աղիովիտ-Արճեշի գավառ-Քաջբերունիք միևնույն տարածքային միավորն է, որը գտնվել է Տուրուբերանի նահանգում: Այն հնագույն ժամանակներում պատկանել է Քաջբերունի նախարարական տոհմին, ինչպես Ռշտունիքը՝ Ռշտունիններին, Բզնունիքը՝ Բզնունիններին և այլն, և տոհմի անունից կոչվել է Քաջբերունիք:

Տասներորդ դարից այն միացել է Վասպուրականի Արծրունյաց թագավորությանը և դարձել Վասպուրականի գավառ: Թերևս այդ պատճառով էլ նույն շրջանում կամ Ստեփանոս Ալուզի ժամանակ, վասպուրականցի գրիչների կողմից մուծվել է «Աշխարհացոյցում» և հիշվել թե Տուրուբերանի և թե Վասպուրականի նահանգներում:

[80] Մատենադարան, ձեռ. 965, էջ 377բ:

[81] Հիշատակարաններ, ԺԵ, Գ, էջ 256:

[82] Անդ, էջ 11:

[83] Հիշատակարաններ, ԺԴ, էջ 573:

[84] Մատենադարան, ձեռ. 5707, էջ 485ա:

[85] Թովմա Մեծոփեցի, Պատմութիւն, էջ 49:

***

Քաջբերունիք գավառի միջով Ծաղկոտն լեռներից դեպի Վանա լիճ են հոսում մի շարք մանր գետեր ու գետակներ, որոնցից նշանավոր են Աղին և Վրհոնիցը: Լեռների և լճի միջև ընկած տարածությունը հայտնի է Աղիովիտի կամ Արճիշո դաշտ անունով, որի միջով անցնում էր միջազգային տարանցիկ ճանապարհը: Այդտեղ էին գտնվում գավառի նշանավոր Զարիշատ և Արճեշ քաղաքները: Իսկ վանքերը՝ հյուսիսում, լեռնալանջերին: Ծաղկոտն լեռների հարավային փեշերին, Վրհոնից գետի վերին հոսանքում, երկու կիրճերի միացման տեղում էր գտնվում Մեծոփա Ս. Աստվածածնի վանքը: Նրանից հարավ բարձրանում է ոչ բարձր լեռնաշարը, որը վանքը բաժանում է Արճեշի դաշտից: Վանքի մոտակայքում էին գտնվում Մեծոփ, Հարություն, Ասպիսնկա գյուղերը, Այրի ձոր անապատը, Ասպիսնկա Ս. Աստվածածնի վանքը և Ս. Հարության եկեղեցին: Ս. Աստվածածին վանքի «Մեծոփ» մականունը բանասերները կապում են վանքի վերևում հնուց կառուցված ջրամբարի՝ «ոփի» հետ, որ նշանակում է փոս, և որովհետև այդ փոսը մեծ է եղել, կոչվել է մեծ ոփ. «Մեծոփ» կոչեցաւ զի վերոյ մենաստանին ոփ մեծ՝ որ է փոս նախնեաց պատրաստ շինեալ, վասն ջուրց հավաքման»[86]: Նույնն է հաստատում Խ. Լեոնյանը[87]:

Սակայն վանքն իր մականունը կարող է ստացած լինել Մեծոփ գյուղի անունից, իսկ վերջինս՝ ոփից (փոսից), որովհետև գյուղերին մոտ եղած վանքերը կոչվում էին նրանց անուններով: Նույն Քաջբերունիքում Ասպիսնկա գյուղի անունով էր կոչվում նրա մոտ գտնվող Ս. Աստվածածնի վանքը, իսկ Արծվաբերդ կամ Սուխարու Ս. Աստվածածնի վանքը՝ Խառաբաստա վանք՝ այդ գյուղի անունով: Քաջբերունյաց առաջնորդ տեր Աբրահամը 1291 թվականի արձանագրության մեջ, ուրիշ այլ գյուղերի և կալվածքների շարքում, հիշում է նաև «զգեղն Մեծոփ, իւր մզրախըքն եւ խարհանիքն եւ

86 Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վեննետիկ, 1864, էջ 267: Այսուհետև՝ Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք: Հմմտ. Ղ. Ինճիճեան, Նոր Հայաստան, էջ 166: Ծերենց, Սրբավայրեր, էջ 91: Հ. Ոսկեան, Վասպուրականի, Վանի վանքերը, էջ 420–421:

87 «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, 1900 թ., 1196:

Բրդադեղերով»[88], որոնք վերադարձվել են Ասպիսնկա Ս. Աստվածածնի վանքին, որպես «...սեփական աւանդսն, որ կորդեալ էր յառաջնոցն, նախքան զաւերն ի Խորազմէն», խոսքը Խորեզմ-շահ Ջալալեդդինի 1225–1230 թթ. Հայաստանում կատարած ավերածությունների մասին է[89]: Հետևաբար Մեծոփ գյուղը եղել է ԺԳ դարից առաջ, որի մոտ կառուցված Ս. Աստվածածին վանքը կարող էր կոչվել նրա անունով:

Բանասիրության մեջ տասներեքերորդ դարի սկզբում է համարվում Մեծոփա վանքի հիմնադրումը, իսկ Աստվածատուր Մեծոփեցին՝ հիմնադիր. «Թվին ՈԾ (1201) Մեաեյարոյց Աստուածատուր վարդապետ Արճիշեցին շինէ Սուրբ Աստուածածին եկեղեցին... Մեծոփայ և ապա վախճանեալ թաղի ի նոյն մենաստանն»[90]: Ղ. Փիրղալեմյանի այս տեղեկությունը քաղված է Աստվածատուր վարդապետի վարքից, որից, սակայն, երևում է, որ այդ թվականին նա ոչ թե շինել, այլ վերաշինել է Ս. Աստվածածնի վանքը, և այն կար մինչ 1201 թվականը: Այստեղ ևս «շինել» բայը «վերաշինել», «վերակառուցել» է նշանակում, ինչպես ցույց է տվել Հ. Օրբելին[91]:

Աստվածատուրը իր նախնական կրթությունն ստացել է այդ վանքում, երեսուներեք տարեկան հասակում վարդապետական աստիճանի հասել և որոշ ժամանակ անց միայն, «մեռանել ծնողացն, յերթեալ Արճէշ քաղաքի, առեալ զստացուածս ծնողաց իւրոց, բաժանեալ ցրուեաց եւ ետ ողորմութիւն աղքատաց և տնանկաց, զի ունէին կուղպակ բազումս, եւ զաւելորդն առեալ շինեաց զսուրբ զեկեղեցի Աստուածածնի կուսին, յամի ՋԾ (1201) թուականութեան մերս տումարի»[92]: Հետևաբար,

88 Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք, էջ 268: Հետագայում, մինչև 1895 թ. Բրդադեղերը մի քանի այլ գյուղերի հետ հարկատու են դառնում Մեծոփա վանքին:

89 Հատկապես 1228–1230 թթ. Ջալալեդդինի և Իկոնիայի սուլթանի և այլոց զորքերի ռազմաբեմն էր Խլաթի շրջանը, որը ծանր տառապանքներ բերեց տեղի բնակչությանը (Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հտ. Գ, Երևան, 1952, էջ 192):

90 Գ. Աղանեանց, Դիվան Հայոց պատմութեան, գիրք Ժ, Թիֆլիս, 1912, այուն 492–493:

91 **И. А. Орбели**, Шесть армянских надписей VII–X вв., Христианский Восток, т. III, вып. I, Петроград, 1914, стр. 87.

92 Մատենադարան, ձեռ. 4517, էջ 370ա–371բ, «Մեհեկի Ե և Փետրուարի ԺԱ: Յայսմ աւուր յիշատակ է աստուածաբան վարդապետին եկեղեցւոյ Մեծոփայ վանից սուրբ ուխտին Քաջբերունոյ»: Տե՛ս, նաև ձեռ. 1669,

մինչև հիշյալ թվականը Մեծոփա Ս. Աստուածածնի վանքը կար, որտեղ ոչ միայն սովորել, այլև վարդապետ դառնալուց հետո ապաստանել է Աստվածատուրը և ապա վերակառուցել: Մեծոփա վանքի հնությունն, այսպիսով, հասնում է ԺԲ դարի կեսերը: Մեծոփա վանքը վերստին վերաշինվում է երկու հարյուր տարի հետո, տասնհինգերորդ դարի սկզբին, Հովհաննես Մեծոփեցու ջանքերով: Այդ մասին է վկայում վանքի կառուցման արձանագրությունը. «Թուին ՊԾԸ (1409) ես Յովհաննէս վարդապետս վերջինս եկեղեցւոյ և առաջնորդ աստուածաբնակ սուրբ ուխտիս Մեծոփայ, միաբանութեամբ ամենայն եղբարցս ապաստան եղեալ ի նոյն, որ զօրացոյց զտկարս, ձեռն ի գործ արկեալ շինեցաք զսուրբ տաճարս Մարիամայ Աստուածածնին...»[93]: Եկեղեցու կամարների մեջ, Հովհաննես Մեծոփեցու խորհրդով, վարդապետները գաղտնի դարաններ էին կառուցել՝ ձեռագրերը թաքցնելու համար[94]: Շինարարությունը սկսվել էր 1402 թ. և մեծ դժվարությամբ ավարտվել, որովհետև, ինչպես վկայում է Թ. Մեծոփեցին, այդ մի ժամանակ էր, երբ միայն քանդում էին հայոց եկեղեցիները, ոչ թե կառուցում: Հովհաննես վարդապետի հեղինակությունն ու կամքը հաղթահարեց բարբարոս իշխողների արգելքները և որոգայթները: Վանքի պատերին գրված արձանագրություններից երևում է, որ այն մասնակի նորոգման է ենթարկվել 17-րդ դարում[95]: 1895 թ. թալանվում է վանքը, իսկ 1915 թ. ավերվում:

⁂

Վանա լճի հարավում և արևելքում նվաճումներն ավարտելուց հետո, Արծրունյաց թագավորները 10-րդ դարում նվաճումներ սկսեցին լճի հյուսիսում և արևմուտքում: Այրարատից իրենց իշխանությանը միացրին Կոգովիտը, իսկ Տուրուբերանից՝ Աղիովիտ (Քաջբերունիք), Բզնունիք, Կոր և

35բ–42ա: Հմմտ. Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 183–184:

93 Ղ. Փիրղալեմեան, Նոտարք հայոց, Կ. Պոլիս, էջ 30:

94 Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք, էջ 217: Հեղինակը ցավով նշում է, որ ձեռագրերը թալանել էին այդ ժամանակ (19-րդ դար), մնացել էր մի Ճառընտիր և մի Սարգիս գիրք:

95 «Նոր դար», Թիֆլիս, 1893, էջ 145:

Խորխոռունիք գավառները[96]: 1113 թ., երբ հաստատվեց Աղթամարի կաթողիկոսությունը, նրա թեմերից մեկն էր նաև «Արճեշի գաւառն իւր աթոռով»[97]: Արծրունիների թագավորության անկումից հետո, սելջուկյան արշավանքների սկզբում, Տուղրիլի հրոսակների ավերածություններից Արճեշը շրջակայքով ազատվում է՝ մեծ քանակությամբ ոսկի, արծաթ, ձիեր ու ջորիներ նվիրելով[98]: Սակայն դեռևս արաբական տիրապետության շրջանում պարսկա-արաբական գաղթականությունը հաստատվել էր Դվինում և, ինչպես գրում է Հ. Մանանդյանը, գրավել էր նաև Վանա լճի շրջակայքը, Բերկրի, Մանազկերտ, Արճեշ քաղաքները և այլ վայրեր: Թուրք ու այլ եկվոր ցեղերը հաստատվեցին Հայաստանի զանազան կողմերում[99]: Խլաթի ամիրայության հզորացման ժամանակ Շահի-Արմեն Միրան ամիրայի (1128–1185) տիրապետությանն է միացվում Արճէշ-Աղիովիտը, և հետո ընկնում է Շահի-Արմեններին փոխարինող էյուբյանների գերիշխանության տակ:

Քաջբերունիքի և Առբերանի բնակչությունը մեծ տառապանք է կրում Խորեզմշահ Ջալալեդդինի արշավանքներից: Համարյա ամբողջովին սրի են քաշվում Բերկրի և Արճեշ քաղաքների բնակիչները: Մոնղոլական տիրապետության շրջանում, հատկապես տասներեքերորդ դարավերջին և հաջորդ դարասկզբին, երբ թաթար-մոնղոլները մահմեդականություն են ընդունում, բնակչության հարստահարմանը ավելանում են կրոնական ճշումն ու հալածանքը, անտանելի է դառնում հայ ժողովրդի վիճակը[100]:

96 Թ. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն, էջ 176:

97 Գ. Յովսէփեան, Յիշատակարանք, Ա, էջ 191:

98 Մ. Ուռհայեցի, Պատմութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 118:

99 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Երևան, հ. Գ, 1952, էջ 77:

100 Ահա այդ ժամանակը ներկայացնող մի չհրապարակված վավերագիր, որ բերում ենք աննշան կրճատումներով.
«...Ի կայսերական բանակալութեան ազգին նետողաց Ղարպանտայ ղանին, որ էր այր չար և ատեցող քրիստոնէից և պատրելի դիւթական և աղանդաւոր շեխերուն, և խորհուրդ չար ի մէջ բերելով գործակցաւն իւրեանց սատանայի, ըսկսան մարտնչել ընդ անյաղթելի վիմին Քրիստոսի և հանել հրովարտակ ընդ ամենայն տեղերս, որ ընդ իւրով իշխանութեամբ էին, ի վերա այնու քրիստոնէից. կամ դառնալ ի մոլար դաւանութիւն Մահմէտի և կամ տալ խարաճ ամեն մարդ իւր գլխոյն Ը (8) դահեկան, և թուք և ապտակ ի յերեսն, և զմորուսն ճողել: Եւս և կարկատան մի ի վերայ յաջոյ յուսին կարեալ նախատինք վասն Քրիստոսի: Եւ չար

14-րդ դարի վերջին Լենկ-Թեմուրի աշխարհավեր արշավանքները ծայր աստիճան քայքայում են Հայաստանի գավառները: Բանակալի մահից հետո դահակալական արյունահեղ պատերազմներ են սկսվում նրա ժառանգների, այնուհետև այդ պայքարի մեջ մտած նոր ուժերի՝ սուլթան Ահմադի և Կարա Կոյունլու քոչվորական ցեղերի առաջնորդ Կարա-Յուսուֆի միջև: 1408–1411 թթ. հաղթելով իր բոլոր թշնամիներին՝ Կարա-Յուսուֆը իր տիրապետությունն է հաստատում Մերձավոր Արևելքի երկրների՝ Քուրդիստանի, Իրաքի և Ադրբեջանի ու Հայաստանի վրա[101]: Կարա-Յուսուֆի մահից հետո (1420) վերսկսվում են պատերազմ ու ավերմունք, և ամենուրեք կոտորվում, ոտնատակ է գնում աշխատավոր ժողովուրդը: Կործանվում են հոգևոր կենտրոնները, սպանվում՝ միաբանները, թալանվում են վանքերն ու մատենադարանները: Այս ավերածություններից զերծ չէին ոչ Քաջբերունիքը, ոչ էլ Մեծոփա վանքը: Դեռևս 1387 թ. Քաջբերունյաց երկրի ժողովուրդը, խույս տալով Լենկ-Թեմուրի զորքերից, Ներսես եպիսկոպոսի և Մեծոփա վանքի Ստեփանոս վարդապետի առաջնորդությամբ, փախչում է Տարոն՝ և հրաշքով փրկվում[102]: 1394 թ. դարձյալ քաջբերունցիները փախչում են Լենկ-Թեմուրի հրոսակներից: Կոգովիտ գավառի Դարա գյուղում էին ապաստանում Մեծոփա վանքի վարդապետներն ու աշակերտները: Հաջորդ տարին Յուսուֆի հարձակման ժամանակ, Հովհաննես վարդապետը աշակերտներով, թշնամուց մազապուրծ եղած, ապաստանում է Ռշտունյաց գավառում և այնտեղ մնում երկու տարի: Սքանդարի, Շահռուխի և Ջհանշահի պատերազմների տարիներին ավելի է ծանրանում Քաջբերունիքի բնակչության վիճակը: 1430 թ., Սքանդարի զորքերից հալածված, Թովմա Մեծոփեցին ապաստանում է Լիմ կղզում, ուր Վանա լճի շրջապատից այնքան ժողովուրդ էր հավաքվել, որ «իբրև մտաք՝ տեղի ոչ գտաք նստելոյ»[103] — գրում է վարդապետը: Հինգ տարի անց Թովմա և Կարապետ վարդապետները Մեծոփա և Խառաբաստա դպրոցների աշակերտներով փախչում և ապաստանում են Բաղեշում և երկու տարի մնում այնտեղ[104]: 1439 թ. Թովմա Մեծոփեցին աշակերտներով այս անգամ փախչում է դեպի Մշո Առաքելոց վանք: Մեծոփա դպրոցի րաբունապետը, իր նախորդներ Ներսես Մշեցու, Հովհաննես Որոտնեցու, Սարգիս Ապրակունեցու, Վարդան Հոգոցվանեցու և Գրիգոր Տաթևացու նման, աշակերտներով թափառում էր տեղից տեղ և չէր դադարում ուսուցանելուց:

***

Դեռևս 10–11-րդ դդ. Արճեշ գավառով էր անցնում տարանցիկ միջազգային առևտրական մի ճանապարհ: Պարսկաստանից եկող Մարանդ–Հեր–Բերկրի–Արճեշ–Խլաթ–Բաղեշ–Արզն–Նփրկերտ առևտրական ճանապարհներով գավառը կապվում էր ա) Ամիդ–Խառանի վրայով՝ Բաղդադի, բ) Ամիդ–Եդեսիայի վրայով՝ Անտիոքի, գ) Մելիտինե–Կեսարիայի վրայով՝ Փոքր և Առաջավոր Ասիայի հետ[105]: Հայաստանի ներսում Վաղարշակերտի վրայով կապվում էր Անիի, Բերկրիի վրայով՝ Դվինի, Մանազկերտի վրայով՝ Կարինի հետ և դարձյալ միանում միջազգային առևտրական ուղեգծերին: Երբ մոնղոլական տիրապետության շրջանում Հայաստանի հյուսիսային առևտրական ճանապարհները կորցրեցին իրենց առաջնակարգ նշանակությունը, Դվինը, Անին և Կարսը — ինչպես գրում է Հ. Մանանդյանը — իրենց առևտրական նախկին մեծ

դեսպանքն իբրև գարնանորոս գազան արձակեաց ի վերա ամենայն քրիստոնէից, ընդ ամենայն գաւառս, և ընդ քաղաքս, և ընդ վանորայս և յամենայն տեղից քննայոյզ լինէին աճապարանելով զամենայնսն: Քանզի այսպէս գրեալ էր ի մահաբէր հրովարտակին. ոչ ժամ ուրենալ, և ոչ եկեղեցի մտանել, և ոչ մանկունս մկրտել, կամելով միայնհողոյն բառնալ զամենայն կրօնս քրիստոնէից: Իսկ բանաւոր հաւտն Քրիստոսի անխախտելի մնացին ի հաւատս քրիստոնէութեան, քաջալերելով տէրունական հրամանաւն, որ ասէ թէ Երանի է ձեզ յորժամ նախատիցեն զձեզ: Եվ որոշեացին և եառւն զամենայն հարկսն զոր խնդրէին, և յանձն առին յօժարութեամբ զնախատինըս և զտանջանս, վասն երկնաւոր յուսոյն և զթեթև լուծն Քրիստոսի ի վերա աջոյ ուսոյն: Իսկ անօրէն և ամբարիշտ Ղարպանտայ ղանն, իբրև ետես թէ այնու ոչ կարաց յաղթել բանաւոր հօտին Քրիստոսի, յաւել այլ ևս հարուածս ի վերա քրիստոնէից, կամ զամենեսեան ներքինս առնելով, և կամ զմի ակն հանելով, կամ դառնալ ի պիղծ դաւանութիւն Մահմետայ:

Լսեմք թէ բազումք մեռան յայդմ հարուածոց, վասն անուանն Քրիստոսի…» (Մատենադարան, ձեռ. 10200, էջ 386բ–388բ):

101 Լ. Խաչիկյան, Հիշատակարաններ, Ժե, Ա, Առաջաբան, էջ IX–XII:

102 Թ. Մեծոփեցի, Պատմութիւն, էջ 22–23:

103 Անդ, էջ 87:

104 Մատենադարան, ձեռ. 1380, էջ 344ա–344բ:

105 Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում, հ. Բ, Երևան, 1964, էջ 103:

դերը հարկադրված եղան զիջել քարավանային բանուկ ճանապարհների վրա գտնվող պատմական Հայաստանի հարավային քաղաքներին՝ Արճեշին, Մանազկերտին և Խլաթին[106]:

Հարստանում է Արճեշը իր շրջակայքով: Անեցի նշանավոր մեծատուն Ավետենց Սահմադինը գավառում կալվածքներ ուներ, իսկ Արճեշ քաղաքում՝ կուղպակներ: Սա ահագին հողամաս է տրամադրում Քաջբերունյաց գավառի տեսուչ տեր Աբրահամին, որը շինում է Ասպիսնկա Ս. Աստվածածնի և Ս. Հարության եկեղեցիները, ընդարձակում նրանց կալվածքները և աշխուժացնում հոգևոր կյանքը:

«Ի ժամանակս տէրութեան Ուլաուն ղանին, ես ծառայ ծառայից Աստուծոյ տէր Աբրահամ տեսուչ գաւառիս Քաջբերունո. տուաւ ինձ տեղիս այս տեառնէ սորին Սահմադին կոչեցեալ, և շինեցի զեկեղեցիքս, նախ՝ զՍուրբ Աստուածածնիս, իսկ ի թագաւորութեանս Արղուն ղանին, ի հայրապետութեանն տեառն Ստեփանոսի զՍուրբ Յարութիւնս, ի կորղոյ շինեցի և զամենայն շինուածս նորոգեցի...» Հիշում է «զաւանդատուք եկեղեցեացս զպարոն Սահմադինն, տանուտէրաւքն Ասպիսնկայ՝ զի սեփական աւանդսն, որ կարգեալ էր յառաջնոցն, նախքան զաւէրն ի Խորազմէն, դարձեալ հաստատեցին տեղոյս... Եւ շինեցաւ Սուրբ Յարութիւնս ի թւիս Չխ (1291), ի փառս Քրիստոսի»[107]:

Սահմադինը բացառություն չէր: Այստեղ կային նաև տեղացի մեծատուններ, որոնցից մեկն է Աղբերիկ Արճիշեցին, Աստվածատուր վարդապետի հայրը, որը բավականին մեծ հարստություն ուներ և բազմաթիվ կուղպակներ: Քաղաքում

106 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Գ, էջ 263:

107 Արձանագրի վկայությամբ, Սուրբ Աստվածածնի եկեղեցին շինել է ինքը՝ Աբրահամ տեսուչը՝ Հուլաու խանի տիրության ժամանակ, այսինքն՝ 1256–1265 թվականներին: Սակայն այն վկայությունը, որ եկեղեցու ավանդատուները, պարոն Սահմադինը՝ Ասպիսնակ գյուղի տանուտերներով «Դարձեալ հաստատեցին տեղոյս սեփական աւանդսն, որ կարգեալ էր յառաջնոցն, նախքան զաւէրն ի Խորազմէն», ցույց է տալիս, որ Սուրբ Աստվածածնի եկեղեցին գոյություն է ունեցել դեռևս ԺԳ դարասկզբին, Խորեզմշահ Ջալալեդդինի՝ Հայաստանում կատարած ավերածություններից առաջ, այսինքն՝ նախքան 1230 թվականը: Հետևաբար տեր Աբրահամի այդ եկեղեցու, ինչպես նաև Աստվածատուր և Հովհաննես Մեծոփեցիների Մեծոփա վանքի վերաբերյալ ասված «շինեցի» բառը նույնպես պետք է հասկանալ «վերաշինեցի» կամ «վերանորոգեցի» իմաստով (Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք, էջ 268–269):

զարգանում էին բազմաթիվ արհեստներ և արվեստներ, քաղաքն աչքի էր ընկնում իր շուկաներով, վաճառատներով ու արհեստանոցներով:

Հաջորդ դարի սկզբում նույնպիսի մի կտակագիր է թողնում Զաքարիա Ա Սեֆեդինյան Աղթամարցի կաթողիկոսը Լիմի Ս. Գևորգ եկեղեցին կառուցելու և նախնիների կողմից նրան տված ավանդները վերականգնելու առթիվ[108]:

Այս ամենը հարստացնում էր վանական տնտեսությունը և նպաստում մշակութային կյանքի զարգացմանը: Այդ ժամանակվա Քաջբերունիքից մեզ հասած առաջին ձեռագրերը բնականորեն Ասպիսնակից և Արճեշից են: Առաջինում նստում էր Քաջբերունիքի տեսուչը, իսկ երկրորդը վաճառաշահ քաղաք էր: Այդ ժամանակ էլ աշխուժանում է Մեծոփա վանքը:

***

Հայ ժողովրդի պատմական ճակատագրի բերումով, պետականազուրկ պայմաններում, յուրաքանչյուր մշակութային կամ հոգևոր կենտրոն պետք է ունենար իր հովանավորը՝ ոչ միայն նրա նյութական պահանջները հոգալու, այլև ֆիզիկական գոյությունը պահպանելու համար: Այդ է ապացուցում հայ մշակութային կենտրոնների պատմությունը: Որոշ աշխարհիկ կամ հոգևոր պետեր սեփական կարողությամբ կամ հեղինակությամբ կարողանում էին ժամանակավորապես համեմատաբար տանելի կյանք ստեղծել իրենց իշխանությանը հպատակ ժողովրդի համար և որոշ պայմաններ՝ հոգևոր կենտրոնի ծաղկման համար: Քաջբերունիքում այդպես էին հոգևոր պետեր Աստվածատուր վարդապետը, Տեր-Աբրահամը՝ ԺԳ դարում, Զաքեոս եպիսկոպոսը և Հովհաննես Մեծոփեցին՝ ԺԴ դարում, իսկ ԺԵ դարի առաջին կեսում՝ Թովմա Մեծոփեցի բաբունապետը և նրա եղբայր պարոն Գորգի-Մելիքը՝ Աղո գյուղի տանուտերը, որի իշխանությունը Գրիգոր Տաթևացին տարածում է Բերկրիի և Արծկեի վանքերի վրա: Քրիստոնյա տանուտերները ոչ միայն ժողովրդի ներքին, այլև «դրսի» գործերին էին միջամտում՝ նվաճողների հետ համաձայնության եզր գտնելու նպատակով, իսկ դպրոցի և լուսավորության համազգային գործի համար քրիստոնյա տանուտերներն ու աշխարհիկ այլ պաշտոնյաները աշխատում էին միասին: Երբ Գրիգոր Տաթևացին 1409 թ. եկավ Քաջբերունիք «... քահանայք

108 Ա. Մաթևոսյան, Լիմ անապատի գրչության կենտրոնը ԺԳ–ԺԵ դարերում, «Էջմիածին», Զ, 1966:

և տանուտէրք… արգելեցին»[109] գնալ. և նա մնաց Մեծոփա վանքում, իսկ երբ նույն թվականին նրա աշակերտները ուզում էին Տաթև տանել, Հովհաննես Մեծոփեցին «… եբեր գրերթաւագն և գքրիստոնեայ տանուտեարք ամենայն և արգելեց»[110]:

ԺԳ դարասկզբին Մեծոփա ուխտը Թովմա գիտնականին հանձնելիս՝ Աստվածատուր վարդապետը «կանչում է գհաւատարիմ և զաստուածապաշտ ձեռնաւորք և զտանուտէրք քաղաքին եւ գաւառին»[111]: Արծկեի Մուրատ, Արճեշի Հովհաննես Փոքր և Ալո գյուղի Գորգի-Մելիք տանուտերերի խնդրանքով Սքանդարը խնայում է և չի կոտորում Արծկեի ժողովրդին[112]:

15-րդ դարում Քաջբերունիքի տանուտերերից մեծ հեղինակություն ուներ Գորգի-Մելիքը՝ Թովմա Մեծոփեցու եղբայրը: Հոր՝ Ստեփանոսի մահից հետո (1406 թ.), որ «էր… ի մեծ տոհմի, յազնուական ազգէ»[113], տանուտիրությունը անցնում է ավագ որդուն՝ պարոն Հովհաննեսին, ապա Գորգի-Մելիքին: Սրա հեղինակությունը ԺԵ դարի առաջին կեսերին այնքան է մեծանում, որ նույնիսկ Թովմա Մեծոփեցու ամենահռչակված ժամանակներում, երբեմն նրան ճանաչում են որպես Գորգի-Մելիքի եղբայր[114]: Նրան համարում են «պարոնաց-պարոն և իշխանաց-իշխան… ամենայն աւրհնութեան արժանի… ողորմած աղքատաց… յաղթող և գաւրաւոր ի մէջ ազգաց և ազանց»: Թովմա Մեծոփեցու վկայությամբ Գորգի-Մելիքը «բազում նեղութիւնս կրէ յանօրինաց վասն մեր և սուրբ ուխտիս»: Ստեփանոս վարդապետը նրան այսպես է դիմում. «Ի Հայոց մեծաց և ի նախնեաց գերազանց յաւրհնեալ չաւաւղաց… մեծ հաւատով և բարի գործով մեծանուն և բարեհամբաւ ժառանգ գովութեան, որդի երանութեան, պարծանք պարծանաց ամենայն քրիստոնէից ազգաց, ամենայն աւրհնութեանց արժանաւոր, քրիստոսապսակ պարոնաց պարոն

109 Մատենադարան, ձեռ. 921, էջ 367բ:

110 Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 94, ծթ. 1:

111 Մատենադարան, ձեռ. 4517, էջ 370ա:

112 Թ. Մեծոփեցի, Պատմութիւն, էջ 93:

113 Գ. Ցովսէփեանց, Թ. Մեծոփեցու կյանքը, էջ 6:

114 1428 թ. Հովհաննեսը Մեծոփա վանքում Հայսմավուրք է ընդօրինակում «առ ոտն մեծ բաբունապետի Թումայ վարդապետի՝ պարոն Գորգու ազգեր» (Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 380):

և իշխանաց իշխան, ողորմած աղքատաց Գաւրգի-Մէլիք…»[115]: Գորգի Մելիքին է ուղղված նաև Գրիգոր վարդապետի օրհնության թուղթը: «… Զարդ և պարծանք ես ամենայն քրիստոնէից, այլև պարիսպ և պահարան ես ընդդէմ թշնամեաց…»,[116]–գրում է նա: 15-րդ դարի երկրորդ կեսին Քաջբերունիքում դարձյալ հանդիպում ենք հոգևոր և աշխարհիկ առաջնորդների միասնական գործունեության: 1465 թվականին միասին են հիշվում «եպիսկոպոս երկրիս Քաջբերունոյ իմաստուն և բանիբուն վարդապետն Ստեփանոս և տէր Յովանէս արհիեպիսկոպոսն և տանուտէրք քրիստոնէից պարոն Բախշայիշ, խոջայ Մահլումն»[117]: Այս առումով խոշոր դեր էին կատարում նաև հռչակված վարդապետները և հոգևորականները:

13–15-րդ դարերում, խոշոր հողատիրության զարգացման հետ կապված տնտեսության վերելքի և վերոհիշյալ հանգամանքների շնորհիվ Քաջբերունիքում ծաղկում են գրչության արվեստը և մատենագրությունը, ստեղծվում են բազմաթիվ գրչության կենտրոններ և դպրոցներ, հանդես են գալիս մշակութային նշանավոր գործիչներ՝ Աստվածատուր, Թովմա գիտնական, Մխիթար Սասնեցի, Հովհաննես Ռսպնակեր Արճիշեցի, Ստեփանոս, Մովսես, Սարգիս մեծ, Վարդան Հոգոցվանեցի, Գրիգոր Խլաթեցի, Գրիգոր Տաթևացի, Հովհաննես Մեծոփեցի, Թովմա Մեծոփեցի, Հակոբ Ղրիմեցի, Կարապետ Խառաբաստեցի և ուրիշ վարդապետներ, որոնք մասամբ կամ ամբողջովին իրենց կյանքը նվիրեցին Քաջբերունիքի դպրոցների ու գրչության կենտրոնների զարգացմանը: Քաջբերունիքի գրչության կենտրոններում բազմաթիվ նշանավոր գործիչներ և մանրանկարիչներ աճեցին, որոնք աշխատում էին Վանա լճի շրջակա վանքերում ու գրչատներում: Սրանց մեծ մասի անունը կապված է Մեծոփա վանքի գրչության կենտրոնի հետ:

115 Վենետիկ, ձեռ. 1091, էջ 464 (մանրաժապավեն):

116 Անդ, էջ 64:

117 Հիշատակարաններ, ԺԵ, Բ, էջ 236:

ԱՌԱՋԻՆ ԴՐՎԱԳ

ՄԵԾՈՓԱ ՎԱՆՔԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ ԺԲ–ԺԴ ԴԱՐԵՐՈՒՄ

Մեծոփա վանքի դպրոցի մեզ հայտնի առաջին ուսուցիչը, արճիշեցի մեծատուն Աղբերիկի կրոնավոր ազգականն էր, իսկ առաջին աշակերտը՝ նույն մեծատան որդի Աստվածատուրը: Սա սովորում է «յուսումն սրբութեան աստուածաշունչ գրոցն գիտութեան» և արժանանում քահանայության[1]: Հավանական է, որ վարդապետ ձեռնադրվելուց հետո, Աստվածատուրը տեղում ինքն էլ ուսուցանում էր այլոց: Երբ վերաշինում է վանքը, կարգավորում է դպրոցը, մեծացնում միաբանությունը, Արճեշ քաղաքի տանուտերերի ու արհեստավորների ներկայությամբ ուխտը հանձնում է «յոյժ իմաստուն և գիտնական ճգնաւորի Թովմայի կոչեցեալ», իսկ ինքը անձնատուր է լինում վարդապետական քարոզչության Քաջբերունիքում և Վասպուրականում՝ երբեք չկտրելով կապը Մեծոփա ուխտից[2]: Թովմայի «իմաստուն և գիտնական» լինելու հանգամանքը թույլ է տալիս ենթադրելու, որ Մեծոփա վանքում տասներեքերորդ դարի առաջին կեսին դպրոց կար, որն իր գոյությունը պահպանում էր նաև դարի երկրորդ հիսնամյակում: Տասներեքերորդ դարի երկրորդ կեսին Մեծոփա վանքում հիշվում է մի այլ ուսուցիչ, որի մոտ քահանայական կրթություն է ստացել Մխիթար Սասնեցին: Այդ ժամանակներից Մեծոփա վանքը Քաջբերունիքի մշակութային և հոգևոր կենտրոնն էր: Այնտեղ էր նստում գավառի եպիսկոպոսը: Որոշ ժամանակ այնտեղ ապաստանեց նշանավոր վարդապետ Ներսես Մշեցին՝ իր աշակերտ Եսայի Նչեցու հետ, որ Առաքելոց վանքը թողել էր «ի հալածմանէ անաւրէն և ժանտաբարոյ ազգէն մարաց» և թափառում էր Քաջբերունիքում:

Վարդապետական աստիճան ստանալուց հետո, **Մխիթար Սասնեցին** դարի սկզբում իր դասընկեր **Հովհաննես Արճիշեցու** հետ միասին կարգավորում է Մեծոփա վանքի դպրոցը,

1 Մատենադարան, ձեռ. 4517, էջ 270ա:

2 Անդ:

բարձրացնում նրա մակարդակը և ավելի մեծ ուշադրություն դարձնում գրչության արվեստի ուսուցմանը: Դարավերջում Հովհաննես Մեծոփեցի վարդապետը վերստին վերակառուցում է դպրոցը:

Գրչության արվեստը Մեծոփա վանքում ծաղկում է ԺԴ դարասկզբում և կապվում նշանավոր մատենագիր և գրիչ Մխիթար Սասնեցու անվան հետ, որի կյանքի համառոտ պատմությունը մեզ ավանդել է իր աշակերտ Մկրտիչ Մեծոփեցին՝ «Պատմութիւն հաւաստի և համառօտ Մխիթար վարդապետի»[3] երկում, իսկ Դանիել վարդապետը ներբող է նվիրել նրա հիշատակին. «Յայսմ աւուր յիշատակ է սուրբ հօրն մերոյ վարդապետին Մխիթարայ, զորոյ զհանդէս ճգնութեան զմտաւ ածեալ ումեմն վարդապետի Դանիել անուն...»[4]:

Վերոհիշյալ երկու գործերից բացի, Մխիթար Սասնեցու վարքի մի այլ խմբագրության ենք հանդիպում ձեռագիր հայսմավուրքներում[5]: Այդ վարքի հեղինակը, մեզ թվում է, Գրիգոր Խլաթեցին է[6]: Նրանում օգտագործված են Սասնեցու մասին եղած պատմությունները և որոշ տվյալներ ճառերի նրա ժողովածուից:

Մխիթար Սասնեցին ծնվել է 1260-ական թվականներին[7], Սասնա գավառում, որտեղից և նրա «Սասնեցի» մականունը: Հոր («առն քաջասրտի և արիւնահեղ պատերազմողի»)[8] մահից

3 Մատենադարան, ձեռ. 952, էջ 1ա–8բ:

4 «Գիրք որ կոչի Այսմաւուրք...», Կ. Պոլիս, 1730, էջ 364–366: Մխիթար Սասնեցու համառոտ վարքը կա նաև մի այլ տպագիր Յայսմաւուրքում (Տե՛ս Յայսմաւուրք ըստ կարգի ընտրելագոյն օրինակի Յայսմաւուրաց Տէր Իսրայէլի, Կ. Պոլիս, 1834, էջ 184): Սրանց և Մխիթար Սասնեցու գործերի հիման վրա Գ. Հովսեփյանը գրել է մի ուսումնասիրություն, կից հրատարակելով Մկրտիչ Մեծոփեցու գրած վարքը (Գ. Յովսէփեան, Մխիթար Սասնեցի (Կերմանեցի), Վաղարշապատ, 1899): Նախապես տպագրվել է «Արարատ» ամսագրում): Այսուհետև՝ Մխիթար Սասնեցի:

5 Մատենադարան, ձեռ. 4517, էջ 371բ, 372բ:

6 Մեզ այդպես է թվում, որովհետև Յայսմաւուրք խմբագրելիս Գրիգոր Ծերենց Խլաթեցին, ոչ միայն մի շարք նոր վարքեր գրեց, այլև վերաշարադրեց, խմբագրեց ուրիշ վարքեր և մուծեց Յայսմաւուրքի մեջ: Իսկ հիշյալ ձեռագիրը Ծերենցի խմբագրության հնագույն Յայսմաւուրքներից է ընդօրինակված: Տե՛ս և հմմտ. Ն. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, Ս. Երուսաղէմ, 1966, էջ 128:

7 Գ. Յովսէփեան, Մխիթար Սասնեցի, էջ 7:

8 Մատենադարան, ձեռ. 4517, էջ 371բ:

Հետո, մոր և քրոջ հետ նա տեղափոխվում է Ապահունիքի Կերմանց գյուղը (այս պատճառով, երբեմն կոչվել է «Կերմանցի»)։ Տեղի Ս. Կիրակոս ուխտում մայրը նրան տալիս է «յուսումն քահանայութեան»։ Բայց շուտով զրկվելով մորից որդեգրվում է իր ազգական Անդրեաս կրոնավորի կողմից և նրա մոտ սովորում գիր և դպրություն։ Նախնական այս կրթությունից հետո միայն նրան տեղափոխում են Մեծոփա վանքի դպրոց, որտեղ և նա հասնում է քահանայության աստիճանի։ Քաջբերունեաց Խաչատուր եպիսկոպոսը, հաշվի առնելով պատանի Մխիթարի ոչ թե հասակը, այլ շնորհքը և գիտելիքները, քահանա է ձեռնադրում[9]։ Սովորելու կիրքը հանգիստ չէր տալիս Մխիթարին, իսկ այդ ժամանակ Քաջբերունիքում վարդապետներ չկային։ Լսելով Ներսես Մշեցու խորհուրդները (վերջինս առժամանակ եղել էր Քաջբերունիքում)՝ Մխիթարը Հովհաննես Արճիշեցու և Ստեփանոսի հետ գնում է Սյունիք և երեք տարի աշակերտում այդ նշանավոր գիտնականին[10]։ 1284 թ. մահանում է Ներսես Մշեցին։ Դպրոցի րաբունապետ է դառնում Եսայի Նչեցին, իսկ Մխիթար Սասնեցին դարձյալ շարունակում է իր ուսումը հետագայում համալսարանի համբավ վաստակած Գլաձորում։ Նորաբաց համալսարանը հիմնավոր կրթություն է տալիս երիտասարդին։ «... Երանելին Մխիթար, գերագոյն գոլով քան զամենեսեան յիմաստս գիտութեան, ունել զՀին և զՆոր կտակարանս և յոյժ հմուտ եղեալ փիլիսոփայական արհեստից, և քան զյոքունս գերազանցեալ շնորհօք գիտութեան», մտածում է ոչ թե վարդապետ դառնալու, այլ ճգնավորական կյանք վարելու մասին և վերադառնում Քաջբերունիք։ Որոշ ժամանակ անց, Թադեոս վարդապետի կողմից իրեն վարդապետական աստիճան շնորհելու առաջարկը մերժելուց հետո, Մխիթարը գնում է Գլաձոր, Եսայի Նչեցուց վարդապետական աստիճան ստանում։ Նա Եսայի Նչեցու ձեռնադրած 150 վարդապետներից առաջիններից մեկն էր[11]։

---

9 *Անդ, էջ 28*

10 *Ներսես Մշեցին Վայոց ձորի Աղբերաց վանք գնալուց առաջ «տեսեալ զերկիրս Քաջբերունեաց ադքատութեամբ վարանեալ առանց վարդապետական ուսման, եւ յոյժ քաջալերեաց զկրաւնաւորսն հետեւել աստուածաշունչ գրոց գիտութեան և ինքն գնաց յերկիրն Սիւնեաց ի սուրբ ուխտն Գլաձորոյ»։ Մատենադարան, ձեռ. 4517, էջ 371բ–372ա։*

11 *Մատենադարան, ձեռ. 193, էջ 171ա։ Եսայի Նչեցին «Ծ(50) ամ վարդապետեալ նորոգեաց զաստիճան վարդապետութեան լուսաւորչացն մերոց, զի ճԾ (150) աշակերտ հրաման վարդապետութեան ի նմանէ ընկալան, եւ*



Գրիչ և ծաղկող՝ Մխիթար Սասնեցի
1303 թ., ձեռ. N 3606.

Մխիթար Սասնեցին 1291 թ. Գլաձորում էր[12]: Այդ թվականին կամ հաջորդ տարում պետք է դնել Սասնեցու հանդիպումը Թադեոս վարդապետի հետ և վերադարձը Գլաձոր, որովհետև 1293 թ. նա արդեն Քաջբերունիքում էր: 1293 և 1294 թվականներին Աստվածատուր գրիչը Քաջբերունյաց Այրիձորի անապատում ձեռագրեր է ընդօրինակում «յառաջնորդութեան... արդիւնական վարդապետի Ստեփանոսի»[13]: Սա Սասնեցու ընկերներից մեկն էր: Հավանաբար Մխիթարը և Հովհաննես Ոսպնակերը, նույնպես Քաջբերունիքում էին:

Գլաձորյան այս երեք սաները Քաջբերունիքում ծավալում են կրթական, գրչական, քարոզչական բեղմնավոր աշխատանք: Մխիթար Սասնեցին ավելի եռանդուն էր իր ընկերներից: Չնայած նա հաստատվում է Մեծոփա վանքում, բայց միշտ շրջում է գավառի վանքերը, մնում տեղերում «տարով և կէս տարով... ձեռամբ իւրով վաստակէր ի գիրս գրչութեան և տայր կարօտելոց»:

Մխիթար Սասնեցին վախճանվում է 1337 թվականին «յամսեանն հոռի ԻԷ (27) յաւուր ուրբաթու»[14],—գրում է Մկրտիչ վարքագիրը:

«Ի Դ (4) բաժանէր զժամն կենաց իւրոյ. երբեմն աղաւթէր, երբեմն գրէր զգիրս աստուածաշունչ, երբեմն բանիւ վարդապետութեան յորդորէր և ուսուցանէր զհոլատակ և հնազանդեալ աշակերտեալս և երբեմն քարոզէր յականջս ժողովրդեանն...»[15]: Ուրեմն Մխիթար Սասնեցին իր կյանքը նվիրել է այս չորս բնագավառներին, աղոթելուն, գրելուն, ուսուցանելուն և քարոզելուն:

Մխիթար Սասնեցին իր քարոզներից տասնհինգը գրի է առել մի ժողովածուի մեջ՝ «Թէ զի՞նչ է պատճառ մարդեղութեան

մի ի նոցանէ էր վարդապետն Մխիթար» (Մատենադարան, ձեռ. 4517, էջ 372):

12 Գ. Յովսէփեան, Մխիթար Սասնեցի, էջ 14:

13 Մատենադարան, ձեռ. 7553, էջ 279բ:

14 Մատենադարան, ձեռ. 4517, էջ 372բ: Դանիելը և Գրիգոր Խլաթեցին (վերջինս օգտվել է առաջինից) օրը դնում են «յամսեանն յաւի ԻԵ (25 փետրվարի 19) յաւուր չորեքշաբթի յետին բարեկենդանին»: Գ. Հովսեփյանը գտնում է, որ Ե և Է տառերի տարբերությունը ձեռագրական շփոթություն է, իսկ օրերինը՝ հեղինակներից է գալիս և հավաստի է համարում Մկրտչի հաղորդած տեղեկությունը (Գ. Յովսէփեան, Մխիթար Սասնեցի, էջ 26):

15 Մատենադարան, ձեռ. 4517, էջ 372բ:

բանին Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի» վերնագրով[16]: Դրանք դավանաբանական, բարոյախրատական քարոզներ են: Դավանաբանական պայքարն ուղղված է միաբարնների դեմ, որոնք Հայաստանում հաստատվեցին ԺԴ դարի սկզբներում: Կաթոլիկ եկեղեցու ներկայացուցիչների վտանգավոր շարժման դեմ զգուշավոր կերպով մաքառել սկսած առաջին հայ վարդապետները, ինչպես նշում է Գ. Հովսեփյանը, Գլաձորի համալսարանի բաբունապետ Եսայի Նչեցին և նրա դասընկեր, ապա աշակերտ Մխիթար Սասնեցին էին[17]: Մխիթար Սասնեցու հաանդուն պայքարը շատ է անհանգստացնում կաթոլիկ գործակալներին, և նրանք պապի առջև ամբաստանում են նրան. որպես թե «Մխիթար վարդապետ Հայոց Սասունցի սերմանեալ իցէ ի գաւառին Արճիշոյ զաղանդ հոգեծնութեան»[18]:

Սասնեցին իր ճառերի ժողովածուում գրում է, որ սուտ եղբայրներ են առաջ եկել և զրպարտում են հայ ազգը[19]: Եվ ահա ինքը ձայնը բարձրացնում է ի պաշտպանություն առաջին հայրապետների և հայրերի կանոնների: Ֆռանգ վարդապետները, — ասում է նա, — բամբասում, վարկաբեկում են մեզ, բայց հայ ժողովուրդը ուշադրություն չպիտի դարձնի նրանց նախատինքի վրա, «որպես նետք տղայոց համարիմ զնախատինս նոցա»[20]: Սասնեցին իր ճառերում մերկացնում է միաբարներին և մոլորվածներին, սակայն զգուշորեն, որպեսզի հակառակության առիթ չտա և չխորացնի պայքարը[21]: Այդ նույն ոգով էլ նա ուսուցանում էր իր բազմաթիվ աշակերտներին, և նրանց հաղորդում Գլաձորում ստացած իր գիտելիքներն ու հմտությունը:

Ճառերի ժողովածուից բացի Մկրտիչ Մեծոփեցին հիշում է և Սասնեցու գրական մյուս գործերը. «Արտաքոյ սորին այլ ևս բանք երանելւոյն՝ զՄեկնութիւն երեքին Թղթոցն կաթուղիկեացդ... աւետարանչին Յովհաննու՝ ընդ նորին և զՄեկնութիւն հանգստեան նորին Յովհաննու: Ունիմք և խօսս նորա ի վերայ

16 Մատենադարան, ձեռ. 952:
17 Գ. Յովսէփեան, Մխիթար Սասնեցի, էջ 21:
18 Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, Գ, էջ 344:
19 Գ. Յովսէփեան, Մխիթար Սասնեցի, էջ 21–24:
20 Անդ:
21 Անդ:

Տօմարի չարաբաստին Լևոնի, մեկնապէս եդեալ ըստ իւրոյ արժանաւորութեանն»[22]:

Մեծոփա վանքում Մխիթար Սասնեցուն գործակցում էր նրա ուսումնակից՝ Հովհաննես բաբունապետ Արճիշեցին: Հովհաննես Արճիշեցին հայտնի է «Ոսպնակեր» անունով. «վասն զի ի հացէ կացեալ էր և զոսպն միայն ուտէր զամս ԺԵ (15)»[23]: Գլաձորից հայրենի գավառ վերադառնալով՝ նա զբաղվել է ուսուցչությամբ, քարոզչությամբ, մատենագրությամբ և գրչությամբ: Գրել է Մեկնություն պատարագի[24], որը Խոսրով Անձևացու և Ներսես Լամբրոնացու նույնանուն երկերի համառոտումն է: Ունի նաև «Բան վասն երից կարգաց» անունով մի գրվածք[25]:

Նրա մոտ սովորելու էին գալիս տարբեր վայրերից: «Ես նուաստ Կարապետ վարդապետս,—կարդում ենք մի հիշատակարանում, – որ եմ ի գաւառէն Տօսբա, մերձ առ ստորոտս լերինն Վարագա, և ի տղայութեան հասակին սիրեցի զպատուարութիւն Բանի, գնացի առ Յովհաննէս վարդապետն Արճիշեցի և աշակերտեցի նմա Գ ամ և առի զաւրհնութիւն քահանայութեան»: Այնուհետև Հովհաննեսի աշակերտը գնում է «ի մենաստան Գլաձոր առ հռչակաւոր վարդապետն Յեսայի և անդ կացեալ զամս Ը» առնում է «զաւրհնութիւն հրամանի վարդապետութեան յերեսուն ամի»[26]:

22 Մատենադարանի 952 ձեռագրի վերջում (223բ), հիշատակարանից հետո Մկրտիչ Մեծոփեցին «Նորին Մխիթարի» վերնագրի տակ բերում է Սասնեցու աստվածաբանական մի հարցի պատասխանը: Այսպես. «Նորին Մխ[իթարայ]. Աստուածային էութիւնն կուսածին մարմնովն փոքրկացաւ, ըստ որում ասացն. Հայրն իմ մեծ է քան զիս: Կուսածին մարմինն աստուածային էութեամբն մեծացաւ, ըստ որում ասացն. Ես և Հայր իմ մի եմք: Այլ Աստուածային անմահական բնութիւնն մեռաւ մարդկային մահկանացու բնութեամբն: Եւ մարդկային մահկանացու բնութիւնն կենդանացաւ աստուածային անմահական բնութեամբն: Գունակ սոյին և զամենայն բարձրագոյնս և զամենայն նուաստագոյնս իմաստից»:
23 Մատենադարան, ձեռ. 4517, էջ 372ա:
24 Մատենադարան, ձեռ. 581:
25 «Յովհաննէս վարդապետ Արճիշեցոյ Ոսպնակերի ասացեալ բան վասն երից կարգաց փրկելոց, ապրելոց և երից հակառակաց նոցին և գիմակաց»: (Մատենադարան, ձեռ. 1521, ԽԳ):
26 Ուրեմն Կարապետը տասնիննամյա տարիքում մտնում է Մեծոփա վանք Հովհաննես Արճիշեցու մոտ սովորելու և քսաներկու տարեկան քահանա ձեռնադրվում (Ն. Պողարեան, Ցուցակ Երուսաղէմի, Ե, էջ 73):

Հովհաննեսի օժանդակությամբ Մխիթար Սասնեցին 1313 թ. գրում է մի Ավետարան, իսկ 1321 թ. իր Ճառերի գիրքը[27]: Դարձյալ նրա խնդրանքով Մխիթարը 1303 թ. Գլաձորում ընդօրինակում է Դանիելի մեկնությունը[28], իսկ Հայրապետ գրիչը 1315 թ. Քաջբերունյաց Ուռնկարում օրինակում է Սամուել Անեցու ժամանակագրությունը[29]: Հովհաննես Ոստանիկերը մահացել է 1327 թ. և թաղվել Քաջբերունյաց Հարունթյան գյուղի հանդեպ՝ մի բլրի վրա[30]:

Գրչության արվեստի ուսուցիչ էր նաև Մխիթար Սասնեցու մյուս ուսումնակիցը՝ Ստեփանոս վարդապետը, սակայն Քաջբերունիքի Այրիձորի անապատում, որի առաջնորդն էր նաև: Մկրտիչ գրիչը 1307 թ. Արճեշի Շինամեջ գյուղում օրինակած Ավետարանում հիշում է «...վարդապետին իմոյ Ստեփանոսի, որ հարազատ եղբայր է իմ»[31]: Ստեփանոսի գործակցությամբ Մկրտիչ Մեծոփեցին գրում է Մխիթար Սասնեցու վարքը[32]:

Մխիթար Սասնեցու մահից հետո, հավանաբար ոչ շատ անց, Մեծոփա դպրոցի գլուխ է կանգնում Մովսես Մեծոփավանեցի վարդապետը: Այդ մասին որոշակի վկայություն չունենք, սակայն այն հանգամանքը, որ նա թաղված է Մեծոփա վանքում և հիշվում է տեղի նշանավոր վարդապետների շարքում, այդ է վկայում: Նրանից մեզ են հասել նաև Մեծոփա վանքում կատարած ընդօրինակություններ: Նրա աշակերտներից Ստեփանոսը, որ սովորել էր Մեծոփա վանքում, վարդապետական գավազան է ստանում Հովհաննես Որոտնեցուց և դառնում Քաջբերունիքի եպիսկոպոս:

Մովսես Մեծոփավանեցին 1370-ական թվականներին արդեն մահացած էր: Նրանից հետո որպես վարժապետ հիշվում են Նահապետ կրոնավորը և սրա սան, հետագայում նշանավոր վարդապետ Հովհաննես Մեծոփեցին:

***

Մեծոփա դպրոցում Մխիթար Սասնեցու մանկավարժական-քարոզչական գործունեության մաս են կազմում գրչության արվեստի ուսուցումը և նրա կատարած ընդօրինակությունները: Սասնեցու Ճառերի ժողովածուն ուսուցման նպատակով ընդօրինակել են նրա բոլոր աշակերտները: Այդ օրինակների վրա նա սրբագրական աշխատանքներ է կատարել, լրացրել, հղկել: Ահա թե որպես գրչության ուսուցիչ ինչպես է նա հիշվում. «... Զի յոյժ վարժ գոլով յարուեստս գրչութեան եւ ի ծաղկազարդ նկարակերտութիւնս գրոցս... քարտուղար ճարտար, գեղեցկագիր և ստուգաբան»: Շարունակ ձեռագրեր ընդօրինակելով՝ «գշահ գրելոյն բաշխէր աղքատաց և կարօտելոց»[33]:

Դժբախտաբար նրա ընդօրինակություններից շատ քիչ բան է հասել մինչև մեր օրերը: Ճակատագրական կորստից բացի, Մխիթար Սասնեցու ընդօրինակությունները, որպես ընտիր և ստույգ օրինակներ, ավելի շատ են ընդօրինակվել ու գործածվել, հետևաբար ավելի շուտ են քայքայվել: Հիրավի, հռչակված էին Մխիթար Սասնեցու ընդօրինակությունները: «Ով եղբայր և հոգւոյ իմում հարազատ,—գրում է Մոկաց վանքի գրիչ Ստեփանոսը 1350 թ., Նարեկացու Մատյանն ընդօրինակելիս,—որ աւրինակ ընդունիցիս՝ զսա առ ի յայլս գրելոյ, յոյժ վստահեցիր ի բանս սորա, զի ի ստոյգ և ի ճշմարիտ աւրինակէ գրեալ և ուղղեալ եմ զսա, ի նմանէ, որ Մխիթար վարդապետն էր գրել և ուղղել, որ ոչ ինչ պակասութիւն գտանիւր ի ճշմարտութենէ»[34]: Վարագեցի Ստեփանոս գրիչը Արտամետում ավարտած Նարեկի մեջ գրում է. «Գիրքս Մխիթար վարդապետի աւրինակէն է ըղորդած, աւելն քերած և ստոյգն ի գրած»[35]: Մեծոփա վանքում «ի սուրբ եւ յընտիր աւրինակէ բաբունւոյ» ընդօրինակված է նաև մի այլ ձեռագիրը[36]:

---

27 Թյուրիմացաբար նրան է ընծայվում նաև «Մեռելայարոյց հրաշակերտ Ավետարանի» գրչությունը, որը մինչև 1915 թ. պահվում էր Մեծոփա վանքում (Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակներ, 92, էջ 18–19): Իրականում այդ ձեռագիրը գրել է նշանավոր գրիչ Հովհաննես Մանկասարենցը:

28 Մատենադարան, ձեռ. 3606, էջ 333ա:

29 Մատենադարան, ձեռ. 3681:

30 Գերեզմանաքարի վրա գրված է. «Այս է յարկ տապանի Յովհաննէս վարդապետի, ի թուի ՉՀԶ (1327) (Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք, էջ 268):

31 Հիշատակարաններ, ԺԴ, էջ 50:

32 Գ. Յովսէփեան, Մխիթար Սասնեցի, էջ 32:

33 Մատենադարան, ձեռ. 952, էջ 3ա–3բ:

34 Մատենադարան, ձեռ. 5597, էջ 257ա:

35 Մատենադարան, ձեռ. 5883, էջ 468բ:

36 Մատենադարան, ձեռ. 3606, էջ 117ա: Հետագայում էլ ակնածանքով են հիշատակել նրան: 1491 թվականին Բաբերդում ընդօրինակած Յայսմավուրքում (Մատենադարան, ձեռ. 7366, էջ 328բ) Մարտիրոս գրիչը

Մխիթար Սասնեցու ընդօրինակություններից է Մաշտոցի անվան Մատենադարանի 3606 ձեռագրի մի մաս: Հովհաննես վարդապետը 1303 թ. Գլաձորի վանքում Ասուղայի հիշատակի համար Եսայի Նչեցու համաձայնությամբ մի Մեկնություն է ընդօրինակել տալիս Թադեոսին: Այդտեղ և այդ թվականին, նույն նպատակով Մխիթարը գրում է «Վերլուծութիւնս Դանիէլի մարգարէի» դարձյալ Հովհաննեսի պատվերով: Այս ձեռագիրը միացվում է Թադեոսի ընդօրինակությանը և նվիրվում Գլաձորի վանքին: Գրիչ Մխիթարը Սասնեցին է, Հովհաննես վարդապետը՝ Արճիշեցին: Գեղեցիկ և վարժ գրչություն ունի ձեռագիրը, պարզ և ճաշակով նկարված գլխազարդը և լուսանցազարդերը կատարել է գրիչը:

Հիշատակարանում Սասնեցին իր անունը գրել է «Մխ» հապավված ձևով: Այս շեշտում ենք, որովհետև այդպես է գրել նաև մյուս դեպքերում[37], այդպես էլ արտագրել են նրան ընդօրինակողները: Դա օգնում է պարզելու նրա կատարած և նրանից կատարված ընդօրինակությունները: Այսպես, 1299 թ. Ապրինկա Ս. Աստվածածնի վանքում Հովսեփը ընդօրինակում է «Բանք Սողոմոնի», ուր հիշվում է «ես և յաւետ զհարազատ հոգևոր վարդապետն մեր զՄխ, որ զաւրինակն շնորհեաց»[38]: Ապրինկա վանքը մոտ էր Մեծոփա վանքին, ուր մնում էր Մխիթար Սասնեցին: Հովսեփը ընդօրինակել է նրա օրինակից և արտագրել է նաև գաղափարի հիշատակարանի սկիզբը: «Գրեցի և հաստատեալ կառուցի աւժանդակութիւն առեալ ի վերին զաւրութենէ ի դէմս քարտենի ըստ իմում կարութեան»[39]: Այս նույն դարձվածքին մենք հանդիպում ենք կրկին, մյուս էջում, ուր Հովսեփը գրում է իր հիշատակարանը. «գրեցի ըստ իմ կարութեան և կարգեցի ի դէմս քարտենի»[40]: Այդպես է գրել նաև Մխիթար Սասնեցին իր ճառերի վերջում. «կարգեցի և հիմնացեալ կառուցի զայս մատեան...»[41]: Այս հանգամանքը ևս ցույց է տալիս, որ Հովսեփի ընդօրինակության գաղափարի

Մխիթարի վարքի (փետրվարի ԺԱ) ներքևի լուսանցքում փառաբանում է նրան, համարելով «Մեծ վարդապետ րաբունի... ընդ երանելեացն երանելի» և այլն:

37 Մատենադարան, ձեռ. 3606, էջ 333ա, 952, էջ 215բ:

38 Մատենադարան, ձեռ. 193, էջ 171ա:

39 Մատենադարան, ձեռ. 139, էջ 170ա:

40 Անդ, էջ 170բ:

41 Մատենադարան, ձեռ. 952, էջ 215բ: Այսպես է գրում Գրիգոր Նարեկացուց հետևողությամբ, որի Նարեկը սիրով արտագրել է Մխիթար Սասնեցին:

գրիչը եղել է Մխիթար Սասնեցին: Նրա ճառերն ընդօրինակող աշակերտներից Մկրտիչ Մեծոփեցին էլ այդպես է ընդօրինակել:

Մեզ հայտնի են Մխիթար Սասնեցու ընդօրինակություններից մի քանիսի հիշատակարանները, արտագրված անցյալ դարում, ինչպես նաև գրիչների կողմից կատարված ընդօրինակություններն ու հազվադեպ պահպանված գաղափար օրինակի հիշատակարանը, որոնց հիման վրա կարող ենք ամբողջացնել Մխիթար Սասնեցուց մեզ հայտնի ընդօրինակությունները

ա) Վերլուծութիւն Դանիէլի մարգարէի գործը՝ ընդօրինակված 1303 թ. Գլաձորում[42]:

բ) Գրութիւնք Եւագրեայ Պոնտացւոյ, 1305 թ. Մեծոփա վանքում, «գրեալ եղև ձեռամբ անպիտան և յետին սպասաւորի բանի Մխ[իթար] պիտականուն վարդապետին»[43]:

գ) Աւետարան, գրված 1307 թ. Մեծոփա վանքում Ավետիս քահանայի համար, Մխիթար վարդապետի ձեռքով: Ձեռագիրը հանդիպել է Ե. Լալայանին քայքայված վիճակում, նկարներ չեն եղել, բայց եղել են համաբարբառի խորանները, որոնք նկարված են եղել, հավանաբար, գրչի ձեռքով[44]:

դ) Մատեան ողբերգութեան Գրիգորի Նարեկացւոյ. արտագրում և գրում է Մխիթար վարդապետը 1308 թվականին Մեծոփա վանքում[45]: Այս օրինակից էին կատարել իրենց ընդօրինակությունները Մոկացի Ստեփանոս և Արտամետցի Ստեփանոս գրիչները:

ե) Աւետարան, 1313թ. Մխիթար վարդապետը գրում է Մեծոփա վանքում Բարսեղ աբեղայի համար, օժանդակում է Հովհաննես վարդապետը: Ձեռագիրը նվիրվում է Արծկեի Սքանչելագործ վանքին[46]:

զ) Աւետարան. Մխիթար վարդապետը ընդօրինակում է 1318 թվականին[47]:

է) Մեկնութիւն Սաղմոսաց Վարդանայ Արեւելցւոյ, 1320 թ.: Մատյանի գրիչ Մխիթարին Լ. Խաչիկյանը նույնացնում է

---

42 Մատենադարան, ձեռ. 3606:

43 Գ. Զարբհանալեան, Մատենադարան հայկական թարգմանութեան նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 247:

44 Ե. Լալաեան, Ցուցակ Վասպուրականի, 81, հմմտ. ձեռ. 6273, էջ 112:

45 Հ. Ոսկեան, Վասպուրական-Վանի վանքերը, Բ, էջ 427:

46 Մատենադարան, ձեռ. 6273, էջ 122–123:

47 Անդ, էջ 128:

Սամնեցու հետ[48]: «Զստացող աստուածային գանձուցս զԲարսեղ սպասաւոր բանին և զծնողս իւր յիշեսջիք ի Տէր Յիսուս, ընդ նմին և զախմար գրիչ Մխ[իթար]»[49]: «Մխիթարի» հապավված անունից բացի, այստեղ մենք հանդիպում ենք ստացող Բարսեղ վարդապետին, որը 1313 թ., երբ դեռ աբեղա էր, Մխիթար Սասնեցուց ստացավ մի Ավետարան[50]:

ը) Մխիթար Սասնեցու Բանք աստուածաբանականք (ճառեր): Գործը մեզ է հասել Մկրտիչ աշակերտի ընդօրինակությամբ. հեղինակի հիշատակարանով. «Ի թուի ՉՀ (1321) երրորդի Հայկազեանս տոհմի տոմարի, ես անպիտանս ի ծառայս Տեառն Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի Մխ[իթար] անուն կրսսէր վարժապետաց և յետին բանահիւսաց կարգեցի և հիմնացեալ կառուցի զայս մատեան հոգևորական տառից... գործակալութեամբ ընտրեալ և սրբազան Յոհաննու քաբունւոյ և մերում հարազատի հոգևոր եղբաւր»: Ձեռագիրը սրբագրում է Մխիթար Սասնեցին: Ծլտված օրինակից ընդօրինակում են նրա աշակերտները: Այդ մասին վկայություն է պահպանել աշակերտ Գրիգոր աբեղան՝ 1334 թ. կատարած ընդօրինակության մեջ: «Այս երկրորդ է մակագրութեամբ զկնի առաջնոյ մատենին, որ ստացեալ եղև ի նորին Մխիթարայ աստուածաշնորհ վարդապետէ», և «գրեցաւ սայ ի ժամանակս նորին Մխիթար վարդապետի, որ ինքեան ձեռամբ ուղղեալ և յարդարեալ ճշմարիտ մակագրութեամբ...»[51]

թ) Մեկնութիւն Թղթոյն Պօղոսի Յովհաննու Ոսկեբերանի: Երուսաղեմի 345 ձեռագիրը ընդօրինակված է 1377 թվականին Մոկաց Սարի վանքում, տեղի քաբունապետ Սիմեոնի կողմից, որի մեջ արտագրված է գաղափար օրինակից մի հիշատակագրություն. «... Յետնեալս բարեաց կասեալս յարդարութեան մասնէ զՄխիթար զհասեալս ի վերջս աստուածային գանձուց»: Մխիթարը Սասնեցին է, ինչպես երևում է հետագա շարադրանքից[52]: Այս կարծիքի օգտին է խոսում այն փաստը, որ Մխիթար Սասնեցու սույն գործը ընդօրինակել է նաև նրա աշակերտ Ստեփանոսը 1338 թ. Մեծոփա վանքում: «Բազում աշխատութեամբ գրեցի զայս ի սուրբ եւ յընտիր աւրինակէ

48 Հիշատակարաններ, ԺԴ, էջ 39, ծանոթ. 1:

49 Մատենադարան, ձեռ. 1180:

50 Մատենադարան, ձեռ. 6273 էջ 122–123:

51 Ն. Պողարեան, Ցուցակ Երուսաղէմի, Դ, էջ 105–106:

52 Անդ, Գ, էջ 8:



Գրիչ՝ Մկրտիչ Մեծոփեցի
1303 թ., ձեռ. N 952

բաբունոյն մերոյ [փոխ]եցելոյն ի Քրիստոս, որ աւրինակս [և] այլ [բազում մատեն]անս եթող ի վանքս յիշատակ»[53]:

ժ) Բանք Սողոմոնի ընդօրինակությունը, 1299 թ. առաջ (տե՛ս վերը):

Ահա առայժմ այն, ինչ հնարավոր եղավ ի մի բերել Մխիթար Սասնեցու գրչական ժառանգությունից:

***

Մխիթարի մահից հետո Մեծոփա վանքում գրչության գործը առաջ են տանում նրա աշակերտները, որոնք արդեն հայտնի գրիչներ էին դեռևս իրենց վարդապետի կենդանության օրոք:

Աշակերտներից հիշենք ուսուցչի կենսագիր Մկրտիչ աբեղային «Ի թուի Հայոց ՉՀԹ (1330) գրեցաւ Ճառս այս ըղձալի...—գրում է նա Մխիթար Սասնեցու աստուածաբանական ճառերի ժողովածուն ընդօրինակելիս,—զՄկրտիչ աբեղա և զաշակերտ բանին ճշմարտութեան յիշեսջիք բարի կամաւք»[54]:

1337 թվականին ուսուցչի մահից հետո Մկրտիչը գրում է նրա կենսագրությունը «Պատմութիւն հաւաստի և համառաւտ Մխիթար վարդապետի» և չորս թերթից բաղկացած այդ գործը կցում իր ձեռքով գրված նախորդ ձեռագրին՝ սկզբից: «Ջանարժան Մկրտիչ, որ շարադրեցի զսակաւ պատմութիւնս, պաղատանս ձեզ վերընձայնեմ յիշել զմեզ...»[55]: Դեռևս Մխիթար Սասնեցու կենդանության օրոք Մկրտիչ աբեղային Մեծոփա վանքում համարում էին «Հոգևոր վերակացու», որն օգնում ու օժանդակում էր գրիչներին՝ ձեռագիր ընդօրինակելիս:

Սասնեցու աշակերտներից են Դանիելը, որից հայտնի է իր ուսուցչին նվիրված մի ներբողյան[56], և երկու Գրիգոր աբեղաները: Վերջիններս Սասնեցու մասին գրում են. «աչաւք տեսաք զնայ և ի խնամս գթոյ նորին վայելեալք և իմանալի մտաւք յաստուածատուր իմաստից նորին ճաշակեալք»[57]: Նրանք 1334 թ. Մեծոփա վանքում Մխիթար աբեղայի համար ընդօրինակում են Սասնեցու Բանք աստուածաբանականքը նրա ինքնագրից: Այդ ժամանակ Գրիգոր գրիչը կրկին ընդօրի-

---

53 Մատենադարան, ձեռ. 269, էջ 217ա:

54 Մատենադարան, ձեռ. 952, էջ 216ա, 223բ:

55 Անդ, ձեռ. 952, էջ 4բ:

56 Յայսմաւուրք, էջ 364:

57 Ն. Պողարեան, Ցուցակ Երուսաղէմի, Դ, էջ 106:

նակում է նույն գործը՝ այս անգամ արդեն Վեդեն կուսակրոն միայնակեցի համար[58]:

Ստեփանոս գրիչը 1338 թ. Մեծոփա վանքում Սասնեցու օրինակից ընդօրինակում է Թուղթք Պաւղոսի[59] գործը:

Մխիթարի աշակերտներից է, հավանաբար 1339 թ. Մեծոփա վանքում Թորոս միայնակեցի պատվերով և ծախքով գրված Աւետարանի գրիչը[60]:

Մխիթար Սասնեցու աշակերտներից պետք է լինի նաև Մովսես Մեծոփավանեցի նշանավոր վարդապետը: Գրիգոր աբեղայի՝ 1334 թ. Մխիթարի համար օրինակած Բանք աստուածաբանականքի վերջում գրված է Մխիթար Սասնեցու կենսագրությունը, որի գրիչը, ըստ երևույթին, Մովսեսն է, որը Գրիգոր աբեղայից ավելի ճարտար է և կենսագրության վերջում մի հիշատակագրություն է թողել իր անվան նշումով[61]: Մովսեսի գրիչ լինելու օգտին է խոսում այն, որ Թովմա Մեծոփեցու կենսագիրը նրան համարում է «քաջ քարտուղար, ճգնաւոր վարդապետ»[62]: Այս նշանավոր գրչից, սակայն, քիչ ժառանգություն է հասել մեզ: Մխիթարի վարքի ընդօրինակություններից բացի, հայտնի է նրա մի այլ մասնակի ընդօրինակությունը՝ 1341 թ. գրչագրված մի աստվածաշնչում: «Աստուած ողորմի Մովսէս վարդապետի Մեծոփայ. գրեաց ի սուրբ ուխտն Վարագա»: Սողոմոնի չորս գրքի ընդօրինակությունը ևս Բ. Սարգիսյանը իրենն է համարում, որովհետև բացի գրչության նույնությունից, հիշատակարանը ևս, որ Իմաստութեան վերջում է գրված, նույնն է հաստատում[63]:

1362 թ. Մովսես վարդապետը Հովհաննես անունով երեք հարազատ կուսակրոն եղբայրների և ծնողների միջոցներով օրինակում է մի Ավետարան և նվիրում Մեծոփա Սուրբ Աստվածածնին... «գրեցաւ սայ ի թուականութեանս Հայոց ՊԺԱ (1362) ի լուսազարդ յանապատիս Մեծոփայ վանք անուանելոյ, ընդ հովանեաւ սրբոյ եկեղեցեացս Աստուածածնին և Սուրբ

---

58 Մատենադարան, ձեռ. 3276, էջ 44ա:

59 Մատենադարան, ձեռ. 269, էջ 217ա:

60 Հ. Ոսկեան, Վասպուրականի-Վանի վանքերը, էջ 428:

61 Ն. Պողարեան, Ցուցակ Երուսաղէմի, Դ, էջ 106:

62 Գ. Յովսէփեան, Թովմա Մեծոփեցու կեանքը, էջ 12:

63 Բ. Սարգիսեան, Ցուցակ Վեննետիկի, Ա, էջ 95–96:



Գրիչ՝ Հովհաննես Մեծոփեցի
1383 թ., ձեռ. N 5931



Գրիչ՝ Թովմաս Մեծոփեցի
1444 թ., ձեռ. N 5931

Յակոբ առաձայնելոյ: Ես Մովսէս վարդապետս գրեցի զսուրբ Աւետարանս և ետու զսայ սուրբ Աստուածածնիս...»[64]:

Ահա այն ողջ տեղեկությունները, ինչ հայտնի են մեզ Մեծոփա վանքի դպրության կենտրոնի մասին ԺԲ–ԺԴ դարերից, և գրչական այն փաստակը, որ ստեղծել են Մխիթար Սասնեցին և նրա աշակերտները: Աննշան չէ այդ փաստակը, եթե նկատի ունենանք, որ այն ստեղծվել է միջնադարյան Հայաստանի պատմության մռայլ շրջաններից մեկում՝ տասնչորսերորդ դարում, մահմեդականացող մոնղոլների տիրապետության և կաթոլիկ եկեղեցու գործակալների աշխուժացման պայմաններում:

Մխիթար Սասնեցու սկսած գրչական գործունեությունը և միարարների դեմ պայքարը Մեծոփա վանքում նոր աստիճանի է բարձրանում հաջորդ դարում: Դպրոցի հնարավորությունները մեծացնելու համար անհրաժեշտ էին վարդապետներ և համապատասխան շինություններ: Այդ խնդրին մեծ հաջողությամբ ձեռնամուխ է լինում Մխիթարի գործի շարունակող Հովհաննես վարդապետ Մեծոփեցին: Նա ծնվել է Քաջբերունիքի Ջարիշատ գյուղաքաղաքում, Ներսես քահանայի ընտանիքում, 1340-ական թվականներին: Քահանայական կրթություն է ստացել Մեծոփա վանքի դպրոցում, Նահապետ կրոնավորի մոտ. «վարժեալ և ուսեալ զՍաղմոսն Դաւթի և զմանրուսումն եկեղեցւոյ»[65], որն, հավանաբար, Մեծոփա դպրոցի ավանդական ծրագրի մի մասն էր: Հովհաննես Մեծոփեցին բարձրագույն կրթություն ձեռք է բերել Հովհաննես Որոտնեցու համալսարանում Մովսես Մեծոփավանեցու աշակերտ Ստեփանոսի հետ: Երեք տարի սովորելուց հետո Հովհաննես Որոտնեցին Ստեփանոսին վարդապետության գավազան է տալիս և ուղարկում Քաջբերունիք. «...զի անտերունչ էր գաւառն այն»[66]: Հովհաննես վարդապետը, շարունակելով մեծ ուսուցչապետներ Ներսես Մշեցու և Եսայի Նչեցու

---

64 Բ. Կիւլեսերեան, *Ցուցակ Անկիւրոյ*, 1109, 1110:

65 Թ. Մեծոփեցի, *Պատմութիւն*, էջ 54–55:

66 *Անդ, էջ 55: Մ. Օրմանյանը կարծում է, թե այս երեք տարին վերաբերում է նաև Հովհաննես Մեծոփեցու ուսումնառությանը, և դրանով ավարտվում է նրա կրթությունը Որոտնեցու մոտ. «Երեք տարիէ մասնաւոր գաւազան ստացան, բայց մեծ վարդապետութիւնը չկրցաւ տալ Որոտնեցին իր մահուան կանխելովը» (Ազգապատում, էջ 1984), սակայն Թովմա Մեծոփեցին պարզ գրում է. «Եւ ընկերակից նորա Ստեփանոս զերիս ամս աշակերտեալ՝ ետ նմա գաւազան իշխանութեան գալ մխիթարել զԱղավութիւն քրիստոնէիցն եւ վանորէիցն անխրատից, զի անտերունչ էր գաւառն այն» (Պատմութիւն, էջ 55):*

ծրագիրը, աշխատում էր գավառներն ապահովել վարդապետներով, կրթված հոգևորականներով՝ դպրոցներ հիմնելու, ժողովրդին լուսավորելու համար: Այդ տեսնում ենք նաև հետագայում, նրա աշակերտների գործունեության մեջ:

Մեծոփեցին տասներկու տարի սովորում է Հովհաննես Որոտնեցու մոտ: Նշանակում է, Ստեփանոսի հետ Մեծոփա վանքից Որոտնեցու մոտ են գնացել 1374 թ. (Ստեփանոսը վարդապետական աստիճան ստացած՝ Քաջբերունիք է վերադարձել 1377–78 թթ.): Հովհաննեսը վարդապետական աստիճան կարողանում է ստանալ միայն Լենկ Թեմուրի առաջին արշավանքից հետո: Գրիգոր Տաթևացին, որ փոխարինել էր իր ուսուցչին, «...եա նման վարդապետական գաւազան, առաքեաց յերկիրն իւր»[67]: Հաջորդ տարում Հովհաննես Մեծոփեցին ձեռնամուխ է լինում Մեծոփա վանքի վերաշինությանը, բայց ճարտարապետ չլինելու պատճառով՝ հետաձգում է և անցնում վանքը և դպրոցը կարգավորելուն: Մինչ այդ էլ Մեծոփա վանքի դպրոցում աշակերտներ կային, բայց Հովհաննէս վարդապետը «զարդարեաց զսուրբ ուխտն ժամօք, աղօթիւք և պատարագօք, ընթերցմամբ գրոց և ուսումնականօք... քարոզութեամբ Աւետարանին վարդապետութեամբ լուսաւորեաց զշրջակայսն Վասպուրական գաւառիս»[68]:

Այդ դպրոցի աշակերտների թվում էր նաև պատանի Թովման: Հովհաննես վարդապետի մոտ աշակերտները սովորում էին «... ամենայն երաժշտական արուեստ ուսման»[69]: Մեծոփա վանքի դպրոցում ինքը վարդապետն էլ, ինչպես տեսանք, նույնն էր սովորել Նահապետ կրոնավորից[70]: Թ. Մեծոփեցին վկայում է, որ Հովհաննես վարդապետը «սաղմոսերգութեամբ և աղօթիւք լնոյր զպակասութիւն մեր»[71]: Այս բավական էր քահանայական աստիճանի համար: Այդ ժամանակ հավանաբար գրչություն էր ուսուցանում Մատթեոս քահանան: Մեծոփա վանքի աշակերտներից տասներկուսը ԺԴ դարավերջին գնում են Խառաբաստա վանք՝ Սարգիս վարդապետի մոտ վարդապետական կրթություն ստանալու, և դպրոցը ժամանակավորապես դադարում է գործելուց՝ վերակառուցման պատճառով:

67 Թ. Մեծոփեցի, Պատմութիւն, էջ 55–56:
68 Անդ, էջ 57:
69 Գ. Յովսէփեան, Թովմա Մեծոփեցու կեանքը, էջ ե:
70 Թ. Մեծոփեցի, Պատմութիւն , էջ 54:
71 Մատենադարան, ձեռ. 5931, էջ 42բ:

Հովհաննես Մեծոփեցու գրչությամբ մեզ երկու ձեռագիր է հայտնի: Առաջինը Մատենադարանի 5931 ձեռագիրն է: 1383 թվականին Գրիգոր Տաթևացին գրանցում և խմբագրում է Հովհաննես Որոտնեցու Մեկնութիւն Ստորոգութեանց և Յաղագս մեկնութեան գրոցն Արիստոտելի գործը: Տաթևացու հիշատակարանը վերջանում է այսպես. «Այլ և համշիրակն եղբայր՝ զԳէորգ վարդապետն Եզնկացի, որ աշխատեցաւ սրբագրելով զսա, յիշեսջիք ի Տէր աղաչեմ»: Թովմա Մեծոփեցին ավելացրել է. «Այլև զՅոհանէս վարդապետ զգրող այսմ տառի գրեա Աստուած ի գ[ի]րն Որդոյ քո միածնի, վարդապետն աստուածաբնակ ուխտի Մեծոփայ վանից վանականի ամէն»[72]: Ուրեմն Հովհաննես Մեծոփեցին գրել է, իսկ Գևորգ Երզնկացին՝ սրբագրել: Հովհաննես Մեծոփեցին այդ ժամանակ սովորում էր Հովհ. Որոտնեցու մոտ, հետևաբար ձեռագիրն արտագրված է նրա մոտ: Գրությունը մանր բոլորգիր է, միասյուն, հարուստ նշանագրերով և համառոտագրություններով: Թղթի պակասի պատճառով շատ մանր է գրել և նեղ լուսանցքներ թողել, որի համար էլ խուսափել է կազմել տալուց: Թովմա Մեծոփեցին 1444 թվականին այն կազմել է տալիս իր աշակերտ Հայրապետին[73]:

Մյուս ձեռագիրը Կյուրեղ Աղեքսանդրացու Պարապմանց գիրքն էր, գրված 1394 թ.: Հովհաննես վարդապետը Հերմոնի վանքի գրատնից բերված օրինակից է արտագրում «ի դուռն լուսաբեր անարատ կոյս Մարիամու ծնօղի հայրական [ծոցա]ծին...»: (Հիշատակարանը թերի է): Աստվածածնի վանքը Հերմոնի վանքը չէ (վերջինս Գրիգոր Լուսավորչի անունով է):

Թովմա Մեծոփեցին հետագայում ձեռագրի 200բ էջում ավելացնում է. «ԶՅովհաննէս վարդապետ Մեծոփայ վանաց և զԹովմա խնդրող բանի յիշեցէք ի Տէր»[74]: Այս ցույց է տալիս, որ Հովհաննես գրիչը Մեծոփեցին է, իսկ Աստվածածնի վանքը՝ Մեծոփա վանքը: Հովհաննես Մեծոփեցու մտահոգության առարկան Ս. Աստվածածին վանքի վերակառուցումն էր, որ այնքան մեծ դժվարություններով գլուխ բերեց և հնարավորություն ստեղծեց Մեծոփա վանքի դպրոցի հետագա ծաղկման համար:

72 Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 104:
73 Մատենադարան, ձեռ. 5931, էջ 120ա:
74 Հիշատակարաններ, ԺԴ, էջ 608:

ԵՐԿՐՈՐԴ ԴՐՎԱԳ

ՄԵԾՈՓԱ ՎԱՆՔԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ ԺԵ ԴԱՐՈՒՄ

ՄԱՍՆ Ա

Վերաշինված վանքի նավակատիքը համընկնում է Գրիգոր Տաթևացու Մեծոփա վանք գալուն, որը «ի հալածմանէ անօրինաց շարժեցաւ ի գաւառէն Սիւնեաց, առեալ զմեզ՝ եկն ի գաւառն Արճիշոյ: Եւ արարեալ իւր բնակութիւն գաստուածահաճոյ ուխտն Մեծոբայ առ... վարդապետն Յոհաննէս, և յոյժ ուրախացաւ, վասն զի ի նոյն ամին ՊԾԸ (1409) աւարտեալ էր զնորաշէն տաճարն Սուրբ Աստուածածնին»[1]:

Սարգիս Մեծոփեցին, Քաջբերունիքից Տաթև գնացած տասներկու աշակերտներից կրտսերագույնը, այլ կերպ է մեկնում Գրիգոր Տաթևացու Քաջբերունիք գալը. «Եւ յազդմանէ Հոգւոյն Սրբոյ, վասն իւիք ինչ պատճառի եկն մեծ վարդապետն և երկրորդ լուսաւորիչն յերկիրս Քաջբերունի, ի սուրբ վանս Մեծոփայ»[2]: Տաթևացին ինքը նույնպես գրում է. «ի յազդմանէ Հոգւոյն եկաք ի կողմանս Վասպուրական ծովու»[3]: Ուրեմն Տաթևացու Քաջբերունիք գալը միայն «ի հալածմանէ անօրինաց» մեջ չպետք է փնտրել[3], այլ նաև «յազդմանէ Հոգւոյն Սրբոյ վասն իւիք ինչ պատճառի»: Որո՞նք են այդ պատճառները:

Տասնչորսերորդ դարի առաջին կեսին դադարել էր Գլաձորի համալսարանի և նվազել նրա հաջորդ Հերմոնի դպրոցի գործունեությունը: Հովհաննես Որոտնեցու գլխավորած համալսարանը միայնակ էր՝ կաթոլիկ եկեղեցու գործակալների ու միարարական շարժման կողմնակիցների աշխուժացման պայմաններում: Մաղաքիա Ղրիմեցին, միարարների դեմ պայքարելու համար, օգտագործելով իր մեծատուն հոր

1 Թ. Մեծոփեցի, *Պատմութիւն, էջ 51–52:*

2 *Մատենադարան, ձեռ. 921, էջ 367բ:*

3 *Վենետիկ, ձեռ. 1091, էջ 434:*

ունեցվածքը, Սյունիքում «...շինեաց Բ (2) վանս և կարգեաց Բ (2) դպրատունս... որոց առաջնորդ էր... մեծ հռետորն և քանիբուն իմաստունն վարդապետաց վարդապետն Կախիկ... նաև մեծ րաբունապետն Սարգիս... Զայս Բ վարդապետքս կարգեաց Մաղաքիայն յԲ տեղիս, առ ի յընթեռնուլ և յուսուցանել: Եւ ինքն կայր սոցա ի ծառայութիւն և ի պատրաստել զպիտոյս կարեաց: Եւ այսպէս վարուք կացեալ ամս ԺԵ (15) և ի թուականիս մերում ՊԼԳ (1384) ամին դեղակուր եղև ի սանամօրէ իւրմէ, քանիւ երկաքնակ աղթարմա առաջնորդացն»[4]: Նշանակում է Մաղաքիա Ղրիմեցին Ապրակունիսի դպրոցը հիմնադրել է 1369 թ., որն հետո տեղափոխվեց Աստապատ: Այս դպրոցներում բազմաթիվ աշակերտներ էին պատրաստում և պայքարում միարարների դեմ: Պայքարը գլխավորում էր Հովհաննես Որոտնեցին, իսկ նյութական կողմը ապահովում՝ Մաղաքիա Ղրիմեցին: 1384 թ. կաթոլիկ եկեղեցու գործակալները թունավորեցին Մաղաքիային:

Թշնամուց հալածված, երկու տարի աշակերտներով լեռներում թափառելուց հետո Հովհ. Որոտնեցին ապաստանում է Երնջակի Ապրակունյաց վանքում և այնտեղ 1386 թ. կնքում իր մահկանացուն: Նրան փոխարինում է Գրիգոր Տաթևացին: Սկսվում են Լենկ-Թեմուրի ավերիչ արշավանքները: Սարգիս վարդապետը, որի դպրոցը Աստապատում էր, ավելի ապահով տեղ և օժանդակություն գտնելու համար այդ թվերին գնում է Խոյ, ապա Քաջբերունիք և հաստատվում Խառաբաստա Ս. Աստվածածնի վանքում: Իսկ Գրիգոր Տաթևացին, որոշ ժամանակ անց, տեղափոխվում է Տաթև և շուրջ քսան տարի «ի դառնախառար ժամանակիս իբրև զարեգակ ի միջօրէի պայծառացեալ լուսաւորէ զեկեղեցի... ընու զկարօտութիւն բազմութեան եղբարցս... այլև զբոլոր ազգիս, միշտ գնալով ի մէջ այլազգեաց, մեծամեծաց և փոքունց, զի ոչ գոյր իշխան և առաջնորդ, բաց ի ամանէ... շրջելով ի Հինս և ի Նորս, այլ և յարտաքին գիտութիւնս և ժողովելով զօգտակարն՝ կազմէ պսակ լուսաւորս ի գլուխս մանկանց եկեղեցւոյ և վահան ամրութեան ընդդէմ այլադաւան տոհմի»[5]: Բայց ԺԵ դարի սկզբներին արդեն քայքայվում էր նաև Տաթևի դպրոցը: Լենկ-Թեմուրի թոռ Աբուբաքրի և Կարա-Յուսուֆի միջև մղվող պատերազմները արյունաքամ էին արել Վանա ծովի շրջակայքը և Սյունիքը: Պատերազմների հետևանքով առաջացած տառապանքներին ավելացել էր նաև բնական աղետը

4 *Մատենադարան, ձեռ. 4517, էջ 101ա:*

5 *Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 74:*

(Սյունիքի մի տարի տևող երկրաշարժը բազմաթիվ անմեղ զոհեր է տանում[6]: Դժվար էր մեծ դպրոց պահելը:
Մինչև Քաջբերունիք գալը Գր. Տաթևացին արդեն նվազեցրել էր աշակերտների թիվը և նրանց ուղարկել իրենց գավառները: Քաջբերունիքից այնտեղ գնացած աշակերտները վերադառնում են հայրենի գավառ. «Անտի քայքայեալ ցրուեցաք և եկեալ երկիրս Քաջբերունոյ»,—գրում է Սարգիս Մեծոփեցին: Այդ ժամանակ, աշա աշակերտների մի մասի հետ, Գրիգոր Տաթևացին գալիս է Մեծոփա վանք:
Մինչ այդ 1404 թ. արդեն մահացել էր Խառաբաստա դպրոցի րաբունապետ Սարգիս վարդապետը: Նրան փոխարինող Վարդան Հոգոցվանեցի վարդապետը 1406 թ. աշակերտներով Քաջբերունիքից փախչում է Վանի Սալնապատի վանք, հիվանդանում է և այնտեղ մահանում: Նրա հաջորդ Գրիգոր Խլաթեցի րաբունապետին չի հաջողվում Ցիպնավանքում վերականգնել քայքայված դպրոցը: Աշակերտներից տասներկուսը գնում են Տաթև՝ Գրիգոր Տաթևացու մոտ, իսկ Սարգիս վարդապետի դպրոցը, որ հարատևել էր շուրջ քառասուն տարի, դադարում է գոյություն ունենալուց: Տաթևի դպրոցը կորցնում է իր երկվորյակին, իսկ հայ ժողովուրդը լենկթեմուրյան ավերիչ արշավանքներից հետո՝ իր բարձր տիպի դպրոցներից մեկը, որն այնքան անհրաժեշտ էր դավանափոխության դեմ պայքարելու և վարդապետներ ու գրիչներ պատրաստելու համար: «Վասն մեղաց մերոց բարձան ճոխութիւնքն մեր և փառք, այսինքն աստուածունակ անձինքն... րաբունիք բարիք Սարգիս և Վարդան ամոլքն հաւատոյ, վասն որոյ եմք որպես ըզմարմին մեկնեալ ի հոգւոյ, և տապիմք անբերեան նեղութեամբ թառանչ թախծանաւք, որպէս զաղաւաւ ունայն ի տանիս, և ոչ ուստեք է մխիթարութիւն»,—գրում է Հովհաննես վարդապետը Տաթևի իր ուսումնակիցներին ուղարկած նամակում[7]: Մեծոփա վանք է գալիս Գրիգոր Տաթևացին ութսուն աշակերտներով և վարդապետներով: Այս տեղի է ունենում տարվա երկրորդ կեսին:
Տաթևացին Քաջբերունիք եկավ, որպեսզի վերականգներ Խառաբաստա վանքի քայքայված դպրոցը: Եվ նրան այդ հաջողվեց, բայց՝ Մեծոփա նորաշեն վանքում, որտեղ դասախոսություններով հիմք դրեց Մեծոփա վանքի բարձր տիպի դպրոցին: «Եւ են ժողովեալ առ ոտս սորա փնձինք ՃԿ (160) աբեղայ և Ը (8) վարդապետ և այլ միակեցունք» գրում է

6 Անդ, էջ 80:
7 Վենետիկ, ձեռ. 1091, էջ 417:



Գրիչ և հեղինակ՝ Գրիգոր Տաթևացի
1408 թ., ձեռ. N 1115

Սարգիս Մեծոփեցին: Իսկ Թովմա Մեծոփեցին թվարկում է Վանա լճի շրջակայքից (Տովուբոլոր) մասնակից վարդապետներին. դրանք են Գրիգոր Խլաթեցին, Հակոբ Օվասնեցին՝ Ռշտունիքից, Մարգարեն՝ Վարագից, Հակոբը՝ Ասլխնկայից, Հովհաննեսը՝ Փափլինից, Ստեփանոսը՝ Բերկրիից, Մկրտիչը՝ Հիզանից, Հովհաննեսը՝ Բաղեշից, Սարգիսը՝ Հարութjունից, Մելիքսեթը՝ Երզնկայից, «իսկ քահանայից և աշակերտաց աւելի քան ութսուն արեղայ»[8]*: Հովհաննես վարդապետ Մեծոփեցին արտահայտելով բոլորի ուրախությունը, ասում է. «Տէր Յիսուս, ես զՄայր քոյ պատուեցի, դու զիս պատուեցեր վարդապետօք և հոգևոր հարք իմոք և գրոց աշակերտօք և գրագրօք և ճգնաւորօք և ճշմարիտ ուսումնականօք ի նաւակատիս տաճարի Մօր քոյ առաքեցեր զնոսա»*[9]*: «Եւ զամ մի լման—շարունակում է Մեծոփեցին,—մխիթարեաց զամենայն եղբարսն անճառելի ցնծութեամբ եւ վերիս գիրս մեկնեաց դասիւ...»*[10]*, իսկ Գրիգոր Տաթևացին հաստատում է «Եւ ընթերցմամբ հաւաքեցի զգժուարալոյծ բանս Յոբայ և զմեկնչաց նորա, այլ և սակաւ ինչ լուծումն Առիստակէսի և Գէորգեայ ի խրատս գրչութեան, ընդ նմին և զԲաղուածոյ մեկնութեան Յովհաննու աւետարանչի, և ընծայեցի ի պատիւ սուրբ տեղոյս ուսումնասէր անձանց՝ ուղղադաւան մտաց, և ի գլուխս բաժանելով վասն մտաւոր տեսութեան և ի զարդ ուսման, ի պէտս բեմբասացութեան և ի խրատս գրուցատրութեան»*[11]*:*

Գրչության արվեստի երկերի լուծմունքը պատահական չէր: Մեր կարծիքով Գրիգոր Տաթևացին «ուսումնասէր անձանց ուղղադաւան մտաց» համար վարդապետական ծրագիր տվեց, մասնավորապես շեշտելով գրչության արվեստի բնագավառը: Գրչության արվեստ ուսուցանում էին բոլոր տիպի դպրոցներում: Այն շատ լավ էին անցնում նաև Տաթևի դպրոցում: Բայց ահա այստեղ Մեծոփա դպրոցում պետք է ավելի շատ ուշադրություն դարձնեին այդ առարկայի վրա քան եղել էր որևէ այլ դպրոցում: Պատճառն այն էր, որ լենկթեմուրյան արշավանքների ընթացքում ձեռագրական հսկայական կորուստներ էին եղել[12]*: Պետք է բազմացվեին*

[8] Թ. Մեծոփեցի, *Պատմութիւն, էջ 52, 59:*

[9] *Անդ, էջ 59:*

[10] *Անդ, էջ 52:*

[11] *Մատենադարան, ձեռ. 1115, էջ 123բ:*

[12] Ղ. Ալիշան, *Հայապատում, Ա, էջ 11, 12:*

մնացած երկերը և փրկվեին կորստից: Շատ նոր գործեր էին ստեղծվել ընդդեմ միաբարների՝ Հովհաննես Որոտնեցու, Գրիգոր Տաթևացու և նրանց աշակերտների կողմից, որոնք նույնպես պետք էր բազմացնել: Գ. Խլաթեցու խմբագրությամբ պատրաստ էին Յայսմաւուրքը և Գանձարանը, լրացված Ճառընտիրը: Այնուհետև նախորդ երկու դարերում գրչության արվեստի ծաղկման հետ այդ բնագավառ էին թափանցել նաև գրիչներ, որոնք իրենց գործին լավ գիտակ չէին, և սխալաշատ էին նրանց ընդօրինակությունները: Ահա այս ժառանգությունը ժամանակին ծառայեցնելու և ապագային օրինավոր ու ճշգրիտ ձեռագրեր փոխանցելու համար անհրաժեշտ էին գրագետ գրիչներ, և այդ խնդիրը լուծելու էր Մեծոփա վանքի դպրոցը: Այս պատճառով էլ «դըժուարալոյծ բանս Յոբայ» մեկնելուց հետո, Գրիգոր Տաթևացին «բացայայտեաց զգիրս գրչութեան Առիստակիսի և Մեծին Գէորգեայ»[13], որոնցում շարադրված էին գրչության արվեստի սկզբունքները:

Սակայն մի տարի անց Գր. Տաթևացին թողնում է Մեծոփա վանքը: Տաթևից եկած աշակերտները մի գիշեր նրան տանում են «...եւ մեք ելեալ գնացաք զկնի նորա, հանդերձ վարդապետաւք և եպիսկոպոսաւք, և գրոց աշակերտաւք, և հասաք նմա յերկիրն Այրարատեան, լալով, ողբալով, արտասուաւք, աղերսոմ կսկծանօք և ոչ կարացաք դարձուցանել զնա: Եւ անդ (Երևանում, Ա. Մ.), մեզ ետ հրաման վարդապետութեան»[14], շարունակում է Մեծոփեցին:

1409 թ. Գրիգոր Տաթևացին, Մեծոփա վանքը թողնելուց հետո, դպրոցը հանձնե՞ց որևէ մեկին, և եթե այո, ապա ո՞ւմ: Այս հարցերը ցարդ անպատասխան են, սակայն Գրիգոր Խլաթեցու նամակներից մեկը, ուղղված Այրարատյան գավառում գտնվող Թովմա Մեծոփեցուն, օգնում է պարզելու

13 Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 101: Տե՛ս Լ. Խաչերյան. Գրչության արվեստի լեզվա-քերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում, Երևան, 1962, էջ 221–321, Մատենադարան, ձեռ. 1775, էջ 196, ձեռ. 1115, էջ 203:

14 Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 101: Մինչ այս, մի անգամ էլ, Գրիգոր Տաթևացուն փետրվար ամսին են կամեցել տանել «ի մեհեկի ԺԵ(փետրվար 21) զմեծ բարունապետն ի սուրբ ուխտէս Մեծոփա կու տանէին ի Տաթև, և մեծ արտմութիւն եհաս մեծի և փոքու, այլ ողորմութիւնն Աստուծոյ եհաս յօգնութիւն, Յոհանէս վարդապետ եւեր գրիրթաւագն և գքրիստոնեայ տանուտեարքն ամենայն և արգելեց, և եղև ուրախութիւն մեծ վարդապետաց և աշակերտացս ամենեցուն»,–գրում է Մկրտիչ Մեծոփեցին (Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 94):



Դատ. Խլաթեցին Մեծոփավանքի աշակերտների ...

այս և մի շարք այլ հարցեր, որոնց կանդրադառնանք քիչ հետո: Այստեղ նշենք միայն, որ այս նամակից երևում է, որ 1409 թ. Գրիգոր Տաթևացին Մեծոփա վանքից գնալուց առաջ բաբունապետ է նշանակում Գրիգոր Խլաթեցուն՝ իր դասընկերոջը և նշանավոր գրչին, Խառաբաստի վերջին բաբունապետին: Եվ այս շատ բնական էր. Սարգիս վարդապետի դպրոցի վերջին բաբունապետը և նշանավոր գրիչը պետք է ապահովեր վարդապետական դպրոցի գրչության արվեստի հիմնավոր ուսուցումը Մեծոփա վանքում:

***

Տերի և Խոյանդի որդի Գրիգորը ծնվել է 1349 թ. Խլաթ քաղաքում: Այստեղից՝ Խլաթեցի, իսկ հորից՝ Ծերենց մականունները: Երբեմն կոչվում է նաև «Ցիպնացի» կամ «Բզնունի»: Տասներկուամյա պատանին 1361 թ. սկսում է ուսումնառությունը Ցիպնավանքում, Տիրատուրի աշակերտ Վարդան Ծգնավորի մոտ, ուր «սնեալ և վարժեալ ի գործ քահանայութեան... և եղև քաջուսումն ի գիրս աստուածային և ի յարուեստ գրչութեան արագ և առատամիտ...»: 1367 թ. Գրիգոր քահանան թողնում է իր առաջին ուսուցչին և մոտ տաս տարի ուսուցչությամբ, գրչությամբ և քարոզչությամբ է զբաղվում Բզնունիքում, «իբրև զկատարեալ վարդապետ»[15]:

1378 թ. Խլաթեցին մեկնում է Հովհաննես Որոտնեցու մոտ ուսանելու: Ուսումնառության ութամյա շրջանում աչքի է ընկնում իր ընդունակություններով և դառնում ուսուցչի սիրելին՝ «ուսումնակից ունելով զհամանուն Գրիգոր (Տաթևացին)»[16]: 1386 թ., Որոտնեցու մահից հետո, Խլաթեցին վերադառնում է Քաջբերունիք և ուսումը շարունակում Խառաբաստա վանքում ապաստանած Սարգիս բաբունու դպրոցում: Շատ չանցած, «առել հրաման ի վարդապետէն իւրմէ դաս ասել և աշակերտ ժողովել»[17], Գրիգոր Խլաթեցին վերադառնում է Ցիպնավանք և բաց անում իր դպրոցը: Սկսվում է Գրիգոր վարդապետի մանկավարժական, գրչական, քարոզչական բուռն գործունեությունը, որը հարատևում է մինչև նրա կյանքի վերջը, «յոր նահատակութեան»: Նա ոչ

---

15 «Հայոց նոր վկաներ», գիտական հրատարակություն, աշխատասիրությամբ Հ. Մանանդյանի և Հ. Աճառյանի, Վաղարշապատ, 1903, էջ 265:

16 Անդ:

17 Անդ, էջ 266:

միայն աշակերտներին ուսուցանում էր «Աստուածաշունչ գրոց գիտութեամբ և Հնոց և նորոց իմաստութեամբ», ոչ միայն նրանց վարժեցնում էր գրչության արվեստի մեջ, այլև ինքն էր գրում ու խմբագրում, արտագրում ու բազմացնում, նաև ծաղկում:

1406 թ. Վարդանից հետո «յաջորդեաց զաթոռ նորա մեծ վարդապետն... Գրիգոր... բայց ոչ ի նոյն Սուխարու ուխտն Աստուածածնի, այլ ի յերկիրն Բզնունեաց, ի քաղաքն Արծկէ, ի սուրբ ուխտն Ստեփանոսի վկային Ցիպնայ կոչեցեալ»[18]: Սակայն անբարենպաստ պայմաններում հնարավոր չէր դպրոց պահել, և Խլաթեցին այն ցրում է: Աշակերտներից տասներկուսը գնում են Տաթև, իսկ ինքը «այլ ոչ պարապեալ վարդապետական դասի... տիւ և գիշեր գիրս գրէր և զամենայն աղքատս կերակրէր»[19]:

Գրիգոր Խլաթեցին, երբ Մեծոփա վանքում վերստին ունկնդրում էր Տաթևացուն, արդեն խմբագրել ու կարգավորել էր Գանձարանը, Հայսմավուրքը և Ճառընտիրը: Նա մեծ հեղինակություն էր ոչ միայն Բաղեշում: Եվ ահա Տաթևացին իր մեկնելուց առաջ Մեծոփա նորաբաց դպրոցի րաբունապետ է նշանակում Գրիգոր Խլաթեցուն, որը ղեկավարում է այն 1409 թ. աշնանից մինչև 1410 թ. գարունը: Իսկ ի՞նչ արեց Խլաթեցին չուրջ կիսամյա րաբունապետության շրջանում: Տաթևացին արդեն «զերիս գիրս դասիւ» մեկնել էր: Խլաթեցին շարունակեց այդ գործը: 1409 թ. նա համառոտում է Վարդան վարդապետի «Մեկնութիւն արարածոցը»[20], որին կրկին անդրադառնում է 1413 թ., ճշգրտում է և սրբագրում[21]: Հավանաբար դրանից հետո, արդեն Թովմայի րաբունապետության ժամանակ և նրա խնդրանքով, Մեծոփա դպրոցի համար գրում է պատմական մի աշխատություն, որը դժբախտաբար մեզ չի հասել և առայժմ անհայտ է: Թովմա Մեծոփեցին հիշելով նրա վաստակը գրում է. «Եւ ետ նմա Աստուած իմաստութիւն առաւել քան ամենայն վարդապետաց, վասն զի զերից ժամանակաց պատմութիւնս ի լոյս ածէր ի հարցանելն և ի պատասխանատուութիւնս»[22]: Հարց ու պատասխանի եղանակով գրված աշխարհիկ պատմության այս

18 Անդ, էջ 266:

19 Թ. Մեծոփեցի, Պատմութիւն, էջ 41:

20 Մատենադարան, ձեռ. 2783, էջ 32ա:

21 Մատենադարան, ձեռ. 5435:

22 Անդ:

դասագիրքը նշանավոր երևույթ է ոչ միայն վաստակաշատ րաբունապետի ստեղծագործության, այլև միջնադարյան հայ մանկավարժության պատմության մեջ:

Կարճատև, բայց բեղմնավոր եղավ Խլաթեցու րաբունապետությունը Մեծոփա բարձրագույն դպրոցում, իսկ դպրոցը թողնելուց հետո, նա շարունակեց համագործակցել Թովմա Մեծոփեցու, Հակոբ Ղրիմեցու, Մկրտիչ Նաղաշեցի և տեղի մյուս վարդապետների ու վարժապետների հետ:

Հովհաննես Մեծոփեցու գլխավորությամբ Գրիգոր Տաթևացու եռեից[23] գնացած Մեծոփա վանքի վարդապետներն ու մյուս միաբանները, որոնց մեծ մասը Տաթևացու աշակերտներն էին, չնայած, որ վարդապետական գավազան էին ստացել Երևանում, չէին կամենում վերադառնալ Մեծոփա վանք, մինչև այժմ մեզ համար անհայտ պատճառներով: Սակայն Գրիգոր Խլաթեցու վերը հիշված նամակը օգնում է այդ հարցերի լուսաբանմանը: Ահա այն.

«Նուաստ Գրիգոր խնդրողս բանի... մատուցանեմ զողջոյն համբոյրի... Եւ ընդ ողջունիս հարցումն աստուածախնամ կենաց զօրպէս և զգլխոյդ, և տամք փառս տուաւղին փառաց, որ հասոյց զմեզ այդմ փառաց և ատիճանաց...

Այսուհետև առ իս դարձիր, ի տուն քո և առ եղբայրս քո: Տես ի տագնապ ճանապարհիս և խնայեա ի սոսա: Գիտե՞ս թէ որքան նեղացել է եղբայրդ քո Յոհաննէս երէցդ ի ճանապարհիդ ի քո դիմացդ, նոյնպէս և պարոն Յովաննէս և ԳորգիՄելիքն և միաբան ամէն մեծէ ի փոքր: Եւ թէ կու ջանաս զՅովհաննէս վարդապետդ ի հետ բերես, ապա թէ չէ ի գալ, դու եկ ի տուն քո, առ ընտանիս քո: Եւ թէ դորա սրտին աւֆա՞յ կու պահէս, ուխշէպ կառնէս, դու առ մեզ արեկ, մեր

23 Սյունյաց եպիսկոպոս Առաքելը և Տաթևացու աշակերտները նրան նոյեմբերի 21-ին Երևանից տանում են Տաթև: Դեկտեմբերի 27-ին (այսինքն «եւտ բաժանելոյն մեր ի նման ԼԶ (36) օր») Տաթևացին վախճանվում է: Թովմա Մեծոփեցին մեծ բարեբախտություն էր համարում Գրիգոր Տաթևացու գոյությունը հայ ազգի համար. «զի դնա ունէաք հօգևոր և մարմնաւոր թագաւոր աստուածապարգև, և զնա հրարձ ի մեզանէ»: Մինչ այդ, – ինչպես գրում է Թ. Մեծոփեցին,–Գրիգոր Տաթևացին «մտանելով յերկիրն պարգևեաց, այսինքն արձակեաց զմեզ ի բանդրութենէ անիծից սուտ և ապստամբ կաթողիկոսացն Աղթամարայ, և երեր ազգիս հայոց զփրկական համբաւն և առաջնորդեաց արժանաւորացն մտանել ի միաբանութիւն և ի հնազանդութիւն գերագրական և սուրբ աթոռոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ» (Մատենադարան, ձեռ. 2065, էջ 391ա: Հմմտ. Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 103, 105) Վերևում հիշատակված է Բաղեշնունիքի արձակումը Աղթամարի բանադրանքից:

աչացս լոյս ես և սրտի սուն: Ի Տէր Յուսկայն որդոյ վանացն մինչ ի Աքանչելագործն քո է: Ես էնց կու կամիմ Աստուծով զքեզ առ իս, զինչ զլոյս աչացս, և զլուր ականջացս, զհոտ ռնկացս, և զճաշակ բերանոյս, զբարբառ լեզուոյս, և զշարժումն ձեռացս, զքայլս ոտիցս, և զառողջութիւն մարմնոյս, զմաքրութիւն հոգւոյս, և զսրբութիւն մտացս: Աստուած է վկայ ասացելոցս, որ էնց կարաւտ եմ քո սրբութեանդ, և կամիմ որ զմնացեալ աւուրքս ի քո շուքն անցուցանեմ, և զհոգս հողոյն քո ձեռօքդ տաս:

Ողջ լեր Աստուծով:

Թուղթս գնա յԱրարատեան գաւառն»[24]:

Այս անկեղծ և հուզիչ նամակը ցույց է տալիս, որ Գրիգոր Խլաթեցին եղել է Մեծոփա վանից նորաբաց դպրոցի րաբունապետ, որոշակի իրավունքներով և իշխանությամբ, այլապես չէր կարողանա գրել «առ իս դարձիր» և ոչ էլ կարող էր Բերկրիի տեր Հուսկան որդու վանքից մինչև Արծկեի Աքանչելագործ վանքն ընկած տարածության վրա ունեցած ուրիշի իրավունքներն ու իշխանությունը Թովմա Մեծոփեցուն հանձնել: Հետևապես ճիշտ չէ Ա. Մովսիսյանը, երբ գրում է. «Մեծոփեցին Տաթևացու հրամանով նշանակվում է Մեծոփա դպրոցի վերատեսուչ և դասատու»: Նա հենվում է Տաթևացու՝ Արճիշեցիններին գրած թղթի վրա, ուր Մեծոփեցու մասին ասված է, թե՝ «Ետու դմա հրաման և իշխանութիւն դաս առնել, աշակերտ կարգել»[25]: Այսպիսի հրաման տալիս էին վարդապետ ձեռնադրված աշակերտներին, իսկ այստեղ բոլորովին էլ ակնարկ չկա Մեծոփա վանքի տեսչության մասին: 1410 թ. Մեծոփա վանքում ընդօրինակված մի ժողովածուի գրիչ հիշում է. «Զհոգևոր հայր մեր և զծնաւղ զմեծ րաբունապետն Գրիգորիոս, որդի Ծերին»[26]: Այս ևս ապացուցում է, որ Մեծոփա դպրոցի րաբունապետը Գրիգոր Խլաթեցին էր:

Թովմա Մեծոփեցին գրում է, թե Արարատյան գավառ գնալուց առաջ «Մեծ վարդապետն Գրիգոր օրհնեաց զաշխարհս մեր»[27]: Այս նշանակում է, որ Տաթևացուն «գողանալը» այնքան էլ հաջենպ չի եղել, այնպես որ նա օրհնել է Քաջբերունիքը և Գրիգոր Խլաթեցուն նշանակել րաբու-

24 Վենետիկ, ձեռ. 1091, էջ 397–398:

25 Ա. Մովսիսյան, *Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության*, էջ 205:

26 *Հիշատակարաններ*, ԺԵ, Ա, էջ 651:

27 Թ. Մեծոփեցի, *Պատմութիւն*, էջ 60:

նապետ: Արդյոք այս բանից չի՞ դժգոհել Հովհաննես Մեծոփեցին: Այլապես, ինչո՞ւ նա Տաթևացու՝ Երևանից մեկնելուց հետո, մոտ վեց ամիս մնաց այնտեղ, կամ ի՞նչ են նշանակում Խլաթեցու՝ Թովմա վարդապետին գրած նամակի հետևյալ տողերը. «Եւ թէ կու ջանաս զՅովհաննէս վարդապետդ ի հետ բերես, ապա թէ չէ ի գալ, դու եկ ի տուն քո»: Հովհաննես վարդապետը չվերադարձավ: Նա գնաց Այրիվանք, «աստուածամուխ Գեղարդեանն» և Հավուց Թառի Ամենափրկչին երկրպագություն տալու և այնտեղ էլ վախճանվեց[28]:

***

1410 թ. Թովմա վարդապետը վերադառնում է Մեծոփա վանքը, ստանձնում բարձրագույն դպրոցի րաբունապետությունը և այն տանում է Գրիգոր Տաթևացու սահմանած և Գրիգոր Խլաթեցու արդեն սկսած ուղղությամբ: Դպրոցում պատրաստելու էին վարդապետներ և գրչության ընտիր մասնագետներ: Եվ Թովմա Մեծոփեցին կատարում է դպրոցի առաջ դրված խնդիրը: Այդ է պատճառը, որ Թովմա Մեծոփեցու կենսագիր Կիրակոս Բանասերը, ամփոփելով նրա դասախոսական-ուսուցչական գործունեությունը, գրում է. «ԼԵ (35) ամ դաս առնելով ամենայն անձանց գրոց աշակերտելոց և բազում որդիս ի փառս ածեալ և Է (7) աշակերտի գաւազան տուեալ... և ուսոյց ԻԴ (24) ընտիր գրագիր»[29]: Այս բանը ապացուցում են նաև Մեծոփա դպրոցի այդ շրջանից մեզ հասած նյութերը և Թովմա Մեծոփեցու մանկավարժական ամբողջ գործունեության արդյունքը:

28 Անդ, էջ 61 «Եւ մեք աշակերտք զոլով եւ նմա հոգևոր որդիք Մկրտիչ, Թովմա և նահատակն մեծ վարդապետն Ռշտունեաց Յակոբ և վարդապետն Մկրտիչ ի Բերկրոյ, ժողովեցաք և բազում եղբարս, և եղաք գնա... ի մեծահանդէս ուխտն Հայոց Թառ»: Մ. Օրմանյանը չփաթում է Հովհաննես Մեծոփեցու թաղումը Գրիգոր Տաթևացու թաղման հետ և հիշյալ անձանց ներկայությունն է տեսնում վերջինիս ժամանակ (Ազգապատում, էջ 2028):

29 «Պատմութիւն մեծ րաբունապետին Թումայի զոր արարեալ է Կիրակոս Բանասէր վարդապետի»: Օգտագործելով հիշյալ «Պատմությունը» և Թովմա Մեծոփեցու հիշատակարաններն ու այլ գործերը, ինչպես և նրա վերաբերյալ ուրիշ նյութեր, Գարեգին Հովսեփյանը գրել է «Թովմա Մեծոփեցու կյանքը» ուսումնասիրությունը և հրապարակել հիշյալ նոր նյութերը, նախ «Արարատ»–ում, ապա առանձին, 1914 թ.:

Թովմա Մեծոփեցին ծնվել է 1378 թ.[30] Քաջբերունիքի Աղի կամ Աղիովիտ գյուղում: Ազնվական տոհմից էին նրա ծնողները՝ Ստեփանոսը և Շամամ: Ուսումնառությունն սկսում է 1386 թ.[31], ութ տարեկան հասակում, Մեծոփա վանքում, Մաթեոս քահանայի մոտ, որն այնուհետև նվիրվում է իր սանին, և նրանից անբաժան մնում ամբողջ կյանքում: Լենկ-Թեմուրի Հայաստան կատարած առաջին արշավանքի ժամանակ, իննամյա Թովման Քաջբերունիքի ժողովրդի հետ գաղթում է Տարոն և ապաստանում Ս. Կարապետ վանքում[32]:

Հովհաննես վարդապետի Մեծոփա վանք վերադառնալուց և վանահայրությունն ստանձնելուց հետո Թովման շարունակում է ուսումը Հովհաննես Մեծոփեցու մոտ[33]: Լենկ-Թեմուրի երկրորդ արշավանքի ժամանակ Կոգովիտ գավառի Դարա գյուղում ապաստանած քաջբերունցիների մեջ էր նաև Թովման, բայց հաջորդ տարվա գաղթի ժամանակ նա իր տասնմեկ ընկերներով մեծոփեցիների հետ չէր, արդեն Խառաբաստա վանքում էր, Սարգիս րաբունապետի դպրոցում: Վերջինիս մահից հետո (1401 թ.) շարունակում է ուսումը նույն դպրոցում Վարդան վարդապետի մոտ, մինչև 1406 թ.: Այդ թվականին մահանում է Թովմայի հայրը՝ Ստեփանոսը: Նույն թվականին մահանում է և Վարդան րաբունապետը (Սալնապատում), և «որբ» մնացած աշակերտներից տասներկուսը, որոնց հետ և Թովման, գնում են Տաթև: Գրիգոր Տաթևացին սիրով է ընդունում նրանց, որովհետև իր հայրն էլ Արճիշեցի էր[34]: Երկու տարի Տաթևում սովորելուց հետո, քաջբերունցիները վերադառնում են հայրենի գավառ: Երբ

30 1444 թ. Թովմա վարդապետը իր մասին գրում է, որ «եմ ԿԶ (66) տարոյ իմ», նշանակում է ծնվել է 1378 թվականին (Մատենադարան, ձեռ. 5931, էջ 120ա): Գարեգին Հովսեփյանը, ձեռքի տակ չունենալով սույն վկայությունը, ծննդյան թվականը մոտավորապես ճիշտ է որոշում, դնելով 1376–1379 թթ. (Տե՛ս «Թովմա Մեծոփեցու կեանքը», էջ Դ): Հմմտ. Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հ. Բ, Երևան, 1956, էջ 374–375, ծթ. 243: Լ. Խաչիկյան, Թովմա Մեծոփեցու գրական վաստակը:

31 Կիրակոս Բանասերը գրում է. «...եւ եկեալ ի վանքն Մեծոփայ և Կ (60) ամ անդ կացեալ բազում ջանիւ և առաքինութեամբ» (էջ 7–8), ուրեմն 1386 թ. պետք է եկած լիներ Մեծոփա վանք, որ 60 տարի անց, 1446 թ. իր մահկանացուն կնքեր (Անդ, էջ Զ):

32 Թ. Մեծոփեցի, Պատմութիւն, էջ 21–25:

33 Գ. Յովսէփեան, Թովմա Մեծոփեցու կեանքը էջ 6:

34 Թ. Մեծոփեցի, Պատմութիւն, էջ 50:

Տաթևացին իր աշակերտների մի մասի հետ գալիս է Քաջբերունիք, Թովման ավելի քան մի տարի ևս լսում է սիրելի ուսուցչին Մեծոփա վանքում և նրանից վարդապետական գավազան և իշխանություն ստանում: Այդ տեղի է ունենում 1409 թ. Երևանի Անանիա առաքյալի անապատում, որը գտնվում էր քաղաքի հյուսիսում՝ այգիների մեջ, Հրազդանի ձախ ափին, Կոզեռն բլուրի ստորոտում (այժմ Թումանյան և Մոսկովյան փողոցների խաչմերուկում, Զորավոր եկեղեցու տեղում): Նոյեմբերի վերջերին ամենայն հայոց րաբունապետ Գրիգոր Տաթևացին, Սաղմոսավանքի և Եղվարդի դպրոցների րաբունապետներ Հակոբ և Սիմեոն վարդապետների, Առաքել Սյունյաց եպիսկոպոսի, Հովհաննես Մեծոփեցու, Գալուստ Վաղանդնեցի վարդապետի, Քաջբերունիքից եկած և Տաթևացուն ուղեկցող այլ վարդապետների, եպիսկոպոսների, աշակերտների, Երևանի վանքերի ու եկեղեցիների միաբանների ու բնակիչների ներկայությամբ, մեծ հանդիսավորությամբ և շուքով «դաւազան իշխանութեան» շնորհեց Թովմա Մեծոփեցուն, Մկրտիչ Նահապետենցին, Կարապետ Խառաբաստեցուն, Մկրտիչ Օրբելյանցին, Մկրտիչ Հողձեցուն, Սարգիս Մեծոփեցուն և այլոց[35]:

Թովմա Մեծոփեցին ընկերներով վերադարձավ Քաջբերունիք: Ինքը ստանձնեց Մեծոփա դպրոցի, Կարապետը՝ Խառաբաստա վանքի դպրոցի րաբունապետությունը, Մկրտիչ Օրբելենցը՝ Տեր Հուսկան որդու վանքի առաջնորդությունը: Մկրտիչ Նահապետենցը մնաց Մեծոփա վանքում և եռանդուն մասնակցություն ունեցավ նորաբաց դպրոցի կազմավորման ու ծաղկման աշխատանքներում: Մանկավարժական, գիտական, մատենագրական, եկեղեցական ու հասարակական ավելի քան երեք տասնամյակների եռանդուն գործունեություն ծավալեց Թովմա Մեծոփեցին և մահացավ 1446 թ. մայիսի 15-ին, Մասիսի ստորոտի Ակոռի գյուղում: Եղբայրը՝ Գորգի Միլիքը մարմինը փոխադրեց Մեծոփա վանք և թաղեց Մխիթար Սասնեցի և Մովսես Մեծոփավանեցի րաբունապետների կողքին:

***

Մեծոփա վանքի բարձրագույն դպրոցը բացվեց որպես փոխարինող Խառաբաստա դպրոցի և միաժամանակ որպես շարունակություն Տաթևի համալսարանի: Երբ Թովմա

35 Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հ. Բ, Երևան, 1956, էջ 353:

Մեծոփեցին նաև վարդապետական աթոռի նորաբաց դպրոցում, Գրիգոր Տաթևացին այլևս չկար, իսկ փոխարինողների ժամանակ Տաթևի դպրոցն այլևս այն չէր: Մեծոփա վանքի դպրոցը դարձավ Տաթևի Համալսարանի ավանդների շարունակողը՝ վարդապետներ պատրաստելու, լուսավորություն տարածելու ու հավատափոխության դեմ պայքարելու բնագավառներում: Կաթոլիկ եկեղեցու գործակալների դեմ Գլաձորի Համալսարանի և Մեծոփա վանքի դպրոցի սկսած պայքարը զորեղացավ և գագաթնակետին հասավ Տաթևի Համալսարանի, Ապրակունյաց, Աստապատի և Խառաբաստա բարձր դպրոցների դասատուների և աշակերտների ջանքերով: Լատինամոլները նահանջեցին: Գրիգոր Տաթևացին այն ավելի առաջ տարավ ոչ միայն իր դասակիցների՝ Հակոբ Սաղմոսավանեցու, Գևորգ Երզնկացու, Գրիգոր Խլաթեցու, Սիմեոնի և մյուս րաբունապետների դպրոցներին ընդհանուր ղեկավարություն ցույց տալով, այլև բազմաթիվ երկերով, այդ երկերը ընդօրինակել տալով, անհրաժեշտ գրականությունը, հատկապես եկեղեցական-ծիսական գրքերը լատինամոլների միջամտություններից և աղավաղումներից մաքրելով: Տաթևացու ընդօրինակած «Գիրք եւթն առաքինութեանց Պետրոսի Արագոնցւոյ» աշխատությունը ընթերցող ամեն կաթոլիկ լուսանցքներում ավելացնում է. «Ո Տաթևացի, ոչ երկնչիս յԱստուծոյ խառնելով զթոյնդ անապական գինւոյ, որ սպանէ ոգիս պարզամտաց» կամ նույն տեղում՝ «...Որոտնեցին և Տաթևացին զորոմ յոգնապատիկ սերմանել է ի մէջ սուրբ գրքիս»[36]: Ունիթորները սարսափում էին Հայոց մեծ վարդապետներից: Տաթևացին, շարականների հեղինակների ցանկը կազմելիս և օգտագործման հանձնարարելիս, դուրս է գցում Գրիգոր Անավարզեցի կաթողիկոսի և այլ լատինամոլների անուններն ու նրանց շարականները՝ գրելով. «Այսքան շարականս ընդունելի է յեկեղեցի, և աւելին քան զայս խոտելի է և անպիտան»[37]:

Գրիգոր Խլաթեցին, Հովհ. Որոտնեցու սիրելի աշակերտը և Գրիգոր Տաթևացու դասընկերն ու գործակիցը, Հայսմավուրքը խմբագրում է, մեր կարծիքով, ոչ առանց վերջինիս գիտության և անշուշտ, վերը նշված սկզբունքով, մաքրելով այն Հայ եկեղեցու համար «խոտելի և անպիտան» վարքերից և վկայաբանություններից և ավելացնում բազմաթիվ նորերը ոչ միայն հին, այլև իր ժամանակակից նահատակների, որոնք

36 Հիշատակարաններ, ԺԴ, էջ 565:

37 Մատենադարան, ձեռ. 813, էջ 503ա:

մարտնչել էին անհավատների, միարարների դեմ և նահատակվել այդ ճանապարհին: Նա կարգավորում է Գանձարանը, Ճառընտիրը, սրբագրում Մաշտոցը և Սաղմոսարանը: Գ. Զարբհանալյանը «Տաթևյան վարժարանի» մասին գրում է, որ այն «...իւրն պարտքը սեպեց՝ ոտքի տակ առնվելու սպառնացված ու բոլորովին անհետանալու ողորմ վիճակին մէջ դրված ազգային լեզուն, ծեսերն ու արարողութիւնները պահպանել»[38]: Ազգային լեզվի, ծեսերի, արարողությունների պահպանությամբ որն այդ ժամանակ ազգային ինքնուրույնության պահպանման հիմնական միջոցներն էին հավատափոխության և դավանափոխության դեմ, տաթևյան սկզբունքները շարունակվում են Մեծոփա վարժարանում:

Թովմա Մեծոփեցին սրբագրում է Աղոթամատույցը, Սաղմոսարանը և Տոնացույցը: Մեծոփա վանքում սրբագրվում կարգավորվում են ժամակարգությունը, Խրատ ժամատեղյացը և այլն, բոլորի հիմքում դրվում են նախնյաց ու թարգմանչաց կարգավորությունները: Այս ամենը արվում էր Գրիգոր Խլաթեցու, Թովմա Մեծոփեցու, Հակոբ Ղրիմեցու գլխավորությամբ և նրանց աշակերտների ջանքերով:

Թարգմանչագիր օրինակների, եկեղեցու սուրբ Հայրերի և նշանավոր վարդապետների գործերի ու սրբագրությունների ձեռք բերման ու ընդօրինակման աշխատանքը Մեծոփա վանքի գրչության դպրոցի գործունեության բաղկացուցիչ մասն էր: Թովմա րաբունապետը Մեծոփա վանքի դպրոցում ուսուցումը տանում էր նույն այն ծրագրով, ինչ ծրագրով դասավանդում էին վարդապետանոցները, սովորեցնում այն, ինչ ինքն էր սովորել Սարգիս, Վարդան, Գրիգոր Տաթևացի րաբունապետների մոտ: Իսկ այդ դպրոցներում նա «...ուսեալ էր զերկոտասան մասունս իմաստասիրութեան. զբնաբանականն, զուսումնականն, զաստուածաբանականն և զբարոյականն, զտնտեսականն և զքաղաքականն, զթուականն, զերաժշտականն, զերկրաչափականն և զաստղաբաշխականն և զամենայն իմաստս հռետորական հանճարոյ արտաքին փիլիսոփայութեան և գրոց, որ է Քերականն, Սահմանքն, Պորփիւրն, Ստորագրութիւնքն Արիստոտելին, Պերիարմենիասն, Աշխարհացն, Առաքինութեանցն, և զՀին և զՆոր կտակարանացն, աստուածեղէն տառիցն և խրթին բառից ծածկեալ աստուածազարդ և ուղղափառ սուրբ վարդապետաց: Եւ զԾԱ (51) վիպասական պատմագրաց ի բերան առեալ

38 Գ. Զարբհանալեան, Պատմութիւն հայերէն դպրութեան, Բ, Նոր մատենագրութիւն, Վենետիկ, 1878, էջ 212:

պատմէր մարդկան զտխ և գգիչեր, յանձանձիր ուսուցանէր և լուսաւորէր զամենայն մարդ, զհաւատացեալ և զանհաւատ, զբարի և զչար»[39]: «Մեր միջնադարյան վարդապետարանների ծրագիրն է սա»,— գրում է Գ. Հովսեփյանը[40]: Թովմա Մեծոփեցու դասախոսությունների մասին Կիրակոս բանասերը աղքատ տեղեկություն է հաղորդում. «հանապազ չարչարէր զինքն ի յուսուցանել զմանկունսն եկեղեցւոյ ի Սաղմոսն, ի յաղօթքն, ի Շարական, ի գրագրութիւն, ի ժամակարգութիւն»[41]: Բայց այսքանով չի վերջանում, իհարկե, Թովմա Մեծոփեցու դասախոսությունների շրջանակը: Նա զբաղվել է նաև իր աշակերտների համար Ս. Գրքի և եկեղեցական հայրերի գործերի մեկնությամբ: Այս վերջինիս մասին բավական փաստեր ենք գտնում ձեռագրերի հիշատակարաններում: «Դասախոսությունների առարկան հաճախ իրենք աշակերտներն էին թելադրում, կամ եկեղեցական հայրերից որևէ գիրք վերցնելով վարդապետը դասախոսում էր մեկնություններով»,— գրում է Գ. Հովսեփյանը[42]:

Մեծոփեցին, մինչև 1419 թ. դասախոսել է Ղուկասի Ավետարանի Իգնատիոսի մեկնությունը. «Հարկեցին զմեզ եղբարքն զմեկնիչն տէր Իգնատիոսի դաս առնել»[43]: Այդ թվականին գտնում է նույն գործի Սարգիս Կունդի մեկնությունը և այն դասախոսում[44]: 1426 թվականին դասախոսում է Գրիգոր Նարեկացու Երգ երգոցի մեկնությունը, Վարդան վարդապետի նույն երկի մեկնության հետ: «Աղաչեմ զսպասաւորքդ բանի փոքր մի ճաշակել ի քաղցրութենէ սորին և ապա գիտասցես զճաշակ քաղցրութեան հոգևոր պտղին, զի ես ճաշակեցի և ոչ գտի այլ ճաշակ, համեմատ սմին: ՊՀԵ (1426) թվ. դասիւ կարդացի հետ Վարդանայ մեկնչին, և զարմանալի տեսայ զմիտք սորին»[45]:

Նույն թվականին Մկրտիչ Մեծոփավանեցին Երուսաղեմից մեկնությունների մի ժողովածու է բերում Մեծոփա վանք «...վասն այն յուսոյն, որ գիրս ի դասատուն մտանէ և ի

39 Գ. Յովսէփեան, *Թովմա Մեծոփեցու կեանքը*, էջ 1–2:
40 Անդ.
41 Անդ, էջ 5:
42 Անդ:
43 Մատենադարան, ձեռ. 5591, էջ 240բ:
44 Անդ:
45 Հիշատակարաններ ԺԵ,Գ, էջ 367:

վարդապետաց և ի գրոց աշակերտաց ձեռն մնա»[46]: Թովմա Մեծոփեցին մակագրում է ձեռագրի վրա «...Դասիւ գծիրս դուրս եկի ի ՊՀԶ (1427) թվականի»[47], այսինքն, մեկնեցի ամբողջությամբ: Ղազար սարկավագը 1427 թ. Թովմա Մեծոփեցուն հիշելով գրում է. «...ի յայս ամի զՏեաէր Յովհաննու աւետարանչին յայտնեցաւ մեզ դասիւ»[48]: Գ. Հովսեփյանը ենթադրում է, որ Թովմա Մեծոփեցին դասախոսած պետք է լինի նաև Հովհաննես Ոսկեբերանի և Եփրեմ Խուրին Ասորո Պողոսի Զորեքտասան թղթոց մեկնությունը[49], որը, Մեծոփեցու վկայությամբ, կորած էր և դուրս էր մնացել նախորդ վարդապետների՝ Գրիգոր Տաթևացու, Սարգիս և Վարդան վարդապետների դասատներից: Գտնելով այդ ձեռագիրը Թ. Մեծոփեցին ավելացնում է «Մեկնողօրէն զցանգ մեծին Եւթաղի» սրբագրում և հանձնարարում «ի ձեռս մանկանց եկեղեցացդ Հայաստանեայց՝ ճշմարտախոհ վարդապետաց և քաջամիտ աշակերտաց»[50]: Այստեղից հետևում է, որ սույն աշխատանքը վարդապետական կրթության համար շրջանառության մեջ է դնում ինքը Թովմա Մեծոփեցին:

Թովմա Մեծոփեցին վարժ և հմուտ գրիչ էր: Գրչության արվեստը նա սովորել էր իր առաջին ուսուցիչ Մաթեոս քահանայի մոտ, որը հետագայում օգնում էր նրան «թուղթ կոկելով» կամ «տուն տալով»: Այնուհետև կատարելագործվել է Սարգիս վարդապետի դպրոցում: Այդ շրջանի նրա կատարած ընդօրինակություններից մեզ ոչինչ հայտնի չէ: Մեզ հասած առաջին ընդօրինակությունը կատարված է 1406 թ. աշնանը Տաթևում, «առ ոտս մեծ հռետորին՝ արարողի այսմ գրոցս»: Այդ Գրիգոր Տաթևացու «Լուծմունք արտաքին գրոց» աշխատությունն էր: Թովմա քահանան այն գրել էր «աշխատութեամբ և չարչարանօք... յառաջին աւրինակէն, զի ի Դ կողմանց նիւախայ էր արարեալ»[51]: Թովմա գրիչ Մեծոփեցին արտագրել էր Գրիգոր Տաթևացու ինքնագրից, և ակնարկում է հեղինակի կողմից լուսանցքներում և տողամիջում կատարված հավելումները: Հիշելով հորը, որ նոր

46 Մատենադարան, ձեռ. 1419, էջ 201բ:
47 Անդ, էջ 81ա:
48 Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 362:
49 Գ. Յովսէփեան, *Թովմա Մեծոփեցու կեանքը*, էջ 12:
50 Մատենադարան, ձեռ. 1380, էջ 343ա:
51 Ղ. Ալիշան, *Սիսական*, էջ 239:

էր մահացել, և մորը, հոգևոր ծնողներ Մաթեոս քահանային, Սարգիս բաբունապետին և Վարդան վարդապետին, նա գրում է, որ վերջինս «յայսմ ամի փոխեցաւ ի Քրիստոս, և մեք թափառական գոլով յերկրէ Բաջբերունոյ եկեալ բնակեցաք աստ՝ երկոտասան եղբարբք հանդերձ»[52]: Գեղեցիկ, մանրատառ բոլորգրով է գրված Տաթևի համալսարանի սանի օրինակը: 1407 թ. Թովման ընդօրինակում է Տաթևացու Հարցմանց գիրքը, «առ ոտս մեծ վարժապետի, քաջ հռետորի և անյաղթ փիլիսոփայի արթուն Գրիգորի՝ ստացողի այսմ տփերի արգասաւորի»[53]: Թովման արդեն կատարում է մեծ բաբունապետի պատվերը, որը նրա առաջադիմության ապացույցն է: Ընդօրինակությունը չավարտած Թովման, իր ընկերակիցների հետ, վերադառնում է Բաջբերունիք և մյուս մասը ավարտում Մեծոփա վանքում[54]: Այդ 1408 թվականն էր: Թովմա Մեծոփեցին ընդօրինակում է Թումա Տաթևացու 1407 թ. Տաթևում կատարած Հարցմանց գրքի ընդօրինակությունից, որն այժմ պահվում է Մաշտոցյան Մատենադարանում և կրում 3104 համարը: Իսկ այն արտագրված էր «...օգնականութեամբ և կամակցութեամբ մեծիս իմոյ և կրկին ստացողիս Գրիգոր աստուածաբնակ պւէտի, ի լաւ և յընտիր օրինակէ»[55]: Թովմա Մեծոփեցին ընդօրինակել է նաև այն հիշատակագրությունները, որ կան գաղափար օրինակում, միայն փոփոխված անուններով: Նման են նաև համառոտագրություններն ու գլխագրված բառերը: 1409 թ. այդ օրինակից է գաղափարել իր ձեռագիրը նաև Սարգիսը Խառաբաստա և Մեծոփա վանքերում[56]: Հաջորդ ընդօրինակությունը, որի վերաբերյալ միայն տեղեկություն ունենք, Թովմա Մեծոփեցին կատարած պիտի լինի մինչև Սաղմոսավանք գնալը կամ այդ (1409) թվականին: Մկրտիչ Եղեգեցին 1413 թ. ընդօրինակում է Գրիգոր Տաթևացու Լուծմունք Պարապմանց գիրքը, և նվիրում Թովմա Մեծոփեցուն, որովհետև վերջինս նրան և իր ազգական Մարգարե վարդապետին էր նվիրել իր ձեռքով գրված «Գրիգոր Աստվածաբանի Առ որս գիրք»-ը: «Ի թուականիս Հայոց ՊԿԲ (1413) գրեցաւ Լուծմունքս ի սուրբ մենաստանիս Սաղմոսի: Եւ խոու զգիրքս յիշատակ հոգոյ իմոյ հոգևոր

52 Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 56:

53 Մատենադարան, ձեռ. 9247, էջ 401ա:

54 Անդ, էջ 244բ:

55 Մատենադարան, ձեռ. 3104ա, էջ 359:

56 Մատենադարան, ձեռ. 921:

եղբաւր իմոյ Թովմա վարդապետի՝ աստուածաբնակ ուխտին Մեծոփայ վանացն, վասն զի նա Առ որս գիրս Աստուածաբանին ինձ և ազգականին իմոյ Մարգարէ վարդապետին՝ ինքնագիր ձեռաւք գրեալ շնորհեաց մեզ»[57]: 1409 թ. Երևանում, Թովմա Մեծոփեցին Գալուստ վարդապետին և Սիմեոն գրչին ընդօրինակել է տալիս Գրիգոր Տաթևացու Քարոզգիրքը, որն ավարտվում է 1410 թ.: Ընդօրինակությանը մասնակցում է նաև ինքը «Պիտականուն վարդապետս Թովմա ստացա զերկրորդ հատորն Քարոզգրոցս... յամի թուականութեան մերս տումարի ՊԾԹ (1410) երորդի բազում աշխատութեամբ և չարչարանաւք... ի գաւառիս Այրարատեան, յանապատիս Երևանոյ, առ դրան սուրբ տաճարիս Անանիայ առաքելոյ, ձեռամբ երախտաւորի... Գալուստ վարդապետի... և Սիմէօն կրօնաւորի: Եւ մասն ինչ ես՝ տըկարս հոգով և մարմնով գծագրեցի, ի յուսումն վարդապետաց եկեղեցւոյ»[58]: Սկզբի մասը ընդօրինակել է Գալուստ վարդապետը 1409 թ.[59]: Մյուս կեսի գրիչ Սիմեոնը վախճանվում է ձեռագիրն ավարտելուց հետո[60]: Ի դեպ, այս Երևանից մեզ հասած հնագույն ընդօրինակությունն է: Այդ թվականին պետք է դնել նաև Թովմա Մեծոփեցու դասընկեր Մկրտիչի ընդօրինակած Հարցմանց գիրքը, որին օգնել է Թովմա Մեծոփեցին՝ մի քանի էջ ընդօրինակելով և թողել հետևյալ հիշատակագրությունը. «Աղաչեմ զքեզ հնչման հոգւոյն Աստուծոյ՝ զախրասնունդ հոգևոր և հարազատ եղբայրդ իմ զՄկրտիչ կրօնաւոր և զաշակերտեալդ բանին Աստուծոյ, ընկալ զսակաւ գիծս ի Թումայ մեղուցեալ քո հոգևոր եղբօրէ, ի հաճոյս քո և մի ի զայրացումն, և յիշեա ի սրբանուէր աղօթս քո, վասն սիրոյն Քրիստոսի աղաչեմ զքեզ, զի այս էր կար

57 Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 255:

58 Մատենադարան, ձեռ. 6405:

59 Անդ, էջ 90բ:

60 Անդ, էջ 428բ. Սիմեոնը Գրիգոր Տաթևացու աշակերտներից էր, 1400 թ. Տաթևում օրինակում է մի Մաշտոց (Մատենադարան ձեռ. 6827), իսկ 1407 թ. նույն տեղում օգնում է Մաթեոս վարդապետին՝ Ավետարան ընդօրինակելիս. «որ բազում աշխատեցաւ յառաջին գլուխ գրոցս»,—գրում է վարդապետը (Մատենադարան, ձեռ. 923): Թովմա Մեծոփեցին նրան համարում է «հոգևոր եղբայր մերոյ և ընկերակից» իսկ Սիմեոնը՝ Թովմային՝ «հոգևոր հայր մեր վարդապետն Թովմա»: Ձեռագիրն ավարտելուց հետո, Սիմեոնը թողնում է մի բանաստեղծություն.
Աւրհնեալ էս Քրիստոս Աստուած
Եւ գովեալ յամեն բերանոյ... (Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 106):

մեր»[61]*: Այդ նույն թվականին, արդեն Մեծոփա վանքում Թովմա վարդապետը Հովհաննես կրոնավորի և Հակոբ դպրի հետ ընդօրինակում է Գրիգոր Տաթևացու Քարոզգրքի մյուս հատորը «ի յօգուտս խոնարհ և հեզ գրոց աշակերտաց անձանց»*[62]*: Հիշատակարանում պատմում է Մեծոփա վանքից Տաթևացու գնալու և նրանից Արարատյան գավառում վարդապետական աստիճան ստանալու մասին: Ձեռագրի օրինակը տվել էր Գալուստ վարդապետը «երկրէն հեռաստանէ», իսկ հարազատները օգնել են գրանյութ ձեռք բերելիս*[63]*:*

Արմաշի վանքի հայերեն ձեռագրացուցակում 212 համարը Գրիգոր Տաթևացու Քարոզգիրքն է, երկու փոքրիկ հիշատակագրություններով, որոնցից երևում է, որ գրիչը Թովմա Մեծոփեցին է: Ձեռագրի 19բ էջում գրված է «...զպիտակնուն վարդապետս Թովմա աղաչեմ յիշել ի Տէր... նաև զհարազատն իմ Սաւլթանշէն, որ ի թվ. ՊԿԲ (1413) փոխեցաւ ի Քրիստոս...», իսկ 32բ էջում՝ «...Վարդապետս Թովմա... յոյժ աշխատեցայ ի գրել Քարոզիս, զի յետոյ գրեցի յաստուածաբնակ ուխտս առ մեծ վարդապետիս Գրիգորի մականուն Տերենց, Քրիստոս լուսաւորէ զսա հոգւով և մարմնով հանդերձ միաբան եղբարբքս. ՊԿէ (1418) թվականիս»[64]*: Արմաշի վանքի ձեռագրաց ցուցակի հեղինակ Թոփչյանի կարծիքով ձեռագիրը ընդօրինակվել է Սախտա վանքո՞ւմ: Հիշատակարանից երևում է, որ Թովմա Մեծոփեցին Քարոզգիրքն ընդօրինակել է Գրիգոր Խլաթեցու մոտ, բայց՝ որտե՞ղ: Մատենադարանի № 599 ժողովածուն, որ Յոթնագրյանք է բազմաթիվ այլ նյութերով, Թովմա Մեծոփեցին գտնում է Խլաթում «Ջայս ի հին գիրս գտի ի Խլաթայ վանսն»*[65]*: Սրա նախորդ թերթում գրում է. «Ջբազմաւեր ոգիս, զպիտականուն վարդապետս աղաչեմ յիշել ի Տէր, որ բազում աշխատութեամբ հաւաքեցի զայս գիրքս, որ ցրուեալ և ցընդեալ էր ի վաղուց հետէ: Եւ ոչ ոք գիտէր, թէ զինչ էր սա»: Հիշում է հոգևոր և մարմնավոր ծնողներին, «մանաւանդ*

---

[61] *Մատենադարան, ձեռ. 5861, էջ 217ա:*
[62] *Մատենադարան, ձեռ. 2065:*
[63] *Անդ, էջ 391ա:*
[64] *Յ. Թոփչեան, Ցուցակ ձեռագրաց Արմաշի վանից, Վենետիկ, 1962, էջ 414:*
[65] *Մատենադարան, ձեռ. 599, էջ 62ա:*

զՄաթէոս քահանայ... ՊԿԲ (1413) գրեցաւ»[66]*: Հիշատակարանում անունը չկա, բայց այն գրված է եղել լուսանցքում, որը, սակայն, հետագայում կազմելիս կտրել են և մնացել է միայն թ և ներքևում ա տառերը: «Հնարավոր է ենթադրել, որ այստեղ գրված է եղել գրչի անունը՝ «Թովմայ», գրում է Լ. Խաչիկյանը*[67]*: Այս Թովման Մեծոփեցին է, որովհետև նախ 1413 թ. նա արդեն վարդապետ էր: Այնուհետև, հիշյալ Մաթեոս քահանան նրա առաջին ուսուցիչն էր, նրա հոգևոր ծնողը: Հիշատակագրությունները և 61բ, 62ա էջերը Թովմա Մեծոփեցու գրությունն են հիշեցնում, և վերջապես Մեծոփեցին իր նշանավոր Դասագիրքը կազմելիս օգտվել է սույն ձեռագրից: Ուրեմն 1413 թ. Թովմա Մեծոփեցին եղել է Խլաթում: Այդ հաստատվում է Թովմա Մեծոփեցուն ուղարկած Գրիգոր Խլաթեցու մի նամակով: Ուղարկելով «ողջոյն համբուրի ընդ ձեզ և ընդ ձերոցդ ամենի և հաւրդ Մաթէոսի», Խլաթեցին գրում է. «...և թէ զոր վախեցաք և սասանեցաք և տեղաց ի տեղ փախստական տատանեցաք, զայն թէ արժան լինիմք զձեզ տեսանել յայնժամ ասասցուք: Ի Խլաթ լաւ հանգիստ է, ի ապայայն եկի ի վանքն, որ ձմեռնս թէ Տէր կամեսցի ի մեկտեղ լինիցիմք... և յետ այգէկիթոցն մարդ յուղարկեմք և վարդապետն խոնարհի առ մեր աղաչանս և գայ, եթէ ապրիմք, ձեր տեսով ուրախանամք և եթէ մեռանիմ, զհողս հողոյտ առ և զհոգիս աղաւթիւքդ յուղարկէս»*[68]*: Ինչպես տեսնում ենք այս նամակի վերջը նման է հեղինակի 1410 թ. Այրարատյան յերկիր ուղարկած նամակին. Թովմա Մեծոփեցին չի մերժել մեծ րաբունապետի առաջարկը և գնացել է նրա մոտ՝ Խլաթ 1413 թ., հոգևոր հոր՝ Մաթեոսի հետ, որովհետև նա էլ էր հրավիրվել Խլաթ և այդ պատճառով հիշվում է Յոթնագրյանքում: Ուրեմն նամակը գրվել է 1412 թ. այգեկութից առաջ, ամռանը:*

Քարոզգրքի տեղանունն էլ մեզ այդ է հուշում: «Սախտա վանք» Խլաթում չկա, այնտեղ կա «գեաւղ որ առ ափն ծովու, որ կոչի Աղէթ»: Աղեթ գյուղի վանքը կկոչվեր Աղեթա վանք կամ Աղթա վանք, որ գրվել է Ախտա վանք ձևով, իսկ սկզբի «ս» տառը նախորդ բառի վերջին տառն է անկասած, «ի վանս Ախտա», որ դժվարընթեռնելի հիշատակարանում նկարագրողը կարդացել է տեղանվան հետ, «սախտա» ձևով

---

[66] *Անդ, էջ 61ա:*
[67] *Հիշատակարաններ, ԺԷ, էջ 147, ծթ. 1:*
[68] *Վենետիկ, ձեռ. 1091, էջ 466–467:*

ինչպես պատահում է հաճախ: Ուրեմն Քարոզգիրքը Թովմա Մեծոփեցին գրել է Խլաթի Աղեթ ծովափնյա գյուղի վանքում, որտեղ նա գտնվում էր 1413 թ. և որտեղ նա գտնում է վերևում հիշատակված Յոթնագրյանքը: Հապա ինչո՞ւ է Քարոզգիրքը թվագրված ՊԿԷ (1418): Այստեղ նույնպես դեր է խաղացել «գեշ, թուղթերը կազմեն դուրս եկած, մաշած, աղտոտ, խոնավությունն գեղնած և փտած, տեղ-տեղ թերի և պակասավոր և ցեցակեր» եղած ձեռագիրը: Ձեռագրում կա երկու թվական՝ ՊԿԲ և ՊԿԷ: Առաջինը Թովմայի եղբոր մահվան թվականն է ՊԿԷ թվականի վերջին տառը, պարզապես մաշված է եղել գլխի կողմից, և Թոփչյանը այն Բ-ի փոխարեն Է է կարդացել և 1413-ը դարձել է 1418: Ինչպես կտեսնենք հետո, Թովմա Մեծոփեցին այդ ժամանակ ընդօրինակություններով հազվադեպ էր զբաղվում, այդ անում էին նրա աշակերտները, իսկ 1418 թ. նա արդեն վարժ գրագիր աշակերտներ ուներ, որոնց հետ երբեմն մասնակցում էր ընդօրինակություններին: Այսպիսով, Քարոզգիրքը գրվել է 1413 թ. Խլաթի Աղեթ գյուղի վանքում, «առ մեծ վարդապետս Գրիգորի մականուն Ծերենց»[69]: 1439 թ. Արծկեում, ուր ժամանակավորապես տեղավորված էր Թշնամուց հալածված դպրոցը, Թովմա Մեծոփեցին մի ճաշոց է սկսում ընդօրինակել՝ շարունակությունը հանձնարարելով Հովհաննես Մանկասարենցին[70]:

Թովմա Մեծոփեցին հավաքել է նաև բազմաթիվ նամակներ ու թղթեր, որոնք պատկանում են Գրիգոր Տաթևացու, Գրիգոր Խլաթեցու, Հովհաննես Մեծոփեցու, Հակոբ Սաղմոսավանեցու, իր և այլ վարդապետների գրչին, և կազմել ժողովածու հետևյալ վերնագրով. «Թուղթ նամակի վարդապետաց եկեղեցւոյ, զոր ի կեանս իմ գտի ես պիտականուն վարդապետս Թովմա. ասա հաւաքեցի վասն գրոց աշակերտի, աղաչեմ յիշել ի Տէր»[71]: Թովմա Մեծոփեցուց, որպես գրչից ուրիշ ամբողջական ընդօրինակություններ հայտնի չեն և թվում է, թե չպետք է լինեին, որովհետև նա արդեն Մեծոփա վանքի րաբունապետն էր, ծանրաբեռնված դաս առնելով և գրչության արվեստ սովորեցնելով: Սրան եթե ավելացնենք նաև ձեռագրերի սրբագրությունն ու խմբագրությունը, հայթայթումն ու նորոգել տալը, դպրոցի, թեմի և եկեղեցու հոգսերը, ապա

69 Յ. Թոփչեան, Ցուցակ Արմաշի, էջ 409:

70 Բազմավէպ, 1968:

71 Վենետիկ, ձեռ. 1091, էջ 389ա–435:

պարզ կդառնա, թե ինչու Թովմա վարդապետը նույնիսկ հիշված ընդօրինակություններին կարողացել է մասամբ միայն մասնակցել: Նրա կողմից մասնակի ընդօրինակությունների հանդիպում ենք նաև հետագայում, բայց առանձին ձեռագրերի ընդօրինակության՝ հազվադեպ: Ուստի մեզ կասկածելի էր թվում 1441 թվականին Թովմա Մեծոփեցու կատարած Ավետարանի ընդօրինակության վերագրվելը Թովմա վարդապետին: Այդ Ավետարանը, որ այժմ պահվում է Մաշտոցյան Մատենադարանում 3892 համարի տակ, Թովմա Մեծոփեցուն են վերագրել ոչ միայն Գ. Հովսեփյանը[72], Հ. Աճառյանը[73] և ուրիշներ, այլև միջնադարի որոշ հեղինակներ: Դեռևս 1661 թ. ձեռագրի վերջում Ավետարանը գերությունից ազատելու և Թադեոս առաքյալի վանքին նվիրելու առնչությամբ գրված է. «...տեսեալ զձեռագիր սրբազան վարդապետին Թովմայի Մեծոփեցւոյ՝ սիրով խանդաղատեցայ և եդի զաս յատենի սուրբ Առաքելոյն, ի զուարճութիւն բանասիրաց, զոր հայցեմ խնամով պահել և աւրհնութեան ժառանգորդ լինել»[74]: Այս փաստը նախ՝ Թովմա Մեծոփեցու հեղինակության և ապա նախորդ նշանավոր վարդապետների գործերի նկատմամբ հայ հոգևորականների ցուցաբերած հարգանքի ու գնահատման վկայությունն է: Սակայն այս ձեռագրի գրիչը Թովմա վարդապետ Մեծոփեցու աշակերտ Ղազարի և Ամբարի որդի Թովման է, որը նույնպես Մեծոփեցի է կոչվում, ինչպես կտեսնենք հետո: Թովմա Մեծոփեցին ոչ միայն վերը թվարկված ձեռագրերի, այլև մեզ հայտնի բոլոր հիշատակարաններում և հիշատակագրություններում ներկայանում է որպես Թովմա, իսկ վարդապետ դառնալուց հետո՝ «Թովմա վարդապետ», նրան «Մեծոփեցի» կամ «Մեծոփավանից վարդապետ» են կոչում ուրիշները: Մինչդեռ այստեղ, այս Ավետարանի հիշատակարանում գրված է «...ես մեղուցեալ գրիչս Թովմա Մեծփեցի»[75]: Նույն գրիչ Թովմա Մեծոփացի աբեղայի ձեռքով է գրված 1424 թ. Շարակնոցը «...յառաջնորդութեան... մեծ րաբունապետիս մերոյ Թովմայի վարդապետի, որ հանապազ խրատ տայ մեզ ի յարուեստ

72 Գ. Յովսէփեան, Թովմա Մեծոփեցու կեանքը, էջ Ի, 28–31:

73 Հ. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, էջ 332:

74 Մատենադարան, ձեռ. 3892, էջ 316բ:

75 Անդ, էջ 315բ:

գրչութեանն»[76]: Նույնիսկ, երբ Մկրտիչ վարդապետը Թովմա Մեծոփեցուն խնդրում է, որ Աղոթագիրքը «մատամբ իւրով գրեսցէ... ձեռն ի գործ արկեալ և վասն անյարմար նիւթոյն ոչ յաջողեցաւ, եւ գրել ձեռնասուն աշակերտին իւրոյ Համանուն Թումայի»: Այս Թուման Մեծոփեցի գրիչն էր[77], որից մի Ավետարան է պահվում Լենինգրադում[78]: Այդ ձեռագրի մանրաժապավենի և մեր հիշյալ ձեռագրի համեմատությունը ցույց տվեց, որ դրանց գրությունը բոլորովին նման է իրար, որ դրանք մի գրչի գործ են և տարբեր՝ Թովմա վարդապետի ձեռագրից: Եթե այս բոլորին ավելացնենք և այն, որ Թովմա Մեծոփեցի վարդապետը այդ թվականին (1441) զբաղված էր Հայոց կաթողիկոսական աթոռը Էջմիածնում վերահաստատելու գործով, և գուցե այդ ժամանակ արդեն Վաղարշապատում էր գտնվում, հասկանալի կդառնա, որ նա չէր կարող մահդասի պատճառով Փաշա մոր համար Ավետարան ընդօրինակել:

ԺԵ դարում կատարված ընդօրինակությամբ մեզ է հասել Մովսես Երզնկացու Ոսկեփորիկը: Գրիչը արտագրել է նաև հեղինակի և 1439 թ. ընդօրինակողի հիշատակարանները: «Ես նուաստ վարդապետս Թումա փափաքեցա գրել զտառս զայս հոգեպատում... որք հանդիպիք յայսմ տառի յիշման առնէք զիս՝ զթարմատար և զանիմաստ գրիչս զԹումա զհամբակս բանի, որ բազում աշխատանօք գրեցի զգիրս թղթոց»[79]: Այդ Ոսկեփորիկից մի օրինակ պահվում է Վիեննայի Մխիթարյան մատենադարանում, դարձյալ հետագա ընդօրինակությամբ: Ձեռագրի 244բ-ում կարդում ենք «ի չքնաղ մատենիս հին օրինակն գրեալ էր ի թուականութեանս Հայոց ՊՁ-ին (1431), ի վանքս Մեծոփա, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին եւ սուրբ վարդապետաց գերեզմանացն»[80]: Կամ այս և Մաշտոցյան Մատենադարանի 576 ձեռագիրը ընդօրինակված են միևնույն գաղափարից, որ գրված է Մեծոփավանքում (այդ դեպքում ՊՁ-ի մոտ պետք է ենթադրել Ը տառը, որպեսզի լինի 1439) կամ Թովման այս նույն 1439 թվականին ընդօրինակել է

[76] Մատենադարան, ձեռ. 5114, էջ 372ա: Հմմտ. Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 304, 320:

[77] Մատենադարան, ձեռ. 744, էջ 256ա:

[78] Լենինգրադ, Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդների ինստիտուտ (մանրաժապավեն):

[79] Մատենադարան, ձեռ. 576, էջ 164բ:

[80] Յ. Տաշեան, Ցուցակ Վիեննայի, էջ 171:

Ոսկեփորիկը, մյուս (1431 թ.) ձեռագրից անկախ: Ոսկեփորիկի Մեծոփավանքում ընդօրինակելու փաստը, ժամանակի և գրչի համապատասխանությունը ենթադրել են տալիս, որ այս Թուման վարդապետն է: Սրա օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ այդ ժամանակ ուրիշ Թումա վարդապետ չկար Մեծոփավանքում, որ գիտական գրքեր ընդօրինակեր կամ հավաքեր: Ուստի Թումա Մեծոփեցուն ենք համարում Ոսկեփորիկի գրիչը:

Թովմա Մեծոփեցին նաև նշանավոր պատմագիր է, ԺԵ դարի միակ պատմիչը, որով և առավել հայտնի է: Պատմության շարադրումը սկսված է 1430-ական թվականներին և ընդգրկում է Լենկ-Թեմուրի առաջին արշավանքից մինչև 1440 թ. ընկած ժամանակաշրջանը: Այն կրում է «Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց» վերնագիրը, ուր իր ժամանակի իրադարձությունների իրական պատկերն է տալիս պատմիչը, ժամանակաշրջան, երբ, Մ. Աբեղյանի արտահայտությամբ, հարատև իշխում է մի մղձավանջային դրություն, և որ շատ զգայուն սրտով և կենդանի ցուցադրում է մեր այս պատմագիրը:

Մեծոփեցին դրա հետ միասին պատմում է նշանավոր վանքերի և վարդապետների, նրանց աշակերտների անդուլ գործունեության մասին Հայաստանում, որոնք լուսավորության և գիտության ճրագը վառ էին պահում այդ աղետալից դարում[81]: Մանկավարժ պատմիչը միայն դպրոցի համար չի գրել իր այս երկը, այլ ամբողջ ժողովրդի, որպեսզի մարդիկ կարդան և կարողանան կողմնորոշվել դժվարին ու ծանր ժամանակի մեջ: Թ. Մեծոփեցու կարծիքով մարդիկ նախ պետք է իմանան անցյալը, ապա՝ ներկան և միայն այս երկուսի գիտությամբ մտածել և հոգալ ապագայի մասին: «Ժամանակն բաժանի երեք՝ անցեալն, ի ներկայն և յապառնին»: Հետևաբար «վարդապետաց եկեղեցւոյ պիտոյ է վասն երիցն գիտելոյ. վասն անցելոյն պատմել, վասն ներկային խօսել, վասն ապագային իմանալ և զգուշացնել»[82]: Նրա պատմական մյուս գործը «Յիշատակարանն» է, որը վերաբերում է կաթողիկոսական աթոռը 1441 թվականին Սսից Վաղարշապատ տեղափոխելուն, որին այնքան եռանդուն կերպով մասնակցում և ղեկավարում էր ինքը Տաթևի վանքի առաջնորդ Հովհաննես վարդապետի հետ միասին: «Յիշատակարան»-ը փաստորեն

[81] Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, Բ, էջ 467:

[82] Թ. Մեծոփեցի, Պատմութիւն, էջ 44:

լրացնում է «Պատմությանը»[83]: Այն գրված է, հավանորեն, Վաղարշապատում, ինչպես ենթադրում է Մ. Օրմանյանը[84]:

Պատմական բովանդակություն ունեն նաև Թովմա Մեծոփեցու բոլոր հիշատակարանները, որոնք սփռված են նրա ձեռքով անցած բոլոր ձեռագրերում, նրանց նյութերն ընդօրինակելու, փրկելու, խմբագրելու, դասախոսելու, լրացնելու, բազմացնելու, կազմելու վերաբերյալ և որոնք երբեմն, լրացնում կամ ճշտում են «Պատմութիւն»-ը: Թովմա Մեծոփեցին իր ուսուցչի՝ Գրիգոր Տաթևացու նման, որը հայոց ազգի համար դարձել է, իր իսկ հորջորջմամբ, «Հոգևոր և մարմնաւոր թագաւոր աստուածապարգև», ինքը ևս հոգում էր ժողովրդի մասին, ինչպես վկայում են Կիրակոս Բանասերն ու բազմաթիվ փաստերը: «Եւ զամենայն վիշտ և զդառնութիւն և նեղութիւն և զտրտմութիւն տառապեալ ազգիս Արամեան, տանս Աբեթեան լիով և գեղեցկաշար բառիւք և ողբալից դիմաւք և աղիողորմ կսկծանօք... պատմէր»: Կիրակոս Բանասերի այս խոսքերը վերաբերում են նրա «Պատմութեանը» և հիշատակարաններին, բայց լալով պատմելը բավական չէր, ուստի նա «(Թովման) աշխատէր հանապազ ի Թուղթ գրելն վասն աղքատաց և գերելոց, որ մին տարին Գ դատա թուղթ վճարել էր ի նամակ գրելն»[85]:

Ստորև, աննշան կրճատումներով, բերում ենք այդ նամակներից մեկը պատկերացում տալու Թովմա Մեծոփեցու գործունեության այդ կողմի մասին. «Նուաստ գրեմ գլխաւսաւանդն ողջոյն և զառաքելական աւրհնութիւնն առ ամենայն հաւատացեալսդ Սրբոյ Երրորդութեանն, ուր և հասանի նամակս աւրհնութեան մերոյ, ի քաղաք, ի գեաւղ, վանք և յանապատ:

Նախ՝ առաջին, աստուծաբան վարդապետաց, առաքելաշնորհ եպիսկոպոսաց, արբանուէր քահանայից, ուղղափառ սարկաւագաց, քրիստոսասէր իշխանաց, հաւատարիմ տանուտէրաց, քաջամիտ ձեռնաւորաց, իմաստուն վաճառականաց, աշխատասէր հողագործաց, փարթամ և առատամիտ շինականաց, համեստ և ողորմած կանաց մեծամեծաց և փոքունց, երիտասարդաց և կուսանաց, ծերոց և տղայոց, եւ առհասարակ ամենայն ժողովրդոց... բազկատարած հայցմամբ, արտասուալից դիմաւք, անդադար աղաւթիւք հայցեմք յամենառատ Տեառնէ, զի իւր աստուածային գթած և քաղցր կամաւք և ակամբն նայեսցի ի վերա ձեր և նախախնամական աջովն իւրով պահապան և հովանի ի վերա ձեզ: Եւ բացցէ զգանձս առատս զողորմութեան իւրոյ եւ հեղցէ ի վերա ձեր, յոգի և ի մարմին ձեր, ի տունս և ի բնակութիւնս ձեր, յինչս ձեր և ի ստացուածս ձեր, յանդ և ի վաստակս ձեր, յանասունս և ի հօտս, եւ զամենայն պատուհաս, որ վասն մեղաց գան ի վերա մեր, դարձուսցէ Տէր Աստուած մեր ամէն: Այլև ծանիցէ աստուածասիրութիւն ձեր վասն հարկեոր և լաւ ալրած առնդ, որ է դա ստոյգ գերո տէր և ունի գերի տարած, միջնորդօք և աղաչանաւք կատարած դորա հիմա դա ոչինչ ճար չունելով քան զՔրիստոս և զնորին հաւատացեալսդ, շրջի լալագին աչաւք և դառն արտասուաւք ի դրունս ողորմածաց, խնդրել ողորմութիւն ի սիրելեացդ Աստուծոյ:

Արդ, արարէք դմա ողորմութիւն, որ շատ և որ սակաւ: Ով որ խաչի է խոստացեալ կամ Երուսաղէմայ ճանապարհին, կամ եկեղեցւոյ, տուք լիով ի ձեռն դորա, որ ազատին այն քրիստոնէքն անաւրինացն, զի ողորմութիւնն բարձր առ դատաստանին Աստուծոյ...:

Կատարողք աղաչանաց մերոց աւրհնիք յԱստուծոյ և յամենայն սրբոց և ի մէնջ, ամէն»[86]:

Համազգային աղետի ժամանակ հայ վարդապետը առաջարկում է ժողովրդին ոչ միայն իր ունեցածից սովորական ողորմություն և օգնություն տալ գերի ունեցող ընտանիքներին, այլև չխնայել այն ամենը, ինչ «խաչի է խոստացեալ կամ Երուսաղէմայ ճանապարհին կամ եկեղեցւոյ» համար է պահել: Մխիթար Սասնեցին և Գրիգոր Խլաթեցին էլ իրենց ընդօրինակությունների վարձն էին տալիս աղքատներին և գերիներ փրկագնում, հորդորելով բոլորին «ի նոյնն առնել»: Մեծոփա դպրոցի րաբունապետի հեղինակությունն այնքան է մեծանում, որ այն ընդունում էին և փոքր և մեծ հարցերում: Էջմիածնում հայոց կաթողիկոսության հաստատումը Մ. Օրմանյանը համարում է «նորա մեծ գաղափարը»[87]: Իսկ համակիրներ շահելու հարցում Թովմա Մեծոփեցու գործը ծանր էր, շարունակում է նա, որը «շփման մեջ էր, Աղթամարի վիճակներուն հետ, որ ինքզինքը մեծ հայոց կաթողիկոս կը ցուցնէր և Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը իրեն սեփականը կկարծեր... Մեծոփեցին հաջողեցավ Զաքարիան ալ

83 Կ. Կոստանյանցը 1892 թ. Թիֆլիսում հրատարակեց այն «Թովմա Մեծոփեցու Յիշատակարանը» վերտառությամբ:

84 Մ. Օրմանեան, Ազգապատում, էջ 2135:

85 Գ. Յովսէփեան, Թովմա Մեծոփեցու կեանքը, էջ 6:

86 Վենետիկ, ձեռ. 1091, էջ 390–392:

87 Մ. Օրմանյան, Ազգապատում, էջ 2134:

յուր կողմը չահել»[88]: Մեծարվում էր Թովմա Մեծոփեցին իր կենդանության օրոք, որպես «գերանելին ի մէջ ամենայնի, գլուխատուն ազգիս, զաստուածաբան և զսուրբ րաբունապետն, զհեզահոգի և զքաղցր վարդապետն Թովմա, զոր Տէր Աստուած ջահ անշիջանելի պահեսցէ զնա եւ հաստատուն ի վերայ զաւազանի իւրոյ»[89]:

***

Մեծոփա դպրոցի երկրորդ դասասաց վարդապետը նշանավոր գիտնական, գրիչ և գրչության ուսուցիչ Հակոբ Ղրիմեցին է[90]: Ծնված պետք է լինի 1350-ական թվականներին Ղրիմ, այսինքն Սուրղաթ քաղաքում, որտեղից էլ Ղրիմեցի մականունը: Նրա թողած մի հիշատակարանից իմանում ենք, որ հայրը Նորազատն է, մայրը՝ Մելիքը, եղբայրը Եղիսեն, քույրերը՝ Խաս-Մելիքը և Լա-Խաթունը: Հակոբ Ղրիմեցին աշակերտել է միջնադարյան նշանավոր մատենագիր և ուսուցիչ, Տաթևի համալսարանի սան Գևորգ Երզնկացուն, որն իր ուսուցչի՝ Հովհաննես Որոտնեցու մահից հետո 1386 թ. տեղափոխվել էր Եկեղյաց գավառի Ավագ, ապա Կապոսի վանքերը և դարձել տեղի դպրոցի րաբունապետ: Հակոբ Ղրիմեցուն առաջին անգամ այդտեղ էլ հանդիպում ենք 1389 թ., մի ժողովածու ընդօրինակելիս[91]: 1393 թ. նա արդեն վարդապետ էր[92]: Մինչև 1404 թ. ընդօրինակում է մի Քարոզգիրք: Հակոբ Ղրիմեցին այդ ժամանակ ինքնուրույն

---

88 Անդ, էջ 2094:

89 Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 456: Աշակերտները օրինակելով նրա սրբագրած Մեկնությունը, նկարել են նրան և թողել փառաբանող մի ձեռ «Մեծ րաբունապետ Թովմային»: «Երկնառաք և հրահրեան աստուածապարգև իշխանութեամբ ի գահոյս պետութեան բազմեալ և հոգիանձին պայծառութեամբ հովուական հնչմամբ հանդուցիչ բանաւր հաւտի մեր հովուապետին Քրիստոսի շնորհընդալ և անուանակիր մեծին Բարսղի և Յոհանու Ոսկիբերանին, մեծ րաբունապետ մեր Թովմայ, ի բազմավրդով ծովասարաս կոհակաց մեղապարտս ալեաց աշխարհիս ղեկավար նաւաստի հաւատացելոց ի Քրիստոս, գլուխ արհիական և պետ պանծալի կրկնակի և եռակի փարթամութեամբ ուռճալրացեալ աստուածային գանձ» (Մատենադարան, ձեռ. 1380, էջ 23ա):

90 Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 655: :

91 Մատենադարան, ձեռ. 3487, էջ 139ա:

92 Մատենադարան, ձեռ. 2365, էջ 120բ:



Սրագրիչ՝ Հակոբ Ղրիմեցի
ձեռ. N 1716

գործեր, լրացումներ, համառոտումներ և խմբագրություններ էր կատարում: Քարոզգրքի վերջում գրում է. «գրեցի զայս սակաւ հարցմունքս՝ յետոյ քան զգրել գրոցս»[93]:

1406 թ. լրացնում է 1253 թ. ընդօրինակված մի Աստվածաշնչի սկզբից և մեջտեղից պոկված թերթերը և համառոտում Երկրորդ Մակաբայեցոց Գիրքը՝ «զի լինիցի առձեռն պատրաստ»[94] ուսուցման համար: Հակոբ Ղրիմեցին Կաֆայի դպրոցում դասավանդում էր տոմարական արհեստ: Գեորգ բաբունապետի առաջարկով նա իր դասախոսությունները գրի է առնում որպես դասագիրք և հանձնարարում աշակերտներին: Ահա «Արհեստ տումարական» աշխատության հիշատակարանի այդ մասը. «Արդ, ես Յակոբ Ղրիմեցի... աշակերտ Գէորգ բաբունապետի զխնդիր սիրալիր և զհրաման հարկեցուցիչ, որ յաղագս հոգևոր զաւակացն իմ, մանկանց Սիոնի և նորաբողբոջ կուսակրօն քահանայից... սակաւ ինչ դասիւ ի տումարական արհեստէս ուսուցաք սոցայ: Իսկ սոցա ծանուցեալ զդժուարութիւն իւրեն աղաչանօք խնդրեցին ի նուաստութենէս մերմէ ընդ բանիւ ուսուցանելոյն և գրով աւանդել նոցա: Եւ հարկեալ զմեզ բաբունապետին իմոյ կատարել զխնդրուածս նոցա»[95]:Այնուհետև Ղրիմեցին գրում է, որ ոչ թե ամբողջ տումարն է գրել, այլ աշակերտների համար անհրաժեշտ նյութը՝ քաղելով իմաստասերից և սուրբ վարդապետների աշխատություններից՝ շարադրել է համառոտաբար: Սակայն միայն համառոտաբար շարադրելով չի սահմանափակվել հեղինակը. «...և զի էր ուրեք, որ ծածուկ ունէր զտեսութիւնս միտք բանին, մեք զայն պարզ և յայտնի բանիւ բացայայտեցաք՝ ի զուարճութիւն ուսումնասիրաց տումարական մակացութեանս...»[96]: Նույն տիպի գիտամանկավարժական բարդ աշխատանք է նաև «Յաղագս աւուրց հնգից» տոմարական երկը դարձյալ Կաֆայի դպրոցում կատարված: «Ծանիր րաբունի իմ,—դիմում է Ղրիմեցին իր ուսուցչին,—զի ոչ եթէ աստ զիմ ջանից ցուցանեմ զքաջութիւն, այլ զՍարկաւագ վարդապետին... այս զնորայն աշխատութիւն և զվաստակ ջանից, զոր փարթամ և երկար բանիւք շարագրեալ է զաւուրցս զատուգութիւն, մեք զայն ջանիւ մեծաւ համառօտեցաք, վասն ուսումնասէր անձանց, զի

---

[93] Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 42:

[94] Մատենադարան, ձեռ. 178, էջ 255բ:

[95] Հիշատակարաններ, ԺԵ, Գ, էջ 344:

[96] Անդ:

առձեռն պատրաստ և դիւրին լիցի ի տրամաբանութիւն անիրաւ հակառակորդաց յաղագս այսմ իրի...»[97]:

Լ. Խաչիկյանը, վկայակոչելով Հակոբ Ղրիմեցու հիշատակարանը, գրում է, որ «Հակոբ Ղրիմեցին և նրա ուսուցիչ Գեորգ Երզնկացին մասնակցություն են ունեցել նաև «Կանոնգրքի» խմբագրման գործին»[98]: Հետագայում, Մեծոփա վանքում Հ. Ղրիմեցու գրած «Յաղագս ազգականութեան» աշխատությունը նույնպես մտնում է «Կանոնգրքի» մեջ[99]:

Նույնպիսի եռանդուն դասախոսական և գիտական աշխատանք է կատարում Հակոբ Ղրիմեցին նաև Մեծոփավանից դպրոցում, ուր նա հրավիրվել էր այդ նպատակով: Թե ե՞րբ է Հակոբ Ղրիմեցին եկել Մեծոփա վանք, ստույգ հայտնի չէ, համենայն դեպս, Գեորգ Երզնկացու մահից ոչ հետո: 1415 թ. ապրիլի 1-ին արդեն ավարտել էր Գրիգոր Տաթևացու Քարոզգրքի խմբագրման դժվարին աշխատանքը: Նշանակում է, նա Մեծոփա վանքում էր դեռևս 1414 թվականին:

Լ. Խաչիկյանի վկայությամբ, «Այդ նույն ձեռագրի վերջում, որը հեղինակի ինքնագիրն է, Հակոբ Ղրիմեցին ընդօրինակել է նաև իր «Յաղագս ազգականութեանց բաժանման» աշխատությունը, որը նույնպես շարադրել է Թովմա Մեծոփեցու խնդրանքով»[100]: Հակոբ Ղրիմեցին Քաջբերունիքում էր դեռ դրանից առաջ: Թովմա Մեծոփեցու վարդապետության աստիճան ստանալու առթիվ բազմաթիվ ողջույն նամակների մեջ մենք հանդիպում ենք նաև Գրիգոր Խլաթեցու և Հակոբ Ղրիմեցու՝ միասին գրած ողջույն-նամակին: «...Վարդապետս Յակոբ և հոգս և մոխիրս Գրիգոր իբր ի մաւտոյ բերմամբ գթութեանց մայրամած դիմաւք գլխոսաւանդն մատուցանեմք ողջոյն համբուրի... և հայցեմք անարատ յամենայն կրից երկար ամաւք յամբրամս ժամանակաց առողջ ի մարմին և անփորձ ի հոգի ի պայծառս մեր և ամենայն հայոցս առհմի: Շնորհակալ եմք»[101]: Հավանաբար նա Մեծոփավանք է եկել Գրիգոր Տաթևացու գնալուց հետո և Թովմա Մեծոփեցու վարդապետ ձեռնադրվելուց առաջ, այսինքն՝ Մեծոփա դպրոցում Գրիգոր Խլաթեցու րաբունապետության ժամանակ և նրա խնդրանքով, 1409 թ.

[97] Անդ, էջ 343:
[98] Անդ:
[99] Մատենադարան, ձեռ. 10137, էջ 290ա:
[100] Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 655, ծանոթ. 3:
[101] Վենետիկ, ձեռ. 1091, էջ 396:

սկզբներին[102]: Հետևաբար Հակոբ Ղրիմեցու՝ Մեծոփա դպրոցում կատարած առաջին գործը պետք է համարել 1410 թվականին՝ Կիլիկիայում ընդօրինակված (1276 թ.) Իմաստասիրական գրոց ժողովածուի պակասների լրացնելը և լուսանցքներում տրված մեկնությունները[103], որը և, հավանաբար, դասախոսել է նորաբաց դպրոցում:

Ուրեմն ճիշտ չէ, երբ Հակոբ Ղրիմեցու Մեծոփա վանք գալը դնում են 1416 թվականին[104]: Մեծոփա վանքում, Տաթևացու Քարոզգրքի խմբագրումից հետո կամ այդ նույն ժամանակ, նա պետք է գրած լինի «Ողբ ի վերայ խաչելութեան Քրիստոսի» երգը, որովհետև Քարոզգրքում, ինչպես Ղրիմեցին է վկայում, «էր որ ի հանդիսաւոր տօնսն, որպէս ի յԱւագ ուրբաթսն... և ի Խաչին, որ ի յայլմէ վարդապետաց ասացեալ էր, և չէին բանք ըստ կարգի և ըստ պատշաճի... նուաստութիւնս մեր գրոլորն արտաճառեաց»: Ղրիմեցին, բացի Խաչի մասին քարոզից, գրել է նաև «ի Յաւագ ուրբաթուն և ի Յարութեանն և Աստուածածնին, ... Վասն խոստովանութեան, Վասն մահուան վարդապետաց»[105], և այլ քարոզներ, խմբագրել ու սրբագրել բազմաթիվ այլ քարոզներ:

Հակոբ Ղրիմեցին Մեծոփա դպրոցում Տոմար է դասախոսում Թովմա վարդապետի խնդրանքով՝ միաժամանակ շարադրելով «Մեկնութիւն տումարի» նշանավոր աշխատությունը: «Ես՝ Յակոբ վարդապետ Ղրիմեցի ի թվիս Հայոց ՊԿԵ (1416) զՏումարն դաս ասացի, ի հռչակաւոր Մեծոփա, ի խնդրոյ Թումայի րաբունապետին և աշակերտաց նորին: Արդ, վասնզի պատճէնք նոցա ոչ համաձայն գտանէին միմեանց

[102] Հակոբ Ղրիմեցու և Գրիգոր Խլաթեցու մտերմության ու բարեկամության հուզիչ արտահայտությունն է նաև այն, որ երբ 1425թ. նահատակվում է Գրիգոր Խլաթեցին, թաղումը կատարում է Հակոբ Ղրիմեցին և դառնում նրա գերեզմանին սպասավոր: «Իսկ յետոյ եկեալ հերղէն լեզուն Յակոբ ճգնաւոր վարդապետ Ղրիմեցին աշակերտօք իւրովք, և ազգականօք, և բազում ժողովրդօք, և արարին կոծ մեծ ի վերայ նորա և եդին սաղմոսիւք և աւրհնութեամբ ի տապանի ի փոքր բլրին, որ է հանդէպ վանացն յարևմտեան կուսէն» «Հայոց նոր վկաներ», էջ 270), իսկ Թովմա Մեծոփեցին վկայում է. «եւ հզաւր հարազատն իւր վարդապետն Յակոբ ճգնաւոր՝ այր ցանկալի՝ եկն ամփոփեաց զնա հանդերձ հարազատ որդովք իւրովք Ստեփանոս եպիսկոպոսի աշակերտաւ, և եղաւ սպասաւոր նորա գերեզմանին, ամ մի» (Թ. Մեծոփեցի, Պատմութիւն, էջ 43):
[103] Մատենադարան, ձեռ. 1716, էջ 85բ:
[104] Ա. Մովսիսյան, Ուրվագծեր, էջ 204:
[105] Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 655–656:

ըստ շարադրութեան կարգի, այլ յետ և յառաջ շարադրեալք էին, վասն որոյ հարկ եղև մեզ ըստ կարգի նոր մեկնիչիս, զոր արարաք ի շնորհաց Սուրբ Հոգոյն, շարագրել զՏումարս մեծ Հայոյն, զի դիւրին լիցի ուսումնասէր մակացու արանց: Այլ և ի շահ սորայ զՀռոմայեցոցն պատճէն ևս եդաք, զի այս Գ ազգիս հարկաւորք են ի տոմարագիտութեան գործս, զի դրունք և մուտք յերկոտասան յազգս տումարաց սոքայ են: Այլև զՄեկնիչն տումարիս զկնի սոցա եդաք շարագրեացաք, զի առ ձեռն պատրաստ լիցի խնդրողին զայս...»: Հիշատակարանում նա բոլոր ընդօրինակողներին և մասնավորապես աշակերտներին զգուշացնում է ուշիմ լինել, որովհետև «բոլորովին արհեստս այս ի վերայ ճշմարտութեան է հիմնարկեալ և սատութիւն ի սայ ամենևին անկար է առ ի ներգործել»:

Այս երկի ընդօրինակությունների հետ մի քանի խմբագրությամբ մեզ է հասել նաև Հակոբ Ղրիմեցու ուղերձդիմումը Թովմա Մեծոփեցուն, որտեղից երևում է նաև, որ Ղրիմեցին, Մեծոփեցու այս պատվերից բացի, ուրիշ համառոտումներ և խմբագրություններ էլ է կատարել: «...Արդ, ով րաբունի և աստուածաբան... Թումայ, առաջնորդ սուրբ ուխտին Մեծոփայ վանք անուանելոյ: Ահա զայս ևս խնդիր քո կատարեցի բազում աշխատութեամբ...»[106]:

Հակոբ Ղրիմեցին, հիշյալ աշխատանքներից բացի, աշակերտների համար գրել է նաև քերականական գործեր, որոնցից հայտնի է «Յաղագս շեշտի և պարոյգի» վերտառությամբ փոքրիկ բնագիրը, որ վերջանում է հետևյալ հիշատակարանով. «Այսոքիկ խրատք վերծանութեան բացերևակեալ հաւաքեալ ի վերայ բազում անուանց՝ զզանազան արուեստս գրչութեան, այսինքն՝ զշեշտ և զպարոյկ՝ թէ ի վերայ որոյ գրի պարտ է գծագրել և կամ ընթեռնուլ իմաստուն գրչաց և մտաւոր ընթերցողաց, յաշխատասիրութենէ հանճարեղ և իմաստուն րաբունոյն Յակոբայ, աշխարհաւ Ղրիմեցոյ մնացեալ առ մեզ, որոյ ողորմեսցի Քրիստոս Աստուած մեր...»[107]: Ինչպես երևում է այս հիշատակարանից, Հակոբ Ղրիմեցին գրել է գրչության արվեստի մասին աշխատություն, որից միայն այս հատվածն է առայժմ մեզ հայտնի: Ուրեմն Հակոբ Ղրիմեցին նաև գրչության նշանավոր վարպետուսուցիչ էր: Այս արվեստի ուսուցման հետ է կապվել նաև

106 Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 182: «Այս ուղերձը Ղ. Փիրղալեմյանը թյուրիմացությամբ հրատարակել է 1448-ի թվաշարքում»,—գրում է Լ. Խաչիկյանը:

107 Լ. Խաչերյան, Գրչության արվեստ..., էջ 373–377:

երաժշտության ուսուցումը, որ վարել է նա և որի համար դիմել է Գրիգոր Խլաթեցուն՝ որոշ պարզաբանումների խնդրանքով: Այդ է վկայում Գրիգոր Խլաթեցու «Խրատք ժամատեղեաց» փոքրիկ գործի խորագիրը. «Խրատք ժամատեղեաց ըստ արևելեան սահմանացն սկսուածոց և աստեթեան աղօթից, որ խնդրեալ սուրբ վարդապետն Յակոբ Ղրիմեցի ի րաբունոյն Գրիգորէ Խլաթեցոյ: Եւ նա կատարեաց այսպէս...»[108]: Հակոբ Ղրիմեցին իր գիտա-մանկավարժական արդյունավետ գործունեության, սուր մտքի և ճարտարախոսության համար կոչվել է «հրեղէն լեզու» և դասվել հայ նշանավոր վարդապետների շարքը և հիշվել ի շարս «Քաջ և արի, ծրաջան զուրբ վարդապետքն մեր... Գօշա, Վանականա, Վարդանա, Ներսէսի, Յեսայիայ, Տիրայրու, Բարսեղի, Գրիգորի, Մերունի, Կիրակոսի, Գրիգորի, Յովսէփի, Յակոբի, Մաղաքիայի, Յոհաննիսի, Սարգսի, Վարդանի, Գրիգորի՝ քաջ և արի հռետորի, Գէորգեայ, Յակոբի, Մաթէոսի»[109]: Նախավերջինը, Յակոբ Ղրիմեցին է: Թովմա Մեծոփեցին «զուսուցիչք մեր և վարժիչք» է համարում Գրիգոր Տաթևացուն, Հովհաննես Մեծոփեցուն, Սարգիս և Վարդան վարդապետներին, Գրիգոր Խլաթեցուն և Հակոբ Ղրիմեցուն[110]: Ղրիմեցին մահանում է 1426 թ. մայիսին, Արծկեում և թաղվում Ս. Աստվածածնի տաճարում[111]:

Մեծոփա բարձրագույն դպրոցը, հանձինս Թովմա Մեծոփեցի, Գրիգոր Խլաթեցի և Հակոբ Ղրիմեցի նշանավոր վարդապետների, ուներ գիտուն ու եռանդուն դասասաց վարդապետներ, որոնք մյուս վարդապետների հետ միասին ապահովում էին այնտեղ հայ վարդապետարան-համալսարանների մակարդակով ծրագրի դասավանդումը: Ուսուցման արդյունքը եղավ բազմաթիվ վարդապետների և հմուտ գրիչների պատրաստումը: Վերջիններս նույնպես կրթվում էին վարդապետական ծրագրով. ահա թե ինչու նրանք գրիչ դառնալուն պես՝ գրչապետներ էին, և որպես գրչության հմուտ ուսուցիչներ, պատրաստում էին իրենց մասնագիտությանը տիրապետող կատարյալ գրիչներ:

108 Մատենադարան, ձեռ. 9224:

109 Մատենադարան, ձեռ. 4873, էջ 366բ:

110 Մատենադարան, ձեռ. 1380, էջ 343բ:

111 Մատենադարան, ձեռ. 9100, էջ 342:

***

Մեծոփա վանքի դպրոցում Թովմա և Հակոբ քահանաներից բացի, ուրիշ վարդապետներ, և այլ անձինք նույնպես զբաղված էին ուսումնա-դաստիարակչական, ձեռագրերի հայթայթման ու բազմացման, նյութական միջոցների, գրանյութի ձեռք բերման, տնտեսության պահպանման գործերով: Այդ տեսակետից հսկայական են **Մկրտիչ Նահապետենց Մեծոփեցու** *ծառայությունները: Թովմա Մեծոփեցին նրան մեծարում էր որպես «զպատճառս բազում բարութեան... որ խրատէ հոգևոր և մարմնաւոր խրատով զմեզ և զամենայն ուխտս միաբան»*[112]*: 1444 թ. Թովմա Մեծոփեցին իր և Մկրտիչ Մեծոփեցու մասին գրում է. «Եւ ես ԿԶ (66) տարոյ եմ, և եղբայրս իմ ՀԲ (72)»*[113]*: Այս վերջինը վերաբերում է հոգևոր եղբայր Մկրտիչ վարդապետին, որը նույն ինքը Նահապետենցն է: Ուրեմն Նահապետի և Թանսուղի որդի Մկրտիչը ծնվել է 1372 թվականին: Սովորել է Մեծոփա վանքում, աշակերտել է Հովհաննես Մեծոփացուն Թովմայի հետ, ապա նրա հետ միասին շարունակել է ուսումը Խառաբաստի և Տաթևի վարդապետարաններում: Վարդապետ ձեռնադրվելուց հետո աշխատում է Մեծոփա վանքում: 1435 թ. Թովմայի եղբայր Մկրտիչի մահից հետո դառնում է վանքի վանահայր մինչև 1450-ական թվականները: 1432 թ. Թովմա Մեծոփեցու և Հովհաննես եպիսկոպոսի հետ նա կառուցում է Աստվածատուր վարդապետի դամբարանը, իսկ 1441 թ. մասնակցում է Էջմիածնի ժողովին: Մկրտիչ Մեծոփեցին եռանդուն կերպով, քաղաքից- քաղաք, վանքից- վանք էր գնում և ձեռագրեր հայթայթում Մեծոփա դպրոցի համար: Ունեցել է նաև աշակերտներ, որոնք նրան հիշում են որպես «երախտաւոր» և «հոգևոր հօր»*[114]*:*

Մկրտիչ Նահապետենցը հայտնի է նաև որպես գրիչ: 1407 թ. Գրիգոր Տաթևացու Հարցմանց գրքի՝ Թովմա Մեծոփեցու ընդօրինակության համար թուղթ էր կոկում Տաթևում և Մեծոփա վանքում[115]*: Նրան է պատկանում Գրիգոր Տաթևացու Քարոզգրքի ընդօրինակության մի մասը, որ գրված է 1409*

112 *Մատենադարան, ձեռ. 1380, էջ 343բ:*

113 *Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 567:*

114 *Անդ, էջ 508:*

115 *Մատենադարան, ձեռ. 9247, էջ 401բ:*

թ.[116]*: Նա գրել է Մատենադարանի 8775 ձեռագիր ժողովածուի երկրորդ կեսը: Առաջին մասը Գրիգոր Խլաթեցու 1415 թ. Երուսաղեմում կատարած «Յաճախապատում ճառքի» ընդօրինակությունն է, որ Մկրտիչը ստացավ և բերեց Մեծոփա վանք, իսկ երկրորդը՝ Ներսես Շնորհալու Թուղթ ընդհանրականը, որ նա ընդօրինակեց Հակոբ գրչի հետ «...ի թըւականութեանս Հայոց ի ՊԿԷ (1418) ի վանս Մեծոփայ սուրբ Աստուածածնիս, յերկիրս Քաջբերունոյ»: Հիշում է ծնողներին՝ Նահապետին և Թանսուղին. «...Գիտութիւն լցցի, զի կար իմ այս է, ոչ գիտելով գիր, այլ յաւժարութիւնս յաղթեաց և սէր գրոցս...»*[117]*: Իսկապես, Մկրտիչ վարդապետի գիրը շատ է տարբերվում Թովմա Մեծոփեցու գրից: 1419 թ. Տէր Հուսկան որդու, ապա Սուխարա (Խառաբաստա) վանքում «պիտականուն վարդապետ» Մկրտիչը ավարտում է Քաղուածոյ մեկնութիւն Աւետարանին Մատթէոսի*[118]*: Նրա ընդօրինակությամբ մեզ հայտնի է և մի Ճաշոց, որի թվականը չկա: Մի հիշատակագրության մեջ կարդում ենք. «Ով եղբարք իմ հոգևոր, յորժամ ընթեռնուք զգիրս, յիշեցէք զսուրբ յաղաւթս ձեր զանարժան Մկրտիչ վարդապետ Մեծոփեցի, և զհայրն իմ Նահապետ և զամենայն արեան մերձաւորսն իմ ի Քրիստոս հանգուցեալսն... գրիս անմեղադիր լերուք, զի կար մեր այս է, զի ծերութեան...»: Հաջորդ թերթը ընկած է, բայց մի այլ հիշատակագրություն (49բ էջում) լրացնում է նույն միտքը. «...գիտութիւն լցցի ձեզ, զի կար մեր այս է, զի ծերութեան ուսում այս չափս է»*[119]*: Մկրտիչ Նահապետենցը ոչ միայն պատվիրելով, գնելով և այլ միջոցներով էր հարստացնում Մեծոփա վանքի մատենադարանը, այլև սեփական ընդօրինակություններով, որ կատարում էր նույնիսկ ծերության ժամանակ:*

Մկրտիչ վարդապետը մահանում է 1450-ական թվականներին: Համենայն դեպս, 1456 թ. նա այլևս չկար՝ այդ թվականին Մեծոփա վանքի հերպետ է հիշվում Ղազարի որդի Վարդանը[120]*:*

116 *Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 94:*

117 *Անդ, էջ 178:*

118 *Մատենադարան, ձեռ. 1306, էջ 142բ, 190բ:*

119 *Հ. Աճառեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Թաւրիզի, Վիեննա, 1910 թ. էջ 109:*

120 *Անդ, էջ 71:*

***

Մեծոփա վանքի միաբաններից առանձին հիշատակության է արժանի Մատթեոս քահանան, որին Թովմա Մեծոփեցին համարում է հոգևոր հայր և ուսուցիչ, և միշտ հիշում իր բոլոր ուսուցիչներից առաջ: Նշանակում է Մատթեոս քահանան եղել է Թովմա Մեծոփեցու առաջին ուսուցիչը՝ Մեծոփա վանքում, մինչև Հովհաննես Մեծոփեցու վերադարձը: Այնուհետև նա շարունակել է իր ուսուցչությունը նաև վերջինիս ժամանակ, և ուղեկցել է իր սանին Խառաբաստա դպրոցում, նույնիսկ Տաթևում: Իսկ Թովմա Մեծոփեցու րաբունապետության շրջանում նրա գործակիցն էր գրչության արվեստը ուսուցանելու, խրախուսելու և հովանավորելու գործում: Իր աշակերտին նվիրվածության և հավատարմության մի տիպար էր Մատթեոս քահանան: 1406 թ. գրիչ Թովմա Մեծոփեցին Տաթևում օրինակած ձեռագրում հիշում է «զհոգևոր հայրն իմ և զուսուցիչ Մատթէոս քահանայ»[121], իսկ 1407 թ. Տաթևում սկսած և Մեծոփա վանքում ավարտած ձեռագրում հիշում է դարձյալ նրան, որ բազում աշխատությամբ և չարչարանքով թուղթ է կոկել և խազել[122]: 1410 թ. նա դարձյալ պատրաստել էր «զնիւթս քարտիսի»[123]: Մատթեոս քահանան խնամակալում էր դրսից եկած գրիչներին: Դրանցից մեկը Թովմա Մեծոփեցուն հիշելիս, ավելացնում է. «և զհոգևոր հայրն իւր և զուսուցիչն՝ զՄաթէոս սրբասէր կրօնաւորն, որք օգնական եղեն մեզ յօժար կամօք և անկեղծ սիրով՝ կերակրով, զգեստիւ, զօրինակն շնորհելով, քաջալերելով և այլ ամենայն պիտոյիւք»[124]: Հակոբ գրիչը նույնպես գրում է, որ նա բազում երախտիք ունի իր վրա[125]: Մատթեոս քահանան Մեծոփա վանքում գրչատուն էր կառուցել և հիշվում է որպես «շինողի տանս, որ գիրս աւարտեցաք»[126]: Նա տնօրինում էր նաև կազմարարության գործը:

121 Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 56:
122 Անդ. էջ 79:
123 Անդ. էջ 101:
124 Անդ. էջ 127:
125 Անդ. էջ 213:
126 Անդ. էջ 456::

***

Մեծոփա վանքի դպրոցի նշանավոր վարդապետներից էր Հովհաննեսը, Թովմայի ուսումնակիցը, որը Տաթևում վարդապետական աստիճան ստացավ Մարգարեի և Հակոբի հետ միասին[127]: Հովհաննես Մեծոփեցու մահից հետո Թովմայի րաբունապետության առաջին շրջանում նա էր Մեծոփա վանքի առաջնորդը: Սրա մահից հետո, վանքի և Քաջբերունիքի առաջնորդ է ձեռնադրվում Թովմայի աշակերտ, նույնանուն Հովհաննեսը, մոտավորապես 1415 թվականին[128]:

1427 թ. Ղազար գրիչը հիշում է «զհոգևոր հայրն... տէր Յովհաննէս եպիսկոպոսն՝ վերատեսուչ երկրիս Քաջբերունոյ, և զհոգևոր հայրն իւրոյ զԹումա րաբունապետին»[129], իսկ Թովմա Մեծոփեցին նրան համարում է «հոգևոր որդեակ մեր զՅովհաննէս եպիսկոպոս աստուածաբնակ սուրբ ուխտիս»[130]: Վերջինիս և Մատթեոսի համար Թովմա գրիչը, մինչև 1435 թ., օրինակում է մի Ճաշոց[131]: Թովմա Մեծոփեցու հետ նա ստանում է մի այլ Ճաշոց և Մկրտիչ վարդապետի համար Թումա Մեծոփեցի գրչի ձեռքով գրված Աղօթամատույցը: Երկուսում էլ խնդրում են հիշել ստացող Հովհաննես արքեպիսկոպոսին և հանգուցյալ ծնողներին՝ Սիմեոնին և Մերեթին[132]: Հովհաննես արքեպիսկոպոսը հիշվում է նաև 1432 թ. Աստվածատուր վարդապետի գերեզմանի վրա շիրմաքար կանգնեցնելու առիթով, իսկ 1445թ.՝ արդեն հանգուցյալների շարքում[133]: 1444 թվականից առաջնորդ է հիշվում Ներսես արքեպիսկոպոսը[134]:

Թովմա Մեծոփեցուն օժանդակում էին իր հարազատները և ազգականները. հորեղբայրը՝ Մկրտիչ քահանան, Մեծոփա վանքի վանահայրը 1406–1435 թթ., եղբայրը՝ Հովհաննես

127 Անդ. էջ 78:
128 Անդ. էջ 654:
129 Անդ. էջ 362:
130 Անդ. էջ 451:
131 Մատենադարան, ձեռ. 6501:
132 Անդ. էջ 404–405:
133 Հիշատակարաններ, ԺԵ., Ա, էջ 587:
134 Անդ. էջ 568:

քահանան, հատկապես Թուղթ կոկելու և հայթայթելու գործում[135], մյուս եղբայրները՝ պարոն Հովհաննեսը, Առիստակեսը, Գորգի-Մելիքը, Ամիր-Մելիքը, Սոլթանշահը: Եվ ոչ միայն այսքան: Նրանք «հանգուցանեն զմեզ,—գրում է Թովմա Մեծոփեցին,—ի վշտաց անարինաց և ի դառնաբարոյից՝ անհնազանդ և անսէր կրօնաւոր եղբարց»[136]: Նրան օգնում էին վանքի բոլոր միաբանները:

Հովհաննես գրիչը, րաբունապետից և Մատթեոս կրոնավորից բացի, Մեծոփա վանքում հիշում է «զհայրապետ սուրբ ուխտիս զՄկրտիչ կրօնաւորն, և զՅովանէս, և զհարազատն իւր զԿարապետ կրօնաւորն, այլև զմիաբան եղբարքս, զՂազար Խաչընդուս կրօնաւորն, զԿարապետ կրօնաւորն, և զհարազատքն իւր՝ զՍարգիս փիլիսոփա Վարագեցի, և զԹումա Շուշանցին, զՊետրոս, և զՍտեփաննոս, և զՏերուն, և զՅովաննէս և զՄկրտիչ, և զքաջ ամուլքն զՅոհաննէս և զՅակոբ, և զմիւս Յոհաննէսն, և զՍտեփանոս, զԱբրահամ, զԹումա, զԳրիգոր տնտեսն և զայլ ամենայն գործաւորքս՝ զմեծ և զփոքր»[137]: Սրանցից ոմանց հետագայում տեսնում ենք վարդապետ դարձած, ոմանց՝ գրիչ: Գրիչը հիշում է նաև բազմաթիվ աշխարհականների, որոնք նույնպես ծառայում և օգնում են Մեծոփա վանքին:

[135] 1410 թ. Թովման հիշում է «եղբաւր իմոյ Յովհաննէս քահանայի.. բազում աշխատութեամբ, երթևեկութեամբ եղիտ զթուղթս այամ սաստածային սոփերի և քրտնաջան աշխատութեամբ կոկեաց զգա» (Հիշատակարաններ, ԺԵ, Ա., էջ 101):

[136] Անդ, էջ 360:

[137] Անդ, էջ 128:

ՄԱՍՆ Բ

Մեծոփա վանքի դպրոցի ուսուցման հիմնական արդյունքը, այնուամենայնիվ, աշակերտներն էին. քանչորս ընտիր գրագիրներ, որոնք ոչ միայն գրագետ ընդօրինակողներ էին, այլև սրբագրող և խմբագրող, հետագայում նաև՝ ուսուցիչ: Թովմա Մեծոփեցին իր աշակերտներին գրչության արվեստ էր սովորեցնում կատարյալ կերպով, ձեռագրեր էր հանձնարարում ընդօրինակելու, սրբագրելու, ստուգելու և պատրաստում էր ինքնուրույն գրչական, մանկավարժական գործունեության: Նա նաև աշակերտների հետ աշխատում էր. բազմաթիվ ձեռագրեր են մեզ հասել նրա և աշակերտների համատեղ ընդօրինակությամբ: Թովմա Մեծոփեցին առանձին սիրով է աշխատել Հովհաննես Մանկասարենցի հետ: Վերջինիս սկզբնական բոլոր ընդօրինակությունները իր ուսուցչի պատվերով են կատարված, որին սիրում էր ինքը և միշտ հիշում երախտագիտությամբ: Ահա նրա հանձնարարություններից մեկը. Հովհաննես գրիչը, դիմելով Թովմա Մեծոփեցուն, ասում է. «Ով տէր հոգևոր, դու խոնարհեցար յիմ նուաստութեան և աղաչեցէր, թէ ինձ խրատ գրեա քահանայական կարգի, ի խաղաղութեան, և խոնարհութեան, և վասն այս կենցաղոյս ունայնութեան ծանոյ ինձ, և վասն խորհրդոց մաքրութեան: Եւ ասացէր, թէ գիրք արա, որ առ իս պահեմ և հանապազ ընթեռնում: Եւ ես սակաւաւք քո իմաստութեանդ զպատճառ եառ: Արդ՝ ընթեռնուս, յիշեա ի քո յաղօթս»[1]: Թովմա Մեծոփեցին ժողովածուն ստանալուց հետո՝ ավելացնում է «Երանելւոյն Եփրեմի բան առ կրօնաւորս վասն վարուց արդարութեան» ինքնորդ նյութը և կատարում հետևյալ դիտողությունը. «Արդ, յերեսս անկեալ պաղատիմ քրիստոսակիր մանկանցդ, ես նուաստ վարդապետս Թովմա: Եթէ կամիս, որ կանոնես և այլոց վարդապետաց, զայս ինքնորդ աղաւթս, որ գրեցի, լաւ որոնես և ապա ի կանոնքն մերձեցիր, որ զհաւատք քրիստոնէութեանն ճանաչես: Ապա թէ ոչ, որ ի ծուլութեան կաս և մնաս, զինչ օգուտ ունիս ի սուրբ կարգէդ. որ առեալ ես, կամ ի կանոնացս...»[2]: Այս լրացումից և

[1] Ս. Տեր Ավետիսյան, *Ցուցակ Նոր-Ջուղայի*, 420:

[2] Ս. Տեր Ավետիսյանի Ն. Ջուղայի Ցուցակում ձեռագրի ժամանակը նշանակված է ԺԳ–ԺԴ դար, իսկ գրիչ՝ Յովհաննէս: Պետք է փոխել տվյալները—ժամանակ ԺԵ դ. առաջին կես, գրիչներ Յովհաննէս և Թովմա վարդապետ:

դիտողությունից հետո, գրիչն ավելացրել է ևս մի քանի կանոն։ Դրանցից երկուսը՝ «Կարգ աւրհնութեան սուրբ իւղոյն հիւանդաց» և «Կարգ աւծութեան հիւանդաց», մեզ հայտնի են Հովհաննեսի մի այլ ընդօրինակությամբ, դարձյալ Թովմա վարդապետի պատվերով։ «Մանաւանդ զԹովմա վարդապետս և զՅովհաննէս գծաւղ սորին»,— հիշել է խնդրում Թովմա Մեծոփեցին իր սովորության համաձայն[3]։ Նա հանդիմանանքի կամ խրախուսանքի խոսք է ասում (ավելի ճիշտ՝ գրում) ուրիշ գրիչների հասցեին, ինչպես կտեսնենք հետո։

Մինչև աշակերտներ հասցնելը Թովմա Մեծոփեցին ընդօրինակություններ էր կատարել տալիս ուրիշ գրիչների, որոնց մեջ հիշատակության արժանի է Պողոսի և Խութլուի որդի **Հովհաննեսը**։ Մեծոփա վանքում «Հրամանաւ գիտնական և արդիւնական հաւտորի Թովմա վարդապետի» նրա կատարած ընդօրինակություններից հայտնի են 1410 թ., 1411 թ. Քարոզգրքերը և 1415 թ. Շարակնոցը[4]։

ՀԱԿՈԲ ԳՐԻՉ. Առաջին գրիչը, որ իրեն համարում է Թովմա Մեծոփեցու աշակերտը Հակոբն է, Գրիգոր Խլաթեցու եղբոր որդին։ Հակոբը հորեղբորից գրչություն է սովորել, իսկ հետո կատարելագործվել Մեծոփա վանքում՝ Թ. Մեծոփեցու մոտ[5]։ 1418 թ. հիշում է «երախտաւոր հոգևոր հայրն մեծ վարդապետն Գրիգոր, որ զաւկաւ գիրս ուսոյց մեզ, նաև զուսուցիչն և զմարմնաւոր երախտիքն զոր ունի ի վերայ մեզ՝ զաստուածապարփակ հոգին զԹումայ վարդապետն»[6]։ Գրիգոր Խլաթեցու մահվան տարին Խառաբաստա վանքում օրինակած Հայսմավուրքի վերջում Առաքել Բաղիշեցու ողբը արտագրելուց առաջ, նույն չափով գրած իր երեք տուն ոտանավորի մեջ Խլաթեցուն հիշում է այսպես.

Որ էր ինձ հայր գովելի,
Եւ պարծանաց րաբունի՝
Արեանառու մեր ազգի,
Եւ հօրեղբայր գծողի[7]։

3 Մատենադարան, ձեռ. 2152, էջ 228ա։
4 Հիշատակարաններ, ԺԵ. Ա, էջ 175–176։
5 Անդ, էջ 145–146։
6 Մատենադարան, ձեռ. 2143, էջ 487բ։
7 Մատենադարան, ձեռ. 4876, էջ 519բ։

Հակոբին առաջին անգամ հանդիպում ենք Մեծոփա վանքում 1410 թ. Թովմա Մեծոփեցի նորընծա վարդապետի և Հովհաննես փորձված գրչի հետ՝ Գրիգոր Տաթևացու Քարոզգիրքը ընդօրինակելիս։ Թովմա Մեծոփեցին այդ առթիվ խնդրում է հիշել «ամենաւրհնեալ աստուածասէր մանկանն Յակոբայ դպրի»[8]։ Ձեռագիրը հիմնականում գրել են Հովհաննես և Հակոբ գրիչները։ Ինչպես երևում է գրությունից, Գրիգոր Խլաթեցին շատ ջանք էր թափել եղբոր որդուն վարժ գրիչ դարձնելու համար։ Վիեննայի Մխիթարյան մատենադարանի 599 ձեռագիրը երկու տարբեր գրիչների՝ տարբեր տարիների ընդօրինակած գործ է։ Առաջին մասը (1–141 թերթեր) Գրիգոր Տաթևացու գործերից է, գրված 1419 թ. Բերկրիում, Պետրոս գրչի ձեռքով, իսկ 143–171 թերթերը՝ Գիրք ձեռնադրութեան, գրված 1416 թ. Հակոբ գրչի ձեռքով։ Ի տարբերություն առաջինի, որ երկսյուն է, սա միասյուն է[9]։ Ստացողը Կարապետ րաբունին է։ Մաշված և քայքայված հիշատակարանից կարդացվում է նաև նորընծա եպիսկոպոսի անունը. «զՅակոբ մեղսասէր գծող յիշեսջիք... պայծառ ջահն եւ ամուր սիւն եկեղեցւոյ մեծ րաբունին Կարապետ, որ ետ գրել զսա ի լաւ աւրինակէ եռափափաք սրտիւ յիշատակ իւրն //քեռ որդւոյ իւրոյ// նորընծա եպիսկոպոսին տէր Ստեփ[անոս]... Գրեցաւ ՊԿԵ (1416) թվականին Հայոց»[10]։ Այս անձնավորությունները Խառաբաստա վանքի րաբունապետն ու եպիսկոպոսն էին։ Հակոբը 1418 թ. դարձյալ «երանաշնորհ քաջ րաբունապետ և տիեզերալոյս վարդապետ Կարապետի» համար Խառաբաստա վանքում ընդօրինակում է Գրիգոր Տաթևացու Քարոզգիրքը, ուր հիշում է ուխտի նախկին առաջնորդ Զաքեոսին «և զքեռորդին՝ զտէր Ստեփանոս նորընծա եպիսկոպոս սուրբ ուխտիս»[11]։ Գրիչն հիշում է իր ուսուցիչներ Գրիգոր Խլաթեցուն և Թովմա Մեծոփեցուն[12]։

Ուրեմն Վիեննայի հիշյալ ձեռագրի գրիչը այն նույն Հակոբն է, որը ընդօրինակել է նաև Մատենադարանի 2143 ձեռագիրը։ Հիշատակարանից իմանում ենք, որ Կարապետի եղբայրը՝ Հովհաննեսը, ուխտի առաջնորդն է, մյուս եղբայրը՝ Ագիզբեկն է։

8 Մատենադարան, ձեռ. 2065, էջ 390բ։
9 Հ. Ոսկեան, Ցուցակ Վիեննայի, էջ 57։
10 Անդ, էջ 59։
11 Մատենադարան, ձեռ. 2143, էջ 487ա։
12 Անդ, էջ 487բ։

Հակոբ գրչին օգնել է Ստեփանոս գրոց աշակերտը[13] և մեկ ուրիշը, որի անունը չի տալիս[14]: 1425 թվականին, կամ դրանից հետո, դարձյալ Խառաբաստա վանքում Հակոբ գրիչը ընդօրինակել է մի Հայսմաւուրք, որի ճակատագիրը մեզ հայտնի չէ, սակայն 1477 թ. դրանից ընդօրինակող Հովսեփ և Գրիգոր գրիչների Հայսմավուրքում պահպանվել են Հակոբի հիշատակարանը և Առաքել Բաղիշեցու՝ Գր. Խլաթեցուն նվիրած ողբը: Հակոբ գրիչը, հոգևոր մահից հետո, դարձել է նրա աշակերտ Առաքել Բաղիշեցու նոտարը կամ քարտուղարը և գրի առել վերջինիս բանաստեղծությունները, վարքերն ու մյուս ստեղծագործությունները: Հակոբը նաև ծաղկող է: Վերջին անգամ նրան հանդիպում ենք 1453 թ., երբ Առաքել Բաղիշեցին հորինում է «Ողբ մայրաքաղաքինՍտամբոլու» չափածո ստեղծագործությունը, իսկ Հակոբ գրիչը գրի է առնում այն.

Եւ Յակովբա կարգաւորին,
Նաղաշ ոսկող քարտուղարին,
Որ զերգս բանիս, զոր ասացի,
Նա գծագրեաց ի քարտէզի[15]:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻՉ. Թովմա Մեծոփեցու աշակերտներից է Բաղիշեցի Մկրտիչ քահանայի որդի Հովհաննեսը, որը 1416 թ.

---

[13] Դժվար էր նորուսում գրչի գործը, որովհետև իր առաջին գիրն էր. «Ով բարի ընթերցող զՍտեփանոսիկ գրիչս յիշեա ի Տէր աղաչեմ, և խոշորութեան և սխալանացս անմեղադիր լեր, զի դեռ ա) գիր է և կար մեր այս էր»: Իսկ նա գրել էր, որովհետև նրան հանձնարարել էր վարպետը, որին դիմելով գրիչը գրում է. «Աղաչեմ զքեզ սիրովն Աստուծոյ, վասն խոշորութեանն անմեղադիր լինել, զի խառութիւն սիրոյդ յաւժարեցուցանէ զկամս, և բ) որ օրինակն ստար է ու այնով նեղանամք» (ձեռ. 2143, էջ 187բ):

[14] Անդ, էջ 144ա, 167բ:

[14] Մատենադարան, ձեռ. 4876:

[15] «Հայոց նոր վկաներ»-ի կազմողները (Գիտական հրատարակութիւն, կազմեցին Հ. Մանանդեան և Հ. Աճառեան, 1903, էջ 247), Հակոբ գրչին թյուրիմացաբար նույնացրել են Հակոբ Ղրիմեցու հետ, որը նկատել և ճշտել է Լ. Խաչիկյանը (Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 330 ծթ.): Հ. Անասյանը իր հերթին Գրիգոր Խլաթեցուն համարում է ոչ թե Հակոբի, այլ Առաքել Բաղիշեցու հոգեզավակը: (Հ. Անասյան, Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին, Երևան, 1957, էջ 80): Ինչպես տեսանք, թյուրիմացության մեջ են ինչպես առաջինները, այնպես էլ վերջինը: (Մատենադարան, ձեռ. 8968, էջ 124բ, հմմտ. Հիշատակարաններ, ԺԵ, Բ, էջ 31):



Գրիչ՝ Յովհաննես Բաղիշեցի
1435 թ., ձեռ. N 7117

առաջին գիրն է գրում, ընդօրինակելով մի Գանձարան (առայժմ անհայտ)[16]: Մեզ հայտնի հաջորդ ընդօրինակությունը Գեորգ Սկևռացու՝ գրչության արվեստի վերաբերյալ գործերն են և քերականական այլ նյութեր, որ հետագայում կազմվել են Թովմա Մեծոփեցու քերականական և մատենագրական այլ երկերի հետ և Մատենադարանի 7117 հայտնի ձեռագրի մի մասն են կազմում[17]: Այդ ձեռագրի գրիչներ Հովհաննես Արճիշեցու և Թովմա Մեծոփեցու հետ հիշվող երրորդ գրիչը Հովհաննես Բաղիշեցին է:

1435 թ. Թովմա Մեծոփեցին հիշում է իր հանգուցյալ աշակերտներին, ի թիւս որոնց՝ «...եւ զՅովհաննէս Բաղիշեցի, որ տարաժամ մահուամբ փոխեցան եւ ելին ի դառն կենացս»[18]:

ՊԵՏՐՈՍ ԳՐԻՉ. Անտոնի՞ և Նազխաթունի որդի Պետրոսը Մեծոփա վանքում, մինչև 1435 թ. առ ոտս Թովմա րաբունապետի, ավարտում է մի Շարակնոց: Իրեն համարում է «աշակերտ Թովմայ րաբունապետի»: Ուրիշ տեղեկություն չունենք Մեծոփեցու այս աշակերտի մասին:

ԹՈՎՄԱ ԳՐԻՉ. Ղազարի ՚և Ամբարի որդի Թովմա Մեծոփեցի գրիչը հաճախ չփոթվել է ուսուցչի հետ: 1423 թ. Մեծոփա վանքում ավարտած Շարակնոցում նա հիշում է «Հոգիազարդ և երանաշնորհ և աշխարհալոյս մեծ րաբունապետիս մերոյ Թովմայ վարդապետի, որ հանապազ խրատ տայ մեզ ի յարուեստ գրչութեան»[19]:

1427 թ. Թովմա Մեծոփեցու հանձնարարությամբ հոգևոր որդիք Թովմա գրագիրն ու Հովհաննես գրոց աշակերտը ընդօրինակում են Սարգիս Կունդի Ղուկասի Ավետարանի մեկնությունը[20]: Հավանաբար այդ նույն ժամանակ Մատթեոս քահանայի և Հովհաննես արքեպիսկոպոսի համար Թովմա գրիչը ընդօրինակում է մի Ճաշոց: Հիշատակարանը ընկած է, շատ պակասավոր է նաև ձեռագիրը: Պահպանվել է երկու փոքրիկ հիշատակագրություն. «Ով ընթերցողք, զեղկելի գրիչս Թովմա յիշեցէք ի Քրիստոս...», «Քրիստոս, որդի Աստուծոյ...

---

16 Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 198:

17 Մատենադարան, ձեռ. 7117, էջ 153ա–324բ:

18 Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 454:

19 Մատենադարան, ձեռ. 5114, էջ 372ա:

20 Մատենադարան, ձեռ. 5591, էջ 241ա:

զարդարեաւ զհոգի ստացողի գրոցս զՄատթէոսին և զՅոհաննէս արհեպիսկոպոսին, և ծնողաց նորին՝ Սիմէոն քահանային և Մերեթին...»[21]: Հովհաննես եպիսկոպոսի ծնողների՝ Սիմեոն քահանայի և Մերեթի հիշատակությունը ցույց է տալիս, որ գործ ունենք Մեծոփա վանքի և Բաղբերունիքի առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսի հետ: Մեզ ծանոթ է նաև Մատթեոս քահանան: Բացի այդ, պահպանվել է նաև Քրիստոսի Հարության նկարը, որի ստորին մասում գրված է. «Կարապետ դպիրն եւ Մինաս ծաղկող յիշեցէք»[22]: Վերջինս, ինչպես կտեսնենք, նույնպես Թովմա Մեծոփեցու աշակերտն է: Այս փաստերը և ձեռագրի գրչությունը իրավունք են տալիս այն վերագրելու Թովմա Մեծոփեցի գրչին և ոչ վարդապետին: Ձեռագիրը կարող է գրված լինել մինչև Մատթեոս քահանայի մահը, որ տեղի է ունեցել 1435 թվականից առաջ:

Այս Թովման «յերկիրս Բաղբերունեաց, ի սուրբ մենաստանիս, որ կոչի Մեծոփայ վանք... առ ոտս... մեծ րաբունապետին մերոյ Թովմայի և Մատթէոս կրաւնաւորի, որ հայրական գթով նախախնամէ...»[23], Ստեփանոսի համար օրինակում է մի Աւետարան: 1441 թ. «ի յերկիրս Բաղբերունեաց, ընդ հովանեաւ Սուրբ Գէորգեա զաւրաւարիս և այլ սրբոցս»[24] ընդօրինակում է մի այլ Աւետարան: Ինչպես հետո կտեսնենք, այս Ս. Գևորգը՝ Արջոնից վանքն է: Ստացողը մահդասի Փաշամելիքն էր, որը Երուսաղեմից վերադարձել և ընդօրինակել էր տվել սույն ձեռագիրը: «Այլև ես մեղուցեալ գրիչս Թովմա Մեծոփցի, ի ծերութեան ժամանակիս, որ խիստ տկար էի մարմնով և հոգով, այլ վասն բազում աղաչանաց և պաղատանաց հոգևոր եղբարցն Ներսէս վարդապետին և Հերապետ կրաւնաւորին և ստացողի գրոցս մահդասուն... գրեցի...»[25]: Այս այն ձեռագիրն է, որ Թովմա Մեծոփեցու մասին խոսելիս, մենք ցույց տվեցինք, որ գրիչը ոչ թե Թովմա Մեծոփեցի վարդապետն է, այլ նրա աշակերտ Ղազարի և Ամբարի որդի Թովման:

Նույն թվականին Մեծոփա վանքում Թովմա գրիչը ավարտում է նաև մի Շարակնոց և Տոնացույց: Ձեռագիրը կրկնագիր է: Ընդօրինակողը նախկին ձեռագրի մագաղաթը քերել և վերստին գրել է: «Ով եղբարք և սիրելիք, անմեղադիր լերուք

21 Հիշատակարաններ, ԺԴ, էջ 644:

22 Մատենադարան, ձեռ. 6501, էջ 22ա:

23 Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 660:

24 Մատենադարան, ձեռ. 3892, 316ա:

25 Անդ, էջ 315բ:



Գրիչ՝ Թովմա Արեղա
ձեռ. N 5667

Նշանիս»[30]: Ավետարանն ընդօրինակված է Հոգևոր եղբայր Հերապետի համար, որը, հավանաբար, իր ուսումնակիցն է և նշանավոր կազմարարը:

Վերջին անգամ նրան հանդիպում ենք 1461 թ., որից հետո նա այլևս չի հիշվում հիշատակարաններում:

Քանի որ գեղեցկագիր աշակերտը հաճախ է շփոթվել ուսուցչի հետ, նրա ընդօրինակությունները, որպես «վարդապետի օրինակներ», շատ են ընդօրինակվել:

ՂԱԶԱՐ ԳՐԻՉ. Ղազար սարկավագը 1411 թ. Մեծոփա վանքում օգնում է Հովհաննես գրչին՝ «տուն տալով և ողորդելով»: 1419 թ. լրացնում է սույն ձեռագիրը[31]: Այդ ժամանակ դեռ սովորում էր և անմեղադրություն է խնդրում սխալների համար, որովհետև «հարկ կարդալոյն ի վերայ կայր»[32]: 1427 թ. նա արդեն գրիչ էր և «առ ոտս տիեզերալոյս և քաջ բաբունապետիս Թումա վարդապետիս…, որ գեղեցս ուսոյց և աւր ըստ աւրէ յորդորէ զմեզ և զամենայն եղբարք»[33] ընդօրինակում է մի ժամագիրք: Վերջին անգամ նրան հանդիպում ենք 1464 թ. երբ Շարակնոց էր ընդօրինակում և դեռ չավարտած մահանում է՝ չժամանելով «յաւարտ Շարակնոցիս»[34]: Ձեռագիրը Մեծոփա վանքի վանահայր Վարդանը, որի համար գրում էր, հանձնարարում է Ազարիա գրչին շարունակելու և ավարտելու: Սա Արճեշում նահատակված Կարապետ գրչի որդին էր:

ՄԿՐՏԻՉ ԵՎ ԶԱՔԱՐԻԱ ԳՐԻՉՆԵՐ. Մկրտիչ վարդապետը, Հովհաննեսը և Զաքարիան 1432 թ. Մեծոփա վանքում Ներսես կրոնավորի համար օրինակում են Ժամագիրք և Պատարագամատույց: Թովմա վարդապետը «ինքն շնորհաց զքարտէսն և ետ գրել ի ձեռնասուն աշակերտացն՝ Մկրտիչ վարդապետին և Յովհաննէսին և Զաքարիային…»[35]: Հովհաննեսը հավանաբար Մանկասարենցն է: Առաջին երկուսը 1435 թ. արդեն մահացած էին:

30 Անդ:

31 Մատենադարան, ձեռ. 2177, էջ 360բ և 430ա:

32 Անդ:

33 Հ. Տաշեան, Ցուցակ Վիեննայի, էջ 880:

34 Մատենադարան, ձեռ. 3481, էջ 355ա:

35 Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 423–424:



Գրիչ՝ Կարապետ
1339 թ., ձեռ. N 5172

ՀԱԿՈԲ ԳՐԻՉ. *Հակոբ Բերկրեցին 1432 թ. Երուսաղեմում ավարտում է Լուծմունք Սաղմոսացն Գրիգորի Տաթևացու և հիշում «զՀոգևոր ծնողսն մեր և զուսուցիչքն՝ զԳրիգոր մեծ վարդապետն, որ զքաղուածոյս է արարեալ, և զԹովմայ վարդապետ Մեծոփայ, որ անչափ և անեզր խնամեալ է զիս հոգևոր և մարմնաւոր»[36]:*

Մինչ այդ Բերկրեցի Հուսիկի և Ղեկի որդի Հակոբը, որը Մեծոփեցու առաջին աշակերտներից էր, գրչությամբ էր զբաղվում և արդեն աշակերտ պահում: 1418 թ. Բերկրիի Տեր Հուսկան որդու անապատում ավարտում է մի Ավետարան[37]: 1420 թ. Մկրտիչ Օրբելի որդի վարդապետը հիշում է նրան որպես «Համարուեստակից եղբօր», 1422 թ. Եղիվանքում ավարտում է մի Ավետարան, որի գրությանն օգնում է իր Գրիգոր աշակերտը[38], իսկ 1424 թ.՝ մի Շարակնոց[39]: 1425 թ. ավարտած Ավետարանի հիշատակարանում Տեր Հուսկան որդու անապատում հիշում է. «Ամենայն միաբանք... ԽԸ (48) ոգի»[40], չհաշված առաջնորդներին:

ԿԱՐԱՊԵՏ ԳՐԻՉ. *Սա Մեծոփա բարձրագույն դպրոցի առաջին աշակերտներից է: «Եւ զուսուցիչն իմ քաջ քարտուղարն զԹումայ բաբունապետ» հիշում է հետագայում Կարապետը[41]: Մեծոփա դպրոցն ավարտելուց հետո վերադառնում է Վան և աշխատում այնտեղ: Ապա տեղափոխվում է Արճեշ և Մեծոփա վանք, ուր սովորում էր ավագ որդին՝ Ստեփանոսը: 1452 թվականից առաջ նշանավոր գրիչը նահատակվում է Արճեշում: «Յիշեցէք—գրում է Վարդան գրիչը,— և եղբայր իմ և ուսուցիչ զԿարապետ քահանայն, զնահատակն Քրիստոսի, որ նահատակեցաւ յԱրճեշ քաղաքի»[42]: Այնուհետև բազմաթիվ առիթներով նույնն է հաղորդում որդին՝ Ազարիա գրիչը:*

Կարապետ գրիչը նաև գրչության ճանաչված ուսուցիչ էր: Նրա մոտ են սովորել եղբայրը՝ Վարդանը, Վանի նշանավոր գրիչը, որդիներից Ստեփանոսը և Ազարիան, ինչպես նաև

---

36 *Մատենադարան, ձեռ. 1125, էջ 524բ:*

37 *Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 214–215:*

38 *Մատենադարան, ձեռ. 5635, էջ 277բ:*

39 *Անդ, էջ 321:*

40 *Անդ, էջ 339:*

41 *Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 435, 474:*

42 *Հիշատակարաններ, ԺԵ, Բ, էջ 124:*

Հերթերը: Կարապետ գրիչը 1422 թ. Վանում ընդօրինակում է մի Ավետարան[43], իսկ Գրիգոր և Մկրտիչ գրիչների հետ՝ մի Հայսմավուրք[44]: Արճեշում Կարապետ գրչի կատարած ընդօրինակություններից մեզ հայտնի առաջին ձեռագրի մասին ստացողի հիշատակարանից ենք իմանում: Օրպելի որդի Մկրտիչ վարդապետը 1432 թվականին Արճեշում Կարապետին գրել է տալիս[45] մի Մաշտոց, որի օրինակը շնորհել և բազում բարություն է ցույց տվել Թովմա Մեծոփեցին: Կարապետ գրչին օգնում են Մեծոփա վանքի դպրոցի «գրոց աշակերտեալ անձինք»՝ Հովհաննես կրոնավորը՝ յոթ օրենք և հիշատակարանը գրելով, ստացողի հոգևոր որդի Մինաս դպիրը՝ ծաղկելով և Հայրապետ կրոնավորը՝ կազմելով: Այս երեք աշակերտները հետագայում դառնում են գրչության արվեստի նշանավոր մշակներ: Հովհաննես Մանկասարենցը՝ հայ ամենաբեղմնավոր գրիչը, Մինասը՝ ԺԵ դարի նշանավոր ծաղկողներից մեկը, իսկ Հայրապետը՝ Մեծոփա դպրոցի արդյունավետ կազմարարը: Կարապետին օգնում էին նաև Գրիգոր դպիր և Մկրտիչ եղբայրները:

«Հանճարեղ և իմաստուն քարտուղար» է համարում Կարապետին[46] Մկրտիչ վարդապետը: Նրա ընդօրինակած ձեռագրերից մեկը պահվում է Մաշտոցյան Մատենադարանում. «Գրեցաւ սուրբ Աւետարանս ի քաղաքս, որ կոչի Արճէշ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս և այլ համաւրէն սրբոցս, ի թվ. Հայոց ՊՁԲ (1433) ձեռամբ անարժան և յոգնամեղ փցուն գրչի՝ Կարապետի»[47]: Ձեռագիրը գրված է Երզնկացի ոսկերիչ

43 Անդ, էջ 296:

44 Անդ, էջ 297:

45 Անդ, ԺԵ, Ա, էջ 424–425:

46 Անդ, ԺԵ, Ա, էջ 425: Հ. Քյուրդյանը, իր «Նիւթեր հայկական գրչութեան եւ մանրանկարչութեան պատմութեան» աշխատության մեջ «Յովհաննէս գրիչ Մանգասարենց» բաժնում սույն ձեռագրի «գրոց աշակերտեալ» Հովհաննեսին համարելով Մանգասարենցը, ուզում է, որ գրչության վայրը՝ Մեծոփա վանքը լինի. «Դուցե ավելի ճիշտ պիտի ըլլար, նկատի առնելով Սբ. Աստվածածնի և սբ. Հակոբի տաճարներուն հիշատակարանը՝ տեղը Մեծոփա վանքը նշանակել, ուր էր Հովհ. Մանգասարենցը» («Բազմավէպ», 1968, թիւ 4–6, էջ 102): Բայց Ս. Աստվածածնի և Ս. Հակոբի տաճարներ կային նաև Արճեշում: Գրիչը այնտեղ է գրել և սույն տեղն էլ նշել է:

47 Մատենադարան, ձեռ. 5172, էջ 295ա:

Հովհաննեսի և Թստակեսի պատկերով: Ծաղկել է Մինասը: Այս ձեռագիրը նրանից մեզ հասած առաջին գործն է:

1435 թ. Կարապետը Մեծոփա վանքում օգնում է իր որդուն՝ Ստեփանոսին և Հովհաննես Մանկասարենցին՝ ընդօրինակություն կատարելիս: Թովմա Մեծոփեցին այդ առիթով հիշում է. «զԿարապետ քահանայն, եւ զորդիակն իւր՝ զՀնազանդ ծառայն Քրիստոսի, որ զգիրս գրեցին»[48]: Իսկ 1437 թ. արդեն Ստեփանոսն է օգնում հորը: Այդ թվականին Հովհաննես Մանկասարենցը և Ստեփանոսը ավարտում են Մեծոփա վանքի գրչության դպրոցը, և վերջինս վերադառնում է Արճեշ՝ հոր մոտ: Հայր և որդի Խաճա Թաճդնի համար ընդօրինակում են մի Հայսմավուրք «հրամանաւ և միջնորդութեամբ» Թովմա վարդապետի. «Վասն զի, — գրում է նա, — այսչափ գծագրելս շնորհիւ և ողորմութեամբ սորին է՝ Թումա վարդապետի»[49]: Գրիչն հիշում է ծնողներին, եղբայրներին՝ Մկրտիչին, Մելիքսեթին և Վարդանին և Քաջբերունիքի Հովհաննես եպիսկոպոսին, «որ զօրինակս շնորհեաց, և զորդին իմ Ստեփանոս սարկաւագն, որ և նա գրեաց»[50]:

Կարապետից շատ քիչ գրչական ժառանգություն է հասել մեզ: Նրա մարմնավոր ժառանգներից՝ Ստեփանոս և Ազարիա որդիները շարունակեցին իրենց հոր գործը Արճեշում և Վանում:

ՍՏԵՓԱՆՈՍ ԳՐԻՉ. Վերոհիշյալ Կարապետի և Սաղդութի որդի Ստեփանոս գրիչը սովորում է Մեծոփա դպրոցում և Թովմա Մեծոփեցու հանձնարարությամբ 1433–35 թվականներին Հովհաննես Մանկասարենցի հետ միասին ընդօրինակում «Մեկնութիւն չորեքտասան թղթոցն Պաւղոսի»[51]: 1437 թվականին Արճեշում Ստեփանոս սարկավագը օգնում է հորը՝ Յայսմաւուրք[52] ընդօրինակելիս: Փիրղալեմյանը, միմյանց հետ նույնացնելով երկու եղբայրներին «Նոտարք»-ում Ստեփանոսի մասին գրում է, որ «Սա ի քահանայութեան Ազարիա կոչեցաւ և էր երևելի դպիր ի մէջ ազգին ի նմին ժամանակի, որ յայտնի է իւրոց Յիշատակարանաց՝ զորս ունիս տեսանել ի ժամանա-

48 Մատենադարան, ձեռ. 1380, էջ 215ա:

49 Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 474:

50 Անդ:

51 Մատենադարան, ձեռ. 1380:

52 Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 474:

կին»[53]: Սակայն Ազարիա գրիչը Ստեփանոսի եղբայրն էր: 1476 թվականին Վանում ընդօրինակած Ճառընտիրում Ազարիան խնդրում է. «...Աստուած ողորմի ասել... ծնօղացն Կարապետ քահանային և ուսուցչին իմոյ, որ նահատակեցաւ յԱրճէշ քաղաքի ի ձեռաց անաւրինաց, և մաւր իմոյ Սաղդուխթին, և եղբայրն իմ փոխեցելոյն ի Քրիստոս Ստեփանոսին և Մերունին...»[54]:

Ստեփանոսը գնդիկավոր գրիչ է գործածել, որը մի թաթախելով մոտ յոթ հարյուր տառ էր գրում:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆԿԱՍԱՐԵՆՑ ԳՐԻՉ. Մեզ հայտնի ամենաերեղմնավոր հայ գրիչն է:

1505 թվականին Վանում ավարտված Ավետարանի հիշատակարանում Զաքարիան իր ուսուցիչ Հովհաննես Մանկասարենցին այսպես է հիշում. «... Յանգ ելեալ աւարտեցաւ աստուածաբան սուրբ Աւետարանս ի մեծ թվականիս մեր ՋԾԴ (1505) ի գաւառս Վասպուրականի ի քաղաքս Վան, առ ոտս Վարագայ Սուրբ Նշանին, ընդ հովանեաւ Տիրամօր լուսոյ Սուրբ Աստուածածնի և Պարապի Սուրբ Նշանիս, ի հնծան ա[յ]գոյ տէր Մկրտչի՝ յարևելից կուսէ քաղաքիս, որ էր որպէս անապատ: Եւ արդ գրեալ եղև Յոհան գլուխն ձեռամբ վարպետին իմոյ տէր Յովանէսի Մանկասարենց քաջ քարտողին, որ ՀԲ (72) տարի ամառն և ձմեռն, գիշեր ու ցերեկ ի գրել եկաց: Որպէս գրեալ եղև ձեռամբ նորա Խ (40) Այսմաւուրք և Տարեգիրք, Ճառ և Սարգիս գիրք, իսկ փոքր գիրք՝ Տեառ և Աղօթամատոյց, Շարակնոց և Սաղմոսարան, Մաշտոց և Գանձատետր Ծ (50) Կ (60) և այլ աւելի, և Աւետարանս ԼԲ (32): Եւ զայս Յոհան գլուխս՝ ի ծերութեան ժամանակս, որ աչք չէր հայէր, ձեռքն կու դողայր, բազում չարչարանօք հազիւ կարաց աւարտել և այլ չկարաց գրիչ բռնել, մինչև ի վախճան, որ հանգեաւ ի Քրիստոս ՁԶ (86) ամաց: Վասն որոյ Աստուած ողորմի ասացէք, ամէն»[55]:

Այս հիշատակարանից իմանում ենք, որ Հովհաննես Մանկասարենցը ապրել է 86 տարի, որից 72-ը նվիրել է գրչության արվեստին, ընդօրինակելով շուրջ 132 ձեռագիր: Եթե 1505 թվականին մահացած լինի գրիչը, կնշանակի նա ծնվել է 1419 թվականին, եթե ոչ՝ «դրանից մի երկու տարի առաջ»[56]: Հ. Քյուրդյանի վկայությամբ 1485 թ. ավարտած մի Գանձարանում Մանկասարենցը գրում է «Եւ զի Հ (70) տարոյ եմ», այսինքն, — շարունակում է Հ. Քյուրդյանը, — 1485-ին 70 տարեկան էր: Ուրեմն անտարակույս ծնած ըլլալու էր 1415-ին»[57]:

1415 թ. ծնված Հովհաննես Մանկասարենցը 86 տարի ապրելով պետք է վախճանված լինի 1501 թ.: Իսկ նրա մասին Զաքարիայի հիշատակարանը գրված է նրա մահից 4 տարի հետո 1505 թվականին: Գրիչը վերջին ձեռագիրը գրելուց հետո ապրել է, բայց այլևս չի գրել:

Թովմա Մեծոփեցին 1427 թվականին հիշում է «Հոգևոր որդոց իմոց՝ Թովմայ գրագրի և Յովանէսի գրոց աշակերտի»[58]: Այս «գրոց աշակերտը», ինչպես կտեսնենք, Հովհաննես Մանկասարենցն է, որը տասներկու տարեկան հասակից սկսած յոթանասուներկու տարի, այսինքն մի լիարժեք կյանք գրչությամբ է զբաղվել և գրիչը ցած դրել 1499 թվականին, 84 տարեկան հասակում: Հովհաննես Մանկասարենցի ծննդավայրը սույդ Արճեշ քաղաքն էր[59]: Նա իր մասին գրում է. «Զսուտ գծագրիկս զՅովանէս քաղաքացիս»[60]: Քաջբերունիքի քաղաքը Արճեշն էր, Թովմա Մեծոփեցին նրան անվանում է. «Յովհաննէս սարկաւագ Արճիշեցի»[61]: Նրան Արճիշեցի են կոչում նաև ուրիշները: Ազարիան հիշում է. «Տէր Յովանիսին Արճիշեցոյն, որ Մանկասարենց կոչի»[62]: Մեծոփա դպրոցն ավարտելուց և Արճեշ գնալուց հետո նա ևս իրեն համարում է «զՅովանէս քահանայ Արճիշոյ»[63]: Արճեշում էին ապրում նրա ծնողները.

---

[53] Ղ. Փիրղալեմեան, Նօտարք, էջ 112, ծթ. 1:

[54] Հիշատակարաններ, ԺԵ, Բ, էջ 406:

[55] Մատենադարան, ձեռ. 5256, էջ 291բ, 292ա:

[56] Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 587, ծթ. 1:

[57] «Արդ, եթե 1485-ին 70 տարեկան էր, և մեռած 86 տարեկան, մենք 1485-ին վրա պետք է ավելացնենք այդ 16 (86–70) տարիներու տարբերությունը, որով կստանանք 1502-ը, իբր Հովհաննես Մանկասարենցի մահվան թվականն»: Հ. Քյուրտեան, Յովհաննէս գրիչ Մանկասարենց «Բազմավէպ», 1968, № 3–4, էջ 98:

[58] Մատենադարան, ձեռ. 5591, էջ 241ա:

[59] «Կրնայ ըլլալ Արճէշ», Հ. Քյուրտեան, Յովհաննէս գրիչ..., «Բազմավէպ», 1968, էջ 99:

[60] Մատենադարան, ձեռ. 1380, էջ 16բ:

[61] Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 597:

[62] Անդ, Բ, էջ 406:

[63] Հ. Քյուրտեան, Յովհաննէս գրիչ, «Բազմավէպ», 1968, էջ 99:

հայրը՝ Մանկասարը, մայրը՝ Փաշամելիքը (որը մահանում է 1437 թ.): Ոմանք նրան համարում են Զիլեցի, որը, թերևս, հոր ծննդավայրն է եղել[64]:

Որպես վարժ և գրագետ գրիչ՝ Թովմա Մեծոփեցին միշտ նրան էր հանձնարարում ընդօրինակություններ կատարել: Հովհաննես սարկավագի չթվագրված ձեռագրերը, որոնք կատարված են բաբունապետերի համար, վերաբերում են նրա ուսումնառության շրջանին, մինչև 1440 թ.:

1445 թ. արդեն մահացած էր նաև հայրը՝ Մանկասարը: Հովհաննես Մանկասարենցը մինչ այդ ամուսնացած էր Շուքրան-խաթունի հետ: 1450 թ. մահանում են նրա երկու որդիները. «... սիրտս խոցեալ է ի սատանայէ, և զի կենդանւոյն մեռեալ եմ, և աչքս ի բազում արտասուաց կուրացեալ է, զի իմ սիրական որդիքն՝ Սահակն և Մեսրոպն գիս սևեցին»[65]: 1454 թ. Ուզուն Հասանի հրոսակներից խուսափելով, պատսպարվում է Լիմ կղզում և այնտեղ ավարտում կիսատ ձեռագիրը[66]:

Հիսունամյա գրիչը այդ օրերին զրկվում է կնոջից[67] և մխիթարվում միայն որդիներով. «Տէր Աստուած... աւրհնեսցէ... և զարդարեսցէ յայս կեանքս որդովք և յայն կեանքն հոգով»: Բայց շուտով մահտարաժամի զոհ են դառնում նրա մյուս երկու որդիները ևս. «Պակասութեան գրիս անմեղադիր լերուք, զի աչաց լոյս պակասեալ է, և առաւել յայս աւուրս, որ ի գրել Շարակնոցիս, Բ (2) տղայ ինձ յԱստուած գնաց՝ Մէհէրն ու Սահարբէկն, վայ ինձ»,—գրում է 1470[68] թվականին: Սակայն ձեռագիրը չավարտած, զրկվում է նաև վերջին որդուց և մնում հուսահատության մեջ: «... Աչքս կուրացել է ի բազում լալոյս, մէջքս կոտրել է, ձեռս թուլացել է, զի իմ մէկ որդին Մխիթար, զողորմելի հայրս սևեց յայս աւուրքս, և ես մնացի անյիշատակ»[69]:

---

64 «Յովհաննէս Մանկասարեան յիշատակարանի մը մէջ Զիլեցի ստորագրած է: Գիտենք, որ Զիլ կամ Զիլան կամ Զիլանա ձոր Բաշքերունեաց գաւառին մէջ է: Ուրեմն Զիլեցի ստորագրելով գուցէ Արճիշեցի կամ Բաշքերունի ըսել կուզի»: («Գանձեր Վասպուրականի», 1966, Բոստոն, էջ 76):

65 Հ. Աճառեան, Ցուցակ Թաւրիզի, էջ 65–67:

66 Մատենադարան, ձեռ. 6570, էջ 224բ:

67 Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 236:

68 Մատենադարան, ձեռ. 9239, էջ 146բ:

69 Անդ, էջ 330ա:



Գրիչ՝ Հովհաննես Մանկասարենց
1441 թ., ձեռ. N 7117

Հայր-մայր, կին, զավակներ կորցրած գրիչը վերստին ամուսնանում է Զուլալ-խաթունի հետ, որից ունենում է մի որդի՝ Կարապետ անունով, որը, ինչպես և հետո սրա տղան՝ Հովհաննեսը, դարձյալ գրիչ էին: Վերջինս հիշում էր պապին Հովհաննես Մանկասարենցին: Գրչի մասին վերջին հիշատակությունները Զաքարիայի հաղորդած տեղեկություններն են: Մանկասարենցը մահացել է 1501 թ. և թաղվել Վանում:

Հովհաննես Մանկասարենցը ոչ միայն բեղմնավոր գրիչ է եղել, այլև գրչության ուսուցիչ: Աշակերտներից առաջինը Ազարիան է, Կարապետի և Սաղդուխթի որդին: Ազարիան գրչությունը սովորում է հորից, իսկ երբ հայրը նահատակվում է Արճեշում, ուսումը շարունակում է Հովհաննես Մանկասարենցի մոտ: Մի ձեռագրում, հոր հիշելուց հետո, խնդրում է հիշել «մանաւանդ միւս վարպետին իմոյ տէր Յովանիսին Արճիշեցոյն, որ Մանկասարենց կոչի...»[70]:

Խաչատուրի և Շամամի որդի, նորընծա քահանա Դավիթը, 1455 թվականին մի Ավետարան է գրում Արճեշում և մահանում է ավարտելուց հետո: Հիշատակարանում նա աղաչում է հիշել... «և ուսուցչին իմոյ Յովանէս քահանայի»: Այս ձեռագիրը, որ Փիրղալեմյանը տեսել է Բաղեշի Կարմրակ եկեղեցում, այժմ գտնվում է Երուսաղեմում: Այն նկարազարդել է Մինասը: Երուսաղեմում է գտնվում նաև Մանկասարենցի 1462 թ. ընդօրինակած Ավետարանը: Վերջինս համեմատելով Դավթի Ավետարանի հետ՝ Նորայր վարդապետ Ծովականը գրում է. «Այս Ավետարանը գրչական տեսակետից շատ նման է մեր նկարագրած Դավիթ քահանայի օրինակությանը: Այս վերջինին ոսկեգույն գլխագիրներուն տեղ մյուսը ունի կարմիրով համանման գլխագիրներ: Մանկասարենցի օրինակած Ավետարանի ծաղկումը ճոխ է, բայց նկարազարդումը չի հավասարվի Դավիթ գրչի Ավետարանին»[71]: Մանկասարենցի նման էին գրում նրա բոլոր աշակերտները: Դավիթը բացառություն չէր:

Նրանից է գրչության արվեստ սովորել նաև Հովհաննես քահանա Արճիշեցի գրիչը, Աստուածատուրի և Գյուլխասի որդին: 1490 թվականին Սարգիս աբեղայի պատվերով գրած Գանձարանում աղաչում է հիշել. «... նաև ուսուցչին իմոյ՝ տէր Յովանիսին և ծնօղացն նորին Մանկասարին...»[72]:

---

70 Հիշատակարաններ, ԺԵ, Բ, էջ 406:

71 «Սիոն», Երուսաղեմ, 1950, էջ 233:

72 Մատենադարան, ձեռ. 6495, էջ 437:

Մյուս աշակերտը՝ Կիրակոս Ջուղկանցը Բաղեշում սկսած և 1463 թվականին Աղթամարում ավարտած Ճառընտիրում հիշում է իր ուսուցչին՝ Հովանես Մանկասարենցին[73]: Մանկասարենցի Զաքարիա աշակերտի մասին արդեն գիտենք, որ Վանում նրա հետ էր աշխատում: Մանկասարենցի որդի Կարապետը, ինչպես և թոռը՝ Հովհաննեսը, շարունակում են մեկը հոր, մյուսը պապի նվիրական գործն ու հպարտությամբ հիշում նրան: 1530 թվականին ընդօրինակած Մաշտոցի հիշատակարանում թոռը խնդրում է հիշել իրեն և ծնողներին. «... Կարապետին և Փարխանին և իմ եղբարցն տէր Աւետիս կրօնաւորին և Գուլկէն և Մանգասարին, և քուրոջս Ֆառուխին և Գարխանին, և կողակցին իմ Նուրխանին, և զաւակաց մերոց Գօզալկին, Սօլթանկին և դեռաբոյս Մկրտչին, և պապուն իմոյ Յովանէս քաջ քարտողին, և մամուն իմ Զուլալին, և մեծ պապուն իմ Մանգասարին... և իմ վարպետաց տէր Յովանէս Բաղիշեցոյն, տէր Մարգարայ Արճիշեցոյն»[74]: Այս վերջինները հավանաբար նույնպես Մանկասարենցի աշակերտներից են:

Հովհաննես Մանկասարենցը համատեղ աշխատել է Թովմա վարդապետ Մեծոփեցու, Ստեփանոսի, Թումա դպիր Մեծոփեցու, Կարապետ գրչի, Զաքարիայի, մյուս Կարապետի և այլոց հետ:

Նրա ձեռագրերը նկարազարդել են նշանավոր ծաղկողներ Մինասը, Մարտիրոսը, Մանուելը, Մինասի աշակերտ Կարապետ Աղթամարցին, Մկրտիչ Նաղաշը, Օնոփրիոսի որդի Մկրտիչը և ուրիշներ:

Ի՞նչ է հասել մեզ հայ գրչության արվեստի այս երախտավորից:

1. Նրա առաջին փորձը 1427 թվականին Ղուկասի Ավետարանի մեկնության ընդօրինակմանը մասնակցելն է: Ձեռագրի Ժ պրակը նրա գրչական երախայրիքն է: Ձեռագիրն սկսել է Թովմա Մեծոփեցին՝ մինչև բուն բնագրին հասնելը[75]: Առաջին պրակը դարձյալ վարդապետն է սկսում, մի քանի թերթ հետո չորս տող անվարժ գրություն կա, նորուս գրչի է, համառոտագրությունն համարյա նկարած է[76]: Այնուհետև շարունակել է վարդապետը երկու էջ, որից հետո, մոտ մի էջ դարձյալ անվարժ աշակերտի ձեռքով է գրված, որտեղ գիրը մի

---

[73] Հիշատակարաններ, ԺԵ, Բ, էջ 257:

[74] Մատենադարան, ձեռ. 962, էջ 384:

[75] «Աստուած ողորմի Թովմա վարդապետին և իւր ծնողացն»: (Մատենադարան, ձեռ. 5591, էջ 19բ):

[76] Անդ, էջ 24բ:

քիչ կանոնավորել է, բայց քանի որ արտագրված է հին, 230 տարի առաջ գրված գաղափարից (1197 թ.), ուր բառանջատում չկա, գրիչը ընդօրինակել է ինչպես կարողացել է[77]: Սխալներ և բացթողումներ կան, որոնք սրբագրել է Մեծոփեցին: Այդպիսի կտորներ հանդիպում են նաև այլուր: Ժ պրակը ամբողջությամբ[78] արդեն կանոնավորված ձեռագրով է գրված, բայց Թովմա Մեծոփեցու և Թովմա դրագրի գրչագրություններից տարբեր է: Թովմա Մեծոփեցին այստեղ սովորեցրել է իր աշակերտին ձեռագիր գրելը:

Մեզ հասել է Մեծոփա վանքում 1428 թ. ընդօրինակված մի Հայսմավուրք, որի գրիչն իրեն անվանում է «սուտանուն Յոհաննէս»: Հ. Քյուրդյանը, նկատի ունենալով, որ Գ. Հովսեփյանը չի ճանաչում այս Հովհաննեսին, նրան նույնացնում է Հովհաննես Մանկասարենցի հետ, իսկ Հայսմավուրքը համարում նրա առաջին գործը[79]: Տասներեքամյա Հովհաննեսը, որ նախորդ տարում միայն գրչական առաջին քայլերն էր անում մի էջով ու մի պրակով, դեռ ինքնուրույն գրիչ չէր և առանց րաբունապետի թույլտվության ինքնուրույն պատվեր չէր կարող կատարել: Այնուհետև պատանի աշակերտը իր պաշտելի (ինչպես երևում է նրա բոլոր հիշատակարաններից) րաբունապետին՝ նրա եղբայրներով չէր ճանաչի կամ ներկայացնի: Այնինչ, հիշատակարանում կարդում ենք. «գրեցաւ գիրքս... առ ոտն մեծ րաբունապետի Թումայ վարդապետի՝ պարոն Գորգուաղբոր և տէր Յոհանիսի»[80]: Հովհաննես Մանկասարենցը Թովմա վարդապետին այդքան անտարբեր չի հիշում երբեք և միշտ շեշտում է նրա իր ուսուցիչը լինելու հանգամանքը: Եվ վերջապես Հայսմավուրքի գրիչն իր անունը գրում է «Յոհաննէս» ձևով, իսկ Մանկասարենցը, «Յովհաննէս» կամ «Յով.» ձևով: Սրանք գրության տարբեր ձևեր են, որոնցով նույնանուն գրիչները տարբերվում են իրարից: Հաճախ գրիչներն հիշում են իրենց «եղբարցն Յոհանիսին և Յովանիսին»[81]:

2. Մեզ ծանոթ Կարապետ գրչի՝ 1432 թ. Արճեշում օրինակած Մաշտոցի մի մասի գրիչը պետք է Հովհաննես Մանկասարենցը լինի: Այստեղ հիշված «Յովհաննէս կրօնաւորը» Մանկասա-

---

[77] «եւ-էին, երկ-ոք-եանն-արդար-առաջի Աստուծոյ» և այլն (էջ 27ա):

[78] Անդ, էջ 132ա, 143բ:

[79] Հ. Քյուրտեան, Յովհաննէս գրիչ, էջ 102:

[80] Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 380:

[81] Անդ, Գ, էջ 213:

րենցն է, որը ձեռագրի յոթ օրենքը և հիշատակարանը գրել է Մեծոփա վանքում[82]:

3. Այդ նույն թվականին Մեծոփա վանքում, Թովմա Մեծոփեցին իր ձեռնասուն աշակերտներ Մկրտիչ վարդապետին, Հովհաննեսին և Զաքարիային մի ժամագիրք[83] է գրել տալիս Ներսես կրոնավորի համար: Մկրտիչ վարդապետը Մկրտիչ Նահապետենց Մեծոփավանեցին չէ, ոչ էլ Մկրտիչ Օրբելենցը՝ նախորդ Մաշտոցի ստացողը, ինչպես կարծում է Հ. Քյուրդյանը[84]: Սրանք Թովմա Մեծոփեցու դասընկերներն են ու գործակիցները: Այնինչ հիշյալ գրիչը նրա աշակերտ Մկրտիչ վարդապետն է, որին հանդիպում ենք իր «պատուական» որդիների շարքում, 1435 թ. ձեռագրում, որտեղ հիշվում են վերը հիշյալ բոլոր երեք Մկրտիչները և Զաքարեն, որը նույնպես վարդապետ էր[85]: Գրիչներից Հովհաննեսը Մանկասարենցն է: Ձեռագիրը ծաղկել է Մկրտիչ Նաղաշը:

4. Մանկասարենցի հաջորդ ընդօրինակությունը կատարված է ուսումնակից Ստեփանոսի հետ 1435 թվականին: Մանկասարենցը ոչ միայն ընդօրինակում, այլև օգնում է Թովմա բաբունապետին ձեռագիրը ճշտելու և սրբագրելու գործում. «աւգնականութեամբ աշխատեցաւ ի յողորդիլ գրոցս»,—գրում է Թ. Մեծոփեցին[86]:

5. Այդ նույն 1435 թվականին Հովհաննես Մանկասարենցը ավարտում է մի Ավետարան, ուր հիշվում է. «Ես առաւել գերեւելին ի մէջ ամենայնի, գլուսատուն ազգիս, գաստուածաբան և զսուրբ բաբունապետն, զհեզահոգի և քաղցր վարդապետն Թովմա»[87]: Տեղը, անկասկած, Մեծոփա վանքն է, և գրված է եղել նախորդից անմիջապես հետո, որովհետև հաջորդ տարում Թովմա Մեծոփեցին աշակերտներով փախչում է Բաղեշ, որոնց մեջ էր նաև Հովհաննես Մանկասարենցը:

---

82 Անդ, Ա, էջ 424: Հ. Քյուրդյանը կարծում է, որ ամբողջ ձեռագիրն է գրել Մեծոփա վանքում (Յովհաննէս գրիչ..., էջ 102):

83 Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 454:

84 Հ. Քյուրտեան, Յովհաննէս գրիչ..., էջ 102:

85 Մատենադարան, ձեռ. 1380, էջ 343ա և 117ա:

86 Անդ, էջ 229բ:

87 Գ. Յովսէփեան, Թովմա Մեծոփեցու կյանքը: Ձեռագիրը սեփականությունն է զմյուռնեցի Սիմեոն Տ. Գառնիկյանի (անդ, էջ Լ):

6. 1437 թ., հավանաբար, Բաղեշից վերադառնալիս Արճկե քաղաքում մի Ճաշոց է ավարտում, որ սկսել էր «քաջ և տիեզերալոյս վարդապետիս Թովմայ»ի հետ[88]:

7. Մատենադարանի 7117 ձեռագիրը երեք ձեռագրերի միացություն է մի կազմի մեջ: Առաջին 151 թերթերը և վերջին երկու պրակները, տարբեր ձեռագիր լինելով հանդերձ, միևնույն գրչի գործ են, իսկ գրիչը Հովհաննես սարկավագ Արճիշեցին է, նույն ինքը՝ Մանկասարենցը[89]: Թովմա Մեծոփեցին նույնպես մասնակցել է գրելուն, իսկ մյուս գրիչը, ինչպես տեսանք, Հովհաննես Բաղիշեցին է:

8. Հովհաննես Մանկասարենցն է գրիչը նաև Նոր Ջուղայի 419 ձեռագրի ժողովածուի 64 թերթանոց հատվածի[90]:

9. 1441 թ. Կիրակոս Վիրապեցու կողմից Կաֆայից բերված Գրիգոր Տղայի «Ողբ Երուսաղէմի» գործն է ընդօրինակում Թովմայ Մեծոփեցու հանձնարարությամբ[91]:

10. 1441 թվականին Արճեշում «ընդ հովանեաւ կըմբեթայարկ եւ խորանաձև սուրբ եկեղեցոյս, որ յանուն Սուրբ Գէորգայ զաւրավարին կառուցեալ կայ», ընդօրինակում է «Յիսուս որդին»: «Անծանոթ պատճառով մը, յիշատակարանը «յետք Ժ (10) տարեց գրեցի» կ'ըսէ[92]—հաղորդում է Հ. Քյուրդյանը: Սա գրչի՝ Արճեշում գրած մեզ հայտնի առաջին ձեռագիրն է:

11. 1441 թ. Կարապետ բաբունապետի քեռորդի Մկրտիչ քահանայի համար Արճեշում, Հովհաննես քահանան ընդօրինակում է մի Ճաշոց: Ձեռագիրը նկարազարդել է ստացողը, Օնոփրիոսի և Շայմելիքի որդի Մկրտիչը: Հիշվում է Կիրակոս կաթողիկոսը, «որ մականուն Խըլոցի կոչի»[93]:

12. 1444 թ. «...Ձեռամբ Յովանէս քահանայի և Թումա անարժան կրօնաւորի... ի քաղաքն Արճէշ, և կէան ի սուրբ

---

88 Յ. Քիւրտեան, Յովհաննէս գրիչ..., էջ 29:

89 Մատենադարան, ձեռ. 7117, էջ 345բ: Հ. Քյուրդյանը Մանկասարենցին նվիրած հոդվածի մի ծանոթագրության մեջ գրում է, որ այս ձեռագրի «Հիշատակարանը անծանոթ մնացած է Լ. Խաչիկյանի» (էջ 100): Սակայն այդպես չէ: Այն կարելի է գտնել Լ. Խաչիկյանի ԺԵ դարի Հայերեն ձեռագրերի հիշատակարանների Ա մասի 597-րդ էջում:

90 Ս. Տէր-Աւետիսյան, Ցուցակ Նոր Ջուղայի, ձեռ. 419:

91 F. Macler, Cataloque, Paris, 1908, էջ 151: Ձեռագիրը գտնվում է Վենետիկում, 1853 թ. ընդօրինակված է Փարիզի օրինակը, որի նկարագրությունից էլ քաղել ենք տեղեկությունը:

92 Յ. Քիւրտեան, Յովհաննէս գրիչ..., էջ 227:

93 Գ. Սրվանձտեան, Թորոս Աղբար, Ա, էջ 222:

ուխտս Մեծոփայ»[94] ավարտվում է մի ճաշոց, գրիչներից՝ Թումայի ծնողներ՝ Ղազարի, Ամբար-խաթունի և Հարազատների համար: Թուման գրել է Մեծոփա վանքում, իսկ Հովհաննեսը՝ Արճեշում:

13. 1445 թ. Արճեշում Մանկասարի որդի Հովհաննեսը Գորգի Մելիքի որդի Հովհաննեսի համար ընդօրինակում է մի Ավետարան, որը Մեծոփա վանքում ծաղկում է Մինասը[95]:

14. 1450 թ. Արճեշում, «ընդ հովանեաւ ի դուռն սուրբ տաճարիս Գէորգեայ զաւրաւորիս» Վարդան գրակալի համար ընդօրինակում է մի Ավետարան, ուր հիշում է ուսուցչին՝ Թումային և ծնողներին՝ Մանկասարին և Փաշային[96]:

15. Մատենադարանի 4350 ձեռագիր Գանձարանը նույնպես Մանկասարենցի ընդօրինակությունն է: Գրչությունը կասկած չի հարուցում, վնասված հիշատակարանի վերականգնումը նույնպես հաստատում է այդ: «Գրեցաւ Գանձարանս ի թուականիս Հայոց Ջ///ամին, ձեռամբ անարժանիս Յով[հաննէս աշ]խարհի երիցու: Ա[րդ] որ վայելէք [այսմ դե]ղափթիթ բուրաստանիս ուղիղ սրտ[իւ] Աստուած ողորմի ասացէք ստացողի սուրբ գրոցս Ներսէսի հեզահոգի քահանային, և կող[ակցին իւրոյ] Մարգարտին՝ և ամենայն արեան մերձաւորացն, [և ին]ձ անպիտան գրչի, և ծնողաց իմոց [Մանկասարին և] Փաշայի, և ուսուցողին իմ Թումա [րաբունա]պետի: Գրեցաւ յԱր[ճէշ քաղ]աքիս, ընդ [հովանեաւ Գէոր]գ զօրավարին»[97]: «Ջ» տառից հետո մի տառաչափ տեղ պատռված է, ուր կարող է լինել Ա—Թ տառերից որևէ մեկը, ուստի գրության ժամանակն ընկնում է 1452–1460 թվականների միջև:

Տեղը «Արճեշ» պետք է կարդալ, և ոչ «Արծկէ», չնայած այնտեղ էլ կա Հովհաննես գրիչ, որը նույնպես աշակերտել է «տիեզերալույս Թովմա Մեծոփեցի րաբունապետին», բայց Արծկեի Հովհաննեսի ծնողները Հակոբն ու Սալչուկ խաթունն են, իսկ այստեղ գրչի ծնողներից պահպանվել է մոր՝ Փաշայի անունը, որը Հովհաննես Մանկասարենցի մայրն է: Այնուհետև եկեղեցու անունից վերջին «գ» տառը «սուրբ Գէորգ»-ի վերջին տառն է, որ Արճեշում է գտնվում, իսկ Արծկեի եկեղեցիները «Սուրբ Աստուածածինն ու Ս. Ստեփանոսն» են, որ հիշում է

[94] Ալիշան, Հայկարան: Հմմ. Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 567:
[95] Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 586–587:
[96] Հ. Անասեան, Ցուցակ Թաւրիզի, էջ 65–67:
[97] Մատենադարան, ձեռ. 4350, էջ 253բ:

Հովհաննես Արծկեցին[98]: Հետևաբար այս ձեռագիրը գրված է Արճեշում, Հովհաննես Մանկասարենցի ձեռքով:

16. 1454 թ. Ակ-Կոյունլու Ուզուն Հասանի զորքերը, օգտվելով այն բանից, որ Ջհանշահը Պարսկաստանում նվաճումներով է զբաղված, ասպատակում են անում Ծովուբոլորը և ամենօրյա թալանի ու գերեվարության ենթարկում անմեղ բնակիչներին: Հովհաննեսը Արճեշում սկսած կիսատ Ավետարանը առած փախչում է և ապաստանում Լիմ կղզում և այնտեղ ավարտում: Օրհասն այնքան մոտ էր, թշնամու սարսափն այնքան ուժեղ, որ գրիչը լուսանցքում գրում է. «Ավաղ դառնութեան աւուրցս և վայ կենաց մերոց, որ յամէն օր Ժ (10) անգամ կու մեռանիմ յահէ սպանման և դողալով կու գրեմ»[99]:

Իսկապես սարսափահար գրիչը բաց է թողել բազմաթիվ բառեր, նախադասություններ, նույնիսկ առանձին տներ, որոնք հետագայում լրացրել են տողամեջերում կամ լուսանցքներում: Ձեռագիրը նկարազարդել է Մինաս ծաղկողը:

17. «Գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ Յովհաննէս քահանայի, ի ՋԴ (1455) ամի, ի հայրապետութեան տէր Գրիգորի, ի յերկիրս Բաղեշրունի, ի քաղաքիս Արճէշ կոչեցեալ, ի դուռն սուրբ տաճարիս Գէորգեայ»[100]: Գրչի մականունը չկա, սակայն մեր կարծիքով Հովհաննես գրիչը Մանկասարենցն է, որովհետև Արճեշի Սուրբ Գեորգի տաճարի հովանու ներքո նա էր աշխատում այդ ժամանակ:

18. Այդ թվականից Ղ. Փիրղալեմյանը դարձյալ մի Ավետարանի հիշատակարան է հաղորդում, ուր բացակայում է գրչի անունը, իսկ եկեղեցին սուրբ Գրիգորի անունով է[101]: Արճեշում սուրբ Գրիգորի անվան եկեղեցի չկա. հավանաբար արտագրողը շփոթել է սուրբ Գէորգի հետ: Քանի որ այդ ժամանակ այնտեղ ուրիշ գրիչ չի հիշվում, գրիչը նույնպես պետք է ենթադրել, որ Հովհաննես Մանկասարենցն է:

19. 1456 թ. Մեծոփա վանքի հերպետ Վարդանի համար ընդօրինակում է մի Ավետարան, իսկ Մինասը ծաղկում է: Տեղն անհայտ է: Բայց Արճեշում պետք է գրված լինի, իսկ Մեծոփա վանքում ծաղկված: Ահա թե ինչու 23բ էջում գրիչը ծանոթագրում է. «Տէր Վարդան սուրբ հայր, անհնար է ի կապած գիրք համաբարբառ գրել, բայց աէր սրբութեան քո եւ

[98] Հիշատակարաններ, ԺԵ, Բ, էջ 124:
[99] Մատենադարան, ձեռ. 6570, էջ 224բ:
[100] Ղ. Փիրղալեմեան, Նոտարք, էջ 182:
[101] Անդ, էջ 180–181:

գրել զայս, զի իմ մահու աւուրն կանգնիս»[102]։ Այս նշանակում է, որ Մանգասարենցը Արճեշում գրել է ձեռագիրը և պրակներով ուղարկել Մեծոփա վանք՝ նկարազարդելու։ Մինաս ծաղկողը նկարազարդել է և խորանները նկարել, որից հետո Վարդան Հերպետը կազմել է տվել և ուղարկել Արճեշ՝ խորաններում համաբարբառը գրելու համար, որի պատճառով նկատողություն է ստանում գրչից։

20. 1456 թ. գրում է Ճաշոցի մի մասը՝ Ազարիա եպիսկոպոսի համար[103]։

21. 1457 թ. Արճեշում Մխիթարի համար օրինակում է մի Ճաշոց։ Հիշատակարանում գրում է, որ Ճաշոցը «մեծաջան և ծանր աշխատութեամբ հաւաքեալ եղև ի սրբոց վարդապետացն, զոր և Տիրացու քահանայն Մշոյ ի մի գիրս ժողովեաց»[104]։

22. Նույն թվականին Հովհաննես Մանկասարենցը, Կարապետ գրչի հետ միասին, օրինակում է մի Հայսմավուրք։ Հիշում է «և սպասաւորիս Շուքրան-խաթունի և ամենայն աշխատողացս»[105]։

23. Ղ. Ալիշանը «Հայկարան»ում բերում է 1461 թվականին Ս. Բարդուղիմեոսի Հայրապետ եպիսկոպոսի համար «յերկիրն Քաջբերունի ի յԱրճեշ քաղաքի ընդ հովանեաւ սուրբ տաճարին Գէորգեայ զաւրավարին...»[106] օրինակված մի Ճաշոցի հիշատակարան, ուր Հովհաննես գրիչը հիշում է Վարդան գրակալին։ Վերջինս Մանկասարենցից 1450 թ. մի Ավետարան ստացավ Արճեշում։ Ուրեմն, հիշյալ Հովհաննեսը կարող է նույնպես Մանկասարենցը լինել։

24. Մատենադարանի 4778 Ավետարանը գրված է 1462 թվականին Արճեշում Մանկասարի և Փաշայի որդի Հովհաննեսի ձեռքով։ Նկարազարդել է Կարապետը։

25. Հաջորդ տարում Մանկասարենցը օրինակում է մի այլ Ավետարան[107]։

102 Մատենադարան, ձեռ. 5629, էջ 23բ։

103 Հ. Քյուրտեան, Յովհաննէս գրիչ..., էջ 228։ Ձեռագիրը գտնվում է Հ. Քյուրդյանի մոտ։

104 Մատենադարան, ձեռ. 4746, էջ 446ա։

105 Մատենադարան, ձեռ. 4755, էջ 325բ։

106 Հիշատակարաններ, ԺԵ, Բ, էջ 160։

107 Անդ, էջ 196–197։

26. 1465 թ. դարձյալ մի Ավետարան է ընդօրինակում Խալիլ խաթունի համար[108]։

27. 1469 թ. Մանկասարենցը ավարտում է մի Շարակնոց, որն այժմ պահվում է Վենետիկում[109]։

28. Այդ նույն թվականին ավարտում է մի Ավետարան ևս, Ամիր Սարգսի համար. ձեռագիրն այժմ Երուսաղեմում է[110]։

29. 1470 թ. Արդելանի բաբունապետ Մկրտիչ Աթաբեկենցի համար օրինակում է մի Շարակնոց[111]։

30. 1471 թ. Հովհաննես Մանկասարենցը ավարտում է մի Ավետարան. Ծերունի և Ուլուն-Մելիքի համար, որոնք այն նվիրում են Խժիշկ գյուղի Ս. Ստեփանոս տաճարին, ուր այն մնում է շուրջ 450 տարի[112]։

31. Հաջորդ 1472 թ. նրանից ունենք մի Մաշտոց և Գանձարան[113]։

32. 1474 թվականից՝ մի Ավետարան[114]։

33. 1479 թ. Մանկասարենցը ընդօրինակում է մի Ավետարան, ուր հիշում է իր նոր կնոջը՝ Զուլալին[115]։

34. Մեզ հայտնի նախավերջին ձեռագիրն է այն Գանձարանը, որ գրել է Մանկասարենցը վրաստանցի Ալեքսիանոսի համար, 1485 թվականին[116]։

35. Իսկ վերջին ձեռագիրը Հովհաննու Ավետարանն է, որ գրել է 1499 թվականին և այլևս գրիչ չի վերցրել ձեռքը։ Վերջում թողել է դողդողացող ձեռքով մի հիշատակագրություն. «Զմեղաւոր ծեր գրիչս Յով[հաննէս] յիշեցէք առ Աստուած, և Աստուած զձեզ յիշէ»[117]։

108 «Էջմիածին», 1950, 9–10, էջ 84–85։

109 Հիշատակարաններ, ԺԵ, Բ, էջ 281։

110 Երուսաղեմ, ձեռ. 3427։

111 Մատենադարան, ձեռ. 9239։

112 Մատենադարան, ձեռ. 6333, Օ. Բարաղամյան, Ցուցակ, 271։ Հիշատակարանը 1907 թ. այնտեղ ընդօրինակում է Օ. Բարաղամյանը։

113 Մատենադարան, ձեռ. 4392։

114 Մատենադարան, ձեռ. 7991։

115 Ս. Տեր Ավետիսյան, Ցուցակ Ջուղայի, 413։

116 Վենետիկ, ձեռ. 1210։ Հիշատակարաններ, ԺԵ, Գ, էջ 39 (գրված է 1482 թվաշարքում)։

117 Մատենադարան, ձեռ. 5256, էջ 290բ։

Հովհաննես Մանկասարենցը այն սակավաթիվ բախտավոր գրիչներից է, որոնցից բավականին ժառանգություն է մեզ հասել, այնինչ շատ գրիչներից ոչինչ կամ շատ աննշան բան է մնացել:

ՀԵՐԱՊԵՏ ԳՐԻՉ. *Մեծոփեցու աշակերտներից է Հերապետ գրիչը: 1438 թ. Արճեշում Հերապետը, «որ մականուն խալիֆա», Մկրտիչ կրոնավորի համար ընդօրինակում է մի Ճաշոց, հիշում է «զուսուցիչն մեր քաջ քարտուղարն Թումա զՀեզահոգի րաբունապետն և զԿարապետ աշխարհի երեքն, որ մեզ վարպետութիւն արար և ուսոյց զմեզ»*[118]*: Այս մեզ ծանոթ Կարապետն է: 1435 թ. Մեծոփա վանքում օրինակած մի ձեռագրի վերջում գրում է. «զԽալիֆես յիշեցէք, որ էի բէջայ»*[119]*: 1441 թ. Ներսես վարդապետի հետ միասին խնդրում է, որ Թովմա Մեծոփեցի գրիչը Փաշամիր համար մի Ավետարան ընդօրինակի*[120]*, իսկ ինքը ստանում է մի Հայսմավուրք*[121]*:*

1446 թ. ինքը մի Հայսմավուրք է ընդօրինակում Արճեշում[122]*: 1454 թ. Թշնամուց հալածված Հովհաննես Մանկասարենցի և Մինաս ծաղկողի հետ Լիմում էր ապաստանում նաև Հայրապետ գրիչը, ուր և ավարտում է մի Ավետարան*[123]*: Գրչից մեզ հայտնի վերջին ձեռագիրը մի Հայսմավուրք է, գրված 1461 թ. «ի քաղաքիս յԱրճեշ, ընդ հովանեաւ ամէնաւրհնեալ սուրբ Աստուածածնի տաճարիս»: Ձեռագիրը գտնվել է Անկարայի Կարմիր վանքում, որտեղ նրա կարևոր հիշատակարանից օգտվել է Առաքել Դավրիժեցին՝ իր Պատմության համար, իսկ 20-րդ դարի սկզբին նույն տեղում նկարագրել է Բ. Կյուլեսերյանը*[124]*:*

ՆԵՐՍԵՍ ԳՐԻՉ. *Ստեփանոսի և Շամշայի որդի Ներսեսը հիշվում է դեռևս 1435 թ. որպես մեկը Թովմա Մեծոփեցու «գրոց աշակերտեալ» որդիներից, որ «կայ յաշխատութիւն աստուածաշունչ տառիցս»: 1440 թ. Ներսես գրիչը «Հրամանաւ*

---

118 *Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 490:*

119 *Մատենադարան, ձեռ. 1380, էջ 315ա:*

120 *Մատենադարան, ձեռ. 3892, էջ 315բ:*

121 *Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 515, ծթ. 3:*

122 *Անդ, էջ 600:*

123 *Մատենադարան, ձեռ. 6509:*

124 Բ. Կիւլեսէրեան, *Ցուցակ Անկիւրիոյ, էջ 797:*

և արգհամբք երջանիկ և հոգիընկալ րաբունապետիս մերոյ... Թումայի» Մեծոփա վանքում ընդօրինակում է Մեկնութիւն սաղմանաց գրոց Դաւթի Առաքելի Սիւնեցւոյ գործը[125]*:*

Ներսեսը այդ ժամանակ արդեն վարդապետ էր: 1441 թ. Փաշա մայրը իր պատվիրած Ավետարանը տալիս է «քաջ րաբունոյն Ներսէս վարդապետին»[126]*: 1443 թ. Մեծոփա վանքում «առ ոտս... Թովմայ վարդապետի» Ներսես վարդապետը ընդօրինակում է Ժամագիրք և Խորհրդատետր: Թովմա Մեծոփեցին հիշատակարանի վերջում ավելացնում է. «Արդ ես մեղապարտս ի ծնունդ եկեղեցոյ Թումայ պիտականուն վարդապետ, ի Քաջբերունեաց գաւառէ, ի սուրբ ուխտէն Մեծոփայ, ի կարգէ աշակերտաց մեծ վարդապետացն Սարգսի և Վարդանայ և Գրիգորի Տաթևացւոյն, սրբագրեցի զգիրս հրեշտակաց աղօթից ինն ժամու, որ կատարի ի դէմ երրորդութեան...»*[127]*: Ներսեսը որպես աստվածաբան վարդապետ հիշվում է մինչև 1469 թ.*[128]*: Նա հավանաբար Արգիլանի տեր Հուսկան որդու առաջնորդն էր, որ 1450 թ. նորոգում է եկեղեցին*[129]*:*

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻՉ. *Թովմա Մեծոփեցու աշակերտներից է նաև Հակոբի և Սալչուկ-խաթունի որդի Հովհաննեսը, Արծկեի նշանավոր գրիչը: Նա Բզնունյաց նահանգի առաջնորդ Ստեփանոսի եղբոր որդին էր, որին հիշում է մեզ հայտնի իր առաջին ձեռագիր Հայսմավուրքի հիշատակարանում, գրված 1442 թ. Արծկեի Ս. Աստուածածնի եկեղեցում*[130]*: Հաջորդ տարում գրում է մի Ճաշոց, ուր հիշում է ծնողներին և Գրիգոր աբեղային և Ներսես դպիրին*[131]*: Վերջինս մահանում է քաղամյա հասակում: Այդ թվականին նրա հիշատակին գրած Ավետարանը պահվում է Մատենադարանում*[132]*: Այստեղ է նաև 1452 թ. Մզուք գյուղում նրա ընդօրինակած Ավետարանը*[133]*:*

---

125 *Մատենադարան, ձեռ. 1849, էջ 123ա:*

126 *Մատենադարան, ձեռ. 3892, էջ 316ա:*

127 *Մատենադարան, ձեռ. 247, էջ 160բ:*

128 *Հիշատակարաններ, ԺԵ, Գ, էջ 451:*

129 *Անդ, էջ 416:*

130 *Անդ, Ա, էջ 538:*

131 *Անդ, էջ 558:*

132 *Մատենադարան, ձեռ. 5196:*

133 *Մատենադարան, ձեռ. 303:*

1459 թ. Արծկեում արտագրված Ավետարանում հիշում է «և զտիեզերալոյս բարունապետն զԹումայ Մեծոփայ վանաց... որ բազում աշխատանօք ուսուցեալ է մեզ զարուեստ գրչութեան...»[134]: Հովհաննես գրչին, Թովմա Մեծոփեցի գրչի նման, հաճախ տեսնում ենք Արծկեից դուրս, այս ու այն վայրում ձեռագիր ընդօրինակելիս: Հովհաննեսը դրա համար իրեն կոչում է «շատաշրջիկ»: Այս նույն թվականին Բաղեշում նա ավարտում է մի Հայսմավուրք՝ Խոջա Աղասի համար: Հիշատակարանում հիշում է ուսուցչին, ապա Գրիգոր և Հովհաննես եղբայրներին, որոնք նույնպես մահացել են: Գրչի համար թուղթ են կոկել որդին՝ Հակոբ դպիրը և կինը՝ Մարթան: Նրա ընտանիքը փաստորեն գրչության մի շրջիկ կենտրոն է եղել[135]: Հովհաննեսը հիշատակարանի մի մասը գրել է չափածո: Այդպես է նաև 1460 թ. օրինակված Ճաշոցի հիշատակարանը: Ձեռագիրը շքեղորեն ծաղկել է Մինաս ծաղկողը, որի մասին մեծ գովեստով է խոսում գրիչը[136]: Վենետիկում է գտնվում Հովհաննեսի 1463 թ. ավարտած Ավետարանը[137], իսկ 1464 թ. երկու Ավետարաններից մեկը՝ Եղվարդ գյուղում[138]: 1463 թ. Արծկեում Խաչատուր գրչի հետ ավարտում է մի Հայսմավուրք, ԺԳ–ԼԷ պրակները ինքն է գրել: Այստեղ է դրված նաև Գրիգոր Խլաթեցու վարքը, որը Հայսմավուրքի մեջ է մուծել Հովհաննեսը: Չնայած Խլաթեցին նահատակվել է մայիսին, նա դնում է. «զհետ անուանակցին իւրոյ Գրիգորի Հռոմայ հայրապետին»[139]:

Հաջորդ տարում Բզնունյաց Արծկե քաղաքի գրիչ Հովհաննեսին տեսնում ենք Սևանա լճի ափին: «... Որ և եկեալ յԱրծկէ քաղաքէ, տարադէպ հանդիպեցաք ի գաւառս Գեղարքունի, ի գիւղս, որ կոչի Կաթ, հանդիպեցաք բարեպաշտ առնս տէր Մանուէլին և մնացաք զաւտարական կեանս մեր: Վասն յոյժ սիրոյ և փափագանաց սորա ձեռն արկեալ սկիզբն արարաք սուրբ գրոցս՝ ի մեծ աղուհացից պահոցն ի չորրորդ շաբաթին, և աւարտեցաք... վերացման սուրբ խաչի տաւնիս...»: Հսկայական Ճաշոցը (589 թերթ) գրիչն ավարտել է ապրիլ–սեպտեմբեր

[134] Հիշատակարաններ, ԺԵ, Բ, էջ 124:

[135] Մատենադարան, ձեռ. 4907, էջ 585բ:

[136] Մատենադարան, ձեռ. 982, էջ 532բ:

[137] Բ. Սարգիսեան, Ցուցակ Վեննտիկի, Ա, էջ 620–621:

[138] Սմբատ Հարությունյանի մոտ (Հիշատակարաններ, ԺԵ, Բ, էջ 217):

[139] Մատենադարան, ձեռ. 1883, էջ 380բ:

ամիսներին: Ձեռագիրը նշանավոր է նրանով նաև, որ արտագրված է «ի Սանահնոյ աւրինակէն»[140]: 1471 թ. Արծկեում մի Ավետարան[141] և մի Մաշտոց[142] է գրել Հովհաննեսը: Որդին՝ Հակոբ սարկավագը, գրչության արվեստը հորից սովորելով, նրա ձեռքի տակ թուղթ կոկողից հասնում է գրչի աստիճանի: Հակոբը գրելով՝ հորը օգնում էր դեռևս 1464 թվականին[143], իսկ հետագայում դառնում է նշանավոր գրիչ:

Վերջին անգամ Հովհաննեսին հանդիպում ենք 1482 թ. Ավետարան ընդօրինակելիս, որն այժմ Ամերիկայում է[144], իսկ նախորդ՝ 1481 թվականի ընդօրինակածը՝ Սանկտ Պետերբուրգում[145]:

Այնուհետև հոր գործին իր կյանքն է նվիրում որդին՝ Հակոբը:

ՍՏԵՓԱՆՈՍ. Մեծոփեցու աշակերտներից է Ստեփանոս վարդապետը, որին 1462 թ. հանդիպում ենք Կտուց անապատում: Խաչատուր գրիչը նրան հիշում է որպես «հոգևոր հայր մեր և խրատիչ ամենայն բարութեանց, որ և զաւգուտն քաղեաց ի գիշերի և ի ցերեկի մեզ, և է փիլիսոփայ երիցական արհեստի, և ծաղիկ ժամատեղեաց և է գիտակ ամենայն Հին և Նոր կտակարանաց աստուածային գրոց գիտութեան, որ յար և նման է վարժապետին իւրոյ՝ Թումայ վարդապետին»[146]: Մեծոփեցու աշակերտներից են Ղազարը, Հակոբը, Մեսրոպը և Նիկողայոսը: Վերջինս հավանաբար Կարապետի եղբայր Վարդան Վանեցու որդին է, որը սկզբում հորն օգնում է թուղթ կոկելով և ապա ինքնուրույն գրիչ է դառնում Վանում[147]:

Թովմա Մեծոփեցու մյուս գրիչ աշակերտների վերաբերյալ տեղեկություն չունենք: 1435 թ. նա հիշում է իր հոգևոր որդիներին, որոնց մեջ են նաև վերոհիշյալ գրիչներից մի քանիսը: Այսպես, թվարկում է. «Զհոգևոր որդիքս զՍտեփանոս վարդապետ, զԱտոմ վարդապետ, զԶաքարէ վարդապետ և

[140] Մատենադարան, ձեռ. 3758, էջ 1174:

[141] Մատենադարան, ձեռ. 7782, էջ 293բ:

[142] Հիշատակարաններ, ԺԵ, Բ, էջ 324:

[143] Անդ, էջ 217:

[144] Անդ, Գ, էջ 28:

[145] Անդ, էջ 38:

[146] Մատենադարան, ձեռ. 4883, էջ 614ա:

[147] Հիշատակարաններ, ԺԵ, Բ, էջ 26, 28 և այլն:

զգրոց աշակերտեալ որդիքս զՆերսէս և զՍտեփանոս և զՀերապետ և զՅոհաննէս, զՂազար կրօնաւորն և զԱբրահամ փիլիսոփայ»[148]: Սրանցից դուրս հիշվում են նաև Ստեփանոս (Կարապետի որդի) և Հովհաննես (Մանկասարենց) սարկավագները. «Եւ զփոքր երիցանիս զՅակոբ, զՍտեփանոս, զՀերապետ»... «զՆերսէս, զՍտեփաննոս, որ կան յաշխատութիւն աստուածաշունչ տառիցս... այլ և զպատուական որդիքն մեր՝ զՄկրտիչ վարդապետն Հիւսան և Ղազար և զՄեսրոպ և զՅովհաննէս Բաղիշեցի, որ տարաժամ մահուամբ փոխեցան և ելին ի դառն կենացս»[149]: Սրանց է ակնարկում Կիրակոսը, երբ գրում է. «Եւ ոմանք որ ոչ էին առեալ իշխանութիւն, առ Աստուած փոխեցան»[150]: Սրանցից բացի, Թովմա Մեծոփեցին հիշում է նաև բազմաթիվ միաբանների, «որ կան ի ծառայութեան մեզ և սուրբ ուխտիս»[151]:

1445 թ. Հովհաննես Մանկասարենցը, հիշելով իր վարդապետ Թովմային, Մկրտիչ վարդապետին և հանգուցյալ միաբաններին, գրում է. «... և զայլ ամենայն միաբանք սուրբ ուխտիս»: Ձեռագրի հիշատակարանը մեզ է հասել Ղ. Փիրղալեմյանի ընդօրինակությամբ, որն այն շարունակելու փոխարեն գրել է. «քսան և հինգ վարդապետաց անուանք եւ կային, բայց մի առ մի գրելն զանց արարի»[152]: Մեզ թվում է, Փիրղալեմյանը սխալմամբ է բոլոր միաբաններին վարդապետ համարում: Մեծոփա վանքում այդ ժամանակ քսանհինգ վարդապետ միասին չեն եղել:

Մի տասնամյակ անց նույն Հովհաննես Մանկասարենցը Ավետարան է ընդօրինակում Մեծոփա վանքի հերպետ Վարդանի համար և հիշում «զԻւր հրեշտակակրօն միաբանքն՝ զսուրբ կրօնաւորքն՝ զտէր Մկրտիչն, զտէր Գալուստն, զտէր Ղազարն, զտէր Առաքելն, զտէր Ծերունն, զտէր Մեսրոպն, զտէր Ստեփանոսն, զտէր Յոհաննէս եկեղեցպանն, զմիւս տէր Յոհաննէս, զերեք տէր Կարապետն, զերկու տէր Հերապետն, զտէր Մովսէսն, զտէր Միքայէլն, զԲ (2) տէր Յակոբն, զտէր Յոհաննէս, զԳրիգոր միակեցն, զտնտես Ստեփանոսն, զհայր

148 Անդ, էջ 451:

149 Անդ, Ա, էջ 454:

150 Գ. Յովսէփեան, Թովմա Մեծոփեցու կեանքը, էջ 8:

151 Անդ.:

152 Ղ. Փիրղալեմեան, Նօտարք հայոց, էջ 147:

Մարգարէն, զմաճկալ Յուսէփն»[153]: Վարդանի հետ միասին՝ քսանհինգ միաբան: Այս 1456 թվականին էր: Տաս տարի առաջ սրանցից շատերը կային և, ինչպես տեսնում ենք, վարդապետ չեն, ուրեմն այն ժամանակ էլ վարդապետ չէին:

Չնայած Մեծոփա վանից միաբանության մեծությանը, Թովմա Մեծոփեցու մահից հետո Մեծոփա վանքի դպրոցը շատ է անշքանում: ԺԵ դարի առաջին կեսի մշակութային-եկեղեցական բուռն գործունեության կենտրոնը դարի երկրորդ կեսից, համարյա թաղվում է անհայտության մեջ և միայն հիշատակվում եպիսկոպոսներին հիշելու առիթով, որոնք միաժամանակ Քաջբերունիքի եպիսկոպոսներն էին: Թովմա Մեծոփեցուց կարճ ժամանակ անց մահանում է Մկրտիչ Նահապետենցը: Րաբունապետ է դառնում Թովմա Մեծոփեցու դասընկեր Սարգիս վարդապետը: 1450 թ. Մակար Կիլիկեցին մի ձեռագիր է գրում «ի վայելումն մեծի րաբունապետին տեառն Սարգսի վարդապետին Մեծոփեցւոյ՝ աշակերտի Գրիգորի Տաթևացւոյն...»[154]: Սարգիս վարդապետը մեզ ծանոթ է: Նա Մեծոփեցի է կոչվում, որովհետև արդեն Մեծոփա վանքում էր: Մեծոփա վանքի արքեպիսկոպոս Ներսեսին փոխարինում է Ստեփանոս վարդապետը, որն հիշվում է 1462–1466 թթ.: 1462 թ. Միքայելը Քաջբերունյաց Ունձք գյուղում ձեռագիր է ընդօրինակում «Ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս Մեծոփայ Ստեփանոս վարդապետի»[155], որը միաժամանակ «քաջ րաբունապետ»է կոչվում,[156] «իմաստուն և բանիբուն վարդապետ»[157]: Սրանք վկայություններ են այն բանի, որ այնտեղ դեռևս բոլորովին չէր մեռել ուսումնական կյանքը: Ստեփանոսից հետո եպիսկոպոս է դառնում Հովհաննեսը՝ 1466–1477 թթ.: 1477 թվականին տեր Կարապետը եպիսկոպոս է ձեռնադրվում, որին հետագայում տեսնում ենք Քաջբերունիքի և Մեծոփա վանքի առաջնորդ[158]: Հիշատակարանները հաստատում են, որ Մեծոփա վանքը, որպես Քաջբերունիքի եպիսկոպոսանիստ, մեծ միաբանություն ուներ, բայց դպրոցը աննշան էր: Ստեփանոս Ասպիսընկցի գրիչը 1488 թ. հիշում է «զՄեծոփայ սուրբ ուխտի մանկունսն...

153 Մատենադարան, ձեռ. 5629, էջ 336ա:

154 Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 650:

155 Անդ, Բ, էջ 178:

156 Անդ, էջ 218:

157 Անդ, էջ 236:

158 Անդ, էջ 118:

աշխարհակալս տեր-Կարապետ՝ տեսուչ գաւառիս Արճիշոյ, զՎարդան հերպետն, զՄկրտիչն, զԲարսեղն, զՅոհաննէսն և զՅովանէսն գրոց աշակերտն, որ դաստա մ՝ (մի) թուխտ շնորհեաց, որ գրեցաւ Տումարի մեկնիչս... այլև Կարապետն փոքրն՝ Գրիգոր երէցու որդին, որ զօրինակն զհարցմունքն նայ եառուր ու գրեցաւ... այլ և Շէկ Կարապետն, զԽոջկեցի Կարապետն մահդասին, զՅակոբն և զմիւս Յակոբն, զՆերսէս Հերպետն, զՀայրապետն, զԱւետիսն, զերէց Մխիթարն... այլ և զփոքր արեղայքն՝ զՎարդանն, զԽաչատուրն, զՍտեփաննոսն, զԳրիգորն, զՅովանէսն Բաղիշեցին և Տայոնց Ստեփանոսն, և Մկրտիչն մեր Ասպիսընկցի...»[159]:

***

Մեծոփա վանքը Քաջբերունիքի առավել խոշոր մշակութային կենտրոնն էր: Իր հիմնադրման ժամանակներից վանքի գրչության կենտրոնը կապված էր Հայաստանի մշակութային մյուս կենտրոնների և ամենից առաջ Արճեշ քաղաքի հետ, որպես վերջինիս եպիսկոպոսանիստ և հոգևոր կենտրոն: Մեծոփա վանքի գրչության դպրոցի րաբունապետ Մխիթար Սասնեցին համագործակցում էր Գլաձորի համալսարանի րաբունապետ Եսայի Նչեցու՝ միարարների դեմ մղվող պայքարում: Այս արտահայտվում էր ոչ միայն տեղում գրական և քարոզչական պայքար մղելով, այլ նաև կենդանի կապի միջոցով: Սասնեցուն՝ հաճախ ենք տեսնում Գլաձորում: Համալսարանում, Հովհաննես Որոտնեցու մոտ իրենց կրթությունն ստացան Հովհաննես և Ստեփանոս Մեծոփեցիները: Վերջինիս երեք տարի սովորեցնելուց հետո, ժամանակից շուտ Որոտնեցին վարդապետական գավազան և իշխանություն է տալիս և ուղարկում Քաջբերունիք, որպեսզի գավառը առանց վարդապետի չմնա: Այդպես էր անում նաև Ներսես Մշեցին: Գավառներում վարդապետներ էին կարգում, որպեսզի կրթեն և պաշտպանեն ժողովրդին:

Մեծոփա դպրոցի կապերը Հայաստանի մյուս դպրոցների հետ ավելի ուժեղացան, երբ այստեղ հիմնվեց բարձր տիպի դպրոց վարդապետարան: Այն հանգամանքը, որ Մեծոփա բարձր դպրոցը հիմնադրեց Գրիգոր Տաթևացին, արդեն խոսում էր նրա համահայկական ուսումնական կենտրոն լինելու մասին: Փաստորեն Մեծոփա վանք տեղափոխվեց Տաթևի համալսարանը՝ իր աշակերտներով և րաբունապետերով: Համալսարանի

159 *Մատենադարան, ձեռ. 4454, էջ 360ա:*

աշակերտների մի մասը մնացել էր Տաթևում, այստեղ՝ Մեծոփա դպրոցում էին հավաքվել Որոտնեցու, Տաթևացու, Սարգիս և Վարդան վարդապետների աշակերտները, շուրջ ութսուն հոգի: Մեծոփա վանքում սովորում էին ավելի քան 160 աշակերտ, միջնադարի համար բավականին պատկառելի թիվ, եկած Հայաստանի տարբեր գավառներից ու մասերից: Այսքան աշակերտներով, որոնց մեջ քիչ չէին նաև վարդապետները, Մեծոփա վանքում Գրիգոր Տաթևացին շարունակեց Տաթևի համալսարանի դասախոսությունները՝ մեկնելով այնպիսի երկեր, որոնք որոշելու էին նորաբաց դպրոցի մասնագիտական ուղղությունը: Մինչ այդ՝ Տաթև սովորելու էին գնացել Մեծոփա դպրոցից Խառաբաստա դպրոց մեկնած աշակերտները: Վերադառնալիս նրանք իրենց հետ բերեցին Տաթևյան համալսարանի գրիչների ընդօրինակությունները: Որոնք և դրանցից արված օրինակները հիմք դարձան Մեծոփա դպրոցի հետագա արտագրություններին: Մեծոփեցիները Տաթևացուց ստացան վարդապետական աստիճան և դաս ասելու իրավունք: Տաթևի և Մեծոփա վանքերի դպրոցների միջև կապը շարունակվեց նաև հետագայում, որն արտահայտվեց ոչ միայն գիտական-ուսումնական-գրչական համագործակցության մեջ, այլև համազգային-համաեկեղեցական խնդիրներում: Պատահական չէ, որ կաթողիկոսական աթոռի Էջմիածին տեղափոխելու համազգային գործը ղեկավարում էին Մեծոփա և Տաթևի՝ ժամանակի երկու խոշորագույն դպրոցների րաբունապետերը՝ Թովմա Մեծոփեցի և Հովհաննես Հերմոնեցի վարդապետները: Մեծոփա դպրոցը կապված էր ժամանակի մյուս նշանավոր դպրոցների հետ, որպիսիք էին Երզնկայի և Սաղմոսավանքի դպրոցները: Երկուսի րաբունապետերն էլ՝ Գևորգ Երզնկացին և Հակոբ Սաղմոսավանեցին Հովհ. Որոտնեցու աշակերտներն էին, Գրիգոր Տաթևացու դասընկերները: Առաջին դպրոցից, անպայման րաբունապետ Գևորգ Երզնկացու համաձայնությամբ, նրա աշակերտ Հակոբ Ղրիմեցին հրավիրվեց Մեծոփա վանք դասախոսություններ կարդալու: Երզնկացու դպրոցի սաները երբեմն Մեծոփա վանքից գաղափար օրինակներ էին տանում ընդօրինակելու: Նույնպիսի կապ կար Մեծոփավանքի և Սաղմոսավանքի գրիչների միջև:

Կայուն և տևական էին կապերը Տոսպ բոլորի, մասնավորապես Քաջբերունիքի կենտրոնների հետ: Խառաբաստա վանքի Սարգիս վարդապետի դպրոցում իրենց բարձրագույն վարդապետական կրթությունն էին ստանում Մեծոփա դպրոցի աշակերտները: Այս կապը շարունակվեց նաև հետագայում, միայն այս անգամ Խառաբաստա դպրոցի աշակերտները

Մեծոփա դպրոցում էին բարձրագույն կրթություն ստանում: Այս կապին նպաստեց Կարապետ և Թովմա Մեծոփեցի րաբունապետերի մտերմությունը: 1415 թ. Հակոբ Ղրիմեցին Կարապետի օրինակից համառոտեց Տաթևացու Քարոզգիրքը: 1420 թ. Կարապետ վարդապետի՝ Երուսաղեմից բերված Ավետարանը Մեծոփա վանքում կազմեց Հայրապետը: 1436–37 թթ. այդ դպրոցները, թշնամուց հալածված, երկու տարի ապաստանեցին Բաղեշի վանքում և դասերը միացյալ շարունակեցին: Նույնպիսի համագործակցությամբ էր կապված Թովմա Մեծոփեցին Արգելանի Տեր Հուսկան որդու դպրոցի հետ, որի առաջնորդն էր իր դասընկեր Մկրտիչ Օրբելեանցը: Երբեմն մի դպրոցում սկսում և մյուսում ավարտում էին որևէ ձեռագիր: Լիմում հաճախ էին ապաստանում և այնտեղ շարունակում իրենց ընդօրինակությունները Մեծոփի աշակերտները: 1430 թ. այնտեղ է ապաստանում ինքը Թովմա րաբունապետը: Այնտեղ ձեռագրեր են ընդօրինակել կամ շարունակել Հովհաննեսը, Վարդանը, Հովհաննես Մանկասարենցը, Հայրապետը, Ղազարը, Մինաս ծաղկողը և ուրիշներ[160]:

Մեծոփա դպրոցը համագործակցում էր Բաղեշի Գոմաց վանքի և Մշո Առաքելոց վանքի դպրոցների հետ: Վերջինում երկու տարի ապաստանեց և այնտեղ դասախոսություններ կարդաց Մեծոփեցին[161]: Սերտ էր նաև Մեծոփա և Ցիպնավանքի դպրոցների համագործակցությունը: Գրիգոր Խլաթեցին, Մեծոփա դպրոցի րաբունապետությունը Թովմա Մեծոփեցուն հանձնելուց հետո, առանձնանում է Ցիպնավանքում, բայց երբեք չի կտրվում Մեծոփա դպրոցից: Թովմա Մեծոփեցուն հանդիպում ենք Խլաթի Աղեթա վանքում, ուր այն ժամանակ գտնվում էր Գրիգոր Խլաթեցին: 1415 թ. Խլաթեցին Երուսաղեմում արտագրում է հազվադեպ հանդիպող Հաճախապատում ճառերը[162] և նվիրում Մեծոփա դպրոցին: Մեծոփա դպրոցի կապը մշտական էր նաև Ասպիսնակի, Ուռընկարի, Բերկրիի, Արծկեի, Կոռւցի, Աղթամարի, Մոկաց Սարի վանքի և այլ դպրոցների հետ:

Մեծոփա դպրոցը կապված էր նաև Երուսաղեմի հետ: Մկրտիչ Մեծոփեցուն երկու անգամ (1415 և 1425 թթ.)

160 Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 424

161 Անդ, էջ 497:

162 «Զայս ճառքս չեմ տեսել, և ոչ ի մեր երկիրն կային սոքա, Յաճախապատումս և կամ Ներբողեանքս ասացած ի Վարդանայ րաբունապետ վարդապետէ» (Մատենադարան, ձեռ. 8775, էջ 315ա):

հանդիպում ենք Երուսաղեմից գաղափար օրինակներ բերելիս: 1436 թ. Մկրտիչ Նաղաշը, «Հրամանաւ կաթողիկոսին և րաբունապետին Թումայի» պատասխան է գրում «լատինացոց թղթոյն»՝ Ֆլորենցիայի ժողովի առթիվ[163]: Մեծոփա դպրոցը Թովմա Մեծոփեցու րաբունապետության ժամանակ ավելի ու ավելի էր սերտացնում իր կապերը հայ դպրոցների հետ և ամրապնդում իր իշխանությունը Տոսպբոլորում և իր իրավունքները՝ նրանից դուրս: Կյանքի վերջին տարիներին Թովման Էջմիածնում շինարարական գործեր է կատարում և քարոզչությամբ զբաղվում Արագածոտն ու Մասյացոտն գավառներում, որպես Հայոց րաբունապետ միջամտում էր ժողովրդին հուզող հարցերին:

Հետագայում՝ 16–17-րդ դարերում շարունակվում են Մեծոփա վանքի և Ամրդոլու դպրոցի աշակերտների ու վարդապետների կապերը: Ամրդոլու համալսարանի համար Մեծոփա վանքի գրատունը ընտիր և լավ ձեռագրերի գանձարան էր, որոնցից աշակերտները կատարում էին իրենց անհրաժեշտ արտագրությունները:

16-րդ դարում գրող աշակերտ Անանիան ընդօրինակում է «Պատմութիւն Թագաւորաց»ը[164]: Այդ և հետագա շրջանում հանդիպում ենք աննշան ընդօրինակությունների: Թովմա Մեծոփեցու դպրոցը այլևս չի վերականգնվում:

Այդ նույն դարում ավերի է ենթարկվում Արճեշի գավառը: Մեծոփավանքի Հակոբ րաբունապետը երեսուն միաբանների հետ սպանվում է, տաճարը թալանվում է, ապա այրվում: Ականատեսը վկայում է.

> «...Զերկիրն Հայոց ազգին թաթարի ազգն ավերեցին,
> Վանայ մինչև յերզնկան շինութիւն բնաւ չթողին,
> Շատ վանք և եկեղեցիք ի հիմանց խախտեալ փլուցին:
> Բազում գիրք ու Աստուածաշունչք զայն ամենն առեալ
> գերեցին,
> Շատ բերդ ու քաղաք առին, շատ երկիր հրով այրեցին:
> Ողորմ ողբալի բաներ, որ եղև Արճեշ գաւառին.
> Յակոբ քաջ րաբունապետն երեսուն հոգով սպանեցին...
> Յորժամ նահատակեցին, և զտաճարն հրով այրեցին...»[165]:

163 Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 464:

164 Նույն տեղում՝ էջ 152բ:

165 Յ. Հ. Ոսկեան, Վասպուրականի-Վանի վանքերը, էջ 436–437:

Տասնվեցերորդ դարավերջին և հաջորդ դարասկզբին Մեծոփավանքում էր Սիմեոն Ապարանեցի նշանավոր վարդապետը: Դառնությամբ ու ափսոսանքով է նկարագրում Մեծոփավանքի վիճակը.

«Տեսք սուրբ ուխտին գիս խոցոտէ,
Եկեղեցեացս, որ խավար է,
Զամենեսան ի յողբ շարժէ
Լաց և ի սուգ նըստուցանէ»:

«Ով հրաշալի սուրբն Մեծոփ»-ին է դիմում, հարցնելով.
«Ո՞ւր են ընտիրքն քո ծննդոց,
Սրբասնունդ դասքն օծելոց
Ո՞ւր է բարբառն քո փողոց
Րաբունապետք, մեկնիչք գրոց,
Ո՞ւր դասատուն մեծ իմաստնոց,
Որք հնչէին նմա ամպոց:
...Ո՞ւր պաշտոնեայք և հոյլք դըպրաց,
Երգ՝ ալելուք, բուրմունք խնկոց:
...Ո՞ւր վերծանողն հնոց, նորոց,
Հրմուտ Նըրբից և Արտաքնոց:
Ահա ոչ ոք է ի միջի,
Ոչ ի ծերոց և տղայոց:
...Ահա խաւարն է քեզ ծածկոց,
Մութն և նըսեմ արկեալ կըրկնոց,
Աչիցդ լցեալ որպէս ծովից,
Թացեալ մահճացն ընդ անկողնոց,
Իբրև գայրի կին տառապեալ,
Եւ կամ յարանց հեռացելոց
Եւ ոչ ոք է մխիթարող...»[166]:

Բանաստեղծը ողբում է հուշակավոր դպրատան անցած փառքը, որ այժմ վերածվել է ավերակի և չիջել անհույս:

Մեծոփա վանքի դպրոցը քայքայվելուց և գրչության կենտրոնը անշքանալուց հետո, գրատունը շարունակում է մնալ որպես միջնադարյան Հայաստանի նշանավոր մատենադարաններից մեկը: 1671 թ. հիշվում է Մեծոփա վանքի վանահայր Սարգիս րաբունապետը, որը «եղև պատճառ նորոգման (Աւետարանի) և Ծ (50) գիրք նորոգեաց և եդ ի սուրբ ուխտն

166 Անդ. էջ 437–440:

Մեծոփայ թվ. ՌՃԻ»: Վանքը և Մատենադարանը իրենց գոյությունը պահպանեցին մինչև մեծ եղեռնը: 1895 թ. թալանի է ենթարկվում վանքը: Հովհաննես Ոսպնակերին վերագրվող «Մեռելահարոյց» Ավետարանը տեղափոխվում է Լիմ: Շատ ձեռագրեր ավարի են ենթարկվում: «Մնացած 100 կտորե ավելի գրչագրերը 1915 թ. ապրիլին Բաջբերունյաց գավառի կոտորածին մնաց քյուրդերու ձեռքը և այդ ձևով ալ կորստյան մատնվեցավ», իսկ միաբանները, նույն ականատես Հ. վարդապետ Հյուսյանի վկայությամբ, «կոտորածներու ընթացքին չարաչար տանջանքներով սպանվեցան»[167]:

167 Հ. Հիւսեան, Մի քանի տեղեկութիւններ Վանի վանքերու մասին, Մատենադարանի Անտիպ ձեռագրացուցակներ, 92, էջ 18–19:

ԵՐՐՈՐԴ ԴՐՎԱԳ

ԳՐՉՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍՏԸ ՄԵԾՈՓԱ ՎԱՆՔԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԺԴ–ԺԵ ԴԴ.

Գրչության արվեստը միջնադարյան Հայաստանի մշակույթի կարևոր բնագավառներից մեկն էր: Իր մեջ միավորող մի շարք արհեստների, արվեստների, գիտելիքների պատճառով նրանով զբաղված էին բնակչության տարբեր խավերի, կրթական տարբեր մակարդակի բազմաթիվ մարդիկ: Գրչության արվեստն ուներ իր կայուն օրենքներն ու կանոնները, որոնք պահպանվում էին ամենուր և ամեն ժամանակ, որտեղ և երբ ձեռագիր էր գրվում: Այդ օրենքների և նրանց պահպանության շնորհիվ, չնայած տարածության և ժամանակի սահմանների ընդարձակությանը, քաղաքական և տնտեսական խիստ տարբեր, ավելի անբարենպաստ, քան տանելի պայմաններին, բազմապիսի և բազմաբնույթ բովանդակությամբ ընդօրինակությունները մեզ են հասել համարյա անաղարտ:

Ինչպես վերևում հիշեցինք, գրչության արվեստին ընդհանրապես կամ նրա այս կամ այն տարրին անդրադարձել են հնագրագետները և բանասերները, սակայն դեռևս գրչության արվեստը չի ուսումնասիրվել կամ չի որոշակիացվել գրչության որևէ կենտրոնի կամ դպրոցի օրինակի վրա, չի բացահայտվել գրչության արվեստի էությունը՝ ելնելով այդ կենտրոնից: Սույն աշխատանքը այդ ուղղությամբ առաջին փորձն է, ուր Մեծոփա վանքի կենտրոնի գրչության արվեստը քննարկում ենք այդ արվեստի ընդհանուր խորքի վրա: Որովհետև Մեծոփա վանքից մեզ հասած ձեռագրական նյութը գրչության արվեստի կարևոր տարրերն ու կողմերը համեմատաբար ամբողջական ներկայացնելու հնարավորություն չի տալիս (ոչ միայն ձեռագրական կորստի, այլև տվյալ արվեստի պատմական զարգացման առանձնահատկությունների պատճառով), մենք օգտագործել ենք նաև այլ աղբյուրներ:

Ձեռագիրը ոչ միայն բարդ և դժվարին, այլև համատեղ աշխատանքի արդյունք է: Այն մի կողմից կապված է գրի և դպրության, մյուս կողմից՝ տարբեր նյութերի ու առարկաների, արհեստների և արվեստների հետ, որոնք միավորվում են «գրչության արվեստ» հասկացության մեջ: «Գրչության ան-

վան տակ, — գրում է Ե. Դուրյանը,—կհասկացվեր. Ա. այն ձեռական արվեստը, որ գրելու նյութական աշխատանքին կվերաբերեր և ըստ ինքյան անցած է զանազան փոփոխություններ, Բ. գրելու այն եղանակավորումները, որոնք ուղղագրական կամ լեզվական տեսություններու համաձայն տեղի ունեցած են մեր մեջ»[1]:

Հայ գրչության արվեստի ստեղծողը Մեսրոպ Մաշտոցն է: Հայերեն գրերն ստեղծելուց, նշանակելուց, անվանելուց, դասավորելուց հետո, նա Սամոսատում հելլենական դպրության հմուտ գրիչ Հռոփանոսի հետ, «նշանագրերի բոլոր զանազանությունները՝ բարակն ու հաստը, կարճն ու երկայնը, առանձինն ու կրկնավորը ամբողջապես հորինելուց և վերջացնելուց հետո, ձեռնարկում է թարգմանության»[2]: Բանասերներից շատերը Հռոփանոսի այս աշխատանքում տեսնում են միայն տառերի հարդարումն ու ձևավորումը[3], մյուսները՝ տառերի հնչյունական առանձնահատկությունների զանազանությունների որոշումը[4]:

---

[1] Ե. Դուրեան, Պատմութիւն հայ մատենագրութեան, Երուսաղէմ, 1933, էջ 67: Սխալ է Լ. Խաչերյանը, երբ «Գրչության արվեստի լեզվա-քերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում» գիրքը սկսում է «Ինչպես հայտնի է «գրչության արվեստ» ասելով մեր մատենագիրները և բանասերները գերազանցապես ճասկացել են (ընդգծումը մերն է — Ա. Մ.), հայերեն տառաձևերի զանազան տեսակների տեսությունը...» նախադասությամբ (էջ 11.

[2] Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941, էջ 149–50:

[3] Մ. Աբեղյանը, ելնելով Կորյունի վկայությունից, որ Մեսրոպ Մաշտոցը ստեղծել է հայերեն գրերը, «ինքը գծագրել, անվանել և դասավորել է այդ նշանագրերը», Հռոփանոսի կատարած բոլոր զանազանությունները տեսնում է առանձին «տառերի հաստ ու բարակ, երկայն ու կարճ մասերի» հարդարման մեջ: (Կորյուն, Վարք մաշտոցի, էջ 110, ծթ. 71): Կ. Ղափադարյանը «զամենայն ընտրութիւնս նշանագրացն» վերագրում է Մաշտոցին, իսկ նրբագույն ու հաստ, կարճ ու երկար, կրկնավոր ու առանձին արտահայտությունների մեջ տեսնում է հինգ տառատեսակները (Հայկական գրի սկզբնատեսակները, էջ 35): Կ. Ղափադարյանի օգտված օրինակում, «նրբագոյն»-ից հետո, «հաստ» բառը չկա: Աբեղյանը իր հրատարակության մեջ բերում է այն և ծանոթագրում, որ «ձեռագրերի մեջ կա՝ «զնրբագոյնն և զլայնագոյնն, բարակն ու հաստը»:

[4] Ա. Աբրահամյանի կարծիքով, Կորյունն այստեղ խոսում է տառերի ոչ թե նրբքին շարի կամ գրչության տեսակների, այլ տառերի հնչական առանձնահատկությունների մասին: Այդ պարզ կարելի է տեսնել Դիոնիսիոս Թրակացու «Քերականության» մեջ և նրա հայ մեկնիչների

Մեր կարծիքով, Հռոփանոսը, հելլեն դպրության նշանավոր գրիչը, ոչ միայն իր ձեռքով գրել է Մաշտոցի նորաստեղծ հայերեն տառերը՝ գրիչ գործիքին «հնազանդեցնելու», որոշ գծեր հարդարելու համար, բառերի և նախադասությունների մեջ է փորձել: Մեսրոպ Մաշտոցը, մեր կարծիքով, նրա օգնությամբ մշակել է հայ նորաստեղծ գրի տեսակները, գրչության արվեստի կանոններն ու տեսությունը, որով պետք է առաջնորդվեր նորագյուտ այբուբենն օգտագործող ամեն մի գրող աշակերտ ու դպիր: Կորյունի վկայությամբ, Մեսրոպ Մաշտոցը, վրացերեն գիրն ստեղծելուց հետո, «գրէր, կարգէր և օրինօք յարդարէր»[5]: Վերջին երկու բառերը նշանակում են կանոնով կարգավորել, կարգ ու կանոնի ենթարկել[6], հասկանալի է, գրելու համար: Այսպիսով վրաց գրի հետ կապված բոլոր գործողությունները Մաշտոցն է կատարում: Այնինչ հայերեն գրերն ստեղծելուց, նշանակելուց, անվանելուց, դասավորելուց հետո, Հռոփանոսի հետ կատարում է գրերը կանոնով կարգավորելու գործը, հարդարում է «օրինօք», մշակում է հայերեն գրելու արվեստը: Սրանից հետո, արդեն Մաշտոցը հեշտությամբ կարող էր վրաց և աղվանից համար ստեղծել գիր և հիմք դնել նրանց մոտ գրչության արվեստին: Մ. Օրմանյանը, բերելով Խորենացու և Կորյունի վկայությունները գրերի մասին, ավելացնում է. «Ըստ այսմ գիրերուն լրանալէն ետքն ալ Հռոփանոսի օգնությամբ նախ տառերու ձևը կը կոկեն, հետո տառերը հունարենի կարգին կվերածեն, և վերջապես առոգանության չեշտերը կը ճշտեն»[7]: Բայց Կորյունի վկայությամբ, «հունարենի կարգին» վերածելը նախորդում է Հռոփանոսի հետ հանդիպելուն:

Այդտեղ էլ Մաշտոցը՝ Հռոփանոսի հետ միասին իր հետ տարած աշակերտներին, որոնց մի մասին անծանոթ չէր հույն, մյուսին՝ ասորի գրչության արվեստը, սովորեցնում է հայ գրչության արվեստը. «Հանդերձ ուսուցանելով մանկունս գրիչս նմին դպրութեան»[8]—գրում է Կորյունը: Նույնն է

մոտ, ուր այդ նույն բառերը բերված են իրենց բացատրություններով: (Հայ գրի և գրչության պատմություն, էջ 69–70):

5 Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 62:

6 Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի, Ա, Վենետիկ, 1836:

7 Մ. Օրմանյան, Ազգապատում, էջ 275:

8 Մ. Աբեղյանը թարգմանել է այսպես. «միաժամանակ և սովորեցնում էին մանուկներին՝ գրչագիրներ (պատրաստելով) նույն դպրության համար» (Վարք Մաշտոցի, էջ 102):

վկայում և Խորենացին[9]: Մինչ կրտսերագույն աշակերտները կատարելագործվում էին նորակերտ գրչության արվեստի մեջ, Մաշտոցը իր երեց աշակերտների՝ Հովհան Եկեղեցացու և Հովսեփ Պաղնացու հետ թարգմանություններ էր կատարում:

Երբ Մեսրոպ Մաշտոցը Միջագետքից վերադարձավ Վաղարշապատ, մեր կարծիքով, իր հետ բերեց ոչ միայն նորաստեղծ հայերեն գիրը՝ իր տեսակներով, այլև նորաստեղծ գրով գրելու արվեստը, այդ արվեստին տիրապետող աշակերտներ, ինչպես և այդ արվեստով գրված մատյան: Այնուհետև Մաշտոցը իր նորաբաց դպրոցներում իր աշակերտների հետ գործարկեց, կատարելագործեց այն ու դարձրեց հայ գրչության կուռ ու անթերի արվեստ, որով առաջնորդվեցին սերունդները և որով ստեղծեցին հինգերորդ և հաջորդ դարերի հայ մատենագրությունը: Հայ գրչության արվեստի առաջին խոշոր գործը՝ Աստվածաշնչի թարգմանությունը, նոր ժամանակներում համարվեց «Թագուհի թարգմանութեանց»: Գրիչները այնուհետև վստահում էին թարգմանչագիր ընդօրինակություններին և «ընտիր և ստոյգ» համարում ոչ միայն այդ, այլև նրանցից ընդօրինակված ձեռագրերը: Հայ մատենագրությունն ու ձեռագրական մշակույթը Մաշտոցյան գրի և գրչության արվեստի կատարելության պերճախոս վկայություններ են:

* * *

Գրչության արվեստի մեջ միանում են մի շարք արվեստներ, արհեստներ, գիտություններ, հմտություններ, որոնք ձեռագրի ստեղծման ժամանակ հանդես են գալիս միասին, երբեմն նաև առանձին:

Պայմանականորեն կոչելով գրչության արվեստի տարրեր, նույնպիսի պայմանականությամբ դրանք կարող ենք բաժանել երկու խմբի.

ա. Տարրեր, որոնք կապված են գրի, գրչության, ձեռագրի բովանդակության, նրա ճշգրտման ու բացահայտման հետ, ինչպես «արուեստ գրոյն», «արուեստ քերականութեան», «հմտութիւն բանին», համառոտագրություն, պատվագրություն, սրբագրություն, խմբագրություն, մանրանկարչություն, հիշատակարան՝ ամբողջությամբ վերցրած:

9 Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփխիս, 1913, էջ 327:

ը. տարրեր, որոնք կապված են գրչության նյութերի, գրչության գործիքների, ձեռագրի տեխնիկական ձևավորման հետ, ինչպես մագաղաթի, թղթի, թանաքի պատրաստման, քանոնի, կարկինի, գրչի (գործիք), կոկիչի, կազմի հետ:

Հայերեն ձեռագրերը մեզ են հասել մի քանի տառատեսակներով, որոնք հիմնականում հինգն են՝ բոլորագիծ երկաթագիր, ուղղագիծ երկաթագիր, բոլորգիր, շղագիր, նոտրգիր: Տառատեսակների մեծ մասը, գիտնականների կարծիքով, մեսրոպատեղծ են: Մեսրոպ Մաշտոցը ստեղծեց մի քանի տառատեսակ՝ տարբեր բնագավառների՝ գրչագրության, վիմագրության, ամենօրյա պետքերի գործածության համար: Հետագայում գրչության արվեստի զարգացման պայմաններում գրատեսակների գործածության շրջանակները լայնացան: Առաջացան զարդագրեր՝ գեղեցիկ և շքեղ ձեռագրեր գրելու համար և հապավումպատվագրություններ, համառոտագրություններ՝ արտագրության համար[10]:

Գրի այս հինգ գլխավոր տեսակներից բացի, կան խառը գրություններ, որոնք ոչ թե տեսակ են, այլ գրության «պեսպիսություններ», ինչպես այն անվանում է Գ. Հովսեփյանը:

Գրչության արվեստի հիմնական տարրի՝ գրի ուսուցմամբ էլ սկսվում էր ինչպես բոլոր գիտելիքների, այնպես էլ գրչության արվեստի ուսուցումը[11]: Տառերի բանավոր ուսուցումը, տառաճանաչությունը կապված էր գրավոր ուսուցման հետ: Գրոց աշակերտը պետք է գեղեցիկ գրեր, վարժվեր գեղեցիկ գրելուն, սովորեր «արուեստ գրոյն»: Գրոց աշակերտը նախ «միայն ողորկութեան գրի ուշ»[12] պետք է դարձներ, որպես և արվում էր: Եթե նույնիսկ ձեռագրում ամեն ինչ կարգին էր, իսկ գիրը «խոշոր» (որ նշանակում է՝ անկանոն, անհեթեթ, ոչ գեղեցիկ գիր), գրիչը մեղանչում էր գրչության արվեստի դեմ: 1292 թ. Սիմեոն գրիչը ընտիր օրինակից արտագրում է մի ձեռագիր, բայց վատ գրով: Այդ գիրը համարվում է «պիղծ գիր»[13]: Իսկ Ստեփանոս գրիչը 1402 թ. երբ գրչության հիմնական գիրը բոլորգիրն էր, նոտրգրով գրած թերթերի տակ անմեղադրություն է խնդրում թե «գիր չեմ գրել, այլ նոտրել եմ»[14]:

---

[10] Ա. Աբրահամյան. *Հայ գրի և գրչության պատմություն*, էջ 5

[11] *Անդ:*

[12] *Մատենադարան, ձեռ. 975, էջ 251ա:*

[13] Ղ. Ալիշան. *Սիսուան, էջ 103:*

[14] *Մատենադարան, ձեռ. 2152, էջ 84բ:*



Գրիչ՝ Թովմա Մեծոփեցի
1440 թ., ձեռ. N 7117

Գրիչն, ուրեմն, պետք է սովորեր գեղեցիկ գրել, պետք է տիրապետեր «արուեստ գրոյն» կամ «քերդողական արուեստ»-ին: Ներսես Լամբրոնացին անկանոն, «սեւագիր» վիճակից երկը վերափոխում է կանոնավոր, գրչության գրի և այդ աշխատանքը անվանում «քերդողական արուեստ»[15]: «Քերելն գրելն է,—գրում է Տաթևացին,—և քերթութիւնն՝ արուեստն», իսկ «քերթողական գիծ ... արուեստիւ գրելն է բաղում կարգս և շարելն է»[16]: Նշանավոր վարդապետ Կիրակոս Երզնկացին, որ քերականությանը անծանոթ չէր, միայն գեղեցիկ գրել չէր կարող, անմեղադրություն է խնդրում խոշորության համար «...զի մեք չէաք հմուտ կատարեալ քերթողական արհեստի գրչութեան»[17]: Ուրեմն գրչի վարպետության, գրչության արվեստի առաջին նախապայմանը գեղեցիկ, կանոնավոր գրելն է, «վայելչութիւն գրոյն»[18]: Մեծոփա գրչության կենտրոնում, հատկապես ԺԵ դարում, պահպանվում էր գրչության գեղեցկությունը: *Գեղեցկագիր էին համարյա Թովմայի բոլոր աշակերտները, հատկապես Կարապետը, Ստեփանը, Հովհաննես Մանկասարենցը, Թովմա Մեծոփեցի գրիչը:*

Գեղեցկագիր էր ինքը՝ Թովմա բաբունապետը և չէր հանդուրժում անկանոն գիրը: 1280 թ. Լուսեր գրչի՝ Ներսես Մշեցու համար ընդօրինակած ժողովածուն ընթերցելիս (որը, ի մէջի այլոց, պարունակում է Եզնիկի գործը) տողատակում գիտողություն է անում գրչին, որ տառերի ծայրերը կպցրել է իրար. «Աւաղ և եղուկ անգէտ գրագրին: Աւրհնած հոգի, ի՞նչ կառնես, գիտեմ բանական ես, զգիրս տողեր ես և մէկ ի մէկ յինչ ես կցել»[19]:

Սակայն քերթողական արվեստը միայն գեղեցիկ գրելը չէր. պետք էր նաև ճիշտ գրել: Գրիչները երբ անմեղադրություն են խնդրում «խոշորութեան և սխալանաց» համար, մեր կարծիքով, խոշորությունը վերաբերում է գրի արվեստին, նրա գեղեցկության ու կանոնավորությանը, իսկ սխալները՝ քերականության ու մտքի սխալներին, բացթողումներին: Գրիչները սովորում են «արուեստ քերականութեան», որ «կարգեալ են մեծն Թարգ-

---

[15] *Յիշատակարանք, Ա, էջ 456:*

[16] Լ. Խաչերյան, *Գրչության արվեստի լեզվական, քերականական տեսությունը...., էջ 363, 326:*

[17] *Հիշատակարաններ, ԺԴ, էջ 225:*

[18] Ա. Սիւրմէյեան, *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքի, Ա, Վենետիկ, 1948, էջ 337:*

[19] *Մատենադարան, ձեռ. 1097, էջ 107բ:*

մանրիչքն իսկ»[20], որպեսզի կարողանան ճշգրիտ կերպով ընդօրինակել, անսխալ կատարել գաղափար օրինակի փոխադրությունը նոր օրինակի:

Գեղեցիկ գրելու և քերականական արվեստները սովորելուց հետո, գրիչը որպեսզի գաղափարի, այսինքն՝ «աւրինակէ ստուգութեամբ զսուրբ գիրս... ոչ աւելի և ոչ պակաս գրէ»[21]—ինչպես պահանջում է Գրիգոր Տաթևացին, պետք է ծանոթ լինի ընդօրինակվող գործի բովանդակությանը, լինի «հմուտ բանին»: Գաղափար օրինակի բովանդակությանը անծանոթ գրիչը՝ դժվարանում է ընդօրինակել և անմեղադրություն է խնդրում, «զի չէի հմուտ բանին»[22], «Զի անհմուտ էի գրոցս այս—գրում է Հովհաննես գրիչը, նկատի ունենալով գիրը, և ավելացնում—եւս առաւել աւրինակիս (նկատի ունի Տոնական ժողովածուն, Ա. Մ.), որ չէր ամենևին լսել զայս»[23]: Կամ՝ «օրինակն օտար է ու այնով նեղանամք». իսկ օրինակը Տաթևացու Քարոզգիրքն էր[24]: Հաճախ գրիչները գրում են, որ «բանս յօրինակն չկայր», ապա լրացնում են այլ բնագրերից, երբեմն էլ գաղափար օրինակ չունենալով, անգիր են անում՝ տեղիք տալով սխալների: Ստեփանոս գրիչը Սաղմոսարանների խեղաթյուրման պատճառ է համարում նաև «և յիրահամարձակաց, որ յանձնապաստանին բերան եւս գրեն առանց աւրինակի և ոչ ուղղեն»[25]:

Այս երեք տարրերին կատարելապես տիրապետողը դառնում էր հմուտ գրիչ: Գրչության բոլոր դպրոցներում աշակերտները գրչության արվեստի ուսուցչի և րաբունապետի հսկողությամբ սովորում, կատարելագործվում և հմտանում էին: Սակայն բոլոր գրիչները չէին սովորում դպրոցներում: Շատերը այդ արվեստի մեջ հմտանում էին առանձին վարպետների ձեռքի տակ: Այդ դեպքում էլ գրիչը լուրջ կրթություն էր ստանում աստվածաբանությունից, կրոնի ու եկեղեցու պատմությունից, տոմարից, երաժշտությունից և այլն: Վերջինս անհրաժեշտ էր հատկապես երաժշտական, խազագրված ձեռագրեր ընդօրինակելու համար:

20 Լ. Խաչերյան, Գրչության արվեստի լեզվա-քերականական տեսությունը... էջ 239:

21 Անդ, էջ 326:

22 Ս. Տէր-Աւետիսեան, Ցուցակ Ն. Ջուղայի, 12:

23 Մատենադարան, ձեռ. 3931, էջ 273ա:

24 Մատենադարան, ձեռ. 2143:

25 Բ. Կիւլեսերեան, Ցուցակ Անկիւրիոյ, էջ 1226:

Ահա թե Աստվածատուր գրիչը ինչպես է հիշում իր ուսուցիչ Հակոբին: Նա «ուսոյց ինձ զՍաղմոս, զՇարական, զՏետրն բովանդակ, զԹագաւորք և զԱլելուք, զԺամատետրն, զՓառերն, զԽոնարհեցուքն և զՈւղղիցիքն, զգրագրութիւն, զծաղկել, զկապել և զամենայն բարեձևութիւն կարգաց, որ է ի սուրբ եկեղեցի, ուսոյց ինձ զամենայն»[26]: Եթե գրչության վարպետը ի վիճակի չէր իր աշակերտին գրչությունից դուրս այլ գիտելիքներ տալ, աշակերտը թերին լրացնում էր ուրիշ ուսուցչի մոտ: «Զդպրութեան վարպետն իմ Կարապետ քահանայ... եւ առաւել... յիշեցէք զարուեստի վարպետն իմ Սուքիաս»[27]—գրում է Հովհաննեսը:

Երբ գրիչը հմտանում էր արվեստի մեջ, կատարյալ էր դառնում որպես մասնագետ և աշակերտներ էր պահում, նրան կոչում էին «գրչապետ»[28]—«քաջ քարտուղար», «ճարտար գրիչ» կամ «հռետոր»[29]:

26 Հիշատակարաններ, ԺԵ, Գ, էջ 424:

27 Մատենադարան, ձեռ. 7274, էջ 220բ:

28 Լ. Խաչերյանը մեջ բերելով և ընդգծելով «...անյիշելիս ի գրչաց, անարհեստ ի յարհեստաւորաց, տգէտս ի գիտնականաց, անբանս ի բանականաց բազմամեղս Թումա...» նախադասությունը, սխալ եզրակացությունների է հանգում. «Ընդգծված բառերը—գրում է նա—ակնարկում և ցույց են տալիս գրիչների որակավորումը ըստ հիշարժանների և անհիշարժանների, արվեստավորների և անարվեստավորների, գիտունների և տգետների...» այստեղ տեսնելով որ անհեթեթություն է ստացվում, չի շարունակում «անբանների և բանականների, խմբավորումը» (Լ. Խաչերյան, Գրչության արվեստի..., էջ 209):

29 «Հռետոր» բառը, սովորաբար հասկացվում է ամենուր որպես «ճարտարախոս», «ճարտարաբան», «ճարտասան» իմաստներով: Սակայն գրչության արվեստի մեջ «հռետոր» հատկապես նշանակում է «ճարտարագիծ», «ճարտարագիր», «հմտագիր»: 1230 թ. ընդօրինակած Ավետարանում Գրիգորը հիշում է. «զհայր իմ զԽաչատուր քահանայ՝ զյոյժ հմուտ և հռետոր այսմ արհեստի» (Յիշատակարանք, Ա, էջ 866), այսինքն՝ գրչության արվեստի հռետոր, հմուտ գրիչ: Այդ կարգի մարդկանց Ստեփանոսը անվանում է «հռետոր գծագիրք» (Ձեռ. 2817, էջ 301բ): «...Եւ որովհետև հռետոր էր ի յարուեստ, որ և յառաջին գլուխ տեսանի»—գրում է Ավետարանի շարունակողը՝ առաջին գրչի մասին: (Ձեռ. 9450, էջ 373ա): Իսկ հռետոր գրիչների ընդօրինակությունները կոչվում են «հռետորական օրինակներ» (Յիշատակարանք, Ա, էջ 946): Այսպիսով հռետորը գրչության արվեստին հմուտ, քաջ գիտակ գրիչն է, «ճարտասան քարտուղարն... զարդարծիչ տառից» (Հիշատակարաններ, ԺԴ, էջ 133):

Գրչության արվեստը Մեծոփա վանքի բարձրագույն դպրոցում դասավանդում էր Թովմա Մեծոփեցին: Կիրակոս բանասերը նրա դասավանդած առարկաների շարքում հիշում է նաև «ի գրագրութիւն», որը գրելու արվեստի ուսուցումն էր: Այդպես են հիշում նրան նաև աշակերտները. Թովման գրում է, որ «հանապազ խրատ տայ մեզ ի յարուեստ գրչութեանն»[30], իսկ Հունանը լրացնում է. «տաղով և դասիւ ևս»[31]: Նրան այս բնագավառում օժանդակում էր Հակոբ Ղրիմեցին: Ինչպես վերը տեսանք, նա գրել էր Քերականություն, անշուշտ, Մեծոփա դպրոցի համար: Մեծոփա վանքի դպրոցում գրչության արվեստի ուսուցման հիմքում ընկած էին Արիստակես գրչի և Գևորգ Սկևռացու՝ գրչության արվեստին նվիրված աշխատությունները ու դրանց՝ Գրիգոր Տաթևացու կատարած վերլուծությունը: Թ–ԺԲ դարերում հասարակական կյանքում տեղի ունեցած փոփոխությունների հետևանքով, քաղաքների, առևտրի, արհեստագործության շնորհիվ բազմանում են գրչության կենտրոնները: Գրչության արվեստը տարածվում է լայնորեն, որին հատկապես նպաստում են որպես գրանյութ օգտագործվող թուղթը, բոլորգրի՝ գրչության հիմնական գիր դառնալը: Այդ ժամանակ ձեռագրերը գրվում են բառանջատումներով, փոփոխություններ էր նկատվում ուղղագրության, կետադրության նշանների մեջ և այլն. գրչության որոշ կանոններին թերիմաց կամ համարյա անտեղյակ մարդիկ աղավաղում են գրչության արվեստի կանոնները: ԺԲ դարում Արիստակես գրիչը, իսկ ԺԳ դարում՝ Գևորգ Սկևռացին կայունացնում են այդ կանոնները: «Եթե Արիստակեսը կարևոր դեր կատարեց ուղղագրության կայունացման մեջ,—գրում է Գ. Ջահուկյանը,—ապա կետադրության և տողադարձի կայունացման պատիվը պատկանում է Գևորգ Սկևռացուն»[32]:

30 *Մատենադարան, ձեռ. 5114, էջ 372ա:*

31 *Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 336:*

32 Գ. Ջահուկյան, *Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954, էջ 228: Այս հարցում ճիշտ չէ Լ. Խաչերյանը, երբ գրում է. «Գրչության արվեստ» արտահայտությունը մինչև Արիստակեսի և Գևորգ Սկևռացու աշխատությունների երևան գալը նշանակում էր սոսկ երկարատև փորձի և վարժության վրա հիմնված գեղեցիկ, տառ առ տառ, համաչափ մեծությամբ, առանց վրիպումների, մարգարտաշար դասավորությամբ գրելը, գաղափարատիպ նմուշի կույր* հետևողությամբ ընդօրինակելը, *սակայն առանց թափանցելու լեզվական-քերականական երևույթների մեջ,* առանց գիտակցելու կամ պատճառաբանելու այս կամ այն տառի գրության անհրաժեշտությունը

Արիստակես գրչի աշխատանքը վերնագրված է այսպես. «Վերլուծութիւնք բացերևալէս բազմազան բառից և բայից յոգնախումբ շարագրութեամբ, արարեալ զսա Առիստակիսի գրչի, ի խնդրոյ բազմաց յարհեստ գրչութեան»[33]: Կազմված է փոքրիկ առաջաբանից, ունի հայերենի ուղղագրության տասը կանոնների մասին ընդհանուր տեսություն և նկարագրություն: Գևորգ Սկևռացու աշխատություններն են. «Խրատ վասն հանգամանաց հեգից», «Խրատ վասն առոգանութեանց», գրված նշանավոր գրիչ Ստեփանոս Գոյներիցանցի պատվերով[34], և «Խրատ գրչութեան...» գրված Կոստանդին գրչի պատվերով[35]:

Գրիգոր Տաթևացու երկերը կոչվում են.

ա. «Նորին Գրիգորի՝ աշակերտի Յովհաննու Որոտնեցւոյ լուծումն համառօտ դժուարիմաց բանի ի գիրս գրչութեանն յԱռիստակիսէ հռետորէ»[36]:

բ. «Նորին Գրիգորի՝ աշակերտի Յովհաննու Որոտնեցւոյ լուծումն համառօտ ի խրատ գրչութեան Գէորգայ վարդապետի, զոր նախ խնդրեալ էր ի նմանէ Կոստանդեայ գրչի և ապա Գոյներիցանց Ստեփանոսի»[37]:

գ. «Դարձեալ խրատ նոյն Գէորգ վարդապետի, որ առ Ստեփանոս Գոյներիցանց գրեալ յաղագս գրչութեան արուեստի»[38]:

Գրիգոր Տաթևացին գրչության արվեստի վերաբերյալ սույն աշխատությունները կարդում է միջնադարում մեկնողական գրականության շարադրման ընդունման եղանակով. օրինակ՝ «բան» բառի տակ բերում է հեղինակներից մի բառ կամ բառակապակցություն և «լուծումն» բառի տակ մեկնում,

համապատասխան պայմաններում և այլն» *(ընդգծումը մերն է — Ա. Մ.)* (Լ. Խաչերյան, *Գրչության արվեստի լեզվաքերականական տեսությունը..., էջ 228): Ինչպես տեսանք, գրչության արվեստ հասկացությունը և այդ տեսությունը կար գրերի ստեղծման ժամանակներից: Ինքը Արիստակես գրիչը ևս հաստատում է, որ այդ կանոնները մշակել էին «երիցս երանեալ թարգմանիչք» (Անդ, էջ 206):*

33 Լ. Խաչերյան, *Գրչության արվեստի լեզվական-քերականական տեսությունը..., էջ 227–286:*

34 Անդ, *էջ 287–307:*

35 Անդ, *էջ 308–320:*

36 Անդ, *էջ 321–340:*

37 Անդ, *էջ 341–358:*

38 Անդ, *էջ 359–365:*

բացատրում: Իհարկե, 13-րդ դարի գրչության արվեստի տեսաբանների գործերը հասկանալի էին 15-րդ դարասկզբի գրոց աշակերտներին: Տաթևացին, ինչպես նշեցինք, նորաբաց դպրոցին ծրագիր էր տալիս, այդ առթիվ «սակաւ ինչ» պարզաբանում գրչության արվեստի այդ նրբերի դժվարիմաց տեղերը և շեշտում հատկապես անհրաժեշտ կատեգորիաները: Այսպես. պարզ էր, անշուշտ, բոլորին «վարդապետ» հասկացությունը, բայց նա լուծում է. «Ուսուցիչն է բանիւ, որ կատարեալ լինի մտաւք և սուրբ վարուք. նոցա առաջի անհմտիցն պարտ է վերջանալ և ուսանել զբանս և զգործս և զամենայն բացատրութիւնս սուրբ գրոց եւ ոչ շաղփաղփել, որ է աղճատել կամ բարբաջել»[39]: Այստեղ բարձրացվում է վարդապետի դերը, որպես ուսուցչի, դաստիարակի, կրթողի: Կամ «Գաղափարէ» լուծումն է «Աւրինակէ ստուգութեամբ զսուրբ գիրս, զի ի չորս աւգտութիւն է: Նախ՝ գրոյն, զի ոչ աւելի և ոչ պակաս գրէ. երկրորդ՝ շնորհք և իմաստութիւն, որ ի մէջ գրոյն է, երրորդ՝ ընթերցողացն ուղղութիւն է, չորրորդ՝ լողքն իմանան ... եւ զուղիղ գրաւղն փառաւորէ...»[40]: Այստեղ ընդգծվում է ճշգրիտ ընդօրինակելու անհրաժեշտությունը:

Որովհետև «գրչութիւնն արուեստ է, եւ զամենայն արուեստ նախ պարտ է ուսանել և ապա գործել», հետևաբար ամեն մի մասնագիտություն և հատկապես գրչության թեքում ունեցող վարդապետարանում նախ պետք է տեսականորեն կատարելապես տիրապետել այդ արվեստին, գրչություն սովորել, հմտանալ նրա մեջ, ապա նոր գործել, գրել, գաղափարել: «Եւ դարձեալ զամենայն արուեստն նախ մտաւք խորհի ոք և ապա աչաւք տեսանէ և ապա ձեռաւքն գործէ յայտ է ի սահմանն: Արուեստ է ունակութիւն ճանապարհորդել հանդերձ երևակայութեամբ...»[41]:

Այստեղ ընդգծված է ուսուցման անհրաժեշտությունը՝ օրինակելի մասնագետ դառնալու գործում: Դրա համար ինքը Գր. Տաթևացին Մեծոփա վանքում գրչության բարձրագույն դպրոց հիմնելիս նախօրոք տեսական հիմք դրեց կատարյալ գրիչներ պատրաստելու համար:

Հիմնական մասնագիտության ուսուցման մեջ, որով Մեծոփա վանքի բարձրագույն դպրոցը տարբերվում էր նախորդներից, հսկայական են Թովմա Մեծոփեցու՝ նշանավոր

39 Անդ, էջ 332:
40 Անդ, էջ 326:
41 Անդ, էջ 359:

գրչի, գրչության ուսուցչի, խմբագրողի, սրբագրողի, նորոգողի, ձեռագրեր հավաքողի, գրչության արվեստը խրախուսողի, հովանավորողի, մատենադարան հիմնողի ծառայությունները: Գրչության արվեստ ուսուցանելիս օգտագործելով իր ստացած գիտելիքները Խառաբաստա և Տաթևի դպրոցներում և հիմք ընդունելով գրչության արվեստի վերաբերյալ ճանաչված վարդապետների աշխատությունները, Թովմա Մեծոփեցին ստեղծում է իր դասագիրքը: Դասագրքում բազմաթիվ նյութեր կան իրենից և այլ վարդապետներից, որոնք վերաբերում են տառաճանաչության ուսուցմանը, հայ գրերի ստեղծմանը, գրչության արվեստին ընդհանրապես:

Դասագրքի հետ միասին մի կազմի մեջ ամփոփված են նաև այլ նյութեր[42]:

Ձեռագրի առաջին մասում առանձին թերթեր և հատվածներ պատկանում են Թովմա վարդապետի գրչին: Այդ մասը վերջանում է նրա ընդօրինակած թերթերով. «Զնուաստ

42 Ձեռագիրը մի ժողովածու է և պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում 7117 համարի տակ: «Այդ ձեռագիրը պարունակելով աղվանից այբուբենը և այլ եզական նյութեր՝ շուրջ 25 տարի է ինչ գրավում է համաշխարհային արևելագիտության ուշադրությունը,— գրում է Լ. Խաչիկյանը: Ելնելով ժողովածուի վերջում բերված Թովմա Մեծոփեցու մեզ արդեն ծանոթ հիշատակարանից՝ պրոֆ. Ս. Շանիձեն, աղվանից այբուբենի ուսումնասիրության կապակցությամբ քննելով այն, գտնում է, որ «Հիշատակարանը վերաբերում է դասագրքի (նա ամբողջ ձեռագիրը համարում է դասագիրք (Լ. Խ.) ոչ միայն երկրորդ, այլև առաջին մասին, ուր և գտնվում են մեզ հետաքրքրող այբուբենները»: Այդ կարծիքին է նաև մեծանուն գիտնական Հր. Աճառյանը «Աղվանից գիրը» հոդվածում (Լ. Խաչիկյան, Թովմա Մեծոփեցու գրական վաստակը):

Լ. Խաչիկյանը, ժխտելով այս տեսակետը, բանասիրական և հնագրական փաստարկներով ապացուցում է, որ Մատենադարանի 7117 ձեռագիրը «բաղկացած է 3 ուրույն մասերից, որոնք չնայած ընդօրինակված են հիմնականում միևնույն գրչի՝ Հովհաննես Արճիշեցու կողմից, միևնույն չափի թղթի վրա, բայց իրար նկատմամբ ունեն նաև զգալի տարբերություն»: Համաձայնելով այս տեսակետին՝ պետք է միայն լրացնել, որ ձեռագիրը գրվել է ոչ միայն Հովհաննես Արճիշեցու, որ նույն ինքը Հովհաննես Մանկասարենցն է, այլև Մկրտչի որդի Հովհաննեսի ձեռքով, որը Մեծոփեցու աշակերտներից էր, Բաղիշեցի, և մահացել էր արդեն մինչև 1435 թ.: Ինչպես նշում է Լ. Խաչիկյանը, որոշ նյութերի գրիչն է ինքը Թովմա վարդապետը: Այսպես՝ ձեռագրի սկզբում գտնված տասներեք պրակների գրիչ Հովհաննես սարկավագը վերջին մասը ընդօրինակող Հովհաննեսն է, իսկ ձեռագրի երկրորդ մասը գրված էր արդեն մինչև այդ թվականը, Հովհաննես Բաղիշեցու ձեռքով:

վարդապետս Թովմա յիշեա ի Տէր Քրիստոս և թողութիւն հայցեա, ճշմարիտ ուսումնական, և Աստուած քեզ առնէ»[43]:

Երկրորդ մասը, նոր պրակակալմամբ (որոնց թիվը տասներեք է), գրված է Մկրտչի որդի Հովհաննեսի (Բաղիշեցու) ձեռքով, իր հոր համար. «Զանպիտան և զուտանուն գրիչ զՅովհաննէս յիշեցէք ի Քրիստոս և զծնողսն իմ ըստ մարմնոյ զՄկրտիչ քահանայ, որ ստացաւ զսայ ի վայելումն անձին իւրոյ...»[44]: Վերջինս նույնպես գրիչ էր: Այս մասը պարունակում է Գևորգ վարդապետի՝ գրչության արվեստի մասին երկը[45] և բազմաթիվ այլ նյութեր:

Ձեռագրի երրորդ մասը «Կարգ աւրհնութեան սուրբ իւղոյն հիւանդաց» և «Կարգ աւծութեան հիւանդաց»[46] նյութերն են: Ձեռագրի առաջին և երրորդ մասերի գրիչը Հովհաննես Մանկասարենց Արճիշեցին է, որ գրել է Թովմա Մեծոփեցու հանձնարարությամբ:

Ժողովածուն կազմվել է 1440-ական թվականներին[47]:

Ժողովածուի մեջ արժեքավոր է հատկապես առաջին մասը, որը պարունակում է և գրչության վերաբերող նյութեր Թովմա Մեծոփեցուց և քաղվածքներ այլ մատենագիրներից: Գրիչ Հովհաննես Մանկասարենցը իր վարդապետի հսկողությամբ և մասնակցությամբ է գրել: Առաջինը «Դաւթի փիլիսոփայի և Փիլիկեայ Հոռոմոց վարդապետի և Հոմերեայ արուեստաւորի և Մովսէսի քերթողի..., ...յաղագս վարժողական ուսմանց...»[48] գործն է, որը նախատեսված էր վարդապետական շնորհ ստանալու համար. «Սովաւ ժողովին քերթողական արհեստք ի չինուածս պիտոյից... զամենայն բանս ի միտս վարժաւղաց յարհեստս քերթողականս»[49]:

43 Անդ, էջ 151բ::

44 Անդ, էջ 305ա:

45 Մատենադարան, ձեռ. 7117, էջ 153–190ա:

46 Անդ, էջ 191–324բ:

47 Մատենադարան, ձեռ. 7117, էջ 325ա–345ա: Ձեռագրի 93-րդ ազատ թերթը լրացրել է Թովմա Մեծոփեցին՝ «Թիւք աւուրց կաթողիկոսացն» նյութով, որն սկսվում է «Սուրբն Գրիգոր»-ից և վերջանում Գրիգոր երրորդով. «Սորա աւուրքն աջն դարձաւ ի գաւառ իւր» (93ա, 93բ): Նշանակում է՝ նյութը գրվել է այն ժամանակ (1441 թ.), երբ արդեն Լուսավորչի աջը Վաղարշապատում էր, բայց Կիրակոսը դեռևս կաթողիկոս չէր օծվել:

48 Անդ, էջ 3ա–5ա:

49 Անդ, էջ 16բ:

Երկրորդը՝ «յաղագս տառի Դաւթի փիլիսոփայի» գործն է. «Գիր է ԼԶ, յԱյբէ մինչեւ ցՔէ: Եւ գրելն քերել ասիւր առ նախնեաւք, եւ նոյն գիրն տառք կոչին, վասն զի առնին տարրումն ինչ և դասութիւն»[50]: Այնուհետև Թովմա Մեծոփեցու գործերն են, որոնց մեջ առանձին արժեք է ներկայացնում «Յաղագս իմաստութեան անվարժ տղայոց ուսման, արարեալ Թովմա վարդապետի ի խնդրոյ աշակերտաց իւրոց» աշխատանքը, որը հենց դասագիրք է: Գիրն աստվածային պարգև է, ասում է Մեծոփեցին, որ տրվեց Մովսեսի միջոցով հրեաներին, որոնցից առեալ ամենայն ազգք իմաստութեան և գիտութեան հասին: Եւ յետոյ ի վերջին ժամանակի շնորհօք Սուրբ Հոգւոյն և ողորմութեամբ նորին տուաւ նոր գիր սուրբ հօրն մերոյ և վարժապետի Մեսրովպայ ճգնաւորի, աւժանդակութեամբ և աղօթիւք սրբոյն Սահակայ հայրապետի և ամենայն Հայկազեան սեռի... ի լուսաւորութիւն և ի վարժումն Յաբեդականս տոհմի»[51]: Այնուհետև բերում է հայոց այբուբենը սովորական կարգով, ապա՝ ինն առանձին շարքերով, որին հաջորդում են հայերեն նշանագրերի անվանակոչումների ցանկը և նրանց թվական արժեքների ցանկը:

Այս աշխատությունը ունի իր հավելվածը (ձեռագրի 141ա–145ա էջերում), որտեղ բերվում են տարբեր ժողովուրդների, որոնց թվում՝ նաև աղվանից, այբուբենները[52], ինչպես նաև «Գիր հնդկաց» վերտառությամբ՝ արաբական թվերը: Այնուհետև հաջորդում է «Թէ զիարդ գտեալ եղև գիրս Հայոց» գործը, ուր կարդում ենք. «Զոր և մեք պարտիմք գերախտիս հոգևոր հարցն մերոց և զծածուկ գիտութիւնն, որ ի սմա ամբարեալ կայ, ոչ մոռանալ, այլ սակաւ ինչ ի վարդապետացն մերոց իմաստից առեալ ի յուրախութիւն գիտութեան մանկանց եկեղեցւոյ յիշատակ թողցուք»[53]:

50 Անդ, էջ 46բ:

51 Անդ, էջ 106ա:

52 Սրանց հաջորդում են հայատառ այլալեզու փոքրիկ բնագրեր (աղոթքներ և այլն) «որոնցից բացառիկ արժեք է ներկայացնում քրդերեն (մարաց) «Սուրբ աստուած»-ը, այդ լեզվի առաջին գրավոր խոսքը,—գրում է Լ. Խաչիկյանը (Լ. Խաչիկյան, Թովմա Մեծոփեցու գրական վաստակը, էջ 8):

53 Ապա գրիչ Հովհաննեսը շարունակում է. «Բայց աղաչեմ զեղբայրութիւնդ, զի զմեզ և զսակաւ աշխատչնս մեր անպարսաւ թողուցուք, այլ տեսողքդ և ընդաւնողքդ և գծագրողքդ մեզ և վարժապետացն մերոց և հոգևոր և մարմնաւոր ծնողաց և հարազատաց, և առաջին սրբագրողի այսմ տառի Յոհաննէս մեղապարտի թողութիւն մեղաց հայցեցէք ի Տեառնէ Աստուծոյ...» (Մատենադարան, ձեռ. 7117, էջ 112ա):

Գրչության արվեստի տեսական և գործնական խոր իմացությամբ, Թովմա Մեծոփեցին իր դպրոցի աշակերտներին սովորեցնում էր այդ արվեստի նրբությունները, նրանց մեջ արմատավորելով գիտակցված պատասխանատվություն, նվիրական ու երկյուղած մոտեցում գրի և գրչության նկատմամբ, որպես ազգի լուսավորության հիմնական միջոցի, որպես գիտության և ուսման բանալու և որպես աստվածային շնորհի:

Ահա թե ինչու Թովմա Մեծոփեցու և նրա աշակերտների գրչագրական գործերը գեղեցիկ են ու հնարավորին չափ անթերի, տարբերվում են գրչության ուրիշ շատ կենտրոններից մեզ հասած ձեռագրերից: Թովմա Մեծոփեցու աշակերտները Մեծոփա դպրոցի ավանդները տարածեցին և արմատավորեցին այնտեղ և նրանց մոտ, որտեղ հաստատվեցին կամ ում սովորեցրին գրչության արվեստը:

***

Մեծոփա վանքի գրչության կենտրոնից մեզ հասած և հայտնի բոլոր ձեռագրերը գրված են **բոլորգրով**, բացառությամբ Հակոբ Ղրիմեցու ընդօրինակությունների և գործերի, որոնք նոտրգիր էին: 12-րդ դարում բոլորգիրն արդեն դարձել էր գրչության հիմնական գիր: Մխիթար Սասնեցու՝ մեր ձեռքի տակ եղած ձեռագրի բոլորգիրը Կիլիկյանին նման չէ: Այնտեղ ավելի շատ արևելյան կոչված բոլորգրի տարրեր էին նկատվում, որը, թերևս, այդ ձեռագրի բնույթի և արագագրության հետևանք էր նաև: Նրա աշակերտների մոտ բոլորգիրը կանոնավորվում է և մոտենում Կիլիկյանին: Այդպես էր այդ ժամանակ Քաջբերունիքի մյուս կենտրոններում՝ Ասպիսնակում, Խառաբաստում, Ուռնկարում, Արճեշում:

Թովմա Մեծոփեցու դպրոցում բոլորգիրը հասավ իր կատարելությանը: Այստեղի աշակերտները ձգտում էին ոչ միայն անսխալ և ճշգրիտ ընդօրինակելու, այլև գեղեցիկ, արվեստով գրելու: Թերևս այդ էր պատճառը, որ նրանք, սկսած բաբունապետից, գրում էին ոչ թե տողի վրա, այլ տողից ներքև: Ճնշումով արված տողագիծը պետք է անցներ տառամարմնի վերին ծայրերի վրայով: Վարժ գրչի համար այսպես լավ էր: Հավասար բարձրությունից՝ սովոր ձեռքը միաչափ գծեր էր

իջեցնում ներքև, և ստացվում էր միահավասար գիր: Այս, անշուշտ, նորություն չէր հայ գրչության մեջ: Այդպես են գրել նույնիսկ երկաթագրով, ինչպես 1001 թ. Կեչրորում և 1018 թ. Տալաշա վանքում ընդօրինակված երկաթագիր ավետարանները[54]:

Գեղեցկության հետ միասին Մեծոփա դպրոցում խիստ մեծ ուշադրություն էր դարձվում ձեռագրի ստուգության վրա, ինչպես այդ տեսանք սկզբում: Հատկապես հերձվածողական, դավանաբանական հարցերում չվրիպելու համար, խնամքով սրբագրվում էին ձեռագրերը, որովհետև այդ էր Մեծոփա վանքի գրչության դպրոցի կոչումը:

Ընդհանրապես, եթե ընդօրինակվող օրինակը ճանաչված չէր, և որպեսզի գրիչները խուսափեին ծանր սրբագրություններից, որոնք նաև արտաքինից աղարտում էին ձեռագիրը, արտագրությունը կատարում էին մի քանի օրինակից՝ համեմատելով և ճշգրիտը գրելով, որը բնագրագիտական-բանասիրական ծանր աշխատանք էր[55]: Այդ տեսակետից շատ հետաքրքրական է Ավագ գրչի գիտահամեմատական գործը, որը ոչ միայն մի քանի օրինակներից է ընդօրինակում Ավետարանը, այլև ուղղում և պարզում է դրանց խմբագրությունը: Գրիչը նախ հիշում է Սահակ եպիսկոպոսին, «զի շնորհեաց մեզ աւրինակ ընտիր», ապա՝ «զսրբասէր քահանայ Սամուէլն..., որ ետ կրկին այլ աւրինակ, որ ստոյգեցաք», ապա՝ «զԿարապետ քահանայն, որ միւս աւրինակ այլ շնորհեաց, որ կոչի Մուրղանեցի, քանզի յերկուց և յերից վկայից հաստատի ամենայն բան: Զի յորժամ յաւարտումն հասաւ, եղաք զերիս ընտիր և անուանի աւետարանքս և ստոյգեցայք, որ մին շառաւեղաւք էին գրած... բազում աշխատանս կրեցի մինչև ի ձեռն բերի յաւրինակերս և ստոյգեցի»[56]: Ուրեմն «Համարձակ լերուք, զի բազում

54 Մատենադարան, ձեռ. 4805 և 7739:

55 Մատենադարան, ձեռ. 8205, էջ 130բ: «Եղբարք անմեղադիր լերուք, քանզի օրինակս երկու է, հետ մէկ-մէկի չերթայր»,–գրում է Ազարիան Մաշտոց ընդօրինակելիս (Մատենադարան, ձեռ. 6394, էջ 44ա): «Երկուց աւրինակաց» է գրված Մատենադարանի 3929 Նարեկը, «երից գրոցս»՝ 5883 ձեռագիրը: «Աւրինակաց բազմաց բաժանմամբ եղև յարմարեալ» բազմաթիվ ձեռագրեր (Հիշատակարաններ, ԺԵ, Գ, էջ 290):

56 Մատենադարան, ձեռ. 280, էջ 264բ:

աշխատութեամբ ուղղեցի»[57]: Գրիչները հաճախ կատարում էին նաև գիտա-տեխնիկական խմբագրություններ[58]:

Բոլոր գրիչները վարժ ու հմուտ քարտուղարներ կամ հռետորներ չէին: Կային նորուսում գրիչներ, որոնք գրագետ մարդիկ էին, բայց անտեղյակ էին գրչության արվեստի նրբություններին: Պատվիրելու միջոցներ չունենալու պատճառով ընդօրինակություն էին կատարում ձեռագիր ունենալու ցանկությունից: Նրանք հաճախ ընդօրինակում էին նաև ուրիշների պատվերով՝ գոյության միջոցներ հայթայթելու համար: Այդ կարգի ընդօրինակություններում, որոնք կատարվում էին «համարձակութեամբ գրչի առաւել, քան թէ գիտութեամբ արուեստի»[59], սխալներն ավելի շատ են:

Այսպիսի դեպքերում ավելի է բարձրանում **գաղափար օրինակի** դերը, այսինքն այն օրինակի, որից արտագրում էին: Այդ պատճառով ընդօրինակելը կոչվում էր նաև «գաղափարել»[60]: Ամեն մի ձեռագիր գաղափար է դառնում, երբ նրանից արտագրում են: Գրիչներն հաճախ են դժգոհում սխալ օրինակից[61]: Իսկ երբ այդպիսիներից արտագրում էր անվարժ գրիչը, ձեռագիրը դառնում էր «յաւրինակէ և ի գրողէ յոյժ ապականեալ»[62]: Գրիչներն օրհնում էին նրանց, ովքեր ճշգրտել, ընտիր ու ստույգ օրինակներ են ստեղծել:

Որովհետև գրչության արվեստը ընդօրինակության արվեստ էր և գաղափար օրինակի ստուգությունից էր կախված հետագա ընդօրինակությունների ճշտությունը, այդ պատճառով օրինակելի, անսխալ գաղափարի պահպանությունը հայ

57 Մատենադարան, ձեռ. 149, էջ 433բ:

58 Սակայն պատահում էր, որ գրիչը ձեռագիրն ընդօրինակում է մի քանի բոլորովին պատահական օրինակներից: Այսպես, «ով եղբարք, անմեղադիր լերուք. զի առաջի աւրինակն տարին, այս աւրինակս հանց էր, ես այլ հանց գրեցի, յետոյ ապաշաւեցայ»: Բայց միշտ չէ որ զգուշացվում է, կամ այն մեզ հայտնի է լինում (Ս. Տէր-Ստեփանեան, Ցուցակ Հայերէն ձեռագրաց Նիկոմիդիո և շրջակայից, 18 (Անտիպ)):

59 Ա. Սիւրմէյեան, Ցուցակ Հալէպի, Երուսաղէմ, 1935, Բ, էջ 126:

60 Ցիշատակարանք, Ա, էջ 228:

61 «Ու՜հ, ոհ օրինակիս դարդէն սիրտս եղաւ քան զքարար, էս մին էջում Գ տեղ սխալեալ էր, գրեցի պռծայ, հետո իմացայ» (Ս. Տէր-Ավետիսեան, Ցուցակ Ն. Ջուղայի, 8): «Աւաղ զայս անիծեալ օրինակի դարդս զի սխալն անչափ է» (Հ. Քոսեան, Ցուցակ Արծնեան վարժարանի, «Հանդէս ամսօրեա», 1962, էջ 121):

62 Ցիշատակարանք, Ա, էջ 228:

գիտնական վարդապետների ու գրչապետների, հռետորների սրբազան գործն էր, որոնք հավաստիացնում էին հայ ձեռագրական մշակույթի ստուգությունն ու անսխալությունը սրբագրությամբ և ուղղելով: Նրանք ստեղծում էին ստույգ և ընտիր օրինակներ՝ հիմք ունենալով հնագույն, թարգմանչագիր, հեղինակային կամ դրանցից արտագրված օրինակները: Դրանք պետք է լինեին «յաւրինեալ և յարմարեալ ըստ տանց և ըստ ամենայն արհեստից պատշաճեալ, դիւրահաս ընթերցողաց և լսողաց»[63]: Ստույգ և ընտիր օրինակը պետք է գրված լիներ գրչության արվեստի պահանջների համապատասխան, բնագիրը պետք է լիներ անխախտ, համեմատված մի քանի այլ օրինակների հետ: Այդ ստուգությունը պետք է հավաստված լիներ վարդապետներից «…ի բազմաց վկայեալ»[64], «ի բազում աւրինակաց ընտրեալ և վկայեալ ի գիտնականաց եկեղեցւոյ»[65], առանց դավանաբանական եղծումների, խելացի գործիմացությամբ, որովհետև «…ոչ է ամենեցուն իշխել գիր յաւելուլ կամ պակասեցուցանել, այլ իմաստուն գիտնականաց, որք հմուտ են Հին և Նոր Կտակարանաց և յարդեալ ուսմամբ արհեստիւ»,—զգուշացնում է մի գրիչ[66]: Այս իմաստուն գիտնականներին ենք պարտական հայ ձեռագրական մշակույթի համարյա անաղարտության համար:

Ընտիր և ստույգ օրինակից արտագրելը հնուց է գալիս: Մաշտոցի անվան Մատենադարանի փղոսկրյա կազմով հնագույն Ավետարանը 989 թվականին «յստոյգ և ի հին յաւրինակաց գրեցաւ»[67]: 999 թ. Սիմեվոնը ընդօրինակում է «ի ստոյգ և ի հին աւրինակէ»[68]: Ավետարանի առաջին ստույգ օրինակների «հորինիչները» եղել են Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը: Մատենադարանի 10434 ձեռագիրը գրված է Մաշտոցյան գաղափարից… «…որ էր վկայեալ աւրինակն յամենայն գիտնականաց Հայւոց, զոր ասէին յաւանդութենէ գրեալ ձեռամբ սրբոյն Մաստոցեայ վարդապետի և թարգմանչի»[69]: Կիրակոս գիտնականը 1113 թ. Դրազարկում Գեորգ

63 Ցիշատակարանք, էջ 316:

64 Հիշատակարաններ, ԺԴ, էջ 80:

65 Ցիշատակարանք, Ա, էջ 733:

66 Մատենադարան, ձեռ. 2943, էջ 554ա:

67 Անդ, ձեռ. 2374, էջ 231ա:

68 Ցիշատակարանք, Ա, էջ 166:

69 Անդ, ձեռ. 10434, էջ 287ա:

10–415

գրչին «ի ստոյգ եւ յընտիր գաղափարէ սրբոյն Սահակայ Թարգմանչի՝ յստակ եւ ականակիտ»[70] ընդօրինակել է տալիս մի Ավետարան: Ավետարանի մյուս նշանավոր օրինակը հայտնի է Գրիգոր Մուրղանեցու անունով[71]: Հաճախ ընտիր օրինակները կոչվում էին այն տեղերի անուններով, ուր գրվում կամ ուր պահվում էին նրանք[72]:

Մեծոփա վանքի վարդապետ-գրիչները ստեղծում էին ընտիր օրինակներ (որոնց կանդրադառնանք հետո) և արտագրում ընտիր օրինակներից: Տաթևացու գործերից՝ Մեծոփա վանքում կատարած ընդօրինակությունները կամ հեղինակային օրինակներից էին, կամ նրա հսկողությամբ կատարված օրինակներից: Թովմա Մեծոփեցին Գրիգոր Տաթևացու Լուծմունք արտաքին գրոցը ընդօրինակել է «յառաջին աւրինակէն», որի վրա Տաթևացին ուղղումներ և լրացումներ է կատարել[73], Հարցմանց գիրքը՝ Թովմա Տաթևացու օրինակից էր, որը կատարված էր «աւգնականութեամբ և կամակցութեամբ» հեղինակի, «ի լաւ և յընտիր օրինակէ»[74], Քարոզգիրքը՝ Գալուստ Տաթևացու ընտիր օրինակից[75] և այլն: Ճաշոցը Թովմա Մեծոփեցին և Հովհաննես Մանկասարենցը ընդօրինակել են Գևորգ վարդապետի՝ Դրազարկում կարգավորած և Տիրացու Մշեցու լրացրած օրինակից[76]: Այդ օրինակից են այնուհետև Մեծոփա վանքի աշակերտների ընդօրինակությունները[77]: Ընտիր օրինակների

70 Մատենադարան, ձեռ. 6763, էջ 20ա: Տե՛ս նաև ձեռ. 7664, 7588, 7337:

71 Ցիշատակարանք, Ա, էջ 379: Ավետարանի ընտիր օրինակներ են հայտնի նաև Կոստանդին Ուռհայեցու, Գևորգ Լամբրոնացու (Սկևռացու), Թորոս փիլիսոփա Դրազարկցու և այլոց անուններով, Սաղմոսարանը՝ Հովհաննես Սարկավագի, Վարդան Արևելցու և Հովհաննես Գառնեցու, Շարակնոցը՝ Գրիգոր Սսեցու (Խուլ մականվամբ՝ որից Խլկեցի) և Կոստընեցու, Աստվածաշունչը՝ Գևորգ Սկևռացու, Տաղարանը՝ Հեսու փիլիսոփայի, Մանրուսմունքը՝ Կոստանդնի անուններով և այլն:

72 Մատենադարանի, 4557 Ճաշոցը գրվել է «ի Սանահնոյ աւրինակէն»: «Առաքելոյն Տարոնոյ» օրինակներ են կոչվում մի Ավետարան և մի Ճաշոց: Աղեթցի է կոչվում մի այլ Ավետարան, Բագնայրցի՝ մեկ ուրիշը և այլն և այլն:

73 Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 56:

74 Մատենադարան, ձեռ. 3104, էջ 359ա:

75 Անդ, ձեռ. 2065, էջ 391ա:

76 Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 484:

77 Անդ, էջ 490, Բ, էջ 86 և այլն:

համար Մեծոփա վանք էին գալիս տարբեր վայրերից կամ օրինակներ էին տանում՝ արտագրելու, որովհետև այնտեղ պահվում էին այդպիսիք: Մեծոփա վանքում ընդօրինակությունները կատարվում էին վարդապետների հսկողության տակ, սրբագրված օրինակներից:

Ձեռագիրը անպայման ստուգվում, սրբագրվում էր, երբեմն, նույնիսկ, «կրկին և երեքկին»: Գրչության կենտրոն եղած վանքերն առհասարակ ունեին սրբագրող վարդապետներ, որոնք բնագրի մեջ կամ լուսանցքներում ավելացնում են գրչի աչքից վրիպած բառերը և երբեմն՝ փոքրիկ նախադասությունները[78]: Գրչության մեջ սխալները պատահական երևույթ չեն: Սրան եթե գումարենք այն, որ սխալը կարող էր գաղափար օրինակից գալ, որովհետև ամեն մի ձեռագիր «եթէ միոջէ գրեցաւ, յայլմէ օրինակեցաւ»[79], ինչպես նշում է Առոմ գրիչը, պարզ կլինի սրբագրության անհրաժեշտությունը:

Ձեռագրում մենք զանազանում ենք սրբագրության երկու տեսակ. առաջին՝ երբ ձեռագիրը գրելուց հետո սրբագրողը համեմատում է գաղափար օրինակի հետ, ուղղում է «գրոցս աւրինակաւն» և երկրորդ՝ երբ ձեռագիրը սրբագրվում է ոչ միայն գաղափար օրինակը հիմք ունենալով, այլև ուրիշ, մի կամ մի քանի ընտիր օրինակով: Այստեղ արդեն սրբագրողը բանասիրական աշխատանք էր կատարում, պարզում, թե որն է ճիշտը, գաղափար օրինակը, թե՝ մյուսները: «Բայց աւրինակաց անփոյթ չարարի, թէպէտ և ի բազմաց վկայեալ էին աւրինակքս, այլ երից և ի չորից և գի և ի հնգից աւրինակաց որչափ կարացի՝ ուղղեցի»[80] ―գրում է Վարդանը՝ Նարեկը սրբագրելու մասին: Սրբագրությունների և խմբագրությունների ծանր աշխատանքով ստեղծվում էին ստույգ և ընտիր ձեռագրեր, և դառնում գաղափար օրինակ:

Սրբագրությունը Մեծոփա վանքի գրչության կենտրոնում խնամքով էր կատարվում դեռևս Մխիթար Սասնեցու քարոզչական գործունեության շրջանում նրա իսկ ջանքերով: Արդեն տեսանք Նարեկի նրա խմբագրությունը, ուր «ոչինչ պակաս գտանիւր ի ճշմարտութենէ», երբ Մխիթարը ավելին քերել և ստույգն էր գրել[81]: Նա սրբագրել է նաև մեկնություններ, և իր

78 Գարեգին Յովսէփեան, Նիւթեր և ուսումնասիրութիւններ, պրակ Ա, Երուսաղէմ, 1935, էջ 62:

79 Ս. Տէր-Աւետիսեան, Ցուցակ Ն. Ջուղայի, 135:

80 Մատենադարան, ձեռ. 3589, էջ 344բ:

81 Հիշատակարաններ, ԺԴ, էջ 383, 489:

իսկ գործը՝ ճառերի ժողովածուն: ԺԵ դարասկզբում Մեծոփա դպրոցում սրբագրության գործը կատարում էին Թովմա բարունապետը և Հակոբ Ղրիմեցին և ոչ թէ գրելուց հետո, այլ մինչև ընդօրինակելը: Նրանք խմբագրում, լրացնում, վերականգնում էին գաղափար օրինակը, ապա Մխիթար Սասնեցու նման հանձնարարում աշակերտների ընդօրինակությանը. բավականին մեծ վաստակ ունի Թովմա Մեծոփեցին այս բնագավառում:

Ինչպես նկատել է Լ. Խաչիկյանը, դեռևս 1410 թ. Երևանում Քարոզգիրքն ընդօրինակելիս, նա Գրիգոր Տաթևացու «Վասն կարգաց աղօթից (սկ. «Զբերան իմ բացի և առի զհոգի...») քարոզի վերջում հավելում է կատարում. «Զնուաստ և մեղուցեալ պիտականուն վարդապետս Թովմա աղաչեմ յիշել ի Տէր, որ սակաւ ինչ աշխատեցայ և զպակասութիւն քարոզիս լցի ի հոգելից վարդապետաց բանից, որ էր թերի մնացեալ ի սուրբ հօրէն մերմէ»[82]: Հ. Տաշյանը, Վիեննայի Մխիթարյան Մատենադարանի 367 ձեռագիրը նկարագրելիս, գրում է, որ Թովմա Մեծոփեցին «կտոր մը ավելցուցած է հերձվածողների մոլորութիւնների մասին Գրիգոր Աստուածաբանի «Քրիստոս ծնեալ» ճառի լուծմունքին, որի վերջում էլ թողել է իր հիշատակարանը, որ՝ «եառոյ գտայ և գրեցի ի գիրս»[83]: Թովմա Մեծոփեցին, սրբագրում է Աղօթամատոյցը: Կիրակոս բանասերը գրում է, որ «գրեցաւ ընտիր և անսղալ Աղաւթամատոյց և Մեկնիչք և Տաւնացոյց ի լաւ օրինակաց»[84], որ Թովմա Մեծոփեցին ինչ արել է այդ բնագավառում, «առաջմէ ի սուրբ հարցն է ասացեալ», «...զի ես ստոյգ և զճշմարիտն ի բերանոյ սուրբ հարցն լսեցի, թէ զինչ որ ի ժամատեղս կարգեալ են, զմինն ոչ եդեալ եմ յինէն, այլ յառաջին սուրբ հարցն եմ առեալ և եդեալ ի գրի»[85]: Բարեբախտաբար հետագա ընդօրինակություններում պահպանվել է Աղօթամատույցի սրբագրության Թովմա Մեծոփեցու հիշատակարանը: «Սրբագրեցի զԱղօթամատոյցս յընտիր յընտիր աւրինակաց յաստուածաբան վարդապետացն և հոգիընկալ մերոյ ազգի թարգմանչացն, հրամանաւ սուրբ և երջանիկ վարդապետացն մերոց և համշիրակ հարազատ հոգևոր եղբարց: Եւ բաժանեցի յիններորդ

82 Մատենադարան, ձեռ. 6405, էջ 213բ: Հմմտ. Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 106, ծանոթ. 1:

83 Հ. Տաշեան, Ցուցակ Վիեննայի, էջ 755:

84 Գ. Յովսէփեան, Թովմա Մեծոփեցու կեանքը, էջ 5:

85 Անդ, էջ 5–6:

ստեղծեան զաղօթս հասարակաց՝ դիւրահաս և դիւրագիւտ ամենայն իմաստուն մտաց և թողաք բարի յիշատակ զինուորեալ եկեղեցւոյս մեր Հայաստանեայց... ի լուսաւորութիւն պայծառութեան հոգևոր որդւոց Աստուծոյ՝ գրոց աշակերտեալ անձանց և քահանայական դասուց միանձանց»[86]: Այսպիսով, Թովմա Մեծոփեցին ամբողջ ժամակարգությունը, բացի պատարագից, ինն մասի է բաժանել, այս և նրա մյուս՝ «Խրատք յաղագս պաշտամանց եկեղեցեաց Հայաստանեայց» գործը,—գրում է Գ. Հովսեփյանը,—որ անցել է տպագրված ժամագրքի և Տոնացույցի մեջ, Թովման նորամուծություններ չի արել, այլ վերցրել է նախնյաց կարգավորություններից[87]: Գ. Հովսեփյանը Աղոթամատույցի սրբագրության ժամանակի մասին գրում է. «Դժվար է պարզ հասկանալ, երբ է սրբագրել, Երևանի՞ց (1410 թ.), թե էջմիածնից (1442–4) Մեծոփ վերադառնալուց հետո... մենք հավանական ենք համարում առաջինը»[88]: Նա ելնում է Դավիթ Բաղիշեցու վկայությունից. «Եւ եկեալ վարդապետն Թումա միւս անգամ ի Մեծոփ և սրբագրեաց զՍաղմոսն, զԱղօթամատոյցն»[89]: Իսկապես. Թովմա Մեծոփեցին ե՞րբ է սրբագրել Աղօթամատույցը: Մկրտիչ վարդապետի ստացած Աղօթագրքի գրիչը օրինակել է հին հիշատակարանի հետ միասին նաև հետագա ստացողի հիշատակարանը: Ձեռագրի երկրորդ տերը՝ Մեծոփա վանքի արքեպիսկոպոս Հովհաննեսն է, Թովմա Մեծոփեցու աշակերտը, որը մահացել է 1435 թ. առաջ: Ուրեմն այն սրբագրված էր դրանից առաջ, այսինքն — 1432 թ. — Վաղարշապատից վերադառնալուց առաջ: Աղոթամատույցի հիշատակարանի այն ակնարկությունը թե՝ «սրբագրեցի... հրամանաւ սուրբ և երջանիկ վարժապետացն մերոց և համշիրակ հարազատ հոգևոր եղբարց»[90] վկայում է, որ այն սրբագրվել է 1410 թ. հետո: Մեր կարծիքով, Աղոթամատույցի ճշգրտումներն ու սրբագրու-

86 Մատենադարան, ձեռ. 5211, էջ 432ա: Վենետիկի Ծե Սաղմոսարանի սկզբի ժամագիրքը ընդօրինակված է Մեծոփեցու Աղօթամատույցից, 1663 թ. Խոբեան կամ տեղի գավառի Խլպաշի սբ. Կարապետ վանքում, բայց Բ. Սարգիսյանը սխալմամբ տեղը դնում է Մեծոփա վանքը (տե՛ս Ցուցակ, Ա, էջ 354):

87 Գ. Յովսէփեան, Թովմա Մեծոփեցու կեանքը, էջ ԻԹ:

88 Անդ:

89 Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, 13–18-րդ դդ., հտ. Բ, Երևան, 1956, էջ 353:

90 Մատենադարան, ձեռ. 744, էջ 405:

թյունն էլ հենց եղել է Թովմա նորընծա վարդապետի ատենախոսության նյութը, արտասանված Երևանի Անանիա առաքյալի ուխտում: Երբ Գրիգոր Տաթևացին նրան վարդապետական գավազան շնորհեց, հավանաբար նաև «Հրաման» տվեց Աղոթամատույցը կարգավորելու մասին: Այս դեպքում միայն հասկանալի է դառնում «Հրամանաւ... վարժապետացն մերոց» արտահայտությունը: Այդ վարժապետները Գրիգոր Տաթևացին, Հակոբ Սաղմոսավանեցին, Առաքել Սյունեցին, Սիմեոն Եղվարդի բաբունապետը, Հովհաննես Մեծոփեցին էին, իսկ համշիրակ եղբայրները՝ իր հետ գավազան ստացածները և մյուսները, որոնք գտնվում էին Երևանում: Դրանից հետո է սրբագրել նա Սաղմոսարանը և Տոնացույցը[91], ինչպես գրում է Վարդան Բաղիշեցին[92]: Խմբագրական-գրական աշխատանքները Թովմա Մեծոփեցին կատարել է դասախոսություններին զուգընթաց, որոնցից մի քանիսը դասախոսել է Մեծոփա դպրոցում: Այդ աշխատանքներից հիշենք Սարգիս Կունդի Ղուկասի Ավետարանի մեկնությունը: «Առաջին աւրինակն գրեալ էր ի սուրբ ուխտն Եղէվարդու, ի դուռն Սրբոյ եկեղեցոյն Թէոդորոսի, որ էր գրեալ յառաջին օրինակէն, ձեռամբ աշակերտաց սուրբ վարդապետին Սարգսի՝ Դաւթի և Ներսէսի՝ յոյժ սխալ»: Գրության ժամանակը 1197 թվականն է: «Բայց սկիզբն անկեալ էր, մինչև «յամանեանն վեցերորդի» զնախերգան Իգնատիոսին եղի, և զցանգ խորանացն նոր եղի, զի դիւրագիւտ և առձեռն պատրաստ ուսումնասիրացն եղիցի: Այլ սղալանացն անմեղադիր լինել աղաչեմ, զի էր ինչ որ ջնջեալ էր, և էր ինչ որ գրիչն սխալեալ էր, զի ՄԼ (230) ամաց էր: Եւ յոյժ աշխատութեամբ ի յաւարտ ածաք»: Այն կատարվել է 1427 թվականին[93]: 1435 թ. Թովմա Մեծոփեցին խմբագրում, ապա ընդօրինակել է տալիս Խմբագիր Մեկնութիւն չորեքտասան թղթոցն Պաւղոսի գործը, «որ էր թաքուցեալ յանկեան ուրեք՝ ի խաւարի տգիտութեան, անփոյթ եղեալ յուսումնասիրաց անձանց, վասն դառնութեան ժամանակաց պատահմանց եւ վասն աւերման մերոց աշխարհաց»[94]: Այդ պատճառով «Կորուսեալ էր գիրս այս և ի դուրս անկեալ ի դասատանէ սուրբ վարժապետացն մերոց՝ մեծին Գրիգորի Տաթևացւոյ, եւ սրբոյն Սարգսի եւ Վարդանայ՝ նորին

91 Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, 13–18-րդ դդ., Բ, էջ 353:
92 Գ. Յովսէփեան, Թովմա Մեծոփեցու կեանքը, էջ 5:
93 Մատենադարան, ձեռ. 5591, էջ 241ա:
94 Անդ, ձեռ. 1380, էջ 343ա:

աշակերտի»[95]: Թովմա Մեծոփեցին ոչ միայն պատանի գրչի Հովհաննես Մանկասարենցի «աւգնականութեամբ աշխատեցաւ ի յըղորդել գրոցս»[96], այլև «յաւելեալ եդի ի սմա — գրում է նա — մեկնողաւրէն զցանգ մեծին Եւթաղի եւ զամենայն որոշմունս բաժանմանց նորա՝ զնիթերցուած, զգլուխ, զվկայութիւն, զտուն, զնախադրութիւն, զվասնէրն, և ետու ի ձեռս մանկանց եկեղեցեացդ Հայաստանեայց»[97]: Ձեռագիրը Հովհաննես Մանկասարենցի հետ միասին ընդօրինակում է Ստեփանոս դպիրը, և մասամբ՝ վերջինիս հայր նշանավոր գրիչ Կարապետը: Մի էջում նկարված է Թովմա Մեծոփեցին:

Նա սրբագրել է նաև «Կարգ աւրհնութեան սուրբ իւղոյն հիւանդաց» և «Կարգ աւրհնութեան հիւանդաց» նյութերը: Սրբագրելու մասին հիշատակարանը հանձնել է Հովհաննես սարկավագ Արճիշեցուն (Մանկասարենցին) ընդօրինակելու: «...Եւ ես մեղապարտս ի մանկունս եկեղեցւոյ սուտանուն վարդապետս Թովմա՝ առաջնորդ սուրբ ուխտիս Մեծոփայ, վերստին սրբագրեցի զսա: Եւ ետու գրել զսա հոգևոր որդւոյ իմոյ Յովաննէս սարկաւագի Արճիշեցւոյ»[98]:

Ինչպես վերևում տեսանք, սրբագրական և խմբագրական աշխատանք էր կատարում նաև Հակոբ Ղրիմեցին: Թե մեկը և թե մյուսը այն կատարում էին «ի յուսումն վարդապետաց եկեղեցւոյ և ի գիտութիւն մանկանց Սիովնի» — գրում է Թովմա Մեծոփեցին[99], «զի դիւրին լիցի ուսումնասէր մակացուարանց»[100] — պարզաբանում է Հակոբ Ղրիմեցին:

* * *

Մանրանկարչությունը գրչության արվեստի ամենակարևոր բաղադրիչն է՝ գրի և գրելու արվեստից հետո: Պատահական չէ, որ մանրանկարչության հմուտ մասնագետը

95 Անդ, էջ 117ա:
96 Անդ, էջ 229բ:
97 Անդ, էջ 343ա::
98 Անդ, ձեռ. 7117, էջ 345բ:
99 Հիշատակարաններ, ԺԵ,Ա, էջ 106:
100 Անդ, էջ 186:

համարվում է հմուտ նաև գրչության արվեստին: Ավետիս գրիչը 1272 թ. Հայոց Կեռան թագուհու համար գրած ձեռագիրը տալիս է «ի ձեռն այլում հմուտ և յարգի յարհեստ գրչութեան զարդարեալ զսա խորանաւք և ծաղկաւէտ վայելչութեամբ և ոսկիատիպ պայծառութեամբ»[101], իսկ Թորոս Ռոսլինը Կոստանդին Բարձրաբերդցի կաթողիկոսի՝ իրեն տված պատվերի մասին գրում է. «Հրաման տայր զգործի գրչութեան... զանազան նիւթաւք և երփն-երփն գունաւք վայելչացուցանել զսա»[102]:

Մանրանկարչությունը, որոշ իմաստով, ընդօրինակման արվեստ էր հատկապես սկզբնավորման շրջանում, երբ գրիչները արտագրում էին ձեռագրի բնագիրը և արտանկարում զարդանկարները: Առաջին ձեռագիր ավետարաններն ընդօրինակելիս, կանոնական տախտակները գրելիս, խորանները գծելիս, գլուխները բաժանելիս ու նշանագրերը նշանակելիս նրանք գործ ունեին մանրանկարչության տարրերի հետ: Ավետարանը գեղեցիկ, ճկուն, զգաստ և ուղիղ տառատեսակներով ընդօրինակող գրչի համար դժվար գործ չէր գծել նաև համաբարբառի խորանները:

Ծաղկողների «զարդարիչ» և «պատկերագրիչ» անունները տալը ցույց է տալիս, որ զարդագրությունը և զարդանկարչությունը գրչության արվեստի մասն էին, գրիչը իր վարպետից սովորում էր գրել և ծաղկել: Հին ձեռագրերում երբեմն հանդիպած հասարակ զարդագրությունն ու զարդանկարչությունը ոչ թե հետևանք են մանրանկարչության տարրերի նոր միայն ձևավորման, այլ հին գաղափարից ընդօրինակելու, հին ձևերի պահպանման: «Մանրանկարչական հին արվեստի մեջ, առհասարակ, — գրում է Գ. Հովսեփյանը, — արվեստագետը շատ էր կաշկանդված ավանդական տվյալներով, այդ պատճառով էլ նրանցից շատերը պարզ արտանկարողի դերումն են՝ հետևելով իրենց օրինակներին: Միայն տաղանդավորներն են որ ավանդականի վրա իրենց անհատական դրոշմն են դնում տեխնիկայի առավելություններով և նոր ստեղծագործություններով ու գծերով»[103]: Այս կաշկանդվածությունը ստիպել է մանրանկարիչներին հարազատ մնալու ընդօրինակվող զարդամոտիվներին: Այս «հավատարմությունը» հնարավորություն տվեց զարդամոտիվների նախնական ձևերի հայտնաբերմանը բազմապիսի և բազմաքանակ տարբերակներով, որոնց հիման

101 Երուսաղեմ, ձեռ. 2563, էջ 373բ (մանրաժապավեն):

102 Ն. Պողարեան, Ցուցակ Երուսաղէմի, Գ, էջ 16:

103 Գ. Յովսէփեան, Նիւթեր և ուսումնասիրութիւններ, Ա, էջ 71:

վրա Ա. Մնացականյանը բացահայտեց հայկական զարդարվեստի հիմնական մոտիվների ծագման և գաղափարական բովանդակության հարցերը[104]:

Փղոսկրե կազմով 989 թ. գրված Ավետարանը արտագրված է «յստոյգ ի հին աւրինակաց»: «Բեգյունց» ավետարանի (ԺԱ դար) խորանների ձևավորումը նման է 6—7-րդ դ. հնագույն ձևերին, նշում է Գարեգին Հովսեփյանը[105]: Հիանալի ու ճոխ նկարներով զարդարված է մեզ հասած առաջին ամբողջական Ավետարանը (862 թ.) որ հայտնի է «Մլքէի Աւետարան» անունով: Ժամանակով նրանից քիչ ուշ գրված Լազարյան Ավետարանը նույնպես նկարազարդ է եղել[106]:

Հայ գրչության արվեստի ձևավորման հետ հայ մանրանկարչության սկզբնավորման ապացույց է նաև Մեսրոպ Մաշտոցին և Սահակ Պարթևին վերագրվող Թարգմանչաց ավետարանների ընտիր և ստույգ օրինակների գոյությունը, որոնցից ընդօրինակում էին ոչ միայն բնագիրը, այլև կանոնական ձևը, խորաններն ու նշանագրերը: Գրիգոր Մուրղանեցի հռչակավոր գրչի և գիտնականի կարգավորված Ավետարանը ընտիր էր ոչ միայն բնագրի ստուգությամբ, այլև գեղարվեստական հորինվածքով: Հովհաննես գրիչը վստահեցնում է, որ իր արտագրածը «է ի Սսիցի աւրինակէ գիրս և ծաղիկս»[107]:

Մանրանկարչությունը շատ վաղ ձևավորվեց որպես առանձին մասնագիտություն, գրչության արվեստի ընդհանուր հիմքի վրա: Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ, 9-րդ դարում Տաթևի դպրոցում սովորեցնում էին «նաև արհեստաւորք նկարչաց և գրողաց անհամեմատք»[108]: Արհեստավոր այս նկարիչներն էին տոն տալիս հայ մանրանկարչության զարգացմանը: Սակայն նրանցից ավելի հմուտները նաև

104 Ա. Մնացականյան, Հայկական զարդարվեստ, Երևան, 1955:

105 Ա. Ալպոյաճեան, Պատմութիւն Հայ Կեսարիոյ, Բ, Կահիրէ, 1937, էջ 559: Հեղինակը հենվում է Գ. Հովսեփյանի՝ նամակով իրեն հայտնած տեսակետի վրա:

106 Մատենադարան, ձեռ. 6200: Ա պրակի 8 թերթերից երկուսն են պահպանվել, որոնց երեք էջերում Եվսեբիի նամակն է, իսկ մեկում համաբարբառի Ա կանոնը: Ուրեմն բացակայող 6 թերթերի 12 էջերը նույնպես զբաղված են եղել համաբարբառի խորաններով և տերունական նկարներով:

107 Մատենադարան, ձեռ. 8879, էջ 7ա:

108 Ստ. Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 226:

գրիչներ էին, ինչպես հմուտ գրիչները՝ նաև ծաղկողները: Այս է պատճառը, որ մանրանկարչությունը երբեք միայն ծաղկողների մենաշնորհը չդարձավ, գրիչ մանրանկարիչներն այն պահեցին, որպես իրենց գրչության արվեստի անկապտելի մաս, և նրանցից դուրս եկան հայ մանրանկարչության հսկաները: Գրիչ-ծաղկողները իրենց գրիչ էին կոչում: Այդպես էին կոչում նրանց նաև ուրիշները: Միքայել Սեբաստացի գրչի և ծաղկողի համար, որ 1670 թ. ընդօրինակել է Թորոս Ռոսլինի 1262 թ. Ավետարանից, հանճարեղ ծաղկողը ուրիշ բան չէր, եթե «պատուական գրիչն Թորոս մականուն Ռոսլին կոչեցեալ, զծաղկող օրինակիս»[109]:

Մողնու Ավետարանի գրիչ և ծաղկող Հովհաննեսը, որ ապրել և ստեղծագործել է ԺԱ դարում, իրեն գրիչ է համարում: ԺԲ դարավերջի գրիչ և ծաղկող Կոզման իրեն կոչում է «Կոզմա անարժան գրիչ»[110]: Նույնպես են վարվել նաև Սիմեոն Արճիշեցին և գրիչներից շատ շատերը, որոնք նաև հմուտ ծաղկողներ էին:

Բազմաթիվ հնագույն ձեռագրեր, որոնց հիշատակարանները կորած են, սկզբից պակաս են նկարները, և մնացել են միայն լուսանցազարդերն ու զարդագրությունները, երբեմն էլ առանձին զարդանկարներ, մեծ մասամբ զարդարվել են տվյալ ձեռագրի գրչի կողմից: Գրիչները, որ բարեխղճորեն հիշում են մագաղաթ հետողին ու թուղթ կոկողին, միջնորդին ու մի աման ապուր կամ միրգ բերողին, չէին կարող ծաղկողին չհիշել, եթե նա այլ մարդ էր: Գրիչների այդ լռության պատճառը մեծ մասամբ հենց իրենց ծաղկող լինելու հանգամանքն է, որը չեն արձանագրում՝ ծաղկելը համարելով գրչի գործի մի մասը[111]:

Միջնադարում ոչ թե գրչի ծաղկող լինելու վրա չէին կասկածում, այնտեղ անպայման ուրիշ ծաղկող գտնելու համար, այլ չհիշատակված ձեռագրերում կասկածելի էր

109 **Sirarpie Der-Nersissian,** Armenien manuscripts in the Freer Galery of art, Washington, 1963, էջ 119:

110 *Մատենադարան, ձեռ. 7734, էջ 1ա, 2բ:*

111 *Մանրանկարչության արվեստի հետազոտողը շատ զգույշ պետք է լինի այս հարցում, որպեսզի գրչին չզրկի իր մանրանկարից, ոչ էլ նրան ընծայի ուրիշի մանրանկարը: Դրա համար նա ոչ միայն մանրանկարչության, այլև գրչության արվեստի, տվյալ գրչի, գրչության կենտրոնի ու դպրոցի պատմության մեջ պետք է խորամուխ լինի: Այսպիսի պայմաններում միայն հնարավոր կլինի կրճատել մեր մանրանկարչական ալբոմներում և ուսումնասիրություններում ճնշող տպավորություն թողնող անհայտ ծաղկողների առատությունը:*

գտնում ուրիշ ծաղկողի գոյությունը: 1064 թ. ընդօրինակած մի ձեռագրի չորս ավետարանիչների նկարներն ամփոփող շրջանակի մոտ, ձեռագիրը ծաղկելուց ոչ շատ ուշ, հին բոլորգրով գրված է. «Կարծեմ գրագիրն, որ գրեց զԱւետարանս, ինքն ոչ էր հանել զայս պատկերնիս, եւ այս ստոյգ յիրեւի, որ չեն սոքա շատ աղուուրք»[112]: Այս նշանակում է, որ՝

ա. Գրիչը չի ծաղկել Ավետարանը, որ, որպես սովորական երևույթ, պետք է ինքը ծաղկեր:

բ. Գրիչը մինչ այդ ծաղկել է ուրիշ Ավետարան, որը հայտնի է դիտողությունն անողին: Ապացույցը այն է, «որ չեն սոքա շատ աղուուրք», քան մյուսները, որոնք, անշուշտ, աղվոր են եղել: Ուրեմն, գրիչը նաև ծաղկող է: Հասկանալի է, որ մենք չենք առաջարկում ծաղկողի անունը չհիշատակված ձեռագրի մանրանկարչությունը անպայման և անվերապահորեն գրչինը համարել, այլ ծաղկողին, նախ և առաջ, փնտրել գրչի մեջ, ապա նոր նրանից դուրս, որովհետև 13 և 14-րդ դարերում, եթե հազվադեպ են այն նկարիչները, որոնք գրելով չէին զբաղվում, ապա բազմաթիվ էին այն գրիչները, որոնք ծաղկելու շնորհք ունեին[113]:

Ինչպես գրիչներից շատերը, այնպես էլ բազմաթիվ ծաղկողներ ինքնուս էին. «Անմեղադիր լերուք խոշորութեան և անարհեստութեան ծաղկիս, զի անվարպետ էի»[114]: Սրանք անվարժ լինելով հանդերձ, արտանկարել են գաղափարից, սակայն ծաղկողներ կան, որ ոչ թե արտանկարել, այլ «ըստ մտաց» են հանել, ստեղծագործել են առանց օրինակի: «Զծաղիկն ի մտաց կու հանեմ» գրում է Ալինախ Տարոնացին[115]: Զմմառի ձեռագրերից մեկի գրիչը գրում է. «Ով եղբարք, զծաղիկն վարդապետաց ոչ եմ հանեալ, այլ ըստ իմ

112 *Երուսաղեմ, ձեռ. 1924, էջ 11 (մանրաժապավեն): Հմմտ. Ցիշատակարանք, Ա, էջ 247: Գ. Հովսեփյանը վերջին բառերը արտագրել է «սղքաշատ(?) աղռերք(?) ձևով, հարցական նշանով: Ր տառի գլխագծի ծայրը կպած է ք-ի գծիկին և ղ-ի տպավորություն է թողնում, որը և շփոթմունք է առաջացրել և տեղիք տվել թյուր ընթերցման: Մյուսները ճիշտ են կարդացվում:*

113 *Գրիչների նման ծաղկողներն էլ իրենց բազմաթիվ անուններով էին կոչում և ամենից առաջ գրիչ (այսպես. «փցուն գրիչ, որ գրեցի և ծաղկեցի ձեռագիրս») ապա՝ ծաղկող, նկարող, նկարակերտող, պատկերագրիչ, պատկերահան, նաղաշ, դեղող, սանդրող նկարի և այլն:*

114 *Մատենադարան, ձեռ. 8897, էջ 183բ:*

115 *Բ. Կիլեսէրեան, Ցուցակ Անկիւրիոյ, էջ 1291:*

մտացս արարի»[116]: Այս նշանակում է նաև, որ նկարները սովորաբար «վարպետաց էին հանում», այսինքն, վարպետից սովորում և վարպետի նկարածից արտանկարում էին: Անվարժ էին լինում նաև ծաղկողների առաջին նկարազարդումները, կամ «առաջին ծաղիկը». «Մի մեղադրէք, զի առաջին ուսումն և ծաղիկս այս էր»[117]:

Տարբեր բովանդակության ձեռագրերը տարբեր ձևով և չափով էին նկարազարդվում, որովհետև մանրանկարչությունը միայն զարդ չէր, այն ավելի մեծ նպատակներ էր հետապնդում. նա կոչված էր բացահայտելու նկարազարդվող գրքի բովանդակությունը, նպաստելու նրա ճիշտ հասկացվելուն, որպեսզի նյութի ըմբռնմանը նաև աչքը մասնակցի: Ահա թե այդ ինչպես էր հիմնավորվում միջնադարում: «Արդ ի պատճառս ուսումնասիրաց գրեցին զայսոսիկ սուրբ հարքն, որ չասեն անգէտքն, թէ վայրապար է նկարած խորանքս և սիւներս, ծառերս և հաւերս, թէպէտ աւրինակ է գրեալս, բայց զգալեաւս ճանաչեմք իմանալին և ապա փոքր ի շատէ գիտենալ կարեմք, զի մարմնոյ աչօքս նախ տեսեալ և ապա ի հոգոյ ակն ազդեալ»[118]: Ծաղկողները, լուսանցազարդերը կամ տերունական նկարները նկարելիս, աշխատում էին որքան հնարավոր է ավելի բացահայտել ձեռագրի բովանդակությունը: «Լուսանցանկարները երբեմն ընթերցվածներու սկիզբը կը գտնվին, բայց ավելի հաճախ այդ տեսարաններու վերաբերող տողերուն մոտ»[119],— գրում է Սիրարփի Տեր-Ներսիսյանը:

Ծաղկողները երբեմն նաև սրբագրում էին ձեռագրերը: Այս խիստ պատասխանատու աշխատանքը ցույց է տալիս, որ նրանք իրենց գործունեության ասպարեզի համար բազմակողմանի կրթություն էին ստանում, Մշո Ճառընտիրի ծաղկող Ստեփանոսը նաև ձեռագրի սրբագրիչն է[120]: «Ով իմ հոգևոր հայր,—դիմում է մի գրիչ ծաղկողին,—ծաղկելու ժամանակ լաւ միտ դնես զգրչիս պակասն և զմտացս»[121]:

---

116 Հ. Քեշիշեան, *Ցուցակ Զմմառի*, էջ 91:

117 Բ. Սարգիսեան, *Ցուցակ Վենետիկի*, Ա, էջ 714:

118 *Մատենադարան*, ձեռ. 3774, էջ 4բ:

119 Սիրարփի Տէր-Ներսիսեան, *Կիլիկեան մանրանկարչական Աւետարան մը*, «Հանդէս ամսօրեա», 1961, էջ 1003:

120 Ա. Մաթևոսյան, *Ե՞րբ և ո՞րտեղ է գրվել Մշո Տոնական-Ճառընտիրը*, «Բանբեր Մատենադարանի», 1969, № 9:

121 Ա. Սիրմէյեան, *Ցուցակ Հալէպի*, Ա, էջ 69:

Ծաղկող՝ Սինաա
Ձեռ. N 952

Հայ ժողովրդի ձեռագրական մշակույթի ստեղծողները՝ գրիչներն ու ծաղկողները, մեծ մասամբ կանգնած են եղել ժամանակի մտավոր զարգացման բարձր աստիճանին և ստեղծել են համամարդկային արժեքներ:

Մեծոփա վանքի գրչության կենտրոնում, 13-րդ դարավերջին և հաջորդ դարասկզբին, որպես գրչության արվեստ տարը, ծաղկում էր նաև մանրանկարչության արվեստը նույն Մխիթար Սասնեցու ջանքերով: Դժբախտաբար գրչից մեզ հասած միակ Ավետարանը, որ նկարազարդ է, գտնվում է Ամերիկայի Միացյալ Նահանգներում՝ Հ. Քյուրդյանի մոտ, և նրա մասին որևէ բան ասել չենք կարող: Նրանից հայտնի ոչ մի հիշատակարանում չի նշված Սասնեցու ծաղկող լինելը: Մխիթար գրիչը այդպես էլ անհայտ կմնար որպես ծաղկող, եթե չլիներ Մկրտիչ Մեծոփեցու վկայությունը, թե նա «յոյժ վարժ գոլով յարուեստս գրչութեան և ի ծաղկազարդ նկարակերտութիւնս գրոց...»[122]*: Այս մեջբերումը մի ավելորդ անգամ ապացուցում է մեր վերը ասածը: Մխիթար Սասնեցու աշակերտներից մեզ հասած սակավաթիվ ընդօրինակությունները նկարազարդ չեն: Մեծոփա վանքի գրչության դպրոցը այդ ժամանակ Մխիթար Սասնեցուց բացի մանրանկարչության ուրիշ ներկայացուցիչ չի տվել: Այնինչ Արճեշի գրչության կենտրոնում Սասնեցու հարևանությամբ աշխատում էր տաղանդավոր գրիչ և նկարիչ Սիմեոն Արճիշեցին, որի ընդօրինակությունները օրինակներ էին ծառայում ոչ միայն Քաջբերունիքի, այլև Ռշտունիքի, Խիզանի և Վանա լճի շրջակայքի այլ գավառների գրչության կենտրոնների համար: Նրա և աշակերտների ջանքերով Ծովաբոլորում ձևավորվեց 14-րդ դարի մանրանկարչությունը: Քաջբերունիքի Արճեշ, Ուռնկար կենտրոններում այդ ժամանակ հռչակված էին Հովհաննես և Կիրակոս ծաղկողները, որոնք, հավանորեն, Սիմեոն Արճիշեցու աշակերտներն էին: Սիմեոնը հմուտ գրիչ էր, վարժ և գրչության, և մանրանկարչության մեջ, իսկապես գրքի գեղարվեստական ձևավորման կատարյալ վարպետ էր: Նա կանոնավոր անխառն բոլորգրով, տողամիջյան լայն տարածություններով և լուսանցներով, ճաշակով զարդանկարված միջին մեծության ավետարաններ էր ընդօրինակում: Նույն Արճեշում այդ ժամանակ գոյություն ուներ մի այլ դպրոց՝ Խաչատուրի գլխավորությամբ: Խաչատուրի աշակերտի բոլորգրի մեջ երկաթագրերի ենք հանդիպում: Տառերը մարմնով նստած են ոչ թե տողագծի վերևում, ինչպես Սիմեոնի մոտ, այլ*

122 Գ. Յովսէփեան, *Մխիթար Սասնեցի*, էջ 31:

ուղղակի նրա վրա. գիծը անցնում է տաուամարմինների մեջտեղով: Մի սյունակում ավարտվում է ավետարանը, անմիջապես այդտեղից դրան հաջորդում է մյուսը, իսկ ավետարանիչը՝ խցկվում է կողքի սյունակը կամ, մյուս դեպքում, ձուլվում ավետարանատաջ կիսախորանին: Տարբեր է նաև կետադրությունը: Այստեղ ամեն ինչի մեջ նեղվածք ես զգում և ինքդ նեղվում ես: Չկա Սիմեոնի ու նրա աշակերտների ընդօրինակությունների ազատությունն ու ակնապարար հաճելիությունը: Եթե միևնույն վայրում նույն ժամանակում տարբեր գրիչների մոտ տարբեր էր գրչության ու մանրանկարչության որակը, ապա բնական է, որ իրարից պետք է տարբերվեն նաև Մեծոփա վանքի րաբունապետներ Մխիթար Սասնեցու և Թովմա Մեծոփեցու (Գլաձորի և Տաթևի համալսարանների սաների) ու նրանց աշակերտների ընդօրինակությունները: Մանրանկարչությունը Մեծոփա վանքում ծաղկում է 15-րդ դարում: Քաջբերունիքը տալիս է իր մյուս նշանավոր ծաղկողին: Այս անգամ Մեծոփա վանքի դպրոցն է ծաղկողի սննդավայրը: Սա ևս իր ազդեցությունն է տարածում ոչ միայն Քաջբերունիքում, այլ նաև Վանում, Աղթամարում, Կտուցում, Արծկեում և Վանա լճի շրջակա գրչության մյուս կենտրոններում: Այդ նկարիչը Թովմա Մեծոփեցու աշակերտ Մինաս ծաղկողն է, որը, մանրանկարչական արվեստի անվանի տեսաբան Ս. Տեր-Ներսիսյանի կարծիքով, «կարևոր տեղ կգրավե ԺԵ դարու գեղարվեստական պատմության մեջ»[123]: Նա փառաբանվել է դեռևս կենդանության օրոք, որպես «անյաղթ նկարող», «քաջ նկարաւղ»: Հովհաննես Արծկեցին նրա մասին գրում է, «որ յար և նման է Ադդէ կերպասագործին»[124], իսկ Խաչատուր գրիչը՝ «որ յար և նման է Բերսելիէլի՝ զարդարաւղին տապանակին, և կուսութեամբն՝ Յեսուայ՝ որդոյ Նաւեայ, և իմաստութեամբն՝ Սողոմոնին...»[125]:

Մինաս ծաղկողը որդին էր Մախթումի և Մսըր-Մելիքի: Ծնվել է մոտավորապես 1410-ական թվականներին, որովհետև 1432 թ. արդեն Մեծոփա վանքի դպրոցում ճանաչված ծաղկող էր:

Խաչատուր գրչի վկայությամբ, Մինաս ծաղկողը «...է յաշակերտաց սրբոց վարդապետացն Թումայի [և] Մկրտիչ

---

123 Ս. Տէր-Ներսիսեան, *Մինաս նկարող և իր ծաղկած նկարները*, «Սիոն», 1951, էջ 142–146:

124 *Մատենադարան, ձեռ. 982 էջ 531բ:*

125 *Մատենադարան, ձեռ. 4883, էջ 613բ:*

Ավչեքկենց վարդապետին և է բանիբուն և հոգիընկալ որպէս զվարդապետքն իւր ամենայն իմաստութեամբ և եւթնարփեան ջահուքն հոգւոյն»: Առաջին անգամ ծաղկողին հանդիպում ենք հենց այս երկուսի հետ. 1432 թ. Մկրտիչ վարդապետը՝ Կարապետ գրչին Ճաշոց է օրինակել տալիս, ուր հիշում է «Նաև զհոգևոր որդեակս իմ զՄինաս դպիրն, որ զգիրս ծաղկեաց»[126]: Ձեռագիրը մեզ չի հասել: Հաջորդ տարում Մինասը ծաղկում է Կարապետի՝ Արճեշում ընդօրինակած մյուս Ավետարանը[127]: «Այս ձեռագրում ծաղկող Մինասը թողել է խորանների և ավետարանիչների ինքնատիպ նկարներ»[128]—գրում է Լ. Խաչիկյանը: Խորանների և լուսանցազարդերի մեջ օգտագործված է ոսկի: Լուսանցքները ծանրաբեռնված չեն: Այս ոճով է նկարված Թովմա Մեծոփեցու նկարը՝ 1435 թ. Մեծոփա վանքում ավարտված ձեռագրում: Գահավորակին բազմած Պողոս առաքյալի առջև ծնկաչոք՝ Թովմա Մեծոփեցին նրան է պարզում գիրքը, որը կորստից փրկել և սրբագրել է ինքը: Ծաղկող աշակերտը սիրով է կատարել ուսուցչի նկարը:

Այնուհետև Մինաս ծաղկողին տեսնում ենք մերթ Մեծոփա վանքում ու Արճեշում, Խառաբաստա վանքում ու Լիմում, մերթ Արգելանում ու Վանում, Կտուցում ու Աղթամարում, Արծկեում ու Ոստանում և ամեն տեղ՝ նկարելիս, սովորեցնելիս, խրատելիս: Չորս տարի Աղթամարում ծաղկում է, հովանավորում ու աշակերտներ պատրաստում: Նրան սիրով են հիշում ժամանակի այն գրիչները, որոնց հետ նա աշխատել է: Մինաս ծաղկողը նկարազարդել է ոչ միայն Ավետարան, այլև Հայսմավուրք, Տոնական, Ճաշոց, Շարակնոց, և այլ բնույթի ձեռագրեր: Բազմաթիվ և բազմաբնույթ ձեռագրերի նկարազարդումները նկարչից պահանջում էին բազմակողմանի պատրաստվածություն: Մինաս ծաղկողը կաղապար չէր օգտագործում. նրա նկարները իրարից պատճենահանված գործեր չեն, և տարբեր են ոչ միայն կատարմամբ: Ս. Տեր-Ներսիսյանը, քննելով Երուսաղեմում պահվող Դավիթ քահանայի և Հովհաննես Մանկասարենցի Ավետարանները, որոնք նկարազարդել է Մինասը, գտնում է, որ որոշ նկարներ ավետարանների մեջ չեն նկարվել,

---

126 *Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 424:*

127 *«զՄինաս ծաղկողս և ծնողս իմ յիշեցէք ի Քրիստոս» (Մատենադարան, ձեռ. 5172, էջ 228բ):*

128 *Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 435:*

այլ միայն Աստվածաշնչի, և որ Մինասը դրանք առաջին անգամ է մուծում ավետարանի նկարազարդման մեջ[129]:

Մեծ վարպետությամբ է նկարազարդված Մատենադարանի 9858 Ավետարանը, որի ստացողը ինքը ծաղկողն է: Դժբախտաբար բոլոր տերունական և առաջին երեք ավետարանիչների նկարները հանված են. մնացել է միայն Հովհաննեսի նկարը, որը գաղափար է տալիս նկարչի վարպետության, կատարելության մասին: Գեղեցիկ լուսանցազարդերը երբեմն զբաղեցնում են ամբողջ լուսանցքը. կան հազվադեպ հանդիպող զարդագրեր[130]: Ծառընտիր նկարելիս՝ լուսանցքներում պարզ, համարյա բուսական զարդեր է օգտագործում՝ նյութերը նշանակելու համար և նկարում է երկու կամ չորս թերթ տերունական նկարներ ու խորաններ: Հայսմավուրքի լուսանցքներում՝ վարքի կամ վկայաբանության հերոսին է նկարում՝ համարժեցնելով նյութին: Օգտագործում է երբեմն խորհրդանիշեր: Շատ բանաստեղծական է Շուշանի վկայաբանության լուսանցազարդը: Լուսանցքի վերևից պոկված վայր է ընկնում կապույտ շուշանի ծաղկակոթը, վրան՝ Շուշան Վարդուհու դիմանկարը՝ լուսապսակի մեջ: Վկայաբանությունը այդպես է նկարազարդված նրանից մեզ հայտնի երկու Հայսմավուրքներում[131]: Ծաղկողին վերջին անգամ հանդիպում ենք 1483 թվականին: Վերջին շրջանում նա շատ էր օգտագործում թանձր կարմիր գույնը: Թանձրացած էին նաև մյուս գույները: Այդպես էին նաև նրա աշակերտները՝ Կարապետ Բերկրեցին, Կարապետ Աղթամարցին և Մուրատ Աղթամարցին:

«Այս բազմաշխատ և ճարտար արվեստագետին» Ս. Տեր-Ներսիսյանը վերագրում է 13 ձեռագրեր,—«հինգը հաստատ կերպով՝ Երուսաղեմ, Փարիզ, Նյու-Յորք (Մորգանի թանգարան և Հ. Հազարյան), մյուսները՝ ենթադրական, բայց համոզիչ պարագաներով»[132]: Իրավացի է հեղինակը, որ «այս շարքեն դուրս կձգե այն մատյանները, ուր Մինասը իբրև գրիչ հիշված է, ինչպես 1456 թ. Արճեշ գրված Ավետարան մը» (Լալայան, 423–424) (այժմ՝ Մատենադարան, ձեռ. 5383—Ա. Մ.): Մինասը այն ծաղկողներից է, որոնց ձեռքով գրված ձեռագիր մեզ հայտնի չէ: Երկու անգամ նա ձեռագիր է ստացել ուրիշ

[129] Սիրարփի Տէր-Ներսիսեան, *Մինաս նկարող...*, «Սիոն», 1951, էջ 146:

[130] *Մատենադարան, ձեռ. 9856 էջ 134բ–179բ, 257ա:*

[131] *Անդ, ձեռ. 4883, էջ 236ա, 4472, 253բ:*

[132] Ս. Տէր-Ներսիսեան, *Մինաս նկարող...*, «Սիոն», էջ 144:

գրչությամբ: Բայց ճիշտ չէ մեծարգո հեղինակը, երբ «1464-ին Արգելան վանքը գրված Շարակնոցը (Հ. Աճառյան, Անձնանունների բառարան, Գ, էջ 342, 28)»[133] Մինաս ծաղկողին չի վերագրում: Ձեռագիրը, որ այժմ Մատենադարանում է և կրում է 3481 համարը, Մինասն է նկարազարդել: Մեծանուն գիտնականին այն ժամանակ անհայտ էին Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող Մինաս ծաղկողի շուրջ երկու տասնյակ ձեռագրերը: Հաշվի առնելով նաև Մինասի ծաղկած այն ձեռագրերը, որոնց միայն հիշատակարանն է մեզ հասել, բազմաշխատ ծաղկողից մեզ հայտնի են շուրջ երեք տասնյակ ձեռագիր, որոնք սպասում են իրենց ուսումնասիրողին:

Մեծոփա վանքի դպրոցին են պատկանում նաև Մինասի աշակերտներ Կարապետ Բերկրեցին և Կարապետ Աղթամարցին, որոնք, սակայն, աշխատում են Մեծոփա վանքից դուրս:

***

Գրչության արվեստի մեջ է մտնում նաև ձեռագրեր գրելու անհրաժեշտ նյութերի կամ գրանյութերի պատրաստումը, մշակումը, օգտագործումը: Գրելուց առաջ պետք էր նախապատրաստել մագաղաթը կամ թուղթը, պրակավորել, տողել: Անհրաժեշտ էր պատրաստել գրիչը (գործիք), թանաք՝ գրելու համար, ներկեր՝ նկարելու: Այս բոլորը արվել է արվեստով, խնամքով, գիտությամբ: Գրիչները, ծաղկողները, թուղթ կոկողները, տող գծողները, կազմողները և ուրիշներ, որոնք մասնակցում էին ձեռագիր ստեղծելուն, գրչության արվեստի մշակներն էին և շարունակ սովորում, հմտանում էին իրենց արվեստի մեջ:

Համառոտակի ծանոթանանք գրչության արվեստի այս կողմին ևս:

Հայ գրերի գյուտի ժամանակ տարածված գրանյութը **մագաղաթն** էր, որը պատրաստվում էր կենդանու մորթուց: Արոտավայրերով և անասուններով հարուստ Հայաստանը մագաղաթի համար հումքի առատ աղբյուր էր: Գրչության համար պետք էր պատրաստել այնպիսի մագաղաթ, որ «գծերն լաւ առնու և գրելն ամբողջ մնա»[134]: Երբեմն գրիչները, իսկ ավելի հաճախ մագաղաթ շինող վարդապետներն էին պատրաստում այն: Մագաղաթի դրսի կողմը, այսինքն՝ մաշկի

[133] *Անդ:*

[134] *Մատենադարան, ձեռ. 7322, էջ 7բ:*

երեսը, ավելի ամուր և գրակայուն էր, քան ներսինը, որի յուղը իրեն զգացնել էր տալիս, թանաքը լավ չէր պահում, բայց ավելի սպիտակ էր: Գրելիս այնպես էր արվում, որ մագաղաթի դրսի երեսները իրար հանդիպակաց լինեն, ներսի նուրբ երեսները՝ իրար:

Մեզ հասած սքանչելի մանրանկարված ու զարդարված հնագույն ձեռագրերը մագաղաթյա են: Թանկ էր մագաղաթը և ոչ բոլորին մատչելի: «Նուազ և խիտ գրեցաւ վասն այն, որ մագաղաթ չկայր»[135]: Մագաղաթի պակասության հետևանքով շատ անգամ հնագույն ձեռագրերը քերում և գրում էին իրենց անհրաժեշտ բնագիրը: Այդ կարգի ձեռագրերը կոչվում են կրկնագրեր[136]: Սակայն կան կրկնագրեր, որոնք ոչ թե ջնջված են, այլ հին երկաթագրի վրայով, որոնք արդեն խունացել էին, անցել են մի այլ գրատեսակով: Այդպես է 1042 թվականի հնագույն երկաթագիր Ավետարանը, որի վրայով 14-րդ դարում անցել են բոլորգրով (Ձեռ. 6284): Մեծոփա վանքից մագաղաթյա ձեռագրեր մեզ չեն հասել, սակայն կրկնագիր ունենք: 1441 թ. Թովմա Մեծոփեցի գրիչը Շարակնոց է ընդօրինակում քերած մագաղաթի վրա և մեծ դժվարություն է կրում, որովհետև չէր կարողացել լավ մաքրել. «Անմեղադիր լերուք վասն խոշորութեան գրիս, զի մագաղաթս հին էր, և շատ աշխատեցայ և քերեցի և ոչ կարացի զայդն հանել, զի չոր և խոշոր էր, և ժամանակս չար և աւուրքն ձմերայնի...»[137]: Ձեռագիրը մատենադարանի սակավաթիվ կրկնագրերից է:

Մինչև 10-րդ դարը մեզ հասել են միայն մագաղաթյա հայերեն մատյաններ: Այդ դարից ունենք թղթյա ձեռագիր, գրված 981[138] և 999 թվականներին: Վերջինիս գրիչ Սիմեոնը թուղթն համարում է «աղքատ և խոշոր նիւթ»[139], «աղքատ

---

135 Հիշատակարաններ, ԺԴ, էջ 424:

136 «Զայս մագաղաթս ի շահ ածի: Զի յառաջն Աւետարան էր, և անկեալ էր ի ձեռս այլազգեաց և թուխթ-թուխտ էր արած, ես լուացի գինքս ու շատ աշխատեցայ այնոր համար, որ ըզգիրն դժուար կու առնէր...» (Հիշատակարաններ, ԺԴ, էջ 321):

137 Մատենադարան, ձեռ. 5667, էջ 147ա:

138 Անդ, ձեռ. 2679, էջ 152ա:

139 Ձեռագիրը պահվում է Վենետիկի Մխիթարյանների մատենադարանում: Ղ. Ալիշանը թղթի մասին գրում է, որ «բամբակեայ» է (Այրարատ, էջ 497): Սիմեոն Սանահնեցին Սանահինից մեզ հայտնի առաջին գրիչն է և Հաղպատի վանքի կառուցողը: Ուրեմն մեզ հասած թղթի առաջին



Ծաղկող՝ Սիմաս
Ձեռ. N 952

քարտէս», իսկ գիրը՝ «անհեթեթ գիր», որովհետև բոլորգիր է: Դրանք գրված են **հայկական թղթի** վրա, որոնք հայ ժողովրդին աշխարհում երրորդ տեղն են ապահովում թուղթ գործածող չինացիներից ու արաբներից հետո:

Հաջորդ դարերում, հետզհետե տարածվելով, թուղթը դառնում է հիմնական և համարյա միակ գրանյութը: Բայց որովհետև մագաղաթի չափ դիմացկուն չէր, այդ պատճառով թղթյա հին ձեռագրերի կորուստները շատ են, և հնուց քիչ նմուշներ են մեզ հասել: Միջնադարյան Հայաստանում թուղթ պատրաստելու մասին տեղեկություններ չունենք: 14–15-րդ և հետագա դարերում՝ հատկապես Մեծոփա վանքի հետ կապված վկայություններ ենք հանդիպում այն մասին, որ թուղթը այդ ժամանակ բերվում էր Դամասկոսից (Դմշխից) և Թավրիզից իսկ ավելի ուշ՝ նաև Եվրոպայից[140]: Ինչպես երևում է, Դամասկոսից ոչ միայն թուղթ, այլև գրչության այլ պարագաներ էին գնում: Դամասկոսի թուղթն ավելի մշակված, բարակ և որակով էր, քան Թավրիզի թուղթը, որից բողոքում են գրիչներն ու ծաղկողները[141]:

Գնված թուղթը գրության համար դեռևս պիտանի չէր, ուստի մշակվում էր: Այդ կոչվում էր **թղթի կամ նյութի կոկում**, իսկ աշխատողը՝ **թուղթ կոկող**: Սա կոկիչի միջոցով հարթում էր թղթի խորդուբորդությունները, ապա թերթերն իրար վրա դնելով նրան տալիս ձեռագրի չափին համապատասխան հաստություն[142]:

Գրչության խոշոր կենտրոններում թուղթ կոկելու արհեստանոցներ կային, որտեղ մեծ քանակությամբ թուղթ էին պատրաստում: ԺԳ դարասկզբում Սանահինում հիշվում է Սարգիս քահանան, որը 2000 տետր կամ պրակ թուղթ է կոկել,

---

գործածության վայրը եղել են Սանահինը և Հաղբատը: Հավանաբար, այդտեղ է գրված նաև մեր հնագույն թղթյա ձեռագիրը:

140 Մանվել քահանան 1417 թ. Երուսաղեմից վերադառնալիս, «առեալ գնիւք թղթիս ի Դամասկոսէ» գալիս է Գանձասար:

141 Մատենադարան, ձեռ. 2781, էջ 1բ: Դրսից բերված թղթից գրիչները դժգոհում էին ոչ միայն որակի համար, այլև անհամապատասխան չափերի, խարդախության համար «Գիրծ ի բնէ ազգ մահմէտին, որ պակաս կու չինէ զևղեր թղթին»: Իսկ եղրերի պակասությունից շատ թուղթ էր փչանում և նորից էին դիմում թղթավաճառին:

142 Ավետիս գրիչը գրում է. «...աւաղ, որ զթուղթն զամէն չի երկուտկեցի, որպէս զայս Բ թուխտս, որ լաւ լինէր» (Մատենադարան, ձեռ. 5440, էջ 116բ–117ա):

այսինքն, 24000 թերթ[143]: Ծանր էր թուղթ կոկողի աշխատանքը, և մասամբ նրանից էր կախված գրչության և նկարի որակը:

Թուղթը կոկում էին մարմարյա հարթ սալի վրա, որը կոչվում էր «մարմար»: «Յիշեսջիք և զմարմարի տուողն Փիլիպպոսն որ զթուղթն ի վերայ կոկեցի» խնդրում է Ստեփաննոսը[144]: Բայց միշտ և ամենուր չէ, որ մարմարը իսկապես մարմարյա էր: Սեբաստացի Խաչատուր գրչի մարմարը տանձի փայտ է[145]: Թուղթը կոկում էին ոսկրյա կոկիչով:

Գրելուց առաջ թուղթը ճշայում կամ օսլայում էին, որն ամրացնում և ողորկ էր դարձնում այն, ճշայելով նաև նվազեցվում էր թղթի մեջ եղած նյութերի ազդեցությունը, որոնք քայքայում էին ներկերը:

Նախնական մշակման ենթարկվելուց հետո գրանյութը հարմարեցվում էր գրվող ձեռագրի չափերին, և պրակ կամ տետր կազմվում: Սրանք բաղկացած են 8, 10, 12 կամ ավելի թերթերից: Յուրաքանչյուր ձեռագրի պրակաթերթերը կայուն քանակ ունեն: Եթէ որևէ պրակ պակաս է այդ քանակից, գրիչը զգուշացնում է ընթերցողին՝ նրան կանխելով հնարավոր թյուրիմացությունից: Հակոբ Ղրիմեցին 1415 թ. Քարոզգիրքը գրելիս պրակները անկանոն է կազմում, որի պատճառով մի տասնյակից ավելի պրակների վրա զգուշացնում է. «Տետրս ԺԶ թուխթ է (պրակ Լ, ԼԱ, ԼԴ, ԼԵ, ԼԶ և այլն), «տետրս Ի թուխթ է (պրակ ԼԸ, ԼԽ), Լ թուղթ է ԽԲ պրակը, ԻԸ թուղթ՝ ԻԳ պրակը» և այլն[146]: Պրակները հերթականորեն համարակալվում են: Համարակալումը արվում է տարբեր ձևերով:

Հաջորդ գործողությունը արդեն տող գծելն է կամ տուն տալը[147]: Ձեռագրի էջը բաժանվում է երկու մասի, գրադաշտի և լուսանցների: Տողվում էր միայն գրադաշտը (բացառություն են կազմում ավետարանները, որոնց ստորին

143 Տե՛ս մեր հոդվածը՝ Սանահնի և Հաղբատի գրչության կենտրոնները, «Էջմիածին», 1968, հուլիս:

144 Հիշատակարաններ, ԺԵ, Բ, էջ 221: Մի այլ գրիչ գրում է. «ինչ մարդ, որ Խարաբաղիս գիր գրէ Աստուած սալքարն մարմար է, վէր թուխտ կոկելոյ լաւ է, ապա ջրով տաշէ» (Ս. Տէր-Ավետիսեան, Ցուցակ Ջուղայի, 85:

145 Հիշատակարաններ, ԺԵ, Գ, էջ 289:

146 Լենինգրադ, Ասիայի և Աֆրիկայի ժող. ինստիտուտ, 88, (մանրաժապավեն):

147 Գ. Լևոնյան, Հայ գիրը..., էջ 12:

լուսանցքում ավելի նեղ տողեր են գծվում՝ էջի համաբարբառի ցըվացանկի համար): Գրադաշտը լինում է միասյունակ, երկսյունակ և եռասյունակ: Սյունակները իրարից բաժանվում են դարձյալ լուսանցներով: Բոլոր էջերը ունենում էին հավասար մակերեսի գրադաշտ, որը գծով բաժանվում էր լուսանցներից: Այդ արվում էր ճարտավարով—գրադաշտը առանձնացնելուց հետո գծվում էր տողը, որն արվում էր քանոնով իրար միացնելով նախօրոք կարկինով հավասար բաժանված կետերը: Տողերը գծվում էին նաև տողշարով: Սա տախտակ է, որի վրա ձգվում էր աղիքից ոլորած բարակ և ամուր լարը և նրան ճնշելով տողերը դրոշմում թղթի վրա: Ձեռագրերը տողագծվում էին միայն ճնշումով: Առաջին երեսի վրա գործադրված ճնշման հետքերն անցնում էին քառածալ հաջորդ թերթերին և այսպես անընդհատ: Նկարազարդվող թերթերը չէին տողվում: Մեծոփա վանքի գրչության կենտրոնում օգտագործվող գրանյութը հիմնականում թուղթն էր, որ բերվում էր դրսից: Հակոբ Ղրիմեցին 1415 թ. Գրիգոր Տաթևացու Քարոզգիրքը խմբագրելիս դժգոհում է, որ «գիրքս ակիկ երեկ, այս է պատճառն, զի ժամանակս ձմեռն էր և անճարակ էաք Դըմշխ թխթի, Թավրեզի թուխթս հաստ էր և Գիրքն փոքր...»[148]: Թովմա Մեծոփեցու եղբայր Հովհաննես քահանան 1410 թ. «... բազում աշխատութեամբ, երթևեկութեամբ եգիտ զթուղթս»[149], թէ որտեղի՞ց, հայտնի չէ:

Մեծոփա վանքում թուղթ են կոկել համարյա բոլորը, սկսած Մկրտիչ և Մարգարե վարդապետներից, մինչև բոլոր գրող աշակերտները: Գրչության արվեստ սովորող աշակերտները սովորում էին գրելու հետ կապված բոլոր գործողությունները, որոնց մեջ հատուկ ուշադրություն էր դարձվում թուղթ կոկելու վրա: Այդ է պատճառը, որ նրանք հաճախակի են հիշվում: 1406 թ. Թովմա Մեծոփեցու համար Մարգարե վարդապետն է թուղթ կոկում, 1407 թ.՝ Մկրտիչ Նահապետենցը, Հովհաննես և Մատթեոս քահանաները: Վերջինս ոչ միայն թուղթ էր կոկում, այլև խազում էր, տողում, կազմում[150]: Հովհաննես գրիչը հիշում է Մարգարե վարդապետին, որ «խիստ լաւ կոկիչ եբեր թղթիս», իսկ Ղազար սարկավագը օգնում է տուն տալու,

148 Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 655:

149 Անդ, էջ 101:

150 Անդ, էջ 56, 78, 79, 101 և այլն:

խազելու գործում[151]: Թովմա Մեծոփեցին 1435 թ. հիշում է Զաքարե վարդապետին, որ «աշխատի ի խազելն»[152]:

Մագաղաթից ու թղթից հետո գրչի մտահոգության առարկան **թանաքն** էր: Ինչպիսի նյութով գրել, որ՝ ա. լինի դիմացկուն, բ. մագաղաթը կամ թուղթը չքայքայի. գ. ներդաշնակ լինի գրանյութին և գույնընթեռնելի: Ենթադրվում է, թե հնագույն ձեռագրերը գրվել են երկաթի ժանգից պատրաստած թանաքով, որը դեղնավուն գույն ուներ, և ավելի ամուր էր: Ուշ շրջանի ձեռագրերում կան թանաքի պատրաստման դեղատոմսեր: Շատ նուրբ էր թանաք պատրաստելու արվեստը և հաճախ այնքան կատարյալ, որ հայերեն ձեռագրերի պահպանության անբարենպաստ պայմանները՝ խոնավ խցերն ու այրերը, նույնիսկ երկարատև ժամանակը, շատ աննշան ազդեցություն են թողել թանաքի, ինչպես և ներկերի որակի ու փայլի վրա: Պատրաստած թանաքները, ինչպես նաև ներկերը տարբեր բաղադրություններ են ունեցել, հետևաբար նաև տարբեր որակ, փայլ ու դիմացկունություն: Օրինակ, Ղրիմում պատրաստված ներկերից կանաչը շատ հաճախ քայքայել է թուղթը, իսկ կապույտը ընդհակառակը՝ ինքը չի դիմացել և թափվել է: Այդպես են նաև Տայքում օրինակած որոշ ձեռագրեր[153]: Ձեռագրերում պահպանվել են նաև «պատկերահանի և ծաղկարարի դեղեր» պատրաստելու խրատներ[154]: Թանաքը պահում էին մետաղյա, կավե կամ ապակե թանաքամաններում, որոնք կոչվում էին **կաղամարներ**:

Գրչության հիմնական գործիքը **գրիչն** է, որն իր անունը տվել է իրեն օգտագործողին և նրա գրադմունքին: Միջնադարում գրիչ պատրաստում էին եղեգնից, հատուկ մշակման ենթարկելուց հետո: Եղեգնյա գրիչը երկարակյաց չէր, գրելիս մաշվում էր, որի պատճառով էլ հաճախ էր տաշվում: Այս գործողությունը կատարվում էր **գրչատաշով** և շատ դժվար էր: Անհրաժեշտ էր տաշել գրչի նախկինում ունեցած լայնությամբ և բարակությամբ՝ ճկունությունը ապահովելու և տառերը նախորդի նման գրելու համար: Այս երևույթը կոչվում էր **գրչափոխություն**: Գրչության սովորող աշակերտները սովորում էին գրիչ սրել: Մեծոփա վանքի գրիչ Հակոբը գրում

151 Անդ, էջ 127–128:

152 Անդ, էջ 454:

153 Մատենադարան, ձեռ. 10283, 5476:

154 Հարությունյան Ա., Ներկերը և թանաքները հին հայկական ձեռագրերում, Երևան, 1941:

է. «Ով եղբայր, անմեղադիր լեր, զի գրիչ չեմ գիտեր կտրել»[155], մի ուրիշը գրում է. «... զի անհմուտ գոլով գրչութեան գրոյ և սրելոյ գրչի»[156]:

Գրիչը լավ սրելը և նրանով երկար գրելը վարպետության նշան է եղել: Գրիգոր Խլաթեցին ամբողջ Ավետարան է ավարտում առանց գրչափոխության[157]: Եղեգնից բացի, գրիչ գործիքի համար օգտագործվում էր նաև կաղնի փայտը:

Գրչության զարգացման և տարածման հետ միասին կատարելագործվում էր գրիչ գործիքը: Այնպիսի հարմարանք է ստեղծվում նրա վրա, որ թանաք է պարունակում և մի անգամ թաթախելով մոտ հազար մանր տառ է գրվում: Ա. Գևորգյանի որոնումները նրանց հնությունը հասցնում են մինչև 1166 թ.[158]: Մեծոփա դպրոցում էլ մենք հանդիպում ենք այդպիսի գրչի գործածության: Հովհաննես Մանկասարենցը գրում է. «...Ով սուրբ գրոց աշակերտեալ անձինք, որ այս տետրակս Ջ (900) գիր ի Ա (1) անգամ թաթխելոյն գրեցի և այլ Ի (20)–Լ (30) ունի, վարդապետքս վկայ»[159]: Նույն կարգի վկայություն է թողել Մեծոփեցու մյուս աշակերտը. «ԶՍտեփաննոս սարկաւագիկս յիշեցէք ի Քրիստոս, որ տասնուվեց տետր գրեցի, բայց ի մի թաթխելոյն ԷՃ (700) գիր գրեցի. բայց կաթաւ թանաքն, թէ չէ այլ կու գրէի»[160]:

Երբ ամեն ինչ պատրաստ էր ընդօրինակության համար, գրիչը գաղափար օրինակը, բացված վիճակում, տեղավորում էր **գրակալի** վրա, որն իր հերթին ամրացված էր սնդուկին կամ հատակին՝ գրչի դիմաց: Նոր գրվելիք թերթերը կամ պրակը ամրացվում է մի այլ տախտակի վրա, որը կոչվում է **շեքրոն** կամ շիքրոն[161]: Շիքրոնի սարքին եզրը դրվում էր գրչի

155 Մատենադարան, ձեռ. 2065, էջ 73ա:

156 Անդ, ձեռ. 2589, էջ 442ա:

157 Հիշատակարաններ, ԺԴ, էջ 601:

158 Ա. Գևորգյան, Գրենական գործիք՝ գնդիկավոր գրչի մասին, «Բանբեր մատենադարանի», 4, 1960, էջ 313:

159 Մատենադարան, ձեռ. 1380, էջ 16ա:

160 Անդ, էջ 229բ:

161 Այս բառը բացակայում է բառարաններում: Նրա հիշատակությունը առաջին անգամ հանդիպում ենք ԺԲ դարի վերջում: Ներսես Լամբրոնացուն նվիրված տաղում Խաչատուրը գրում է. «Յիշեմ զիմ Տէրն ի Շիքրոնին»: Ղ. Ալիշանը ծանոթագրում է. «չկարցայ ստուգել զայս, տեղ է թէ գիրք մի, ինչպէս ասէ նաքը յիշած Նարեկացին, որոյ աղօթից

ծնկներին, մյուսը՝ թոկով կապվում էր առաստաղից, երդիկից լույս լինելու համար[162]:

Ձեռագրերում երբեմն հանդիպում ենք գրչության գործիքների հիշատակության, հազվադեպ՝ նաև նրանց նկարների, իսկ ԺԷ դարի գրիչ Հակոբ Գրիճը գրչության գործիքների վերաբերյալ գովք ունի գրած[163]:

***

Գրչության արվեստը լրացնում և ավարտում էր կազմարարը:

Պապիրուսի վրա գրված գրքերը պահվում էին փաթեթներով, տուփերի մեջ: Երբ մագաղաթի գործածությունը փոխեց գրքի ձևը, վերջինս պահանջեց իրեն հարմար տուփ, որը և դարձավ կազմը: Կազմը երբեմն կոչվում է նաև տուփ:

Բ. Առաքելյանը նշելով, որ գրքի կազմելը պահանջում է հատուկ հմտություն և տեխնիկական մի շարք միջոցների գործադրություն, գտնում է, որ «... առնվազն 10-րդ դարից կազմարարությունը սկսում է դառնալ առանձին մի արհեստ, որով շատ հաճախ պարապում էին այդ մասնագիտությունն ունեցող արհեստավորները»[164]: Ձեռագրի կազմարարները կոչվում էին «կազմիչ», «կազմող», «կապող», «գրակապ», «փերթկար», «շարայարող»: Հնագույն թվակիր անվանումը «կազմիչն» է, որ մեզ հայտնի է 999 թվակիր ձեռագրից, ուր Սիմեոն գրիչը խնդրում է «զՏիրանուն զկազմիչ և զյաւրինիչ գրոցս անմոռաց առնել»[165]: Եթե մեզ ավելի հին դարերից ձեռագրեր հասած լինեին, անշուշտ մենք նույնպես կազմիչների հիշատակության կհանդիպեինք: Կազմողի գործն սկսվում էր պրակները միմյանց կարել-կապելով, այսինքն «կապելով կազմելով»: Պրակներն ու թերթերը շարելիս, որպեսզի հավասար լինեն և ամուր, մամլիչի տակ էին դնում[166]: Պրակները ամրացնելուց հետո հավասար կտրում էին ձեռագրի եզրերը: Հետագայում վերստին կազմելիս, եզրերը հարթելու նպատակով նորից էին կտրում ձեռագիրը, որի հետևանքով երբեմն կտրում էին որոշ լուսանցազարդեր ու լուսանցագրություններ: Կտրելուց հետո եզրերը ամրացնելու համար առաջարկվում էր «դեղ, որ զգրոցն եզերքն պնդէ»[167]:

Կազմը ուներ երկու՝ վերի և վարի կող, կռնակ և դռնակ: Վերի և վարի կողերի միջուկները մշակված տախտակներ էին[168]: Այս տախտակների վրա ձգվում էր նախօրոք մշակված կաշին, որը զարդարվում էր սեղմումով, նկարներով, տարբեր ձևի զարդերով: Կաշվի վրա մետաղե խաչեր կամ դրվագված զարդեր էին փակցվում, կոստղում էին արծաթե գամերով և այլն[169]: Կազմերը լինում էին նաև մետաղյա՝ հյուսածո կամ ձուլյ մետաղներից՝ արծաթյա, ոսկեզօծ կամ ոսկուց պատրաստված: Ձեռագրերը շքեղ կազմելու համար կազմարարներին օգնում էին ոսկերիչներն ու դարբինները: Հաճախ անհրաժեշտ նյութ ձեռք բերելու համար գնում էին տեղից-տեղ: Սաղմոսավանքում կազմված մի ձեռագրի հիշատակարանում կազմողը հիշում է «... զեղբայրն մեր Քառասունքն... որ գնիւք կազմութեան սորա եբեր ի Տփխեաց և զաւղն և կոճակ

մեկնութիւնը գրած էր Ներսէս» (Հայապատում, էջ 434): Այժմ պարզ է, որ շիքրոնը ոչ տեղ է, ոչ գիրք, այլ «գրասեղան», որի վրա հակված գրելիս վարդապետին է հիշում ողբասացը, գրելով. «Յիշեմ զիմ Տէրն ի Շիքրոնին», իսկ «Յիշեմ զիմ Տէրն ի Նարեկացին», այսինքն՝ Մատյանի վրա աշխատելիս և այլն: Այնուհետև ձեռագրերում հանդիպում ենք ԺԴ դարի սկզբներին, Սանահինում, ապա Գևորգ Սկևռացու մոտ («Կարի դժար է ի կապած գիրք գրիչ բանեցնել վասն այնոր ձեռն կու սղա առանց շիքրոնի», Մատենադարան, ձեռ. 3082, էջ 450բ), իսկ 14-րդ դարում՝ Կիրակոսի մոտ («զՅակոբ սրբասունդ կրաւնաւոր, որ զշիքրոնս շնորհեաց», Մատենադարան, ձեռ. 353, էջ 133ա): Ա. Աբրահամյանը շիքրոնը անվանում է պնակիտ-տախտակ (Հայ գրի և գրչության պատմություն, էջ 349–350):

162 Մատենադարան, ձեռ. 7643:

163 «Էջմիածին», 1950, հուլիս-օգոստոս, էջ 86:

164 Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում 9–10-րդ դարերում, էջ 316–317:

165 Յիշատակարանք, Ա, էջ 164: Դրանից հին է, անշուշտ, Մաշտոցյան Մատենադարանի 5547 ձեռագրի վկայությունը. –«Աղաչեմ յիշել զմեղսամակարդ և զյետին կրաւնաւորս զԳևորգ կազմիչ գրոցս...» (Անդ, էջ 194), որի թվականը, սակայն, անհայտ է:

166 «Ի շարելն մամլուք չունէի, որ այլ լաւ լինէր» (Մատենադարան, ձեռ. 313, էջ 268ա):

167 Մատենադարան, ձեռ. 9292, էջ 6:

168 1771 թ. Եղեսիայում հիշվում է «զՊատրիկ հօյսն, որ զտախտակն էրետ», մեկ այլը՝ «զՀնդուշայ հիւսն, որ զԱւետարանիս կողն նորոգեաց»: (Մատենադարան, ձեռ. 313, էջ 268ա):

169 Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները..., էջ 316–321:

յԱնոյ»[170]: Միջնադարյան Հայաստանում բազմաթիվ հռչակված կազմողներ են եղել[171]: Ձեռագիրը կազմվելուց հետո միայն կյանք է մտնում:

Մեծոփա վանքի դպրոցում գրչության արվեստի բուռն ծաղկման հետ չէր կարող չզարգանալ գրչության մյուս կարևոր տարրը՝ կազմարարությունը, որը անհրաժեշտ էր ոչ միայն նոր գրված ձեռագրերի, այլ նաև հների նորոգման ժամանակ: Ինչպես տեսանք, այնտեղ կազմարարությամբ էր զբաղված Մատթեոս քահանան: Դեռևս 1419 թ. նա կազմում է Խաչատուր Կեչառեցու Տոնապատճառը[172]: Կազմարարությամբ էր զբաղվում Մեծոփեցու դասընկեր Ղազարը: 1409 թ. նա «գեղեցիկ կազմեաց» Սարգսի ձեռագիրը[173]: Մեծոփա վանքում, ապա Լիմում և Քաջբերունիքի այլ կենտրոններում էր աշխատում նշանավոր Գրիգոր կազմողը: Նա 1418 թ. Մեծոփա վանքում մի տարվա մեջ կազմում է Գրգոր Խլաթեցու ընդօրինակած Հաճախապատումը և Մկրտիչ Մեծոփավանեցու ընդօրինակած Թուղթ ընդհանրականը[174]: 15-րդ դարի առաջին կեսին Մեծոփա վանքի գրչության կենտրոնի նշանավոր կազմարարը Հայրապետն էր, որին առաջին անգամ հանդիպում ենք 1421 թ. Կարապետ վարդապետի՝ Երուսաղեմից բերած Ավետարանը կազմելիս[175]: 1432 թ. Մկրտիչ վարդապետի համար մի Ճաշոց է կազմում «զՀայրապետ կրոնաւորն, որ զգիրքս կազմեաց»[176]: 1435 թ. Թովմա Մեծոփեցին նրան հիշում է որպես «գրոց աշակերտեալ» անձ, որ հին գրքեր է նորոգում և կազմում. «զհամշիրակ որդիս մեր եւ զերախտաւոր զՀերապետ ընտրեալ կրօնաւորն եւ գրոց աշակերտն, որ բազում աշխատութեամբ զհին գրեանքս նորոգէ»[177]: 1439 թ. երբ Մեծոփեցին աշակերտներով ապաստանում է Մշո Առաքելոց վանքում, Հերպետն այնտեղ կազմում է մի Աստվածաշունչ. «...զի խիստ փտեալ էր և բամբակ դարձեալ, ի տեղիս տեղիս ցեցն է

170 Մատենադարան, ձեռ. 3777 էջ 192բ:

171 Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 218:

172 Անդ, էջ 230:

173 Մատենադարան, ձեռ. 921, էջ 268ա:

174 Անդ, ձեռ. 8775, էջ 367բ:

175 «զՀայրապետ կազմօղս յիշեցէք ի Քրիստոս, ի թուականութեան Հայոց ՊՀ (1421)» (Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 256):

176 Անդ, էջ 424:

177 Մատենադարան, ձեռ. 1380, էջ 315ա:

ծակոտեալ, հազիւ կարացի ի կապ ածել...»[178], — գրում է նա: Մի ուրիշ ձեռագիր է կազմում 1444 թվականին՝ Մեծոփեցու պատվերով[179]:

Սակայն Հայրապետ կազմողից ավելի շատ ձեռագրեր են մեզ հասել, քան այս վկայություններն են: Մեծոփա վանքում այդ ժամանակ ընդօրինակված և մեզ հասած բոլոր ձեռագրերը, որոնց կազմերը հետագայում չեն փոխվել, Հայրապետի գործն են: Այդ են ապացուցում համեմատությունները: Այն զարդամոտիվները և կապելու այն ձևը, որ տեսնում ենք Հայրապետի անունով հայտնի ձեռագրերի կազմերի վրա, առկա են Մեծոփա վանքում կազմած մյուս ձեռագրերում (1380, 5629, 5172) գրված Մեծոփա վանքում և Արճեշում: Մեծոփա վանքի դպրոցի գրիչ-աշակերտների ընդօրինակությունները, համարյա առանց բացառության, ծաղկում էր Մինասը և կազմում՝ Հայրապետը: Դեռ ավելին, վերջինս նաև նորոգում էր հնից անկազմ մնացած կամ կազմահան ու քաքայված ձեռագրերը:

Հայրապետ կազմարարը Մեծոփա վանքի գրչության դպրոցի նշանավոր սաներից էր և ձեռագրական իր գործունեությամբ չէր զիջում Հովհաննես Մանկասարենց գրչին և Մինաս ծաղկողին: Նշանավոր կազմող էր նաև Վարդանը, որը հիշվում է 1427–1452 թթ.: Կազմել է ոչ միայն Մեծոփա վանքում[180] այլև Տովուբոլորի գրչության այլևայլ կենտրոններում՝ Աղթամարում, Տշողում, Արճեշում, Արգելանի վանքում և այլուր: 1449 թ. նա «կապեաց և կազմեաց» Թովմայի գրած Ավետարանը:

Ձեռագիրը հիմնականում ավարտվում էր մինչև կազմելը: Կազմելուց հետո նրա հետ տարվող աշխատանքները (ոչ նորոգման) արդեն օրինական չեն, և գրիչը կամ ծաղկողը կարող էր հրաժարվել ստացողի՝ այդ ուղղությամբ արված առաջարկից: «Տէր Վարդան սուրբ հայր, անհնար է ի կապած գիրք համաբարբառ գրել,—դիմում է Հովհաննես Մանկասարենցը՝ Մեծոփա ուխտի առաջնորդին,—բայց սէր սրբութեան քո եւ գրել զայս, զի իմ մահու աւուրն կանգնիս»[181]:

178 Բ. Սարգիսեան, Ցուցակ Վեննետիկի, Ա, էջ 128:

179 Մատենադարան, ձեռ. 5931:

180 Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 637:

181 Հիշատակարաններ, ԺԵ, Բ, էջ 71:

***

Հիշատակարանները հայերեն ձեռագրերի անքակտելի մասն են կազմում, բայց և առանձին միավորներ են: Հիշատակարանը գրչի վերջին գործն է, որ կատարում է ձեռագրի հետ: Այն այդպես է կոչվում ոչ միայն նրա համար, որ հիշատակարան է ստացողի համար, որ ձեռագիրը գրել է տվել՝ «ի յիշատակ իւր և ծնօղաց իւրոց» և այլոց, այլև այն պատճառով, որ այն հիշատակարան է գրչության վայրի, թվականի, ժամանակի անցուդարձի, գրչության հետ կապված հանգամանքների, իր՝ գրչի և այլնի մասին: Հիշատակարանը գրվում էր հատուկ սկզբունքով, որի գրելը վարպետություն և գիտելիքներ էր պահանջում:

Գրիչները երբեմն հիշատակարանի նմուշ էին պահում կամ արտագրում էին գաղափար օրինակի հիշատակարանը՝ փոխելով միայն անունները: Այդ է պատճառը, որ հաճախ որոշ հիշատակարաններ նույնանում են՝ անունների և ժամանակի տարբերությամբ: Հիշատակարանը սկսվում է փառաբանությամբ, ապա արձանագրվում է գրչության վայրը և ժամանակը, հիշվում է այն վանքը կամ եկեղեցին, որի հովանու տակ գտնվում էր գրչության վայրը: Հաճախ թվարկվում են մի քանի վանքեր, եկեղեցիներ, նույնիսկ խորաններ, որոնք այդ ուխտի մեջ մտնող սրբավայրեր են կամ նրանց շրջակայքում գտնվող հեղինակավոր վանք է, որի հովանին կարող է միայն զորավոր դարձնել ձեռագիրը: Ժամանակը թվականներով նշանակելուց և երբեմն նշանավոր անձանց այս կամ այն կերպ հիշելուց բացի, գրիչները շատ հաճախ այն որոշակի էին դարձնում տվյալ ժամանակի կարևոր անցուդարձով, պատմական ժամանակի նկարագրություններով, քաղաքական իրադարձությունների արձանագրմամբ՝ նրանց հետևանքների, երկրում ստեղծված իրավիճակի, ժողովրդի դառն կյանքի ականատես և ականջալուր, անձամբ տառապած և ապրած մարդու վկայություններով: Այստեղ արդեն հիշատակարանի պատմական արժեքը մեծանում է: «Դրանք անգնահատելի փաստալից աղբյուրներ են ժամանակի պատմության մի շարք բնագավառների ուսումնասիրման համար: Գրված լինելով պատմվող դեպքերին ականատես և ականջալուր մարդկանց կողմից, նրանց հաղորդած տեղեկությունները վստահելի են, նրանց հեղինակները... գրանցել են այնպիսի պատմական կարևոր տվյալներ... որոնք անտեսվել կամ վրիպել են միջնադարյան պատմագիրներից շատերի տեսադաշտից...»[182], - գրում է Լ. Խաչիկյանը: Երբեմն հիշատակարանները դառնում են մանր պատմական երկ կամ ժամանակագրություն: Ռուբինյանց տան պատմությունը մեզ է հասել որպես Հեթում Բ-ի ծաղոցի հիշատակարան, պատմական վիպասանություն է խլաթեցու «Ողբը», որ կցված է իր Գանձարանին որպես հիշատակարան: Հայերեն ձեռագրերի հիշատակարանների պատմական մասերը, որպես հավաստի աղբյուրներ, վաղուց են օգտագործվել պատմագիտական երկերում, կամ ուսումնասիրություններ են գրվել համարյա միայն նրանց հիման վրա[183]:

Հիշատակարանները մատենագիտական տեղեկություններ են տալիս շատ նյութերի, ինչպես և գաղափար օրինակի մասին: Նրանց մեջ հաճախ բանասիրական հմտությամբ ճշգրտումներ էին կատարվում[184]: Հիշատակարաններում և, հատկապես, հիշատակագրություններում գրիչներն իրենց համեմատաբար ազատ են զգում, խոսում են առակներով, ասացվածքներով, փիլիսոփայում են երևույթների մասին, հանգավոր են խոսում, պատկերավոր նկարագրություններ անում, արտահայտում իրենց հույզերը, ապրումները, անձնական վշտերն ու դժբախտությունները, այդ ամենին հաղորդակից դարձնում ընթերցողին և խնդրում ողորմի ասել:

Հիշատակարանների վերջում կան կտակ-հանձնարարականներ[185], որոնք կարելի է բաժանել երկու խմբի. ա) ձեռագիրը ստացողը նվիրում-կտակում է որևէ մարդու կամ եկեղեցու. բ) գրիչը կտակում է ընթերցողներին ձեռագրի հետ վարվելու, նրան օգտագործելու, խնամելու եղանակը. «Սպիտակ լաթով բռնէք և փառաւոր պահէք... զի ամէն գրի մէկ աչք է սպիտակացուցած ու գրած»[186]: Դանիել Աղթամարցին ուզում է, որ խնամքով պահեն և «քաջ իմանան գիտնականքն և հոգևորքն զաշխատանս սորա»[187]:

---

182 Անդ, ԺԴ, «Առաջաբան», էջ VII:

183 Անդ:

184 Երուսաղեմ, ձեռ. 1758, էջ 492 (մանրաժապավեն):

185 Գրիչների կտակ-հանձնարարություններին բավականին հանգամանորեն անդրադարձել է Ա. Աբրահամյանը «Հայ գրի և գրչության պատմություն» գործում, էջ 387-392:

186 «Հանդէս ամսօրեայ», 1962, էջ 215, 216:

187 Մատենադարան, ձեռ. 4687, էջ 587բ:

Գրիչներին անհանգստացնում էր մի վատ սովորություն՝ անունները ջնջելու սովորությունը: Հեղինակները կամ խմբագիրները միշտ խնդրում էին, որ արտագրեն նաև իրենց հիշատակարանը: Սակայն բոլորը չէ, որ կատարում էին այս «հրաման պատվիրանը»: Դեռ ավելին, ջնջում էին, երբեմն, գրչի կամ ստացողի անունը. «Ով որ զմեր յիշատակութիւնս ջնջէ կամ կտրէ, նայ անիծած լինի յԱստուծոյ և յամենայն սրբոց նորա»[188]: «Անուն մի քերէք, զի չար սովորութիւն է, և թէ արժանի էք՝ գրեցէք և զձեր անունդ յայլում տեղւոջ»[189], - արդարացիորեն խորհուրդ է տալիս մի ուրիշ գրիչ:

Գրչության արվեստը, ձեռագիր ընդօրինակելը միայն մշակութային գործ չէր. այն ազգային-համաժողովրդական գործ էր, ազգապահպանության զորավիգներից: Այդ պատճառով սերունդները սիրով են կատարել նախորդների գիրքը լավ պահելու, սխալներն ուղղելու և «միտս բանին յայտնի» դարձնելու ցանկությունը:

Մեծոփա վանքում ընդօրինակած ձեռագրերի հիշատակարանները, մասնավորապես Թովմա Մեծոփեցու բաբունապետության շրջանում, աչքի են ընկնում պատմական դեպքերի առատ արձանագրությամբ: Հենց իր Թովմա Մեծոփեցու հիշատակարանները հարուստ են ժամանակի անցուդարձի արձագանքներով, դրանց նկատմամբ ունեցած վերաբերմունքի արտահայտությամբ, մատենագիտական և այլ նշումներով, որոնք ճշգրտում և լրացնում են իր իսկ պատմական երկերը: Այդպես են նաև նրա աշակերտների հիշատակարանները, որ գալիս է պատմիչ բաբունապետից: Դժվար չէ նկատել, որ Մեծոփա վանքի գրչության կենտրոնի պատմությունը շարադրվեց հիմնականում տեղում ընդօրինակած ձեռագրերի հիշատակարանների հիման վրա, որոնք (համարյա բոլորը) մասնակի կրճատումներով, հրատարակել է Լ. Խաչիկյանը Հայերեն ձեռագրերի հիշատակարանների (ԺԴ, ԺԵ դ. դ.) ժողովածուներում:

***

Գրչության արվեստի մասին խոսելիս, նրա մշակների ծառայությունները առանձին-առանձին նշելիս, չի կարելի մոռանալ նրա հետ կենսականորեն կապված, բայց նրանից դուրս գտնվող **ստացողին**, որի դերը ձեռագրի ստեղծման

188 Յիշատակարանք, Ա., էջ 285:
189 Հիշատակարաններ, ԺԴ, էջ 159:

գործում ոչ միայն կարևոր, այլև հաճախ որոշիչ է: Ստացողն այն շահագրգռված անձն է, որ նյութական միջոցներ է տրամադրում ձեռագիր պատրաստելու համար, նպաստում գրչության գործի զարգացմանը, հովանավորում այդ արվեստը: Նա ոչ միայն գրչության արվեստի զարգացման նյութական կողմն է ապահովում, այլև, որոշ իմաստով նաև ուղղություն է տալիս՝ օգտագործելով պատվիրատուի իր իրավունքը: Գրիչը պետք է բավարարեր ստացողի ոչ միայն «ինչ», այլ նաև «ինչպես» գրելու պահանջները: Ստացողի և գրչի համաձայնությամբ է միայն ստեղծվում ապագա ձեռագիրը, որովհետև այն, վերջին հաշվով, նաև գրչի կարողությունների և ստացողի նախասիրությունների արդյունք է: Ստացողի ցանկությամբ գրիչը գրում է «դիւրընթերց գրով»[190], փոխում է գրի ձևը, որովհետև «ստացաւղն այսպէս ետ գրել»[191]: Բոլոր դեպքերում գրում են «գրոցս տիրոջն հրամանաւ»: Ստացողի ցանկությամբ գրիչը գրում էր ընտիր և ստույգ օրինակներից՝ ապահովելով մեր ձեռագրերի անսխալ և ճշգրիտ ընդօրինակությունը: Պատվիրելով լավ գրիչներին՝ ստիպում էին մյուսներին կատարելագործելու իրենց արվեստը: Հաճախ ստացողն ինքն էր հայթայթում օրինակը: Շարակնոցի ընտիր օրինակի համար ստացողը՝ Խարբերդեց «...գնաց աշխատութեամբ ի յերկիրն Բալուայ՝ աղաւթատեղն Մեսրոպայ՝ ի գիւղն որ կոչի Թըրխէ, զի անդ կայր աւրինակ քաջ քարտուղարին Գրիգորի, որ մականուն Խուլ կոչի, զի էր ձեռացագիրն իւր... զի դըժար կուտաին զհանց աւրինակն»[192]: Ստացող Երեմիա քահանան գաղափար օրինակ է խնդրում Հեթում Բ թագավորից «Երկու անգամ առ թագաւորն իմ երթալ խնդրեցի զարարեալ աւրինակն... Եւ ետ գրել զսա Լեոն դպրի լաւ և արհեստի գրչի»[193]:

Ստացողները մատենագրական բազմաթիվ երկերի, թարգմանությունների, ժողովածուների, հավաքածուների ստեղծման նախաձեռնողներն ու հովանավորողներն են: Բացի դրանից, նրանք հորդորում, ոգևորում էին գրչին նրա ծանր ու հոգեմաշ գործում: Նրանց դերը մեծ է նաև ձեռագրի մանրանկարչության, կազմարարության մեջ: Եթե նրա պահանջները չէր կարող բավարարել գրչության համապատասխան

190 Մատենադարան, ձեռ. 1382:
191 Բ. Սարգիսեան, Ցուցակ Վենետիկի, Ա, էջ 447:
192 Հիշատակարաններ, ԺԵ, Գ, էջ 11:
193 Մատենադարան ձեռ. 4825, էջ 207բ:

կենտրոնը, նա ձեռագիրը կարող էր ուրիշ տեղ տանել ծաղկելու կամ կազմելու: Վարդան քահանան Ավետարանը պատվիրելուց հետո «ոչ հաւանեաց վասն անվարժ գրելոյն, և նիւթոյն թանձրութեան, և ծաղկին անպատեհութեան»: Դրա համար գտնում է համբավավոր մի ուրիշ գրչի[194]:

Հայերեն ձեռագրերի ստացողները հայ ժողովրդի բոլոր խավերից են, սկսած թագավորից ու կաթողիկոսից մինչև մանկալն ու արհեստավորը: Եթե ձեռագիր պատվիրելը հասարակության ունևոր խավի համար դյուրին էր, ապա աշխատավոր մարդիկ իրենց ցանկությունն իրականացնում էին «ոչ յաւելորդեաց և կամ ի փարթամութենէ, այլ ի բազում տաժանութեամբ հաղթահարեալ սիրոյ»[195]: Հաճախ ձեռագիրը մի քանի մարդ միասին էին պատվիրում[196], կամ այդ անում էին ամբողջ գյուղերով[197]: Միջին դարերում ստացողները՝ աշխարհիկ թե հոգևոր, արվեստի հովանավորողներ էին և նպաստում էին դպրության ու արվեստի զարգացմանը: 1243 թ. Սսի ժողովում, ի շարս այլ կանոնների, մշակվում են նաև եկեղեցական գիտության և արվեստի մասին կանոններ, որոնցից մեկում ասվում է. «Եւ հրամայէ եպիսկոպոսն զսուրբ գիրս եկեղեցւոյ գրել արուեստաւորաց և գիտնոց և վկայութեամբ կատարելոց»[198]: Գրչության կենտրոնները հիմնականում հոգևորականության ձեռքերում էին գտնվում: Այդ կենտրոններում էին նաև Մատենադարանները: Վերջապես, հոգևորականությունը, որը ժամանակի մտավորականությունն էր, ոչ միայն տնօրինում էր գրչության արվեստի ծաղկումն ու տարածումը, այլև, ինչպես տեսանք, հետևում, կարգավորում էր ընդօրինակվող ձեռագրի հարազատությունը, ճշտությունը՝ գաղափար օրինակին և առաջին հերթին իրենց դավանանքին ու աշխարհհայացքին:

---

194 Անդ, ձեռ. 154, էջ 298:

195 «Էջմիածին», 1950, Է–Ը, էջ 24:

196 Հիշատակարաններ, ԺԵ, Գ, էջ 169, 159: «Ստացողք Ղալաթիոյ պանդուխտ Սեբաստացիք», Երուսաղէմ, ձեռ. 3637, էջ 129:

197 «Ամենաւրհնեալ... գեղս Բուսայ՝ քահանայքն և տանուտէրքն լաւ կանգնեցան և ետուն գրել գիրքս այս...» (Հիշատակարաններ, ԺԵ, Գ, էջ 215): «Քրիստոս Աստուած ողորմեա ստացողի գրոցս սուրբ Աստուածածնին ժողովրդեանն...» (Աստվածածինը գյուղի անունն է: Մատենադարան, ձեռ. 4735):

198 Գ. Յովսէփեան, Նիւթեր և ուսումնասիրութիւններ հայ արուեստի մշակոյթի պատմութեան, պրակ Բ, էջ 12:

Ստացողներ էին կոչվում նաև ձեռագրի փրկողները, փրկագնողները, գնողները: Հայ մարդը գերված ձեռագիրը գիտում էր ինչպես գերված մարդ, որը փրկության կարիք ուներ և պետք էր ազատել անպատճառ անօրենների ձեռքից. «Եւ մեք տըւաք ի գերոււ գին, որ գերին յանւրենաց ազատի»[199], – գրում են 1450 թ. Ավետարանի փրկողները: 1400 թվականին, Լենկ-Թեմուրի արշավանքների ժամանակ, Թավաքալը, – «...ետ զիւր հացի գին և էառ զսուրբ Աւետարանս և ազատեաց յանաւրէնաց և էբեր իւր տուն»[200], «Աւետարանս գնեցաք ի գերութենէ գեղով... մեր հալալ մալովն առաք դրաք դուռն ի Սուրբ Նիշանն: Աւետարանս գեղի է, ոչ ով դաւեյ[ք]ար չկայ»[201]: Եթե ձեռագիրը իր ստեղծման համար պարտական է գրչին ու առաջին ստացողին, ապա իր գոյության, փրկության, պահպանման և մինչև մեր օրերը հասնելու համար՝ վերջին ստացողներին, գնողներին, փրկագնողներին:

Սակայն կա ձեռագիրը փրկող մի այլ խավ, որը ոչ միայն անօրենի գերությունից է փրկագնում ձեռագիրը, այլև «անօրէն» ժամանակից: Այդ՝ նորոգողներն են: Ժամանակից, անխնամությունից, թշնամուց գրչի կամ ծաղկողի մահվամբ կիսատ մնացած ձեռագրերը նորոգում, ամբողջացնում էին նորոգողները: Դրանք դարձյալ գրիչներն էին ու ծաղկողները, կազմողներն ու ոսկերիչները: Մեր հնագույն ձեռագրերից շատերը մի քանի անգամ նորոգվել ու կազմվել են, լրացվել են թափված նյութն ու նկարները: Շատերը պահպանել են այդ մասին հիշատակագրություններ, մի մասի մոտ այդ երևում է հականե: Դժվար գործ էր նորոգումը և մեծ վարպետություն էր պահանջում: Երբեմն թղթի պատռված մասն այնպես է նորոգվել, որ տեղը չի երևում կամ հազիվ է նշմարվում:

Նորոգողի գործը երբեմն առաջին գրչի գործից ծանր է: Վարդան Բաղիշեցին գրում է. «Լ–Խ [30–40] գրոց նորոգելն և ի հնութենէ յառաջ ածելն և ի փթածութենէ ի կենդանութիւն ածելն մեծ է քան զեկեղեցիս շինելն»[202]: Հովհաննեսը 1377 թ. Աղթամարում նորոգել է տալիս իր Ավետարանը, որովհետև առաջին գրիչ Ավագ վարդապետը, մահացել էր, և կիսատ էր

---

199 Հ. Քոսյան, Ցուցակ Արծնյան վարժարանի, «Հանդէս ամսօրեա», 1961, էջ 126:

200 Բ. Սարգիսեան, Ցուցակ Վենետիկի. Ա, էջ 400:

201 Հիշատակարաններ, ԺԴ, էջ 95:

202 Մատենադարան, ձեռ. 2748, էջ 358բ:

թողել: «Բազում աշխատանք կատարեցի զսա, - գրում է նորոգող Զաքարիան: - Այպա աշխատեցայ և զտնաւրինականն զամէն մէկ մէկ յիւր տեղն եմ հանել, խիկի իրք պակաս չկայ, ապա ի գէճ (խոնավ տեղ) էր դրած և լաւ չէր պահած, թուղթն ամէն ապո ելեր և բրդացել, գղեղն չէր առնուլ, և խիստ վշտացա: Աստուած կու գիտէ, որ քան զառաջին գրողն, ես շատ աշխատեցայ»[203]:

Եթե սոսացողներին ավելացնենք գրիչների ու ծաղկողների, սրբագրողների, հովանավորողների, թուղթ կոկողների, կազմողների, ներկ, թանաք պատրաստողների, կաշեգործների, ոսկերիչների, արծաթագործների, կոստղեր պատրաստող դարբինների, կազմի միջուկ պատրաստող հյուսների բազմությունը, կտեսնենք, որ, իսկապես, ձեռագրի ստեղծումը խիկական համաժողովրդական գործ է եղել: Գրչության գործին օգնել են տնտեսը, հացպանն ու փռապանը, Դամասկոսից ու Թավրիզից թուղթ, Անիից ու Թիֆլիսից գեղեցիկ կոստղեր ու կոճակներ բերողները, վաճառողներն ու միջնորդները, ձեռագրերը փրկողներն ու գնողները, նորոգողները, կերակրողներն ու պահողները, «որ շատ, որ սակաւ՝ ըստ կարի և ըստ հաւատոյ»[204]:

Այս տեսակետից էլ մեծ է Թովմա Մեծոփեցու և իր դպրոցի ծառայությունները, որը նրա գործունեության կարևոր մասն է կազմում: Նրա ջանքերով կորստյան դատապարտված բազմաթիվ ձեռագրեր վերստին կյանք առան, դասատներ մտան, կամ դարձան ընտիր գաղափար օրինակներ: Շատերը նորոգվեցին և դարձան Մեծոփա վանքի Մատենադարանի հավաքածուի մաս:

Գրչության կենտրոններն ունեին մատենադարաններ, որտեղ պահվում էին տեղի գիտնականների աշխատությունները, գրիչների ընդօրինակությունները, որոնք նվիրված էին վանքին կամ մատենադարանին[205]: Սրանք միջնադարում կոչվում էին «գրատուն», «գրանոց», «արկեղք գրոց», «գանձատուն», «դիւան», «նշխարանոց», «մատենադարան»: Վանքերին կից վանական մատենադարաններից բացի, եղել են նաև արքունի գրադարաններ: «Արքունի հատուկ գրադարան է եղել պալատում՝ Անիում, - գրում է Ն. Մառը: Ամենայն

203 Անդ, ձեռ. 6402, էջ 347բ:

204 Հիշատակարաններ, ԺԴ, էջ 401:

205 Ն. Մառ, Միջնադարյան Հայաստանի մատենադարանները, «Երեկոյան Երևան», 1965, № 5: Տե՛ս Ռ. Իշխանյան, Հայ մատենագիտության պատմություն, պ. Ա, Երևան, 1964:



Ծաղկող՝ Մինաս
Ձեռ. N 4883

հավանականությամբ, եղել է նաև կենտրոնական հայրապետական մատենադարան, կամ, համենայն դեպս՝ կաթողիկոսական դիվան (արխիվ)»[206]: Արքայական և կաթողիկոսական մատենադարաններ կային Կիլիկիայում: Եղել են նաև մասնավոր անձանց մատենադարաններ: Մեծ մատենադարանների համար առանձին շինություններ էին պատրաստում, որոնց ոչ միայն ձեռագրեր, այլև կալվածքներ էին նվիրում: «Եւտու զիմ հայրենի այգին՝ որ առաջի է Կղաձորոյ ի գրատունս Հաղբատայ», - գրում է Համազասպի որդի Արամը[207]: Խոշոր մատենադարաններ կային բարձրագույն դպրոցներին և համալսարաններին կից, որոնք մի կողմից հավաքում և պահպանում էին ձեռագրերը, մյուս կողմից դառնում ուսուցման ու արտագրման համար անսպառ գանձարան:

Մեծոփա վանքի մատենադարանը հռչակված էր իր ժամանակին: Թովմա Մեծոփեցին հարստացնում էր մատենադարանը իր սաների ընդօրինակություններով և նոր ձեռք բերած ձեռագրերով: Այստեղ նրան օգնում էին իր աշակերտները և առանձնապես Մկրտիչ Մեծոփեցի վարդապետը: Այդ նպատակով նա տարբեր տեղերից հին և արժեքավոր ձեռագրեր էր բերում Մեծոփա վանք: Մեզ հասած բազմաթիվ ձեռագրերի վրա այսօր էլ կան «Գիրքս այս Մեծոփայ սուրբ ուխտին է» մակագրությունը: Թովմա Մեծոփեցին իր ձեռքով անցած ձեռագրերում հիշատակագրություններ թողնելու օգտակար սովորություն է ունեցել, որն այսօր օգնում է որոշ հարցեր պարզաբանելու: Կյուրեղ Աղեքսանդրացու Պարապմանց գրքի (գրված 1394 թ.) Օքսֆորդի օրինակում կարդում ենք. «ԶՅովհաննէս վարդապետ Մեծոփայ վանաց և զԹովմա խնդրող բանի յիշեցէք ի տէր»[208]: 1412 թ. Մկրտիչ վարդապետ Մեծոփեցին՝ «Գրութիւնք Դիոնիսեայ Արիոպագացւոյ» և «Պարապմանց գիրք Կիւրղի» գործերը, որ գրված էին Ներսես Լամբրոնացու ձեռքով, բերում է Մեծոփա վանք. «որ ես տեսի և ուրախացայ յոգի, և երկրպագութեամբ համբուրեցի[209]...», - գրում է Թովմա Մեծոփեցին: 1413 թ. Մկրտիչ Եղեգեցին Սաղմոսավանքում ընդօրինակում է «Լուծմունք Պարապմանց Գրիգորի Տաթևացւոյ» և նվիրում Թովմա վարդապետին[210]:

---

[206] Նույն տեղում:

[207] Գ. Յովսէփեան, Նիւթեր և ուսումնասիրութիւններ..., պ. Ա, էջ 70:

[208] Հիշատակարաններ, ԺԴ, էջ 608:

[209] Անդ ԺԴ, Ա, էջ 134:

[210] Անդ, էջ 144, 255:

Այդ թվականին Թովմա Մեծոփեցին Խլաթի վանքում հայտնաբերում և նորոգում է Յոթնագրյանքը, «որ ցրուեալ և ցընծեալ էր ի վաղուց հետէ և ոչ ոք գիտէ, թէ ինչ է սա»[211] և օգտագործում իր դասագրքում: Գրիգոր Խլաթեցին Երուսաղեմում, 1415 թ. Մկրտիչ Մեծոփեցու միջոցով Մեծոփա վանքին է նվիրում իր օրինակած Հաճախապատումը, Վարդան վարդապետի մի քանի ներբողների հետ միասին[212]:

Շատ հետաքրքրական է Մատենադարանի 5591 ձեռագրի գաղափար օրինակը գտնելու և ընդօրինակելու պատմությունը: Այդ ձեռագիրը Սարգիս Կունտի՝ Ղուկասի ավետարանի մեկնությունն է, որը դասախոսել է Թովմա Մեծոփեցին. «...Որք աւրինակէք զգիրս զայս, - գրում է Թովմա Մեծոփեցին, - զակաւ յիշատակս այսոցիկ գրեսջիք, զի գիտասցեն վերջինքն, թէ յումէ գտեալ եղև... եւ պարտ է գիտել, թէ զիա՞րդ գտեալ եղև մեկնութիւն աւետարանիս:

...Ելեալ գնացաք ի գեօղ մի, կոչեցեալ Ասպիսընակ: Մտաք եկեղեցին և գտաք (գիրքս) ի խորանին՝ ձգեալ անպիտան ի մէջ մոխրակուտին: Առեալ տեսաք և գոհացաք զԱստուծոյ... Եւ վասն զառն և չար ժամանակիս Թշուառութեան Ը (8) ամ ի մէջ անցաւ և ոչ կարացաք գրել: Իսկ յորժամ բարերարն Աստուած սակաւ ինչ անդորրութիւն ետ՝ ի ՊՀԶ (1427) թվականիս, կամաւքն Աստուծոյ սակաւ ինչ ես գրեցի, և բոլորն գրել ետու հոգևոր որդոց իմոց՝ Թովմայ գրագրի և Յովհաննէս գրոց աշակերտի...»[213]: Այնուհետև պատմում է խմբագրման և ցանկեր կազմելու մասին, որ մեզ արդեն ծանոթ է: 1425 թ. դարձյալ Երուսաղեմից Մկրտիչ Մեծոփեցին բերում է մեկնությունների մի ժողովածու[214]:

Ինչպես տեսանք բազմաթիվ նոր և հին ձեռագրեր է կազմել տալիս Թովման իր ուսուցիչ Մաթեոսին և աշակերտ Հերպետին: 1412 թ. Թովմա Մեծոփեցին Մաթեոսի հետ կիսատ մնացած մի Ավետարան է ծաղկել և կազմել տվել[215]:

Խաչատուր Կեչառեցուն պատկանած Տոնապատճառը Թովմա Մեծոփեցին 1419 թ. «վերստին կազմել է տալիս հոգևոր

211 Անդ, ԺԵ, Ա, էջ 147:
212 Մատենադարան, ձեռ. 8775, էջ 315ա:
213 Անդ, ձեռ. 5591, էջ 240բ-241ա:
214 Անդ, ձեռ. 1419:
215 Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 454:



Ծաղկող՝ Սիմոն
1446 թ., ձեռ. N 9858

հօրը՝ Մաթէոս կրոնավոր»-ին[216], Հովհաննես Մեծոփեցու 1383 թ. ընդօրինակած ժողովածուն՝ 1444 թվականին[217] և այլն: Շատ գրիչների և ստացողների է օգնել, հորդորել, օրինակ տվել ու խրախուսել: Ներսեսին ոչ միայն Թովմա Մեծոփեցին «ինքն շնորհեաց գքարտեսն, այլև ետ գրել իւր ձեռնասուն աշակերտացն»[218]: Հունան գրիչը Մեծոփա վանքում ընդօրինակում է Գրիգոր Տաթևացու Քարոզգիրքը, որին Թովմա վարդապետ «պատճառ եղև վճարման գրոցս, զօրինակն շնորհեաց, տեղիք և կերակուր պատրաստեաց»[219]: 1416 թ. Քարոզգրքի օրինակ է շնորհում Գրիգորին՝ Կապոսի վանքում ընդօրինակելու համար[220]: Գորգ գրիչը Տաթևացու Քարոզգիրքն է ընդօրինակում. «վասն սիրոյ և հրամանաց գերապայծառ և երանաշնորհ և պանծալի բաբունապետ մերոյ Թումայի քաջ հռետորի, զի բազում անգամ թղթով և պատգամաւ առաքէր, և մեք հարկեցաք՝ ըստ տգէտ և ըստ փանաքի անզօրութեան մերում և աւարտեցաք»[221]: 1440 թ. Թովմա Մեծոփեցին գրել է տալիս Զենոբ Գլակի Պատմությունը[222] և Մեկնութիւն Սահմանաց գրոց Դաւթի Առաքելի Սիւնեցւոյ[223]: Թովմա Մեծոփեցին Մեծոփա վանքի Մատենադարանը հարստացնում էր նաև ձեռագրեր գնելով: 1409 թ. մի Մաշտոց է գնում «ի հալալ ընչից իւրոց, եդ ի դուռն Մեծոփայ սուրբ Աստուածածնին»[224]: Վարդան Արևելցու Հնգամատյանի մեկնությունը՝ գրված Ներսես Մշեցու համար, նա Խառաբաստի դպրոցից տանում է Մեծոփա վանք և այն համարում «աստուածապարփակ և գերաշնորհ բաբունապետք» Սարգսի և Վարդանի կողմից ավանդված գիր[225]:

---

[216] *Անդ, էջ 230:*

[217] *Անդ, էջ 135:*

[218] *Անդ, էջ 423–424:*

[219] *Անդ, Գ, էջ 336:*

[220] *Անդ, էջ 187:*

[221] *Անդ, էջ 600:*

[222] *Հ. Ոսկեան, Վասպուրականի-Վանի վանքերը. Վիեննա, 1942, էջ 432, ծանոթ. 30:*

[223] *Մատենադարան, ձեռ. 1849:*

[224] *Անդ, ձեռ. 962, էջ 381բ:*

[225] *Հիշատակարաններ, ԺԵ, Ա, էջ 57:*

Մեծոփեցու ձեռքով անցել և Մեծոփա գրատանն է պահվել նաև 1280 թ. Ներսես Մշեցու համար Լուսեր գրչի օրինակած ժողովածուն, որտեղ գտնվում է Եզնիկ Կողբացու «Եղծ Աղանդոց»-ի եզակի օրինակը[226]:

«Մեծոփայ վանաց սուրբ Աստուածածնին է գիրքս և Թովմա վարդապետին, լաւ պահօղն և ընթերցօղն աւրհնի ի յԱստուծոյ» գրված է Գրիգոր Նարեկացու «Մեկնութիւն Երգոց երգոյն» գործի Երուսաղեմում պահվող մի օրինակում[227]: Մոկաց Սարի վանքի դպրոցի րաբունապետ Սիմեոնի 1363–70 թթ. ընդօրինակած ձեռագրերից երկուսը անցնում է Թովմայի ձեռքը, որոնցից մեկը գտնվում է Վիեննայում[228], մյուսը՝ Երուսաղեմում[229]: Թովմա Մեծոփեցու հիշատակագրությունը կա նաև Մատենադարանի 6120 ձեռագրում[230], և Կարնո Ջեռագրաց ցուցակի ձեռագրերից մեկում[231]:

Մեծոփա վանքում էր գտնվում նաև Ստեփանոս Օրբելյանի համար 1302 թ. նրա եղբոր որդի Հովհաննես Օրբելի գրած և Մոմիկի նկարազարդած Ավետարանը[232], որ հետագայում «Մեծոփայ փոքր Աւետարան» էր կոչվում, այնտեղ գտնվելու պատճառով: Ջեռագիրը հայտնի է նաև «Պատերազմի սուրբ Աւետարան» անունով[233]: Ահա Մեծոփա վանքից մեզ հասած

226 Մատենադարան, ձեռ. 1097, էջ 145ա, 108բ, որ ձեռագիրը Մեծոփա վանքում է եղել, երևում է հետագա հիշատակարանից: Դրդոս տանուտերը ՌՃԻ (1671) թվին վերստին նորոգում է «և եդ ի դուռ»–ն Մե[ծոփա] սուրբ Աստուածածնին անջինջ յիշատակ» (նույն, էջ 1ա):

227 Հիշատակարաններ, ԺԵ, Գ, էջ 367:

228 Հ. Տաշեան, Ցուցակ Վիեննայի, էջ 755:

229 Ն. Պողարեան, Ցուցակ Երուսաղէմի, Գ, էջ 9:

230 Մատենադարան, ձեռ. 6120, էջ 120բ:

231 Հ. Քեոսէյեան, Ցուցակ Կարնոյ գիւղերու, 32, «Հանդէս ամսօրեայ», 1964, էջ 330:

232 Մատենադարան, ձեռ. 6792, էջ 299բ, 13ա:

233 Մատենադարան, ձեռ. 6792, էջ 247բ: Ջեռագիրը անհայտ հանգամանքներում թղթատվում է և այդ վիճակում ընկնում Ցիպնավանք: Գրիգոր Խլաթեցին 158 մագաղաթյա մնացած թերթերին ավելացնում է 148 թղթյա թերթեր և գեղեցիկ մանրագրով, ինչպես Հովհաննես Օրբելն է գրել, լրացնում է պակասավոր ձեռագիրը: 1411 թ. այն վաճառում է Հովհաննես Խաչպան երեցին, որի հիշատակարանից իմանում ենք, որ ձեռագիրը կոչվում է «Պատերազմի սբ. Աւետարան»: Պատճառն, անշուշտ, այն էր, որ Ցիպնավանքը միաժամանակ Վասիլ Թագավորի Պատերազմի սուրբ նշանի վանք էր կոչվում: Այդտեղից ձեռագիրը տարվում է Մեծոփա

ձեռագրերի մի աննշան մասը, որ խնամքով հավաքվել է Թ. Մեծոփեցու րաբունապետության շրջանում:

Ահա այն ամենը, ինչ մեզ հայտնի է Մեծոփա վանքի գրչական-ուսումնական կյանքից: Մեծոփա վանքի գրչության կենտրոնը կատարեց իր առջև ծառացած խնդիրը՝ պատրաստելով գրագետ և վարժ գրիչներ, որոնք բազմացրին ու փրկեցին հարյուրավոր հայատառ մատյաններ: Բազմաբնույթ էին այդ ձեռագրերը: Որովհետև Մեծոփա վանքում դպրոցական կյանքը տևական էր, այդ պատճառով այնտեղ ընդօրինակվում էին հիմնականում ուսուցողական գրքեր, մեկնություններ, լուծմունքներ, քարոզգրքեր, ապա ծիսական-կանոնական և այլ գրքեր, որը երևում է նաև վերջում բերված ցանկերից:

***

Հայ գրչության կենտրոնները մշակութային այն օջախներն են, որոնք սկիզբ առնելով հայերեն գրերի ստեղծման արշալույսից՝ հարատևել են դարեր և հանդիսացել հայ գրի, գրչության արվեստի, մատենագրության ստեղծման, զարգացման ու պահպանման օրրանները:

Մշակութային այդ կենտրոններում են ստեղծագործել հայ մատենագրության, մանկավարժության, գրչության ու մանրանկարչության մեծ ու փոքր ներկայացուցիչները, այդ վայրերում հայերեն գիր ու դպրություն են սովորել սերունդներ, որոնց ջանքերով էլ այսօր մեզ են հասել մեր հոգևոր ու նյութական մշակույթի հպարտությունը կազմող ձեռագրերը:

Գրչության այդ կենտրոններից մեկն է Մեծոփա վանքը, որի գործունեությունը աշխատեցինք ներկայացնել ձեռքի տակ ունեցած նյութի և մեր կարողության սահմաններում: Մշակութային այս կենտրոնը հայ միջնադարյան դպրոցների շարունակական շղթայի կարևոր և ամուր օղակներից մեկն է, որի հնությունը հասնում է 12-րդ դար, գրչության արվեստի ծաղկումը սկսվում է 14-րդ դարում և համահայաստանյան նշանակություն ձեռք բերում 15-րդ դարի առաջին կեսին:

վանք: 17-րդ դարում գողանում են «Պատերազմի և Աւետարեր» ավետարանները, որոնք Սարգիս արեղան փնտում է «բազում աշխատութեամբ» և բերում Մեծոփա վանք: Հետագայում այն անցնում է մասնավոր մարդկանց ձեռք (Ամբատեանց Մ. Երնջակ, էջ 298), իսկ այժմ Մաշտոցի անվան Մատենադարանում է պահվում, 6792 համարի տակ:»

Մեծոփա վանքի գրչության կենտրոնը արդեն Մխիթար Սասնեցու և Հովհաննես Արճիշեցու րաբունապետության շրջանում գրչական, մանրանկարչական, մանկավարժական, մատենագրական գործունեությամբ հռչակված էր Վանա լճի շրջակայքում, որտեղ նախնական կրթություն ստանալուց հետո՝ աշակերտները բարձրագույն կրթություն էին ստանում Գլաձորի համալսարանում: Մեծոփա վանքի դպրոցում աշակերտները հմտանում էին հատկապես գրչության արվեստի և աստվածաբանության մեջ: ԺԴ դարի երկրորդ կեսերին նույն դերն էր կատարում Վանա լճի հարավում ընկած Մոկաց Սարի ս. Գեորգ դպրոցը, սակայն դարավերջում Մեծոփա վանքը վերականգնում է իր իրավունքները՝ աշակերտներ հասցնելով Խառաբաստա բարձր տիպի դպրոցի համար: Գրչության արվեստը միշտ էլ հայ դպրոցի հիմնական առարկաներից է եղել: Այն այդպես էր նաև Մեծոփա վանքի դպրոցում, սակայն Մեծոփա վանքում գրչության արվեստը գլխավոր առարկա դարձավ այն ժամանակ, երբ Գրիգոր Տաթևացին այնտեղ հիմնադրեց բարձր տիպի դպրոց և նրան տվեց գրչական թեքում: Մխիթար Գոշի, Հովհաննես վանականի, Վարդան Արևելցու, Ներսես Մշեցու, Եսայի Նչեցու, Հովհաննես Որոտնեցու, Գրիգոր Տաթևացու, Սարգիս Ապրակունեցու և Վարդան Հոգոցվանեցու բարձրագույն դպրոցների անմիջական և արժանավոր շարունակողն է Թովմա Մեծոփեցու դպրոցը: Հետևելով նախորդների ուսումնա-դաստիարակչական, գրչական-մատենագրական ավանդներին, Մեծոփա վանքի բարձր տիպի դպրոցը հայ եկեղեցու համար սպասավորներ էր պատրաստում, հայ մշակույթի համար՝ գործիչներ: Ստեղծագործելով, գրելով, արտագրելով ու տարածելով նախնիների ստեղծած հայրենաշունչ երկերը, նրանք վառ էին պահում հայ ժողովրդի մեջ հայրենասիրությունը:

Մեծոփա վանքի գրչության դպրոցը շարունակությունն ու հաստատումն է Մեսրոպ Մաշտոցի կողմից ստեղծված գրչության մասնագիտական վարդապետանոցների: Հատկապես այս կարգի բարձր տիպի գրչության դպրոցներում էր մշակվում, զարգանում, հարստանում գրչության արվեստը, խմբագրվում, սրբագրվում, լրացվում ու ճշգրտվում՝ հնից ժառանգած ձեռագրական մշակույթը: Այդ դպրոցներում սեփական ուժերով գրվում, սեփական միջոցներով ձեռք էին բերվում ձեռագիր մատյաններ, նորոգում, բուժում ու պահում էին տեղում ստեղծված մատենադարաններում, որոնք մի կողմից՝ փրկում էին ձեռագրերը կորստից, մյուս կողմից՝ դառնում ուսումնասիրության ու ընդօրինակության հիմք:

Մեծոփա վանքի մատենադարանում պահված բազմաթիվ մատյաններից բացի, սկսած Մխիթար Սասնեցուց և Հովհաննես Արճիշեցուց մինչև Թովմա Մեծոփեցին ու Հակոբ Ղրիմեցին, Մեծոփա վանքի մշակութային կենտրոնում ստեղծվել են բազմաթիվ մատենագիտական, պատմական, մեկնողական, մանկավարժական, գիտական երկեր:

Սասնեցու ճառերը, Տոմարի մասին երկը և մեկնությունները, Հովհաննես Արճիշեցու Պատարագի մեկնությունն ու այլ երկեր, Գրիգոր Տաթևացու՝ այստեղ կատարած Հոբի, ապա Հովհաննու Ավետարանի մեկնություններն ու գրչության արվեստի լուծմունքները, Գրիգոր Խլաթեցու պատմությունն ու Հիգամատյանի համառոտումը, Հակոբ Ղրիմեցու Քարոզգրքի համառոտումը, Տոմարական ու քերականական աշխատությունները և, վերջապես, Թովմա Մեծոփեցու մանկավարժական և պատմագրական աշխատությունները Մեծոփա վանքի դպրոցը դնում են Գոշավանքի, Խորանաշատի, Խոր Վիրապի, Գլաձորի, Հերմոնի, Տաթևի, Ապրակունիսի ու Խառաբաստա դպրոցների շարքը: Մեծոփա վանքը մյուս դպրոցների մատենագիտական երկերի և գավազան տված վարդապետների կողքին իրենը դնելուց հետո՝ որպես գրչության թեքում ունեցող դպրոց, ներկայանում է իր քսանչորս ընտիր գրիչներով, որոնք կորստյան դատապարտված բազմաթիվ ձեռագրեր ընդօրինակելով՝ վերստին կյանքի կոչեցին: Այդ դպրոցում աճեցին Ստեփանոս, Ներսես րաբունապետները, որոնք հետագայում իրենց վարդապետի գործը շարունակեցին Քաջբերունիքի ու Վանա լճի շրջակայքի տարբեր գրչության կենտրոններում: Երկու տասնյակից ավելի գրիչներ էին աշխատում Մեծոփա վանքում ԺԵ դարի առաջին կեսին: Այդ գրիչները ամենից առաջ աչքի էին ընկնում իրենց գրագիտությամբ և բեղմնավորությամբ: Մեծոփա վանքի գրչության դպրոցի սաներից են առայժմ հայտնի ամենաբեղմնավոր հայ գրիչը՝ Հովհաննես Մանկասարենցը, նշանավոր ծաղկող Մինաս Նաղաշը, հռչակավոր կազմարար Հայրապետը և այլք: Այդ դպրոցի րաբունապետի և գրիչների փրկած, սրբագրած, ուղղած ու շրջանառության մեջ դրած գործերը պատկառելի քանակ են կազմում: Դրանց ընդօրինակությամբ է մեզ հասել աղվանական գրի հազվագյուտ նմուշը, Սարգիս Կունդի՝ Ղուկասի Մեկնությունը, Պողոսի Թղթերի խմբագիր մեկնությունը, նրանք են բազմացրել ու տարածել Գրիգոր Տաթևացու երկերի բազմաթիվ ժողովածուներ, կրոնադավանական գործեր և այլն:

Մեծոփա վանքի աշակերտները միաժամանակ գրչության ուսուցիչներ էին, որոնք իրենց արժանի փոխարինողներ էին պատրաստում: Հովհաննես Մանկասարենցի աշակերտներից շատերը իրենց հռչակավոր ուսուցչին չէին զիջում: Մեծոփա վանքի սաներին ու նրանց աշակերտներին բնորոշ էր գեղեցկագրությունը, արտագրվող նյութն իմանալու հմտությունը, ճշգրիտ արտագրությունը: Նրանք իրար նման են նաև բովանդակալից հիշատակարանների գրությամբ: Մեծ էր Մեծոփա դպրոցի հեղինակությունը հասարակական-քաղաքական և եկեղեցական հարցերում, որը համահայկական մակարդակի հասավ հատկապես Թովմա Մեծոփեցու բազմաշխատության օրոք:

Մեծոփա վանքը մինչև ԺԵ դարի երկրորդ կեսը երեք հարյուրամյա ուսումնական և հարյուր հիսունամյա գրչական անընդհատ կյանք է ունեցել: Այստեղից մեզ է հասել շուրջ հարյուր, իսկ աշակերտների դրսում կատարած ընդօրինակությունների հետ միասին՝ մոտ երկու հարյուր ձեռագիր: Ժամանակից ու թշնամիներից փրկված մեծոփյան ձեռագրերի մեծ մասը այժմ պահվում է Մաշտոցյան Մատենադարանում, որոնք մի կողմից՝ հարստացնում են հայ մշակույթի գանձարանը, մյուս կողմից՝ մնում որպես խոսուն հուշարձաններ իրենց ստեղծողների ու փրկողների հիշատակին:

1970 թ.

ՑԱՆԿԵՐ

Ա

ՄԵԾՈՓԱ ՎԱՆՔԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻՑ ՄԵԶ ՀԱՅՏՆԻ ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳԸ

(ԺԴ—ԺԵ դդ.)

Այստեղ, ժամանակագրական կարգով, ըստ գրիչների և հեղինակների ներկայացնում ենք Մեծոփա վանքում ընդօրինակված ձեռագրերը և մատենագրական երկերը: Ձեռագրերի բովանդակության վերջում դրված գծիկը նշանակում է, որ այն ընդօրինակվել է մեկից ավելի գրիչների մասնակցությամբ (գծերի քանակը գրիչների քանակն է ցույց տալիս): Ուղղանկյուն փակագծերում նշանակված տվյալները ձեռագրերում չկան և բերվում են՝ ելնելով օժանդակ փաստարկներից, որոնք նշված են բնագրում: Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերի այն համարները, որոնք կլոր փակագծերի մեջ են առնված, ցույց են տալիս, որ ձեռագիրը ոչ թե ինքնագրով է մեզ հասել, այլ հետագա ընդօրինակությամբ: Յուրաքանչյուր գրչի Մեծոփա վանքում կատարած ընդօրինակություններից բացի, բերում ենք նաև մյուս վայրերում կատարած ընդօրինակությունները՝ նրա գրչական ժառանգության մասին ամփոփ պատկերացում տալու համար: Այս տեսակետից բացառություն են Գրիգոր Տաթևացի, Գրիգոր Խլաթեցի բազմաշխատությունները, Հովհաննես և Հուսիան գրիչները, որոնց միայն տեղում կատարած գործերի ցանկն ենք բերել՝ հաշվի առնելով, որ նրանք հիմնականում կապված էին այլ կենտրոնների հետ:

Ցանկում գրչի կամ հեղինակի անվան տակ բերվում են գրչության վայրը, թվականը, բովանդակությունը, այն վայրը, որտեղ պահվում է ձեռագիրը, կամ այն աղբյուրը, որտեղից վերցված են տվյալները:

Համարակալում ենք միայն Մեծոփա վանքում կատարված ընդօրինակությունները:

Ա. ՄԽԻԹԱՐ ՍԱՍՆԵՑԻ
րաբունապետ, աշակերտ Ներսես Մշեցու և Եսայի Նչեցու

1. Մեծոփա վանք, 1299ա[1], Բանք Սողոմոնի (193)
Գլաձոր, 1303, Վերլուծութիւնք Դանիէլի, 3606
2. Մեծոփա վանք, 1305, Գրութիւնք Եւագրեայ, Մուրադեան, Ցուցակ, էջ 15–16
3. Մեծոփա վանք, 1307, Աւետարան, Լալաեան, Ցուցակ, 81
4. Մեծոփա վանք, 1308, Նարեկ, Ոսկեան, ՎՎՎ. էջ 427[2]
5. Մեծոփա վանք, 1313, Աւետարան, 6273, էջ 122[3]
6. Մեծոփա վանք, 1318, Աւետարան, 6273, էջ 128
7. Մեծոփա վանք, 1318Հ., Մեկնութիւն Սաղմոսաց, 1180
8. Մեծոփա վանք, 1321, Բանք աստուածաբանականք (952)
9. Մեծոփա վանք, 1334, արբագրում է նախորդ գործը: Երուսաղէմ 414
10. (Մեծոփա վանք, 1337ա, Մեկն. Թղթ. Պօղոսի, Երուսաղէմ 245)

Բ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՈՍՊՆԱԿԵՐ ԱՐՃԻՇԵՑԻ
րաբունապետ, աշակերտ Ներսես Մշեցու և Եսայի Նչեցու

11. (Մեծոփա վանք), 1327, Մեկնութիւն պատարագի (581)
12. (Մեծոփա վանք), 1327ա, Բան վասն երից կարգաց (1521, ԻԳ)
13. (Մեծոփա վանք), 1321ա, Բանք աստուածաբանականք (952)

Գ. ՄԿՐՏԻՉ ՄԵԾՈՓԵՑԻ
աշակերտ Սասնեցու

14. Մեծոփա վանք, 1330, Բանք աստուածաբանականք, 952
15. Մեծոփա վանք, 1337Հ., Պատմ. Մխիթար վարդապետի, 952

---

[1] Թվականներից հետո դրված «ա» և «Հ» տառերը նշանակում են «առաջ» և «հետո»:

[2] Ոսկեան Հ., Վասպուրականի-Վանի վանքերը, էջ 427:

[3] Մատենադարանի 6273 ձեռագիրը Ղ. Փիրղալեմյանի «Նշխարք պատմութեան Հայոց» գործից քաղված հիշատակարանների ժողովածու է:

Դ. ԴԱՆԻԵԼ ՄԵԾՈՓԵՑԻ
աշակերտ Սասնեցու

16. (Մեծոփա վանք), 1337Հ., Բան գովեստի վասն Մխիթարայ, Ցայսմաւուրք, էջ 364

Ե. ԳՐԻԳՈՐ ԱԲԵՂԱ
աշակերտ Սասնեցու

17. Մեծոփա վանք, 1334, Բանք աստուածաբանականք, Երուսաղէմ, 414
18. Մեծոփա վանք, 1334, Բանք աստուածաբանականք, 3276

Զ. ԳՐԻԳՈՐ ԱԲԵՂԱ
մյուս աշակերտ Սասնեցու

19. Մեծոփա վանք, 1334, Բանք աստուածաբանականք, Երուսաղէմ, 414

Է. (ԳՐԻԳՈՐ)

20. Մեծոփա վանք, 1339, Աւետարան, Ոսկեան, ՎՎՎ, էջ 428

Ը. ՍՏԵՓԱՆՆՈՍ
աշակերտ Սասնեցու

21. Մեծոփա վանք, Չորեքտասան Թուղթք Պաւղոսի, 269

Թ. ՄՈՎՍԵՍ ՄԵԾՈՓԱՎԱՆԵՑԻ
վրդ. (աշակերտ Սասնեցու)

22. (Մեծոփա վանք, 1337), Պատմութ. Մխիթարայ վրդ., Երուսաղէմ 414
Վարագ, 1355, Աստուածաշունչ, Վենետիկ, 8
23. Մեծոփա վանք, 1462, Աւետարան, Կիլեսերեան, Ցուցակ Անկիւրիոյ, 343

ԺԹ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԵԾՈՓԵՑԻ
բաբունապետ, աշակերտ Հովհաննես Որոտնեցու

Տաթև, 1383, Մեկնութիւն Սաղմոսաց ստորագրութեանց, 5931
24. (Մեծոփա վանք), 1394, Գիրք պարապմանց, Հիշատ., ԺԴ, էջ 608

ԺԱ. ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ
աշակերտ Հովհ. Որոտնեցու, բաբունապետ Հայոց

25. Մեծոփա վանք, 1408, Մեկնութիւն դժուարիմաց բանս Յոբայ (1115)
26. Մեծոփա վանք, 1408–09, Լուծմունք ի գիրս գրչութեան (1115)
27. Մեծոփա վանք, 1409, Քաղուածոյ մեկն. Յովհաննու Աւետարանի (1115)

ԺԲ. ՍԱՐԳԻՍ
աշակերտ Սարգսի, Վարդան և Գրիգոր բաբունապետների

28. Տաթև, Խառաբաստ, Մեծոփա վանք, 1409, Գիրք Հարցմանց Գր. Տաթևացւոյ, 921

ԺԳ. ԳՐԻԳՈՐ ԽԼԱԹԵՑԻ
բաբունապետ, աշ. Հովհ. Որոտնեցու, Սարգիս բաբ.-ի

29. (Մեծոփա վանք), 1409, Ճառընտիր, 2782
30. (Մեծոփա վանք), 1409, Համառօտ մեկն. արարածոց Վարդանայ, 2783
31. (Մեծոփա վանք), 1410, Պատմութիւն երից ժամանակաց (Թովմա Մեծոփեցի, Պատմութիւն)
32. (Մեծոփա վանք), Խրատ ժամատեղեաց (9124)

ԺԴ. ԹՈՎՄԱ ՄԵԾՈՓԵՑԻ
աշակերտ Սարգսի, Վարդանի, Գր. Տաթևացու, բաբունապետ Մեծոփա վանքի

Տաթև, 1406, Լուծմունք արտաքին գրոց, Սիսական, էջ 239

33. Տաթև–Մեծոփա վանք, 1407, Հարցմանց գիրք 9247
34. (Մեծոփա վանք), 1409, Առ որս գիրք, Այրարատ, էջ 163
Երևան, 1409, Քարոզգիրք 6405
(Երևան–Հաւուց Թառ), 1410, Հարցմանց գիրք (մի քանի էջ), 5861
35. Մեծոփա վանք, 1410, Քարոզգիրք, 2065
36. (Մեծոփա վանք 1413ա) Աղօթամատոյց, 5212
(Աղեթա վանք, 1413), Քարոզգիրք, Թոփճեան, Ցուցակ Արմաշի, էջ 414
37. (Մեծոփա վանք, 1413ա Սաղմոսարան, Վ. Բաղիշեցի, ՄԺ, Բ, էջ 353)[4]
38. Մեծոփա վանք, 1427, Մեկն. Ղուկասու Աւետարանի, 5591
39. Արծկէ–Մեծոփա վանք, 1439, Ճաշոց, Վենետիկ, 1633
40. (Մեծոփա վանք, 1439), Ոսկեփորիկ (576)
41. (Մեծոփա վանք, 1446ա) Թուղթ նամակի, Վենետիկ (1096)
42. Մեծոփա վանք 1440ա, Պատմութիւն Համառօտ անօրէն Թամուրին, որ ելեալ ի յաշխարհէն Խորասանու և գնաց մինչև ի ծովն Ովկիանոս, արարեալ Թումայ վարդապետի: Տպագրված[5]:

---

[4] Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, Բ, էջ 313:

[5] Սրանցից բացի Թ. Մեծոփեցու գրչին են պատկանում հետևյալ գործերը, որի ցուցակը վերցրել ենք Լ. Խաչիկյանի «Թովմա Մեծոփեցու գրական վաստակը» հոդվածից: Այս նյութերի մեծ մասը Մատենադարանի 7117 ձեռագրի մեջ է:
ա. Վասն միաբանութեան Հայոց և կաթողիկոս ձեռնադրութեան:
բ. Յաղագս էջմիածնին օրհնութեան և կաթողիկոս ձեռնադրութեան:
գ. Վասն աքսորման տէր Կիրակոս կաթողիկոսին:
դ. Յիշատակարանք ձեռագրաց:
ե. Զի արդ գրեալ եղև գիրս Հայոց:
զ. Թիւք աւուրց կաթողիկոսացն:
է. Գիր օրհնութեան Կիրակոսի կաթողիկոսի Վիրապեցւոյ:
ը. Խրատ կանոնական ընդհանուր ամենայն հաւատացելոց ի Քրիստոս, տացեալ Կիրակոսի սուրբ էջմիածնայ կաթողիկոսի:
թ. Նահատակութիւն նոր վկային Յոհաննու, որ մականուն Խոյլու ասի:
ժ. Յաղագս իմաստութեան անվարժ տղայոց ուսման, արարեալ Թովմա վարժապետի, ի խնդրոյ աշակերտաց իւրոց:
ժա. Քերականագիտական-լեզվաբանական մանր բնագրեր:
ժբ. Իմաստութիւն քերթողական տառից ըստ այբուբենից:
ժգ. Բառք գովասանական վասն տղայոց ուսման:
ժդ. Բանք գովասանական ոգեալ:
ժե. Բանք վարդապետացն սրբոց հաւաքեալ ի միասին:

ԺԵ. ՀԱԿՈԲ ՂՐԻՄԵՑԻ
րաբունապետ Մեծոփա դպրոցի, աշակերտ Գեորգ Երզնկացու

Կապոսի վանք, 1389, Ժողովածու, 3487
Կապոսի վանք, 1404ա, Քարոզգիրք, Հիշատ. ԺԵ, Ա. 42
Կապոսի վանք, 1406, Աստուածաշունչ, 178
Կապոսի վանք, 1410ա Արհեստ Տումարական, Հիշատ., ԺԵ, Գ
Կապոսի վանք 1410ա Աղիւսակ և բոլորակ, Հիշատ., ԺԵ, Գ
43. (Մեծոփա վանք), 1410, Ժողովածոյ իմաստասիրական գրոց, 1716
44. Մեծոփա վանք, 1415, Քարոզգրքի համառոտում, Լենինգրադ, Արևելյան ինստիտուտ, 88
45. Մեծոփա վանք, 1415, Յաղագս ազգականութեան (10137)
46. Մեծոփա վանք,1415, Ողբ ի վերայ խաչելութեան, Անդ
47. Մեծոփա վանք, 1416, Քարոզներ, Անդ
48. Մեծոփա վանք, 1416, Մեկնութիւն Տումարի (10137)
49. (Մեծոփա վանք), 1416, Յաղագս չեշտի և պարուկի, Լ. Խաչերյան, Գրչության արվեստի..., էջ 375

ԺԶ. ՄԿՐՏԻՉ ՆԱՀԱՊԵՏԵՆՑ
դասընկեր Թ. Մեծոփեցու

50. Մեծոփա վանք, 1409, Քարոզգիրք, Բաքու, Պատմ. թանգ.
51. Մեծոփա վանք, 1418, Թուղթ ընդհանրական=, 8775
Հուսկան որդու վանք, 1419, Մեկնութ. Մատթեի, 1306
52. (Մեծոփա վանք) 1456ա, Ճաշոց, Աճառեան, Ցուցակ Թաւրիզի, 8

ժզ. Բանաստեղծութիւն:
ժէ. Պատմութիւն տեսլեան Դանիէլի, մեկնութիւն կարճ ի կարճոց ի Թովմայ վարդապետէ:
ժը. Խմբագիր մեկնութիւն չորեքտասան թղթոյն Պօղոսի:
ժթ. Մանր մեկնութիւններ:
ի. Արարեալ և սահմանեալ սուրբ վարդապետին Թումայի Մեծոփեցոյ ի պայծառութիւն մանկանց եկեղեցոյ խրատու յաղագս պաշտաման եկեղեցեաց Հայաստանեայց:
իա. Կարգ օրհնութեան սուրբ իւղոյ հիւանդաց:
իբ. Կարգ օծութեան հիւանդաց:

ԺԷ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻՉ
աշակերտ Դավթի և Թումայի

Ցիպնա վանք, 1408, Գանձարան, 3540
53. Մեծոփա վանք, 1410, Քարոզգիրք, 2065
54. Մեծոփա վանք, 1411, Քարոզգիրք, 2177
55. Մեծոփա վանք, 1415, Շարակնոց, Վենետիկ, 280
Լիմ անապատ, 1426, Աւետարան, 4627

ԺԸ. ՀՈՒՆԱՆ ԳՐԻՉ

56. Մեծոփա վանք, 1414, Քարոզգիրք, Հիշատ., ԺԵ, Գ

ԺԹ. ՀԱԿՈԲ ԳՐԻՉ
աշակերտ Թովմա Մեծոփեցու

57. Մեծոփա վանք, 1410, Քարոզգիրք, 2065
(Խառաբաստա վանք), 1416, Գիրք ձեռնադրութեան, Վիեննա, 599
Խառաբաստա վանք, 1419, Թուղթ Ընդհանրական, 8775
Խառաբաստա վանք, 1418, Քարոզգիրք, 2143
Խառաբաստա վանք, 1425, Յայսմաւուք, 4876
( ) 1453, Ողբ մայրաքաղաքին Ըստամբոլ (8968)

Ի. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՂԻՇԵՑԻ
աշակերտ Թովմա Մեծոփեցու

58. (Մեծոփա վանք), 1416, Գանձարան, Հիշատ. ԺԵ, Ա
59. (Մեծոփա Վանք), 1435ա, Քերականութիւն, 7117

ԻԱ. ՊԵՏՐՈՍ ԳՐԻՉ
աշակերտ Թովմա Մեծոփեցու

60. Մեծոփա վանք, 1437ա, Շարակնոց, Երուսաղէմ, 1718

ԻԲ. ԹՈՎՄԱ ՄԵԾՈՓԵՑԻ
աշակերտ Թովմա Մեծոփեցու

61. Մեծոփա վանք, 1424, Շարակնոց, 5114
62. Մեծոփա վանք, 1427, Մեկն. Ղուկասու Աւետարանի, 5591
63. Մեծոփա վանք, 1415–1435, Ճաշոց, 6501
64. Մեծոփա վանք, 1429, Աւետարան, Լենինգրադ 25
Արջոնից վանք, 1441, Աւետարան, 3892
65. Մեծոփա վանք, 1441, Շարակնոց, Տօնացոյց, 5667
66. Մեծոփա վանք, 1444, Ճաշոց, Ղ. Ալիշան, Հայկարան
Արջոնից վանք, 1449, Աւետարան, Նոտարք, էջ 162
Զորոյ վանք, 1449, Աւետարան, Վենետիկ, 162

ԻԳ. ՂԱԶԱՐ ԳՐԻՉ
աշակերտ Թովմա Մեծոփեցու

67. (Մեծոփա վանք), 1419, Քարոզգիրք, 2117
68. Մեծոփա վանք, 1427, Ժամագիրք, Վիեննա, 428
Արգելա՞ն, 1464, Շարակնոց, 3481

ԻԴ. ՄԿՐՏԻՉ ՎՐԴ.
աշակերտ Թովմա Մեծոփեցու

69. Մեծոփա վանք, 1432, Ժամագիրք, Ցուցակ Միւնխենի, 6

ԻԵ. ԶԱՔԱՐԻԱ ՎՐԴ.
աշակերտ Թովմա Մեծոփեցու

70. Մեծոփա վանք, 1432, Ժամագիրք, Ցուցակ Միւնխենի, 6

ԻԶ. ՀԱԿՈԲ ԲԵՐԿՐԵՑԻ
աշակերտ Թովմա Մեծոփեցու

Երուսաղէմ, 1432, Լուծմունք, Սաղմոսարան, 1125
Բերկրի, 1418, Աւետարան, Նոտարք, էջ 54

եղիվանք, 1422, Աւետարան, 5635
եղիվանք, 1424, Շարակնոց, Հիշատ. ԺԵ, Ա
եղիվանք, 1425, Աւետարան, Ցուցակ Կեսարիո, 6

ԻԷ. ԿԱՐԱՊԵՏ ՎԱՆԵՑԻ
աշակերտ Թովմա Մեծոփեցու

Վան, 1422, Աւետարան, Նոտարք, 69
Վան, 1422, Յայսմաւուրք, Նոտարք, 68
Արճէշ, 1432, Ճաշոց, Նոտարք, 100–101
Արճէշ, 1433, Աւետարան, 5172
71. Մեծոփա վանք, 1435, Խմբագիր մեկն. Թղթ. Պօղ.=, 1380
Արճէշ, 1437, Յայսմաւուրք, Նոտարք, 111

ԻԸ. ՍՏԵՓԱՆՆՈՍ
որդի Կարապետի, աշակերտ Թովմա Մեծոփեցու

72. Մեծոփա վանք, 1435, Խմբագիր մեկն. Թղթ.=, 1380
Արճէշ, 1437, Յայսմաւուրք, Նոտարք, 111

ԻԹ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆԿԱՍԱՐԵՆՑ
աշակերտ Թովմա Մեծոփեցու

73. Մեծոփա վանք, 1427, Մեկն. Ղուկասու Աւետարանի,= 5591
74. Մեծոփա վանք, 1432, Ճաշոց, Նոտարք, 100
75. Մեծոփա վանք, 1432, Ժամագիրք, Միւնխեն 6
76. Մեծոփա վանք, 1435, Խմբագիր մեկն. Թղթ.=, 1380
77. (Մեծոփա վանք), 1435, Աւետարան, Հիշատ. ԺԵ, Ա
78. Արծկե-Մեծոփա վանք, 1439, Ճաշոց, Վենետիկ, 1633
79. Մեծոփա վանք, 1440, Ժողովածու, 7117
80. (Մեծոփա վանք), 1440ա, Ճառք, Ն. Ջուղա, 419
(Արճէշ), 1441ա, Ողբ Երուսաղէմի, Վենետիկ (Քյուրտեան)
Արճէշ, 1441, Յիսուս որդի, Վենետիկ (Քյուրտեան)
Արճէշ, 1441, Աւետարան, Թորոս Աղբր. Ա
Արճէշ, 1444, Ճաշոց, Ալիշան, Հայկարան
Արճէշ, 1445, Աւետարան, Հիշատ., ԺԵ, Ա

Արճէշ, 1450, Աւետարան, Ցուցակ Թաւրիզի, էջ 65
(Արճէշ), 1460ա, Գանձարան, 4350
Արճէշ-Լիմ, 1454, Աւետարան, 6570
Արճէշ, 1455, Աւետարան, Նոտարք, էջ 182
Արճէշ, 1455՞, Աւետարան, Նոտարք, էջ 180
(Արճէշ), 1456, Աւետարան, 5629
Արճէշ, 1456, Ճաշոց, Հ. Քյուրտեան (ԱՄՆ)
Արճէշ, 1457, Ճաշոց, 4746
Արճէշ, 1457, Յայսմաւուրք, 4755
Արճէշ, 1461, Ճաշոց, Ալիշան, Հայկարան
Արճէշ, 1462, Աւետարան, 4778
Արճէշ, 1463, Աւետարան, Նոտարք, 216
Արճէշ, 1465, Աւետարան, Մայր Աթոռ, 22
Արճէշ, 1469, Շարակնոց, Վենետիկ, 115
Արճէշ, 1469, Աւետարան, Երուսաղէմ, 3427
Արճէշ, 1470, Շարակնոց, 9239
Արճէշ, 1471, Աւետարան, Հիշատ., ԺԵ, Բ
Արճէշ, 1472, Մաշտոց և Գանձարան, 4392
Արճէշ, 1474, Աւետարան, 7991
Արճէշ, 1479, Աւետարան, Ն. Ջուղա, 413
Արճէշ, 1485, Գանձարան, Վենետիկ, 1210
Վան, 1499, Աւետարան, 5256

Լ. ՀԱՅՐԱՊԵՏ, ՄԱԿԱՆՈՒՆ ԽԱԼԻՖԱ
աշակերտ Թովմա Մեծոփեցու

Արճէշ, 1438, Ճաշոց, Հիշատ., ԺԵ, Ա
Արճէշ, 1446, Յայսմաւուրք, Հիշատ., ԺԵ, Ա
Լիմ, 1454, Աւետարան, 6509
Արճէշ, 1461, Յայսմաւուրք, Ցուցակ Անկիւրիո

ԼԱ. ՆԵՐՍԵՍ ԳՐԻՉ
աշակերտ Թովմա Մեծոփեցու

81. Մեծոփա վանք, 1440, Մեկնութիւն սաՀմանաց, 1849
82. Մեծոփա վանք, 1443, Ժամագիրք, 247

ԼԲ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐԾԿԵՑԻ
գրիչ աշակերտ Թովմա Մեծոփեցու

Արծկէ, 1442, Յայսմաւուրք, Նոտարք, 129
Արծկէ, 1443, Ճաշոց, Հիշատ., ԺԵ, Ա
Արծկէ, 1448, Աւետարան, 5196
Մզուք, 1452, Աւետարան, 303
Արծկէ, 1459, Աւետարան, Հիշատ., ԺԵ, Բ
Բաղէշ, 1459, Աւետարան, 4907
(Արծկէ), 1460, Ճաշոց, 982
Արծկէ, 1463, Յայսմաւուրք, 4883
Արծկէ, 1463, Աւետարան, Վենետիկ, 143
Արծկէ, 1464, Աւետարան, Եղվարդ գյուղ
Արծկէ, 1464, Աւետարան, Նոտարք, 219
Կածգյուղ, 1465, Ճաշոց, 3758
Արծկէ, 1471, Աւետարան, 7787
Արծկէ, 1482, Աւետարան, Լենինգրադ, Ասիայի և Աֆրիկայի ժող. ինստիտուտ
Արծկէ, 1483, Աւետարան, Հ. Քյուրտեան

ԼԳ. ԿԻՐԱԿՈՍ ԲԱՆԱՍԵՐ
աշակերտ Թովմա Մեծոփեցու

83. (Մեծոփա վանք), 1446Հ., Պատմութիւն մեծի բաբունապետին Թումայի (1486)

ԼԴ. ՄԻՆԱՍ ԾԱՂԿՈՂ
աշակերտ Թովմա Մեծոփեցու

Մինասը ծաղկել է վերոհիշյալ գրիչների ընդօրինակությունները:
Մաշտոցի անվան Մատենադարանում են պահվում հետևյալ ձեռագրերը:
982, 1380, 3481, 3897, 4472, 4869, 4883, 5013, 5172, 5627, 6450, 6501, 6570, 6378, 6390, 6653, 6879, 9858:

ԼԵ. ՀԱՅՐԱՊԵՏ ԿԱԶՄՈՂ
աշակերտ Թովմա Մեծոփեցու

Հայրապետը կազմել է վերոհիշյալ գրիչների ընդօրինակությունները: Մատենադարանում են պահվում 1380, 5931, 5629, 5172 և այլ ձեռագրեր:

Թովմա Մեծոփեցու աշակերտներից են.

ԼԶ. Ստեփաննոս վարդապետ
ԼԷ. Աբրահամ փիլիսոփա
ԼԸ. Ղազար
ԼԹ. Մեսրոբ
Խ. Նիկողայոս
ԽԱ. Ասոտ վարդապետ

Բ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ա ՁԵՌԱԳԻՐ

1. Մաշտոցի անվան Մատենադարանի (ըստ հերթական համարների)

149	1380	3276	4735	5629	6763	8449
154	1382	3481	4746	5635	6879	8775
177	1486	3487	4755	5667	6883	8997
193	1521	3540	4778	5707	7092	8968
247	1669	3606	4822	5786	7117	9100
269	1716	3711	4825	5861	7274	9124
280	1849	3758	4862	5883	7322	9134
303	2065	3774	4873	5931	7337	9239
313	1117	3777	4876	6273	7343	9247
353	2149	3801	4883	6284	7366	9292
576	2177	3892	4907	6332	7454	9450
921	2374	3897	5013	6333	7519	9792
952	2520	3929	5114	6378	7553	9858
962	2588	4097	5172	6384	7588	10137
965	2679	4350	5196	6390	7643	10200
975	2448	4393	5212	6394	7650	10283
982	2781	4472	5240	6402	7659	
988	2782	4492	5256	6405	7664	
1115	2783	4515	5435	6450	7734	
1125	2817	4517	5540	6495	7781	
1180	2943	4570	5591	6501	7787	
1204	3082	4627	5597	6509	7837	
1306	3104	4687	5600	6570	7991	
1347	3204	4695	5627	6653	8205	

2. Երուսաղեմի սրբոց Հակոբյանց մատենադարան (միկրոժապավեն) 1758, 1924, 2365

3. Վենետիկի Մխիթարյան մատենադարան, 1091 (մանրաժապավեն):
4. Բեռլինի Արքայական մատենադարան, 805 (մանրաժապավեն):
5. Մ. Տէր-Մովսիսեան, Ցուցակ Հայերէն ձեռագրաց, Մատենադարան, Անտիպ ձեռագրաց ցուցակների ֆոնդ 31:

Բ. ՏՊԱԳԻՐ

1. Աբեղյան Մ., Հայ հին գրականության պատմություն, գիրք Ա, Երևան, 1944
2. Նույնի, Հայ հին գրականության պատմություն, գիրք Բ, Երևան, 1946
3. Աբրահամյան Ա., Հայ գրի և գրչության պատմություն, Երևան, 1959
4. Նույնի, Համառոտ ուրվագիծ Հայկական պալեոգրաֆիայի, Երևան, 1940
5. Նույնի, Հայկական պալեոգրաֆիա, Երևան, 1949
5. Աղանեան Գ., Դիւան Հայոց պատմութեան, գիրք Ժ, Թիֆլիս, 1912
7. Ազարյան Լ., Կիլիկյան մանրանկարչությունը 12–13-րդ դդ., Երևան, 1964
8. Ալիշան Ղ., Հայապատում, Պատմիչք և պատմութիւնք, Վենետիկ, 1901
9. Նույնի, Այրարատ, Վենետիկ, 1890
10. Նույնի, Սիսուան, Վենետիկ, 1885
11. Նույնի, Սիսական, Վենետիկ, 1893
12. Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ դպրոցի, հ. Ա, Գահիրե, 1946
13. Նույնի, Պատմութիւն հայ Կեսարիոյ, հ. Բ, Գահիրե, 1937
14. Ակինեան Ն., Հայերէն այբուբենի գիւտը, «Հանդէս ամսօրեա», 1938
15. Նույնի, Ս. Մաշտոց վարդապետ, Վիեննա, 1949
16. Նույնի, Բաղէշի դպրոցը, Վիեննա, 1952
17. Նույնի, Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ, Վիեննա, 1920
18. Աճառեան Հ., Հայոց գրերը, Վիեննա, 1928
19. Նույնի, Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, Երևան, 19

20. Նույնի, Ցուցակ Հայերէն ձեռագրաց Թաւրիզի, Վիեննա, 1910
21. Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, հ. Ա, Երևան 1959
22. Առաքելյան Ա., Հայ ժողովրդի մտավոր մշակույթի պատմություն, հ. Ա, Երևան, 1959
23. Առաքելյան Բ., Քաղաքները և արհեստները Հայաստանում 9–13-րդ դդ., հ. Ա, Երևան, 1958
24. Նույնի, Քաղաքները և արհեստները Հայաստանում 9–13-րդ դդ., հ. Բ, Երևան, 1964
25. «Արարատ», Վաղարշապատ, 1903, 1913
26. «Բազմավէպ», Վենետիկ, 1965, 1968
27. Բարխուդարեան Ս., Արցախ, Բաքու, 1895
28. Նույնի, Աղուանից երկիր և դրացիք, Թիֆլիս, 1895
29. «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, 1900
30. Գալեմքարեան Գ., Ցուցակ Հայերէն ձեռագրաց Արքունի Մատենադարանին ի Միւնխէն, Վիեննա, 1892
31. Գևորգյան Ա., Գրենական գործիք գնդիկավոր գրչի մասին, «Բանբեր Մատենադարանի», 5, 1960
32. Գուշակեան Թ., Ցուցակ Հայերէն ձեռագրաց Ս. Նշանի վանուց ի Սեբաստիա, Վիեննա, 1961
33. Դադյան Խ., Նորագիւտ մագաղաթեայ նոտրգիր Ցուցակ Սաղմոսավանից մատենադարանի, «Շողակաթ», Վաղարշապատ, 1913, էջ 166
34. Դուրեան Ե., Պատմութիւն հայ մատենագրութեան, Երուսաղէմ, 1933
35. Եգանյան Օ., Զեյթունյան Ա., Անթաբյան Փ., Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան մատենադարանի, հ. Ա, Երևան, 1965
36. Նույնի, Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Բ, (անտիպ)
37. Եղիշէի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957
38. Եսայի Նչեցի, Վերլուծութիւն քերականութեան, Երևան, 1966
39. Զաքարիա Սարկաւագի Պատմութիւն, Վաղարշապատ, 1870
40. Զարպհանալեան Գ., Պատմութիւն հայ հին դպրութեան, Վենետիկ, 1886

41. **Նույնի**, *Մատենադարան Հայկական թարգմանութեան նախնեաց*, Վենետիկ, 1889
42. **Նույնի**, *Պատմութիւն հայերէն դպրութեան*, Բ, *Նոր մատենագրութիւն*, Վենետիկ, 1878
43. **Թովմա Արծրունի**, *Պատմութիւն տանն Արծրունեաց*, Թիֆլիս, 1917
44. **Թովմա Մեծոփեցի**, *Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց*, Փարիզ, 1860
45. **Թովմա Մեծոփեցի**, *Յիշատակարան*, հրատ. Կ. Կոստանեան, Թիֆլիս, 1892
46. **Թոփճեան Հ.**, *Ցուցակ հայերէն ձեռագրաց Արմաշու վանից*, Վենետիկ, 1962
47. **Т. Измайлова**, Мурганский образец в армянской литературной живописи, Ленинград, 1961.
48. **Նույնի**, Евангелие «Бегюнц», *«Բանբեր Մատենադարանի»*, 8, Երևան, 1967
49. **Ինճիճեան Ղ.**, *Հնախօսութիւն Հայաստանեայց*, Վենետիկ, 1822
50. **Նույնի**, *Ստորագրութիւն հին Հայաստանեայց*, Վենետիկ, 1835
51. **Իշխանյան Ռ.**, *Հայ մատենագիտության պատմություն*, Ա պրակ, Երևան, 1964
52. **Լալաեան Ե.**, *Ջավախք*, Թիֆլիս, 1897
53. **Նույնի**, *Գողթն գավառ*, Թիֆլիս, 1912
54. **Նույնի**, *Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի*, պր. Ա, Թիֆլիս, 1915
55. **Լեոնյան Գ.**, *Հայ գիրքը և տպագրության արվեստը*, Երևան, 1946
56. **Խալաթեանց Գ.**, *Աւետարան ըստ թարգմանութեան նախնեաց մերոց ՅԼԶ հայոց և Տեառն 897*, Մոսկվա, 1899
57. **Խաչերյան Լ.**, *Գրչության արվեստի լեզվաքերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում*, Երևան, 1962
58. **Խաչիկյան Լ.**, *ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*, Երևան, 1950
59. **Նույնի**, *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*, մասն առաջին (1401–1450 թթ.), Երևան, 1955
60. **Նույնի**, *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*, մասն երկրորդ (1451–1480 թթ.), Երևան, 1958
61. **Նույնի**, *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*, մասն երրորդ (1481–1500 թթ.), Երևան, 1967
62. **Նույնի**, *Գլաձորյան համալսարանը և նրա սաների ավարտական ատենախոսությունները*, «Երևանի համալսարանի գիտ. աշխատություններ», Երևան, 1946
63. **Նույնի**, *Թովմա Մեծոփեցու գրական վաստակը* (անտիպ)
64. **Կիրակոս Բանասէր**, *Պատմութիւն մեծի րաբունապետին Թովմայի*, հրատ. Գ. Հովսեփեան, Վաղարշապատ, 1914
65. **Կիրակոս Գանձակեցի**, *Պատմություն հայոց*, Երևան, 1961
66. **Կիլեսերեան Բ.** *Ցուցակ ձեռագրաց Անկիւրիոյ, Կարմիր վանուց և շրջակայից*, Անթիլիաս, 1957
67. **Նույնի**, *Ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ Ազգային մատենադարանի հայոց*, Անթիլիաս, 1961
67ա. **Կոստանեանց Կ.**, *Թովմա Մեծոփեցու Յիշատակարանը*, Թիֆլիս, 1892
68. **Կորյուն**, *Վարք Մաշտոցի*, Երևան, 1941
69. **Հակոբյան Թ.**, *Հայաստանի պատմական աշխարհագրական ուրվագծեր*, Երևան, 1968
70. **Հակոբյան Վ.**, *Մանր ժամանակագրություններ 13–18-րդ դդ.* մասն Ա, Երևան, 1951
71. **Նույնի**, *Մանր ժամանակագրություններ, 13–18-րդ դդ.*, մասն Բ, Երևան, 1956
72. *Հայկական մանրանկարչություն Մաշտոցի անվան Մատենադարանի*, Երևան, 1967
73. *Հայկական մանրանկարչութիւն Մխիթարեան մատենադարանի ձեռագրաց*, Ա, Վենետիկ, 1967
74. **Հայկունի Ս.**, *Բագրևանդ Ջրարաշխ գաւառ*, Վաղարշապատ, 1894
75. *«Հանդէս ամսօրեա»*, Վիեննա, 1938, 1963
76. **Հարությունյան Ա.**, *Ներկերը և թանաքները հին հայկական ձեռագրերում*, Երևան, 1941
77. **Յարութիւնեան Ի.**, *Հայոց գիրը*, Թիֆլիս, 1892
78. **Հացունի Վ.**, *Դաստիարակութիւնը հին Հայոց քով*, Վենետիկ, 1923
79. **Նույնի**, *Հայուհին պատմութեան առջև*, Վենետիկ, 1936
80. **Հիւբշման Հ.**, *Հին Հայոց տեղւոյ անունները*, Վիեննա, 1907

81. Հիւսեան Հ., *Մի քանի տեղեկութիւններ Վանի վանքերու մասին (Մատենադարանի անտիպ ձեռագրացուցակներ)*
82. Յովակիմեան Ն., *Ցուցակ Հայերէն ձեռագրաց Նիկոմեդիոյ (Մատենադարանի անտիպ ձեռագրացուցակներ)*
83. Յովսէփեան Գ., *Յիշատակարանք ձեռագրաց, Հ. Ա, (Ե դարից մինչև 1250), Անթիլիաս, 1951*
84. Նույնի, *Հայոց գրի գլխաւոր տեսակները, «Տարազ», Թիֆլիս, 1912*
85. Նույնի, *Գրչութեան արուեստը հին Հայոց մէջ, մասն Գ, Քարտէզ հայ հնագրութեան, Վաղարշապատ, 1913*
86. Նույնի, *Մի էջ հայ արուեստի և մշակոյթի պատմութիւնից, Հալէպ, 1930*
87. Նույնի, *Նիւթեր ու ուսումնասիրութիւններ հայ արուեստի և մշակոյթի պատմութեան, պրակ Ա, Երուսաղէմ, 1935, պրակ Բ, Նյու-Յորք, 1943*
88. Նույնի, *Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, մասն Բ, Երուսաղէմ, 1944*
89. Նույնի, *Հայ գրի և գրչութեան արուեստը, «Հասկ», Բեյրութ, 1967*
90. Նույնի, *Մանրանկարչութեան արուեստը Հայոց մէջ, Թիֆլիս, 1902*
91. Նույնի, *Մխիթար Սասնեցի, Վաղարշապատ, 1899*
92. Նույնի, *Թովմա Մեծոփեցու կեանքը, Վաղարշապատ, 1914*
93. Ղազար Փարպեցի, *Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1907*
94. Ղաֆադարյան Կ., *Հայկական գրերի սկզբնական տեսակները, Երևան, 1938*
95. Ճանիկյան Հ., *Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1895*
96. Մաթևոսյան Ա., *ԺԳ դարի Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (անտիպ)*
97. Նույնի, *Մոկաց Սարի սբ. Գեորգի գրչության կենտրոնը 14–15-րդ դարերում, «Բանբեր Մատենադարանի», 6, Երևան, 1962, էջ 197–218*
98. Նույնի, *Լիմ անապատի գրչության կենտրոնը ԺԳ–ԺԵ դարերում, «Էջմիածին», Զ, 1966, էջ 48–55*
99. Նույնի, *Սանահնի և Հաղբատի գրչության կենտրոնները, «Էջմիածին», Զ, 1968, էջ 31–40*
100. Նույնի, *Մի ձեռագիր Ավետարանի հիշատակարանի նոր վերծանություն, «Էջմիածին», ԺԱ–ԺԲ, 1966, էջ 205–209*

101. Նույնի, *Ձեռագրագիտական սրբագրություններ, «Էջմիածին», Ե, 1968, էջ 59–63*
102. Նույնի, *Երբ և որտեղ է գրվել Մշո Ճառընտիր-Տոնականը, «Բանբեր Մատենադարանի», 9, Երևան, 1969*
103. Մանանդյան Հ., *Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Գ, Երևան, 1952*
104. *Հայոց նոր վկաներ, Վաղարշապատ, 1903*
105. Մառ Ն., *Միջնադարյան Հայաստանի մատենադարանները, «Երեկոյան Երևան», 1965 № 5*
106. Մկրտիչ Մեծոփեցի, *Վարք Մխիթարա, հրատ.* Գ. Յովսէփեան, *Վաղարշապատ, 1899*
107. Մովսէս Խորենացի, *Պատմութիւն Հայոց, Տփխիս, 1913*
108. Մովսեսյան Ա., *Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության (10–15-րդ դդ.), Երևան, 1958*
109. Մնացականյան Ա., *Հայկական զարդարվեստ, հիմնական մոտիվների ծագումն ու գաղափարական բովանդակությունը, Երևան, 1955*
110. *Յայսմաւուրք (գիրք որ կոչի Այսմաւուրք), Կ. Պոլիս, 1730*
111. *Յայսմաւուրք, ըստ կարգի ընտրելագոյն օրինակի յայսմաւուրաց տէր Իսրայէլի, Կ. Պոլիս, 1834*
112. *Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի, Ա, Վենետիկ, 1836*
113. Շերենց Գ., *Սրբավայրեր, Թիֆլիս, 1902*
114. *«Շողակաթ», Հայագիտական ժողովածու, գ. Ա, Վաղարշապատ, 1913*
115. Ոսկանեան Հ., *Վասպուրականի-Վանի վանքերը, մասն Բ, Վիեննա, 1942*
116. Նույնի, *Գնունեաց և Ռշտունեաց նախարարութիւնները, Վիեննա, 1952*
117. Նույնի, *Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, 1963*
118. Չամչեան Մ., *Պատմութիւն Հայոց, հ. Գ, Վենետիկ, 1786*
119. Պալեան Տ., *Ցուցակ հայերէն ձեռագրաց ի Թուրքիա, Կեսարիոյ վիճակ, Կ. Պոլիս, հ. Ա, 1892*
120. Նույնի, *Ցուցակ հայերէն ձեռագրաց ի Թուրքիա, հ. Բ, 1893*
121. Պողարեան Ն., *Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, Երուսաղէմ, հ. Ա., 1966*
122. Նույնի, *Մայր ցուցակ..., հ. Բ, 1967*
123. Նույնի, *Մայր ցուցակ..., հ. Գ, 1968*

134. **Ջալալեան Ս.**, *Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, մասն Ա, Տփխիս, 1842*
125. **Նոյնի**, *Ճանապարհորդութիւն..., մասն Բ, 1858*
126. **Ջահուկյան Գ.**, *Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954*
127. **Սարգիսեան Բ.**, *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, Վենետիկ, Հ. Ա, 1914*
128. **Նոյնի**, *Մայր ցուցակ..., Հ. Բ, 1924*
129. **Սարգիսեան Ն.**, *Տեղագրութիւնք ի Փոքր և Մեծ Հայս, Վենետիկ, 1964*
130. *«Սիոն», Երուսաղէմ, 1932*
131. **Սմբատեան Ս.**, *Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի, Վաղարշապատ, 1895*
132. **Նոյնի**, *Նկարագիր սուրբ Կարապետի վանից Երնջակայ և շրջակայից նորա, Տփխիս, 1904*
133. **Նոյնի**, *Նկարագիր սուրբ Ստեփաննոսի վանուց Սաղխանի, Տփխիս, 1896*
134. **Սիւրմելեան Ա.**, *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքի, Հ. Ա, Վենետիկ, 1948*
134ա. **Ստեփաննոս Օրբելեան**, *Պատմութիւն տանն Սիսական, Թիֆլիս, 1910*
135. **Սրվանձտեանց Գ.**, *Թորոս աղբար, Հ. Ա*
136. **Վարդան Բաղիշեցի**, *Այս են վարդապետական գրեանք ի վանքն Ամիրդոլու, Արարատ, 1905, էջ 178–189*
137. **Վարդան վարդապետ**, *Աշխարհացոյց, հրատ. Հ. Պերպերեան, Փարիզ, 1960*
138. **Վարդանեան Ա.**, *Հայ գրչագիրները ինչ պայմաններու տակ կընդօրինակէին հայ ձեռագիրները, Վիեննա, 1924*
139. **Տաշեան Հ.**, *Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեան ի Վիեննա, Վիեննա, 1895*
140. **Տաշեան Հ.**, *Ակնարկ մը հայ հնագրութեան վրայ, Վիեննա, 1898*
141. **Տէր Ավետիսեան Ա.**, *Ցուցակ Նոր-Ջուղայի հայերէն ձեռագրերի (անտիպ): Մատենադարան, անտիպ ձեռագրացուցակներ*
142. **Նոյնի**, *Ցուցակ ձեռագրաց Նախավկայի վանուց (Մատենադարան, անտիպ ձեռագրացուցակներ)*

143. **Տէր-Մովսիեան Ս.**, *Հայերէն ձեռագրերի ընդհանուր ցուցակ (Մատենադարան, անտիպ ձեռագրացուցակներ 31)*
144. **Տէր-Ներսիսեան Ս.**, *Մինաս նկարող և իւր ծաղկած նկարները, «Սիոն», 1951*
145. **Նոյնի**, *Կիլիկյան մանրանկարված Աւետարանը,«Հանդէս ամսօրեա», Վիեննա, 1961*
146. **Փիրղալեմեան Ղ.**, *Նօտարք հայոց, Կ. Պոլիս, 1878*
147. **Քասունի Ե.**, *Պատմութիւն հին հայ դաստիարակութեան, Պեյրութ, 1959*
148. **Քարամեանց Ն.**, *Ցուցակ Բերլինի արքայական Մատենադարանի հայ ձեռագրաց*
149. **Քեշիշեան Մ.**, *Ցուցակ ձեռագրաց Զմմառի վանուց, Վիեննա, 1964*
150. **Քոլանջյան Ս.**, *Մովսես Խորենացու նորահայտ երկաթագիր պատառիկն ու Դանիելյան նշանագրերի օգտագործման ժամանակի հարցը, «Բանբեր Մատենադարանի», 4, Երևան, էջ 58*
151. **Նոյնի**, *Նորահայտ պատառիկներ Կյուրեղ Երուսաղեմացու Թ դարի մի գրչագրից, «Բանբեր Մատենադարանի», 5, Երևան, 1960*
152. **Քոսեան Հ.**, *Ցուցակ հայերէն ձեռագրաց գիւղօրէից Կարնոյ, «Հանդէս ամսօրեա», 1964*
153. **Օրմանեան Մ.**, *Ազգապատում, Կ. Պոլիս, 1912*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբանի փոխարեն 5
Ներածություն 11
Առաջին գլուխ
Մեծոփավանքի գրչության կենտրոնը ԺԲ–ԺԴ դ. դ. 40
Երկրորդ գլուխ
Մեծոփավանքի գրչության կենտրոնը ԺԵ դ.
Մաս Ա 56
Մաս Բ 93
Երրորդ գլուխ
Գրչության արվեստը Մեծոփավանքի գրչության կենտրոնում 128
Ցանկեր
ա Ցանկ Մեծոփավանքի գրչության կենտրոնից մեզ հասած ձեռագրերի 187
բ Ցանկ օգտագործված գրականության 199

Չափսը՝ $60\times84^{1}/_{16}$, Պատվ. 415,
Տպաք. 1000

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ